

ԵՐԻ ՑՐՈՒ

ՀՐ ՏՈՒՐ

ՄՐՈՒՐ

ԴՐԱԿԱՆ, ՀԱՍՏՐՎԱԿԱՆ ԵԽ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

№ 12

ԴԵԿԱՏԵՐԵՐ

1902

ԹԻՖԼԻՍ

Տպոգրաֆիա Դրւ. Խճառ. | Տպարան Կրայ Հրամ. ՀԵՂԻՐԱԶԻՒՆ,

1902

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 12

	Երես
1. ՄԱՅՐԵՐԸ, պատմուածք Ա. Ահարոնեանի	5
2. ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ, Աւ. Խահակեանի	29
3. ՀՈՒՆԳԱՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ, Հ. Աճառեանի	30
4. ՀՈԳԵՀԱՆ, լեզենդա, Յով. Թումանեանի	35
5. ՄԱԿՈՒ, ճանապ. նկարագր., գոկ. Կ. Փառայեանի	38
6. ՄԱՐԱՆԻ ԴԵՂԱՊԵՏԸԼ, պատմուածք Ա. Շահնազարեանցի	48
7. ԳԱՐԻԳԻԵԼ ՄԻՐԶՈՅԵՍՆ, յիշողութիւններ Ս. Լիսիցեանի	67
8. ՈՂՋՈՅՑՆ ՔԵԶ ԿԱՐԻՔ, բանաստեղծ. Ադա Նեգրի, թարգմ. Յ. Յակոբեանի	77
9. ՅՈԳՆԱԾ ԵՄ, ԱՆՏԱՌ, Աւ. Խահակեանի	79
10. ՄԻ ԳՐԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԱՌԻԹՈՎ, Լևոն Մանուկեանի	80
11. ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒԽՍԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ, Ե. բոփ-չանի	87
12. ԻԲՍԵՆ, յօդ. Վ. Նալբանդեանի	98
13. ՇՎԵՅՅԱՐԱԿԱՆ ԳԻՒՂԸ, Կուրբար-Հարունի	129
14. ԱՆՀԱՇՏԲ, պատմուածք Շահրիարի	137
15. ՄԱՏԵՆԱԿՈՍՈՒԹԻՒՆ.—39) Նար-Դոմ՝ „Տանտիրոջս ազդիկը“, 8. 6.—40) „Les souffrances du peuple arménien et le devoir de „l'Europe“ E. Bernstein.“ Ա. Ա. —41) Մ. Տ. Շատրութիւն, „Քիրդ բէզ“, Ա. Ա.	156
16. ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ ՄԱՀԱՒԱՆ 10-ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ, նոր ստացուած զրքեր	167
17. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Օտարների սիսալ կարծիքը մեր մասին.—Հայ հարուստները և հայ մասսան.—Միջնադարեան և ժամանակակից պահանջներ. —Մեր կարիքները և կոտակները, Լ. Ա.	169
18. ԱՐՏԱՔԻՒՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Մաքսային սակագների օրինագծի ընդունուելը ռայխաստագում. —Ֆրանսոսիական պարլամենտի վերջին նիստը. —Էմբերների ձերբակալութիւն. —Վենեցուէլայի գործերը. —Եւրոպական դիպլոմատիան եղբէ լիստ միջոցների դիմում. —Սուլթանի վերջին ծաղրը. —Անդամանառութեան վրկարար նշանակութիւնը. —Խնչէ թելագրում պատմութիւնը Մակեղօնիացին. —Կոմս Լամզոլովի ուղարութիւնը Վիէննա, Լ. Ա.	174
„Պրա. Եւստ.“ յօդուածը մակեղօնական զարծերի մասին	178
	185

Նոր ըրջան Ա տարի

Հրատ. XIV տարի

ՄՈՒՐՃ

ԴՐԱԿԵՆ, ՀԱՍՏՐՈՎԱԿԱՆ ԵՒ ՔԵՂԱՔԱԿԱՆ

Ա.Մ.Ս.Ա.ԳԻՐ

№ 12

ԴԵԿԱՏԵՄԵՐ

1902

—♦—♦—♦—

ԹԻ ՁԼԻՌ

Գլուքագրիա Գրադարան և պատկերասրան
1902

Дозволено цензурою, Тифлисъ, 26 декабря 1902 года.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 12

	Երես	
1. ՄԱՅՐԵՐԸ, պատմուածք Ա. Ահարոնեանի	5	
2. ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ, Ա. Խահակեանի	29	
3. ՀՈՒՆԳԱՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ, Հ. Աճառեանի.	30	
4. ՀՈԴԵՀԱՆ, լեզենդա, Յով. Թումանեանի	35	
5. ՄԱԿՈՒ, ձանապ. Նկարագր., Դօկ. Կ. Փաշայեանի	38	
6. ՄԱՐԱՆԻ ԴԵՂԱՊԵՏԸ, պատմուածք Ա. Շահնազարեանցի	48	
7. ԳԱԲՐԻԵԼ ՄԻՐՋՈՅԵԱՆ, յիշողութիւններ Ս. Լիսիցեանի	67	
8. ՌԴՀՈՌՑՆ ՔԵԶ ԿԱՐԻՔ, բանաստեղծ. Ադա Նեգրի, թարգմ. Յ. Յակոբեանի	77	
9. ՅՈԴՆԱԾ ԵՄ, ԱՆՏԱՌ, Ա. Խահակեանի	79	
10. ՄԻ ԳՐԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԱՌԻԹՈՎ, Լեւոն Մանուկյանի.	80	
11. ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՌՈՒՍՈՑ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ, Յ. բոփ- չեանի	87	
12. ԻԲՍԵՆ, յօդ. Վ. Նալբանդյեանի	98	
13. ՇՎԵՅՅԱՐԱԿԱՆ ԳԻՒՂԸ, Կուրքար-Հարուենի	129	
14. ԱՆՀԱՇՏԸ, պատմուածք Շահրիարի	187	
15. ՄԱՏԵՆԱԽՈՍՈՒԹԻՒՆ.—39) Նաբր-Դոռ՝ „Տանտիբոշ աղջիկը“, Տ. Յ.—40) „Les souffrances du peuple arménien et le devoir de „l'Europe“ E. Bernstein.“ Ա. Յ.—41) Մ. Յ. Շլոմ՝ „Քիւրդ բէդ“, Ա. Յ.	156	
Նոր ստացուած գրքեր		167
16. ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ ՄԱՀՈՒԱՆ 10-ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ Տ. Յովհաննեսեանի	169	
17. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Օտարների սիալ կարծիքը մեր մասին.—Հայ հարստաները և հայ մասան.—Միջնա- դարեան և ժամանակակից պահանջներ. —Մեր կարիք- ները և կտակները, Լ. Յ.	174	
Պաշտոնական հայութ առ դրու թիւն ներ		176
18. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Մաքսալին առկագների օրինագծի ընդունելը ասլիստագում. —Ֆրանսիական պարլամեն- տի վերջին նիստը. —Էմբերների ձերբակալուիլը. —Վե- նեցուէլայի գործերը. —Երոպական դիպլօմատիան եղբ է խիստ միջոցների զիմում. —Սովորանի վերջին ծաղ- րը. —Անդամանառութեան վրկարար նշանակութիւնը. —Ինչ է թելազրում պատմութիւնը Մակեդոնիային. —Կոմա և ամզգօքֆի ուղևորութիւնը Վիէննա, Լ. Յ.	178	
„Պրա. Յէստե.“ յօդուածը մակեդոնական գործերի մասին		185

19. ԳԵՂԱՐՈՒՆՈՒՑԻ ԱՃԽԱՌՀԵՑԻՑ. — „Անսանձի սանձահարումը“
Ելքսպիրի. — Կախարդական աշխարհ Պատագինկօի. —
„Մօննաւ-Վաննա“ Մէտէոլինկի. — Հասարակական, ամ-
բոխալին և անհատական էքսիզմ. — Խփիկենիս և Մօննա-
Վաննա. — Մարդկացին բնութեանը համապատասխան և
իդէալական ճշմարտութիւն. — Կազմիքը Կեանքի մէջ. —
Մեծ և փոքր անարդարութիւններ. — Անհատական մանր
էզօփմը որպէս հիմունք մեծ չարիքի, Ա. 187
20. Ա. Վ. Զիկ. Բժկ. Վ. Արծրունու 202
21. ՀԱՅ-ՎՐԱՅԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ,
յօդ. Կալամիի, թարգմ. Գ. Դալստեանի 232
22. † Վ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆ 250
23. » » » Յ. Սպենդիարեանի 252
24. «ՄՈՒՐՃԻ» ԵՐԵՔ ՏԱՐՈՒՍՅ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՎԻՃԱ-
ԿԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ, Տ. 254
25. ՅԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ 260
26. 2-րդ ՅԱՒԵԼՈՒԱԾ «ՄՈՒՐՃԻ», ԲԵԼՏ Հարս. Ինքնառն եւ
ուք. Տարի առաջ, թարգմ. Աս. Լիսիցեանի 33—56

ԽՄԲԱԴՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Խմբագրութիւնը յատուկ խնդրում է յօղուածագիրներից՝ զրել
պարզ, մանաւանդ թուելը, յատուկ անուններն ու օտար բառերը, և թեր-
թի միայն մի երեսի վրայ:
2. Զընդունուած մեծ յօղուածները պահւում են խմբագրատանը
6 ամիս, իսկ փոքր յօղուածներն ու բանաստեղծութիւնները չեն վերա-
դարձնուում: Զեռացիրը յետ ստանալու համար պէտք է ողարկել ճանա-
պարհածախսը:
3. Գրուածքների վարձատրութեան չափը որոշում է Խմբագրութիւնը:
4. Խմբագրութիւնը իրան է վերասպահում ուղարկուած յօղուածները
փոփոխելու կամ կրծառելու իրաւունքը:
5. „ՄՈՒՐՃԻ“ համարը չ'սոսացուելու դէպքում պէտք է Խմբագրու-
թեան տեղեկութիւն տալ մինչեւ յաջորդ համարի լուս տեսնելը: Այդ տեղե-
կութեան անհրաժեշտ է կցել տեղական պօստային գրասենեակի՝ հաւաստա-
գիլը (յծութեան), որ ամսագլի համարը չի յանձնուած գմնգատաւորին:

ՄԱՅՐԵԼ

“Նատ ձմեռների սառնամանիքներ
հալուեցին, հասաւ գարունը, եկան ծիծեռ-
նակները, կենցաղաւէր մարդիկ տեսան
և ինդացին, բայց նրանք երբէք չը կա-
րողացան տեսնել իրանց սիրելիներին”:

Եղիօէ

I

Դիւղական վոքրիկ եկեղեցու կիսախոսարի
մէջ խնկի ծուխը պալան-պալան բարձրանում էր այն
երեկոյ և բակ կապում վոքրիկ լուսամուտների շուրջը:
Կանթեղի աղօտ լոյսի առաջ քահանան մռմռալով քա-
զում էր ազօթքները և բազմաթիւ ժամաւորները մերժ
գետնատարած խոնաւ խօիրների վրայ, մերժ ուարի
կանգնած ու բաղկատարած՝ մրմնջում էին մի ընդհա-
նուր ու խուլ մռմռոց հանելով: Կանանց բաժնում սե-
ւացած սեան վրայ կախուած էր Աստուածածնի նկա-
րը մի մգլած, գեղնած շրջանակի մէջ և նրա առաջ
կանգնած էր մի տարիքաւոր կին՝ Սուսանը: Այդ կինը
և այդ նկարը երկու մայրեր էին, որոնք նայում էին
իրար ակնապիշ և կարծես ջանք էին անում հասկանալ
միմեանց մտքերը, կարդալ միմեանց սրտերը: Տիրամայրը
վերեւումն էր՝ սեան վրայ, Սուսանը ներքեւում՝ գետ-
նի վրայ: մէկը սուրբ էր, կարող և հրաշագործ, միւսը՝
խեղճ, վշտահար, անզօր մի պառաւ, որ եկել էր

Դեկտեմբեր, 1902.

նրա առաջ լաց լինելու, աղերսելու։ Միաձնի փոքրիկ, գանգրահեր գլուխը սղմած իր կուսական կրծքին, Աստուածամայրը խանդաղատանքով ու ժպտով նայում էր վար, իր ոտների տակ սողացող, գալարուող բազմութեանը, նայում էր նոյն ժպտով նաև Սուսանին, որ եկել էր ցաւոտ կուրծքը նրա առաջ բանալու։

Երջանակի վրայ վեց փոքրիկ, գալար մեղրամոմեր, վշտատեսիլ ու գեղին, պլաղալով վառւում էին և գունատ ու խորհրդաւոր լուսով՝ երերուն, ազօտ փայլ էին տալիս Աստուածամօր հեղ դէմքին, փոքրիկ Քրիստոսի լիքը, ձիւնափայլ մարմնին, որ այդ փայլի մէջ լողում էր ինչպէս մուգ լճի վրայ վաղորդեան մշուշի մէջ լողացող սպիտակ կարապը։ Խնկի ծուխը չորս կողմից կաթնագոյն քուլաներով գալարւում, պտոյտներ էր կազմում աստուածային մօր և զաւակի շուրջը և կարծես աշխատում էր իր ծալքերի մէջ պարուրել և վեր տանել այդ երկնային զոյգը։ Հէ որ նրանք այնքան շատ բան ունէին պատմելու աշխարհից, այնքան արցունքներ Ամենակալի գահի առաջ փուելու։

Վազուց էր այնտեղ կանգնած Սուսանը։ Եկեղեցու զանգի ձայնը լսելուն պէս նա եկաւ, հասաւ, իր դողդոյուն ու պառաւ մատներով մեղրամոմերը կոցրեց այրուած, սեացած շրջանակին, համբուրեց, երեսը խաչակնեց և քարացաւ իր տեղում։ Մոմերի կէսն արդէն վառուել էր և Սուսանը կանգնած էր դեռ միենոյն տեղում, արտասուաթոր աչքերը չէր հեռացնում Տիրամօր պատկերից, դողդողացող շրթունքներից բառերը թափւում էին, հա թափւում, կրակի խօսքեր, ցափ, աղերսանքի, պաղատանքի խօսքեր—Սուսանը ազօթում էր։ Արտասուբի կաթիները ժայռի վրայ վշրուող վտակի ցնցուղների պէս յորդառատ դուրս էին ցայտում աչքերից և գլուխում ծեր դէմքի խորշումների վրայով, ու փոքրիկ հոսանուտ ակօսներ կազմում աչքերի տակից մինչև ծնօտը։ Սուսանն աղօթում էր իր միակ որդու, իր դարիբ, թափառական Սաքօի համար, որ քա-

նի մի օր առաջ թռղեց, գնաց դէպի մութ անյալտը,
դէպի հեռուն...

«Ո՞վ սուրբ Տիրամէր, ասում էր նա, բոլոր ցաւստ
սրտերի, բոլոր վշացած հոգիների, բոլոր մղկացող
մայրերի գու գթոտ մայր, ձեռքս քո փէշն եմ ձգել,
էրուած, մորմոքուած սիրտս բերել եմ քո սուրբ ոտնե-
րի տակ գնելու. բաց այն, Տիրամէր, տես, արցունքը
մի կողմ; կրակը միւս կողմն են բռնել սրտիս և արցունքը
վառ կրակը մարել չի կարողանում, բոցերը շատ են.
բաց այն ու նայիր՝ անճարների մայր, չէ գու սրտերի
կրակը հասկանալ, զգալ գիտես, տես ինչեր կան իմ
եփուած սրտում, ու յետոյ մի ճար, մի դարման, ողոր-
մած թագուհի: Իմ ծով մեղքից էս ծեր օրերիս ֆալա-
գը մի դաղ քաշեց որտիս, մի խորը դաղ և էրուած
տեղը գեռ մխում է, մխում. գու խօ տեսար, սուրբ
մայր, թէ էն մէկ ջիւանս, սարի պէս տղամարդ, ինչպէս
կտոր կտոր արին անօրէնները. ախ ցաւով ծնած, մե-
ծացրած զաւակիս էս կոտրած ձեռներովս արիւնոտ
գերեզման իջեցրի: Ի՞նչ անեմ, գուցէ իմ մեղքից, գուցէ
Աստուած էր վրաս բարկացել: Այս մէկն էլ գնաց...
մէկտացի, աղաչեցի, լաց եղայ, ձեռք ու սաքն ընկայ,
որ զը գնայ, բայց գնաց... Թէ ուր, այն գու ինձանից
լաւ գիտես, Տիրամէր... հեռու սարերում, ձորերում
բարը՝ բարձ, ժայռն՝ անկողին, օձերի հետ ջուրը, գա-
զանների հետ բունը կիսելով՝ նա թափառում է և ես
անտէր, անտիրական, ձեռքս չոր գետնին, սիրտս՝ դող,
հոգիս՝ ցաւած, օրս՝ սեւ, թաց աչքս դրանը բռնած
գիշեր, ցերեկ մղկտում, վշվում եմ: Տիրամէր, ողոր-
մած մէրիկ, քո ոտն եմ եկել, ես էլ չեմ տեսնում
նրան, գու անշուշտ տեսնում ես, ախ, քո բարի, քո
ողորմած, քո բազցր աչքը նրանից մի հեռացրու, քո
սուրբ հովանին ամպի պէս նրա գլխից պակաս մի ա-
րա, չարից, ցաւից, դարդից, արիւնից նրան աղատ
պահիր, չէ գու կարող ես, չէ որ թէ գու ուզես, մութ
ամպն էլ նրա գլխով չի անցնի: Սրտիս վրայ էլ սաղ

աեղ չի մնացել, ողջ խոցոտուած՝ պատառապատառ է եղած, էլ տեղ չը կայ նոր գանակ միսելու, էլ տեղ չը կայ մի նոր գաղ բաշելու, էլ ճար չը կայ նոր խոց բանալու. նրա սեւ յատակում; ինչպէս սեւ լիճը մուժք այրում, արիւնը ծով է կապել ու յաւերիս բոցերից եռ է գալիս, պղպճում ինչպէս լի կաթսան օջաղի վրայ; Փրկիր նրան, իմ զաւակին, Տիրամէր, բարեխոս եղիր նրա մօտ, որ այնպէս սիրով գրկել, սղմում ես քո սուրբ կրծքին. տես նա ինչպէս փարում է ըս մայրական սափնքներին, ինչպէս ուզում է լսել քո սրտի ձայնը, մայր, մայր, ախր ես էլ եմ մայր, ես էլ սիրտ ունեմ; կուրծք ունեմ, մայրական կաթով քանիսին կերակրեցի, կըրծքիս վրայ քանիսին չերմացրի և էլ չը կան, չը կան, ոչ մէկը չը կայ, ուժ ծնունդ նստեցի, ուժ երկունք բաշեցի, և այժմ էն մէկն է: Ինչպէս գիմանամ, սուրբ Տիրամէր, կուրծքս չոր է, սիրտս մարած, մոխիր գարած գարգի բոցից, սպիտակ մազերիս վրայ սեւ կապած, մէջքս երկու տակ ծալուած, մեռայ գերեզմանները լիզելով, չոր հողը գրկելով իմ շարան շարան արնակոլ մեռելների, ու չը կայ մէկը, որ սղմեմ կրծքիս, չը կայ մէկը, որ իմ սրտի ձայնը լսի, չէ ես էլ խեղճ եմ; մեղք եմ, մայր եմ, պառաւած, անզօր մայր, ով գուբուր թշուառների, խեղճերի, անճարների ողորմած մայր. Ուխտ եմ անում քո սուրբ պատկերի առաջ, թնդ լսի ինձ մեր ամենի տէրը, սուրբ Աստուածորդիդ, ամեն երեկոյ այստեղ քո առաջը կը վառեմ վեց մոմք, կ'ընկնեմ, կը լիզեմ սառը հողը. անճարի պէս փէշերիցդ կը կախուեմ, քեզ հանգիստ չեմ տայ, քո աչքից չեմ հեռանայ, այստեղ կը ճչամ, կը սգամ, կը լամ, կ'աղաղակեմ երկնքովը մէկ, որ գու ինձ լսես, որ իմ միակ զտւակին փրկես, պահես, պաշտպանես: 0՝, ողորմած Տիրամէր, քո սիրտը լայն է, սէրդ՝ անչափ, մենակ նրան մի հասիր, աղաչում եմ, նախ հասիր բոլոր ուրիշ անճարներին, խեղճերին, նեղեալներին, քեզ կանչողներին, որ այնքան շատ են մեր վէրան աշխարհում, մեր

սեւ երկնքի տակ, ամենից վերջը միայն իմ ձայնը լսիր,
մեղաւոր սրտիս խնդիրը կատարիր, մայր, մայր, բոլոր
վշտացած հոգիների, անտէր-անճարների ողորմած մայր»:

Մոմերը մէկիկ-մէկիկ այրուեցին ու մարեցին, Առ-
տուածածնի և Քրիստոսի գէմքերը կամաց-կամաց լու-
ծուեցին ու կորան խաւարի մէջ. քահանայի ձայնը
լուեց, ազօթաւորների մրմունչները դադարեցին, եկե-
ղեցին դատարկուեց, կանանց բաժնից էլ սպիտակ չար-
սաւաւոր ստուերներն իրար յետեւից մեզմով գուրս
դնացին. Սուսանն այնտեղ մնաց մենակ և դեռ ազօ-
թում էր, գեռ նա աչքերը վար չէր բերում Տիրամօր
պատկերից, գեռ չորացած բազուկները տարածած նա
օզնութիւն, գթութիւն էր ազերսում և լալիս էր ու լա-
լիս...

—Ո՛րդի, այ Սուսան խաթուն.

Սուսանը շարօւնակում էր ազօթքը, այժմ նա ծունկ
էր չոքել և չէր տեսնում թէ ի՞նչ է կատարւում իր
շուրջը, չէր էլ լսում ոչինչ:

—Սուսան խաթուն, ուշ է, ժամը պրծաւ, որդին
կինը գլուխը բարձրացրեց, խօսողը ծերունի բա-
հանան էր:

—Ճէրտէր ջան, աջիդ մեռնեմ, ազօթում եմ:

—Հա, որդի, գիտեմ, որ ազօթում ես, լաւ ես ա-
նում, թնդ Աստուած լսի, ասում եմ, որ ժամը պրծաւ,
էլ մարդ չը կայ, տե՛ռ:

—Դու գիտես չէ, հայր ջան, էն մէկն էնպէս բէ-
մուրազ եղաւ, մէկէլները դնացին, արեան ծով էր, խեղ-
դեց բոլորին, էս մէկն էլ չոլերն ընկաւ, ես եկել եմ
Աստուածածնի փէշերից կախուել:

—Լաւ ես անում, զաւակս, լաւ ես անում, բայց
ուշ է արդէն:

—Դիտես, հայր ջան, չեմ թողնի, չեմ թողնի նրա
փէշերը, ամեն օր էսպէս կը դամ, ես ի՞նչ եմ արել, որ
էսքան սեւը մենակ քաշեմ, որ էսքան ցաւը մենակ ինձ
տան, մեզը չեմ, մայր եմ էմ, ոտ էլ մայր է, էս Տի-

բամերը, տես, տես ինչպէս գրկել է իր զաւակին, տես ինչպէս սղմում է կրծքին, իսկ ես ոչ ոք չունեմ, ոչ ոք Դու գիտես չէ, տէրտէր ջան, չէ քեզ հետ դրինք հոզը արնակոլով զաւակներիս:

—Հա հա, որդի, դէ հիմա բաւական է, մնացածն էլ էգուց:

—Տէրտէր, ոտիգ մեռնեմ, դուման բռնեց իմ գլխին, ինչ դուման, սար ու ձոր մթնեց. Էս չար օրերին, էս չար ժամանակին, նա էլ թողեց, գնաց... ես էլ ուր գնամ, չոր գլուխս ուր տանեմ, դէ Տիրամէրն այստեղ է, ամեն օր կը գամ, մոմ էլ կը բերեմ, կիրակիներն էլ թաղա հաց կը թխեմ, կը բաժնեմ, մատաղ կ'անեմ, արցունք էլ դեռ ունեմ, աչքերս գեռ չեն մարել, այ էս հողը կը թրջեմ, դէ նա էլ մայր է, սիրո ունի, սրաի մումուռը կը հասկանայ, մի ճար կ'անի, էնպէս չէ, հայր ջան:

—Այդպէս է, որդի, ամեն օր արի, աղօթիր, Տիրամէրը ողորմած է, բարեխօս կը լինի, իսկ հիմա գնանք, տես այսօր ուշ է, մոմերդ մարել են:

Սուսանը կարծես միայն այժմ նկատեց, որ մոմերը վառուել, վերջացել են, նայեց վեր, խաւարի մէջ, սեան վրայ պատկերներն էլ չէին երեւում, էլ Աստուածածնի կարմիր պարեգօտը և կապոյտ ծածկոցը չէր նշմարւում, էլ նրա հեզ աչքերը ժպտով չէին նայում վար, փոքրիկ Քրիստոսի ձիւնաթոյր մարմինը եկեղեցու խաւարամած մթնոլորտում էլ չէր լոզում մի կտոր ճերմակ ամպի պէս, այդ բոլորի փոխարէն, փոքրիկ, ծխոտ շրջանակի մէջ հազիւ նշմարւում էին մի քանի անորոշքեր, մուժ ստուերներ:

Սուսանը խաչակնքեց երեսը ու կամաց կամաց երերալով դուրս գնաց: Քահանան կանգնած նայում էր նրան յետեւից և երբ այդ փոքրիկ, դողդոջուն ստուերը խսպառ ծածկուեց գրսի խաւարի մէջ, նա գլուխն օրօքեց խորհրդաւոր ձեւով:

—Խեղճ կին, ասաց նա կամացուկ, ինչ է լինելու

վերջը, խելքն արդէն կարծես տեղը չէ. Փառք քեզ Աստուած, հազար բերան փառք:
Դուրսը մութ էր:

II

Ելի գարուններ եկան բոլորեցին Սուսանի գլխով,
Էլի գաշտ ու ձորեր ծաղիկներով ու կանաչներով ծած-
կուեցին. Բակի մի հատիկ խնձորենին մի քանի անգամ
ծաղկեց և բուրմունք արձակեց իր շուրջը, պատերի
նեղ ճեղքերի մէջ ճնճղուկները բուն դրեցին և ձագեր
հանեցին. Հօտերն ու նախիրները դաշտերը կենդանաց-
րին, իսկ արագիլները արդէն մի քանի անգամ չուե-
ցին հեռու, հեռու և կրկին վերադարձան. Ելի աշուն-
ներ եկան իրանց վհատեցուցիչ քամիներով և ծառերի
տերեւները լիզեցին, թռչուններն ահագին ու տխուր
երամներով թողին ու հեռացան գեղերի վրայ հատիկ-
ներ մուրալով երկնքի երեսից անցան, բայց Սուսանի
որդին չը կար ու չը կար: Մենակ էր Սուսանն իր խըր-
ճիթում, մենակ ու մոռացուած. նրան մխիթարիչ ու
ընկեր մնացել էր իրանց ծեր շունը, որ իր տիրուհու
պէս այնքան բաներ էր տեսել և նրա պէս կարծես
սպասում էր մէկին: Երբ գարնանը բակի խնձորենու
վրայ առաջին կոկոնները բացում էին, Սուսանը նա-
յում էր ուշադրութեամբ ծառի ճիւղերին և դառնում
իր ոտների տակ թաւալող շանը:

—Բօղար, խնձորենին ծաղկել է, շուտով նա կը
դայ, այնպէս չէ:

Եւ Բօղարը օրօրում էր իր պոչը, շեշտակի նայում՝
տիրուհու աչքերին ասես ի նշան համաձայնութեան:
Անցնում էր գարունը, անցնում էր ամառը, էլի վրայ
էին հասնում աշխանային ցրտերը, խնձորենին մերկա-
նում էր տերեւներից և տխրութեամբ օրօրում իր

կատարը ցուրտ հովերի առաջ, Սուսանը նայում էր
վշտով և կրկին դառնում իր շանը.

—Բօղար, չեկաւ, չեկաւ բէբաղդը, դարնանը կր
գայ, այնպէս չէ:

Եւ շունը կրկին օրօրում էր իր պոչը և պառաւն
սպասում էր յուսով նոր գարնանը, որ խնձորենին ծաղ-
կի, որ թռչունները վերադառնան և նրանց հետ միա-
սին Սաքօն յայտնուի:

Նա սպասում էր և Սաքօն համար կամաց-կամաց
պատրաստում էր փափուկ, շատ փափուկ անկողին:
Բուրդը հաւաքել էր տարիների ընթացքում և մատնե-
րով մաքրում էր ամեն օր, ապա կարում և անկողինը
դնում ծալքը, յետոյ նրան թւում էր, թէ հարկաւոր է
քանդել նորէն փափկացնել, ցած էր բերում և վեր-
սկսում տասն անգամ կրկնած աշխատանքը:

Դրա հետ միաժամանակ նա կատարում էր իր
ուխուց սրբութեամբ, ամեն երեկոյ գնում էր եկեղեցի,
վեց մոմը գողգոջուն ձեռքով կպցնում Տիրամօր պատ-
կերի սեացած, այրուած շրջանակի վրայ, ձեռքերը տա-
րածում էր դեպի վեր, դէպի երկինք և ազօթում; ազօ-
թում: Եւ ամեն երեկոյ ազօթքից յետոյ, երբ բոլոր ժա-
մաւորները դուրս էին գնում, նա դառնում էր տէր-
տէրին.

—Սաքօն կը գայ այնպէս չէ, տէրտէր.

—Հա, որդի, ի հարկէ կը դայ, բո այնքան ար-
ցունքը, ազօթքները...

—Բերանդ տաճար է, տէրտէր ջան, տաճար, բեր-
նիդ մեռնեմ, ասա, ասա, այսպէս տան, դու որ ասում
ես, Տիրամէրն էլ ժպտում է, յօյսը սրտիս մէջ վարդի
պէս բացւում է:

—Հապա, որդի, Տիրամէրը մւմ խնդիրն է թողել
անկատար, երկնքի դռները նրա բարեխօսութեան առաջ
միշտ բաց են:

Եւ Սուսանը յուսով ու հանդսացած տուն էր վե-
րադառնում; ուր նրան սպասում էր Բօղարը, որ կազ-

կանձելով փաթաթւում էր տիրուհու ստներին։ Սուսանը, հաւատացած էր, որ որդին կը գայ, անպատճառ կը գայ, ի՞նչպէս կարող էր Տիրամայրը խարել նրան, նա այնպէս ժպառվ, այնպէս քաղցր է նայում վերից, երբ Սուսանը մոմերը վառում է և ազօթել սկսում։ Ի՞նչպէս կարող է նա չը լսել մի մօր ազաշանը, որ այնքան տառապել է, այնպէս տանջուել, այնքան լացել, միմնջացել։ Ինչու պէտք է Տիրամէրը այնքան ցաւեր միայն նրան բաժին տայ. մէկ էլ ի՞նչ գժուար է նրա համար կատարել մի մօր այսքան ազաշանքը. որ նա կամենայ, որ նա մի բաղցը աչք ձգի, բաւական է, մնացածը հեշտ է, Սուսանի որդին ինքն իրան կը գայ ողջ և առողջ։

Եւ ամիսներ ու տարիներ էին անցնում՝ Սուսանի գլխով, որդին չը կար ու չը կար, բայց նա չէր յուսահատում, Տիրամէրը ժպառվ էր և նա հաւատացած էր, որ Սաքօն կը գայ։

—Տիրամօր փէշիցն եմ բռնել, տսում էր նա յաճախ իր հարեւաններին, Տիրամօր փէշից... չորս տարի է, նա ինձ ամեն օր ժպառվ է... նա ինձ խոստանում է... Տիրամօր ժպի՛տը...

Հարեւանները լսում էին և խորհրդաւոր ձեւով գլուխներն օրօրում կրկնելով՝

—Խեղճ կին, խեղճ կին։

Սուսանը սպասում էր... նա յաճախ երեւակայում էր այն օրը, այն վայրկեանը, ելք զաւակը կը գայ... նախ բակի գուռը ճռուում է բարձր, յետոյ թրը՛խի, ծածկում է... շունը, այս խելօք Բօղարը, վազում է կատաղած, բայց յանկարծ ձայնը կտրում է, շներն ախր չեն մուտանում տէրերին՝ այնպէս չէ, Բօղար, գուխօմ չես մոռացել Սաքօխ, դառնում էր նա շանը. կենդանին նայում էր խելացի աչքերով և կարծես ուզում էր ասել, հա, ի հարկէ չեմ մոռացել։ Երեւակայական պատկերը շարունակում էր, շունը լսում է, թաւալում է գետնին, փաթաթւում է նրա ստներին, կազ-

կանձում ուրախութիւնից՝ ինքը՝ Սուսանը, այդ ժամանակ նստած է սրահում, դէ ծեր է, աչքերը լաւ չեն տեսնում, համ էլ որդին փոխուել է, քանի՛ տարի է... նայում է և չի ճանաչում. ահա նա մօտենում է, մօր ոտները գողդողում են, փորձում է վերկենալ, բայց չի կարողանում, բարձրանում է՝ ընկնում, վեր է կենում, դարձեալ ընկնում, առաջ է ձգւում բոլոր ուժով, ոյժ է գործ գնում և ձեռքերը տարածած փաթաթւում է նրա պարանոցով.

—Ա՛խ բուանամ ես... դու ես, Սաքօ ջան... դու ես... դէ հիմա թաղիր ինձ, եկամ... երբ եկար... ախր ես մեղք եմ... Տիրամէրն ասաց կը դառ, և եկար, դէ հիմա թաղիր ինձ... և արցունքները թափւում են և Սուսանը երջանիկ է...

Օրական մի քանի անգամ այս սփոփիչ պատկերը գալիս է անցնում նրա աշքի առաջից. նա ինքն իրան տեսնում է գրկախառնուած որդու հետ, լալիս է և արցունքները զովացուցիչ են:

Եւ ի՞նչ լաւ է, լաւ է այդ բոլորը...

Մի ժամանակ նրա համար երդումներից գերագոյնը իր որդու արեւն էր, որդու գլուխն էր. վաղուց է, որ նա այդ թողել է, այդ արեւը այժմ շատ է հեռու, շատ է թանկ, որպէս զի մայրը յանձն առնի հեշտութեամբ քերան բերել» ամեն անգամ. այժմ՝ նա երդում է որդու գալուստով.

—Որդուս գալուստը վկայ... և նա արտասանում այդ երեք բառը այնպիսի շեշտով, այնպիսի հաւատով. այդ երդումը նրա սրբութիւն սրբոցն է, նրա կեանքի սիւնն է, նրանով է ապրում, չնչում, հաւատում. նայում է գուանը և սպասում այն թրիկոցին, որ նուիրական գալուստը պիտի աւետէ:

Տարիներն անցնում են տարիների յետեւից, խնձորենին ծաղկում է ու մերկանում, տարափոխիկ թըռչունները գնում են ու գալիս, Սաքօն չը կայ, բայց

Սուսանը շարունակում է ազօֆել, շարունակում է հա-
ւատալ ու երդուել.

—Որդուս գալուստը վկայ...

Հարեւանները լսում են, գլուխներն օրօրում:

—Խեղճ կին, խեղճ կին:

Եւ Տիրամէրը ժամում ժպտում է, յուսատու,
պայծառ ժպտով. Սուսանն իրաւունք ունի կրկնել՝

—Որդուս գալուստը վկայ...

III

Այն գիշերը... ախ այս աշնանային գիշերները ինչու իրանց խաւար ծալքերում բերում են միշտ այնքան սեւ, այնպէս անորոշ, խեղդող զգացմունք: Դրսից լըսւում է մանրամաղ անձրեւի կրկտոցը, և կտուրներից ու պատերից կաթկաթում է ջուրը անվերջ, յուսահատեցուցիչ միակերպութեամբ՝ ճլը՛փփ, ճլը՛փ, ճլը՛փ... դրսում, մութ փողոցներում անց ու դարձը վաղուց դադարել է. այդպիսի շար ժամին որ ադամորդին դուրսը կը մնայ:

Սուսանն անքուն է դեռ. նա նստած է և մոտածում է իր Սաքօի մասին. ուր է նա այժմ; որ չօլում, որ ձորում, որ այրի մէջ, կամ ժայռի տակ կծկուած: Սարերում այժմ ինչպէս ցուրտ է. նա էլ երեւի թըրջուած է, կրակ չունի, ինչպէս վառի, նրանք կրակ չեն անում, այն թափառականները, որ վառեն, լաւ չեն, ասում են... հիմա ինչպէս մրսում է իր Սաքօն, այսպիսի գիշեր...

—Օ՛, քուանամ ես, որդի, հոգիս դուրս գայ քեզ համար. ով սուրբ Տիրամէր, քեզ եմ ապաւինել, դուք բարեխօս եղիր:

—Ո՞վ գիտէ, գուցէ Սաքօն սարերում չէ, շարունակում է մտածել Սուսանը, գուցէ հենց գալիս է, շար գիշեր է, բայց նա կարող է գալ, տղամարդ է, այն էլ սարերի տղամարդ, որ ուզի, կը գայ:

Անցեալ օրը ինքը թափառական դնչուին գալ բաց
յել տուեց, նա ասաց. «Սարերին թառող արծիւը այս
օրերս ցած կը սլանայ»:

—Եետոյ:

—Եետոյ... դնչուն նայեց իր եզունդին, մնաց
մուածկոտ, կմկմաց, յետոյ... շարունակեց նա, յետոյ
նորէն վեր կը բարձրանայ:

Վերջին խօսքերը լաւ չէին, մուածում է Սուսանը,
«Սարերում թառող արծիւը ցած կը սլանայ», այդ լաւ
է, «յետոյ վեր կը բարձրանայ», բնչ կը լինէր, որ ա-
նիծուածը վերջին խօսքերը չ'առէր. ուրեմն Սարօն կը
գայ, էլի կ'երթայ, բայցատրում էր Սուսանը:

—Հա, հա, արի, արծիւո, արի, թառլանս, ցած արի
մէկ տեսնեմ, որ ողջ, առողջ ես, մէկ համբուրեմ սի-
րուն ճակատդ, մէկ երեսս երեսիդ քսեմ, մէկ գլուխդ
կրծքիս սղմեմ, էս քոռացած աչքերովս մէկ կուշտ կուշտ
նայեմ քեզ, ու էլի գնա, թնդ Տիրամէրը քեզ պահի,
որդի, թէկուզ սարերի վրայ, ծորերի մէջ. գէ որ գնում
ես, ես սեւտուրս ինչ կարող եմ անել, դու խօ արծիւ
ես, գնչուն ասաց, արծիւ բալա:

Դրում շարունակում է քար լսութիւնը. շներն էլ
չեն հաջում, նրանք անձրեւի տակ տղկուած՝ քաշուել
են դանազան ծակ ու ծուկ մուել, ոտ ու գչուխ իրար
խառնած, կծիկ դարձած՝ մրափում են այս դէղի տակ,
այն դռան առաջ: Եւ անձրեւը շարունակում է մաղուել,
և ջրերի ձայնը լսում է միակերպ, անվերջ՝ ճլը՛փ,
ճլը՛փ... Զար, վատ գիշեր է, բայց Սուսանն էլի
սպասում է իր որդուն, գնչուն ասաց՝ «արծիւը ցած
կը սլանայ, էլի վեր կը բարձրանայ»...

—Թող ցած սլանայ և էլի վեր բարձրանայ, գոնէ
տեսնեմ թէ աղաս է ցաւից, չոռից, գոնէ...

—Թրը՛խկ, թրը՛խկ, թրը՛խկ...

Բակի գուռն են թափում, Բօղարը հոփաց եւ նե-
տուեց դէպի այն կողմը:

—Թրըխկ, թրը՛խկ...

Սուսանը ցնցուեց ու գողաց բոլոր մարմնով, բայց
ինքն էլ չիմանալով ինչու, մի վայրկեան մեխուած մնաց
իր տեղում անշարժ և ամբողջապէս լսողութիւն դարձած,
բերանաբաց, չնչակտուր. նա լսում էր, թէ ինչ-
պէս շունը կատաղաբար չանգոռում է գուռը և ինչպէս
դրսից խփում են.

—Թրը՛ խկ, թրը՛ խկ...

Այս անգամ նա վեր թռաւ տեղից, երերալով վա-
զեց տան գուռը բանալու, այդ սովորական գործն
այժմ նրան չի յաջողւում, մի բան է պատահել վակին
և սողնակը յետ չի գնում. նա բաշքում է, թափ է տա-
լիս, և զուր, խսկ շունը դրսում հաջում է կատաղաբար
և գուռը թակում են գրսից.

—Թրը՛ խկ, թրը՛ խկ...

Վերջապէս նա գուռը բացեց և գուրս եկաւ խըր-
ճիթից, նա բակումն է, անձրել թափում է գլխին,
բայց նա գողգողալով, հեւալով, ցեխերի միջից երեւ-
րալով, անքալով վազում է գեպի բակի գուռը. սառ-
տիկ շտապելուց նրա ոտները խառնւում են զգեստի
ծալքերին և երեսի վրայ ընկնում է ցեխերի մէջ. թըրջ-
ում է իսպառ, այդ էլ նրա վոյմիր չէ, նա վեր է
կենում և գարձեալ վազում. ահա և բակի գուռը:

—Սուս, սուս, Բօզար, նա է, նա է, լիկուես զու,
սուս, թող որ գուռը բանամէ եւ գարձեալ գուռը
չի բացում, ձեռները գողում են, սիրտը թռթռում է՝
ասես կրծքից գուրս վախչելու համար, վերջապէս ճրու-
ռալով գուռը բացուեց, այժմ խաւարի մէջ նրա առաջ
կանգնած է մի մուլթ մարդկային ստուեր, հաղիւ հազ
նկատելի:

—Ո՞վ է... ով ես գու...

—Ես... ես Աստուծու մարդ եմ,.. անմիաս ու ան-
պէտք. գողում եմ ցրտից, թրջուած եմ, հեռուից եմ
գալիս... ուշացայ, անձրեւի տակ մնացի, մութը վրայ
հասաւ. սարերում, նոր հասայ, ես անպէտք մարդ եմ.

Աստծու արարած... Տես, ես դողում եմ, մի տեղ, մի կրակ, մի ճար, Տիրամօր սիրուն...

—Տիրամօր սիրուն, կրկնեց Սուսանը մեքենայաբար, մի վայրկեան լոեց, յուսահատ զայրոյթով կրծոտեց շրթունքները մրմնջալով.

—Նա չի, նա չի, ո՛, անողորմ մարդ:

—Չար գիշեր է, շարունակեց անծանօթը, խեղճին ով տեղ կը տայ, քանի դուռ եմ թակել, բացող չը կայ, վախենում են, ես անպէտք մարդ եմ, էլի վախենում են, դէ ես էլ Աստծու ստեղծածն եմ:

—Աստծու ստեղծածը. հա, ադամորդիներն Աստծու ստեղծածներն են, ասաց Սուսանը, բայց մտածում էր ուրիշ բան և քիչ մնաց ասէր՝ անողորմ, անաստուած մարդ, դու անպէտք ես, բայց ոչ անվնաս, տես, թէ ինձ ինչքան մխաս տուիր, սրտիս թելը կը բուեց, ոտներս դողում են, ես թուլանում, ես մեռնում եմ... հւմ էի սպասում; ով դուրս եկաւ. մրսնւմ ես, ջհանդամը թէ մրսում ես. թրջուած ես, էն լաւ է որ թրջուած ես. քո տեղն է, դու ինձ տանջեցիր, սարերում մէկը կայ, քեզնից լաւ է, նա էլ է թրջուած, նա էլ է մրսում և նա էս չար ժամին ոչ ոքի դուռը չի թակի. Սուսանը մտածում էր այս բոլորը, ուղում էր ասել բարձրաձայն, ճչալով, ուղում էր դուռն էլ շրիկալով ծածկել ճամբորդի երեսին, թողնել, որ նա դողայ դրսում, բայց չը կարողացաւ, մտածածը չասուեց, ծնօտները փակուեցին, մի առժամանակ մնաց լուռ:

—Ղարիբի տէր եմ, դու էլ զարիբ ես, ներս արի, ասաց նա վերջապէս:

—Տիրամէրը հասնի զարիբին:

—Հա, Տիրամէրը հասնի զարիբին. սուս, Բօղար, սուս, մի զայրացիր, ինչ անենք, Աստծու ստեղծածն է, խեղճ է, անճար է. Տիրամէր, բոլոր անճարներին, բոլոր տառապեալներին հասիր, յետոյ նրան, մը մնջում էր պա-

ռաւը ցեխերի միջից դանդաղութեամբ քայլելով և
և օտարականը հետեւում էր նրան:

Ներս մտան. ձիթէ ճրագը պլազում էր. պառաւը դարձաւ, նայեց օտարականին: Ծեր մարդ էր, սպիտակ մազերով ու միրուքով. խղճուկ զգեսաները ողջ թրջուած՝ ծլանքներից ջուրը կաթկաթում էր: Նա դողում էր ցրտից ամբողջ մարմնով: Նրա մի ուսից կախուած էր մի պարկ, կիսով չափ լի հացով, իսկ միւս ուսից մի երկար բան, որ սազի էր նմանում: Սուսանը նայում էր ուշադրութեամբ.

—Աշնուղ ես, հարցրեց նա:

—Զէ, մէրիկ, աշուղ չեմ, այլ գլրար, ես թափառում եմ գիւղից գիւղ, գոնից գուռ, գզում եմ բուրդ ու բամբակ ով տալիս է. այս էլ աշուղութիւն է, մէրիկ, տես ես զարկում եմ այս լարին, նա ցոյց տուեց իր գործիքը. և նրա հաստ լարը լաց է լինում իմ հարուածների տակ, և լալով բուրդ է գզում, այդ լացի գնով, սեւ օրով ես ապրում եմ: Ինչ անեմ, մէրիկ, ջիւանները արնակոլու եղան մեր վերան աշխարհում, ես եմ մնացել, ծեր օրերիս, սեւ օրերիս գռնէ դուռ թափառական: Անպէտք եմ, մէրիկ, անպէտք, Աստուած հոգիս էլ չի առնում: որ աղատուեմ:

—Սուս, սուս, ողորմելի, Աստծու դէմ մի խօսիր. նրա ստեղծած արարածների մէջ անպէտքը չը կայ. Երբ նա կամեցել է քեզ աշխարհ ձգել, լուռ, պապանձուիր ու քաշիր ճակատագիրդ: Դէ, հան այդ պարկդ, դէն գիր մէջըիդ գործիքները, լարն ու աղեղը, մօտեցիր թոնրին, տաքացիր, շորերդ չորացրու: Անձարին մի ճար միշտ կը լինի, Տիրամէրը վկայ, թող նա հասնի բոլոր զարիբ-զուրբաթնելին, յետոյ նրան, նրան, էն սարերի արծւին.

«Ե՞րբ կը դայ...» վերջին խօսքերը նա արտասանեց ինքն իրան:

—Եէն մնաս, մէրիկ, չէն մնաս, թող Աստուած քո սրտի բոլոր ուխտը կատարի, օջաղիցդ՝ կրակ, տաշտիցդ հացն անպակաս անի:

Օտարականը վար գրեց իր պարկը, ցած բերեց ուսուից գործիքները, մօտեցաւ թոնրին, կծկուեց ու մնջեց: Դրսում անձրեւը շարունակում էր, ջուրը կաթկթում էր միակերպ, անվերջ ճլլփոցով, խաւար էր ու ցուրտ. Սուսանն անքուն՝ դեռ երկար ժամանակ շարունակում էր մտածել նրա մասին, որ սարերում, այրերում մըրսում գողում է այս չար գիշերին:

— Դու համես, Տիրամէր, դու բարեխօս լինիս, միմնջում էր նա, և սիրտը ճլմէւում էր ցաւից:

IV

Լուսայաւ. անձրեւը դադարեց. բացուեց աշնանանային մի ցուրտ ու պայծառ օր: Մարդիկ գուրս սողացին բնակարաններից: Սուսանի հիւրը նոյնպէս պատրաստում էր գուրս ընկնել իր գիշերային ապաստարանից: Նա գանդաղութեամբ վերցրեց իր պարկը, կախեց ուսից, առաւ նոսե բուրդ գզելու գործիքը և դարձաւ Սուսանին.

— Են մնաս, մէրիկ, օջաղդ վառ մնայ:

— Գնում ես:

— Հա, գնում եմ ցնցոտիներս ու անպէտք գլուխս երկրէ երկիր, գիւղէ գիւղ, գռնէ գուռ քաշ տալսւ, մինչև մի տեղ շանսատակ լինեմ ու մաշուած, տրուրուած ոսկորներս հանգիստ առնեն: Եւ մինչ օտարականը խօսում էր, պառաւը մտածում էր, տեսնես սա չի տեսել նրան, են սարերի արծուին:

— Լսիր, դու շատ ես ման եկել:

— Եատ, խիստ շատ:

— Սարերում, ձորերում:

— Սարերում, ձորերում:

Պառաւը գլուխսը քաշ ձգեց ու լռեց:

— Ինչու ես հարցնում, մէրիկ:

— Եհ, հէնց էնպէս, տեսնում եմ, որ շատ տանչ ջուած ես:

—Հա, մէրիկ, տանջանքը իմ եղբայրն է, մենք միասին ծնուեցինք, այժմ էլ անբաժան ենք:

—Տանջանքը քո եղբայրն է, է՛լ. խեղճ մարդ, ես էլ նրա պէս մի քոյր ունեմ, ասում էր պառաւն ինքն իրան: Նա մտածկոտ էր, կարծես և ուզում էր մի բան հարցնել և՝ վախենում էր պատասխանից: Օտարականը երեւի այդ նկատում էր և սպասում:

—Լսիր, դու սարերում արծիւ տեսել ես, հարցրեց Սուսանը: Նրան թուաց, որ այս օտարականն էլ պիտի հասկանայ, որ արծիւը նա է, Սաքօն է: Տիրեց լռութիւն, նրանք նախում էին իրար ուշադրութեամբ, օտարականը չը հասկացաւ տարօրինակ հարցը. Սուսանն այդ նկատեց և կարծես արդարանալու համար շարունակեց.

—Գնչուն ասաց՝ «Սարերի արծիւը ցած կը սլանայ, էլի վեր կը բարձրանայ», սպասեցի՝ ցած չը սլանցաւ, ինչու:

Օտարականն այժմ նայում էր աւելի զարմացած, հարցն աւելի քան օտարոտի էր:

—Բան չեմ հասկանում, մէրիկ, ասաց նա, ես արծիւ չեմ տեսել, ու որ շատ եմ տեսել, խեղճ ու կրակ գզրար եմ, քո յարկի տակ աղ ու հաց կերայ, թէ բուրդ ունես, բեր գզեմ, գնամ իմ ցաւը հոգամ:

Պառաւի աչքերը փայլեցին. Նրա գլխով կարծես մի լուսաւոր միտք անցաւ. որդու անկողինը, այդ ինչ պէս է, որ նա մոռացել է:

—Բուրդ, հա, բուրդ ունեմ, ինչ լաւ ասացիր, ոզորմի հօրդ, գզելու բուրդ, որ փափուկ լինի, էնպէս չէ, որ գզեն, բուրդը փափուկ է լինում, անկողինն էլ լաւ. մատերովս եմ բրբել, բայց այդ քիչ է:

Եւ նա ծալքից ցած բերեց որդու անկողինը, բանդեց, բուրդը դուրս թափեց գզրարի առաջ.

—Այ, գզիր, զարկ, լաւ զարկ լարիդ. թող փափկի: Օտարականը գործիքը ցած բերեց ուսից, հացի ռեկտեմբեր, 1902.

պարկն էլ մի կողմ՝ դրեց, ծունկ չոքեց և սկսեց զարկել իր գործիքի հաստ լարին։ Բուրդը գզւում էր ամպերի պէս բուլա բուլա բարձրանում, իսկ լարն ասես լալիս, հեծում էր նրա հարուածների տակ։

— Լաց, լաց ընկեր, մռմռում էր նա, ցաւով ենք ծնւում, լացով վաստակում, արիւնով գերեզման մըտնում։ լաց, լաց իմ խեղճ ընկեր։ մեր աշխարհում ովչի լալիս, սար ու բարն էլ է տնբում։ Եւ լարը հեծեծում էր և բուրդը գզւում բարդ, բարդ բարձրանում։

Սուսանը լոռւթեամբ և հիացմունքով նայում էր։ Գործը շարունակւում էր, գզրարն այս անդամ և՛ զարկում էր և՛ երգում, կարծես իր լարի հետ մէկտեղ հեծեծում էր ու լալիս։ նա ասում էր.

«Գարահիսար լերան կրծքին նա էլ ընկաւ վիրաւոր, կուրծքը պատռած, սիրտը խոցուած չար թշնամու զնդակով։

Ժէռոտ լերան լերկ կատարից վար սլացիր սե արծիւ, թեներդ բաց, լայն թեներդ ու ջիւանին հով արա։ Խոցուած սրտից մուգ արիւնը կաթիլ կաթիլ կը ծուայ,

Ա՛խ ջիւանի կեանըն է հոսում ցաւոտ կրծքի լայն վէրբեց։

Ժէռոտ լերան լերկ կատարից վար սլացիր սե արծիւ,

թեներդ բաց, լայն թեներդ ու ջիւանին հով արա»։

Սուսանը լսում էր սկզբում ուշադրութեամբ, բայց կամաց-կամաց նա կարծես մի մեծ սարսափի առաջաշքերը չուեց ու գունատուեց։

— Այդ ինչ ես երդում... այ մարդ։

Օտարականը գլուխը բարձրացրեց, գործը թողեց, նայում էր, զարմացած այս կնոջ յուզմունքի վրայ և կարծես խօսք չէր գտնում պատասխանելու։

— Անւս, սուս, անողորմ, շարունակեց Սուսանը,

Թող այդ սեւ արծուի երգը, ես սեւը չեմ ուզում, գընչուն այդպէս չ'ասաց, վեր կաց շուտով հեռացիր, Աստուած քեզ հետ, երգիր քո սեւ արծիւն ուրիշ տեղ, ես վախենում եմ քեզանից, վախենում եմ քո երգից. ես դողում եմ քո շրթունքներից, նրանց շարժումներից, փակիր բերանդ, աղաչում եմ, քեզանից կախուած չէ, պապանձուիր, թող սեւ արծիւը սարի կատարին մնայ... ջիւմն... արիւնաքամ... Տիրամէր, Տիրամէր, ես վախենում եմ այս ողորմելուց, դու ինչ կ'ասես, եաման Տիրամէր... գնա, գնա:

Օտարականը շփոթուած՝ շարունակում էր նայել.

—Ինչո՞ւ, մէրիկ, ինչ արեցի, չ՞ դու ասացիր որ բուրդ գզեմ, ինչ վատ բան ասացի, մռմռում եմ ինձ համար: Սուսանը լսել չէր ուզում:

—Գնա, գնա, գնա. ի սէր Աստուծոյ գնա, դու բէխէր մարդ ես, ըստ բերանից մահ է թափում, ես դողում եմ, գնա...

Օտարականն այս անգամ վերցրեց գործիքն ու պարկը, ձգեց ուսերին և վճռական քայլուածքով դուրս եկաւ խրճիթից: Նա արդէն բակումն էր, արդէն մօտ էր դուռը բանալու և փողոց դուրս դալու, երբ Սուսանը վաղէ վաղ նրան հասաւ, կախուեց փէշից, աչբերը չուած, դողդողալով ու շնչակտուր ճչաց.

—Կաց, կաց, չեմ կարող, չեմ կարող, ասա, աղաշում եմ ասա ինձ, ով է այն լեռնալանջի վիրաւորը.

—Տէր Աստուած, այդ հին բան է, շատ հին. ամենը դիտեն, հին երգ է, ամենքն են երգում:

—Հին է... Սուսանը կարծես մի փոքր հանգստացաւ, որ «բանը» այնպէս հին է:

—Հին է, մէրիկ, բանի տարի է ինչ երգում են ամեն տեղ:

—Ո՞վ է, ով է այն ջիւան վիրաւորը.

—Զը դիտես, արարաշխարհը դիտէ Գարահիսարի բանը, եաման բան էր. վէրան մնայ Գարահիսարը, բանիսն էին...

—Ո՞վ է ջիւանը, քեզ առում եմ, անողորմ...»

—Միթէ չը գիտես, Սաքօն է:

—Սաքօն... ունեհ, անաստուած, նզովք բեզ. այդ
ինչ ասիր, նզովք քո շրթունքներին, քո եկած ճանա-
պարհին, քո ծննդին... սուտ է, սուտ է, Տիրամէրը կար,
աղօթքս, մոմերը, սուտ ես խօսում, չար սատանան ես
գու, գուրս, գուրս, գուրս... բայց չէ, կաց, կաց, ա-
զաշում եմ, սուտ էր, այնպէս չէ, գու սուտ ասացիր...»
լուռ է, լուռ է, անողորմը, գէ գուրս, գուրս, բէխէր
ստքդ կոտրուէր, գու եկել ես ինձ տանջելու, գե-
ւերի բաժին դառնայ քո հոգին, գու սուտ ես ասում,
գնւրս...

Օտարականը կարծելով՝ որ կինը գծուեց, գլուխը
կորցրած գուրս փախաւ փողոց առանց յետ նայելու,
իսկ Սուսանը շարունակում էր ճշալ և երկինք աղաղա-
կել: Երբ նրա ձայնի վրայ հարեւանները չորս կողմից
հաւաքուեցին, Սուսանը գեռ վազվում էր բակում
խելագարի պէս, կուրծքը՝ բաց արած, չորացած ստինք-
ները բռնած ցոյց էր տալիս երկնելին.

—Նայիր վերից կապուտոր, նայիր էս չորացած
աղբիւրներին, բանիսին կերակրեցի սրանցով, քանիսին
իմ միս ու արինը տուի, մեծացրի, էլ չը կան, չը կան,
ոչ մէկը չը կայ... Մէկ Սաքօն է, Սաքօն, էն սարերի
արծիւը, էն էլ... ինչ ասաց անիրաւը... ճիշտ է, գու
չը տեսար... Սաքօն, սարը մթնեց, արծիւը սեւ կա-
պեց, ճիշտ է... բա գու ինչ ասիր, ինչ արիր, մայր
եմ, չէ մայր էի, էլ մայր չեմ; ութը ծնունդ, ութը
երկունք, հազար ցաւ, հազար խոց սեւաւոր սրտիս...
ունեհ... Եւնա ջարդուած ընկաւ խնձորենու տակ, ծեր
գլուխը կախուեց կրծքին, արցունքը թափուեց, թա-
փուեց, իսկ վերեւից ծառի վերջին, գեղնած տերեւ-
ները մէկիկ մէկիկ մաղւում էին նրա գլխին և ճիւղերը
մերկ ու գողղոջուն օրօրւում էին աշնանային սառն
բամու առաջ:

V

Սուսանը հիւանդ է, Սուսանը մեռնում է...

— Հին բան է որդի, հին բան, ասում էր նրա գըլ-խավերեւը նստած ծերունի քահանան, որ եկել էր հիւանդին վերջին միսիթարութիւնն ասելու, վերջին հազորդութիւնը տալու:

— Հին բան է, կրկնում էր մեռնողը, Տիրամէրն էլ գիտէր, տէրտէր ջան:

— Աշխարհ գիտէր, որդի, քեզանից բացի ամենքը գիտէին:

— Դժւ էլ գիտէիր:

— Դէ որդի, թէ քեզ էլ ասէինք ինչ օդուտ, ցաւդ դրանով չէր թեթեւանայ. այնքան մայրեր լաց եղան, այնքան սրտեր փշուեցին, այնքան զլուխներ սեւ կապեցին, էհ, ինչ անենք, մեր ճակատագիրն է:

— Մեր ճակատագիրն է, որ էսպէս արուն-արցունք քամենք, մղկտմնք... թող առաջուց ասէիր ինձ, թէ մեր ճակատագիրն է. քանի՛ տարի է, մաշեցի ժամի գուռը գնալ գալով, մատներս տրորեցի մոմ վառելով, Տիրամէրը ժպտում էր, ժպտում, իսկ գու հիմա ես ասում մեր ճակատագիրն է:

— Դէ ինչ ասէի, որդի, աղօթում էիր, գրանից ինչ վնաս, աղօթքը սուրբ բան է, հաւատում էիր, հաւատը քաղցր բան է, ես ինչպէս քո և Աստծու մէջ ընկնէի. երեւի նա ուզում էր, որ գու չ'իմանաս «Էն բանը»:

— Տիրամէրը խաբեց, նա խօմ կարող էր երազով ինձ յայտնել, կը գար երազիս ու կ'ասէր՝ «Մեր կապիր Սուսան, սեւ կապիր, արեւդ խաւարեց, օջաղդ մարեց», բայց նա այդ չ'ասաց, նա խաբեց, ժպտաց ու խարեց:

— Օ՛, մի ասա այդ, որդի, լսիր ինձ, ամենքս էլ մահկանացու ենք, հանգերձեալ կեանք կայ, հաշիւ ու

համար ունենք տալու, դու էլ, դէ տարիվդ անցած է,
ճաշակուիր որդի, ասա՝ մեղայ Աստուծոյ:

Պառաւը գլուխը տարուբերեց որպէս մերժման,
անհամաձայնութեան նշան.

—Զէ, չէ, Տիրամէրը խաբեց, ես խռով եմ ժամից,
պատարագից, Տիրամօրից, երկնքից, թռղ այսու-
հետեւ գժոխքի բոցերին բաժին դառնամ:

—Մի ասիր այդ, որդի, մի ասիր, հոգուդ մեղք մի
անիր:

—Ես հոգի չունեմ, իմ հոգին մոխիր է դարձած
դարդի կրակից:

Տասներորդ անգամն էր քահանան կրկնում իր ա-
ռաջարկութիւնը, տասներորդ անգամը նա ձեռքի հա-
զորդութիւնը մօտեցնում էր նրա շրթունքներին և Սու-
սանը միշտ մերժում էր, նա խռով էր Աստծուց, Տի-
րամօրից... արդէն ամիսներ էր, որ նա էլ եկեղեցի չէր
գնացել. սարսափելի գոյժից յետոյ նա մի անգամ, մի
վերջին անգամ երերալով գնաց, կանգնեց Տիրամօր
պատկերի առաջ, առանց մոմի, առանց աղօթքի և բո-
լոր ձայնով ճչաց.

—Դու ինձ խաբեցիր, Տիրամէր:

Ժամաւորները յետ նայեցին, ամենը կարծեցին
թէ նա խելագար է: Սուսանն առանց ուշը դարձնելու
իր շուրջը, դուրս եկաւ ժամից, գնաց, փակուեց իր
տանը, մինակ ու սգաւոր:

Զատկին քահանան եկաւ տունն օրհնելու, մխի-
թարութիւն խօսելու, մերժեց. այժմ էլ հիւանդ ըն-
կած անկողնում, նա մեռնում է և չի ուզում հազոր-
դուել: Հարեւանուհիները սոսկում են այդ անաս-
տուածութիւնից, նրանք հաւաքուած՝ համողում, խընդ-
րում, աղաչում են, ի զ՞ւր, Սուսանն անդրդուե-
լի է, ծնօտները փակ և դէմքը վճռական:

—Զէ, չեմ ուզում, դիտմամբ չեմ ուզում, որ հո-
գիս սատանայի բաժին դառնայ. ես կը կանգնեմ Աստ-
ծու դահի առաջ և Տիրամօրից գանգատ կ'անեմ և

յետոյ այնպիսի բաներ կ'ասեմ, այնպիսի բաներ։ Այ
էս չորացած ստինքներս ցոյց կը տամ ու կ'ասեմ, ինչ
արիր, Տէր, մեռանք, փոթոթուեցինք վարում, ճշա-
ցինք, աղերսեցինք, ձայներս աստղերին հասաւ և գու
մեզ չը հասար. հիմա տար ինձ կարի կարասը, ես ինչ,
ես մի կտոր բոց եմ, ձգիր ինձ կրակի մէջ, բոցը բո-
ցին ինչ կ'անի. հա, կարի կարասը, ես այնտեղ կը
պլալամ, կը վառուեմ ու կ'սպասեմ, որ ինձ նման
սեւաւոր բոլոր մայրերը բոց դառած հասնեն ինձ և
մենք ամենքս միասին հրդեհ կազմենք, այնպիսի հըր-
դեհ, որպիսին վարումն է, վէրան, սեւ վաթանում,
թող երկինքն էլ վառուի նրա պէս, թող երկինքն էլ
մոխիր դառնայ, տար, տար ինձ կարի կարասը, ես բոց
եմ, մի կտոր կրակ։ Այ այսպէս կ'ասեմ.

—Որդի, աղաչում եմ, ասաց լացակամած քահա-
նան, այդ ինչ ես ասում, տես, էս ծեր տեղովս ես քեզ
աղերսում եմ, մի ասիր այդ, բեզ համար ես էլ պա-
տասխանատու եմ Աստծու առաջ։

—Պատասխանատոն ես, դու էլ ասա Տիրամէրը
խաբեց. մայր էր, սիրտ պիտի ունենար, բայց խաբեց.
ինքը երջանիկ է, ինքը զաւակը կրծքին սղմած ունի,
իսկ ուրիշին խաբեց...

—Տիրամէրը։

—Հա Տիրամէրը։

—Նայիր այստեղ։

Քահանան ցոյց տուեց իր Աւետարանը, նրա երե-
սի խաչելութիւնը։ Խաչուած Քրիստոսի ոռների տակ
սգում էր Աստուածածինը մի խուրճ սրեր մխուած
սրտում։

—Ճանաչնում ես, շարունակեց քահանան մատը
դնելով Աստուածածնի վրայ, սա էլ է Տիրամէր։

Պառաւը նայում էր աչքերը լայն, բերանը բաց,
զարմացած։

—Նայիր, նայիր, երկար նայիր, ասում էր քահա-
նան, դու միայն երջանիկ Տիրամէրն ես տեսել, տես

և այս սգաւոր, այս դժբաղդ մայրը՝ Պառաւը ձգուեց
առաջ շնչակտուր, դողդոջուն ձեռքերը մեկնեց և ըլո-
նեց Աւետարանը, մօտեցրեց աչքերին:

—Տես, քանի սուր է մտել սիրտը, չէ այն էլ նրա
որդին է խաչուած վերեւում:

—Հա, հա, նրա Որդին է խաչուած:

—Նա մեռնում է աշխարհի համար, մեր բոլորի
համար:

—Նա մեռնում է մեր բոլորի համար... իսկ իմ
Սաքօն...

—Սաքօն, որդի, է՞ն, նա էլ մեր ու ու վէրան աշ-
խարհի... Այդպէս է որդի, մայրերը ծնում են երկուն-
իով, պահում են ցաւերով, մարդակեր աշխարհը տա-
նում է, տանում, ինչ անենք:

—Մայրերը ծնում են երկունքով, պահում են ցա-
ւերով ու աշխարհը տանում է, հա, հա. տանում է
անողորմ աշխարհը:

—Սաքօն էլ գնաց, ուր շատերն են զնացել նրա-
նից առաջ, եւ ուր շատերն էլ կ'երթան նրանից յետոյ,
ինչ անենք:

—Սաքօն էլ գնաց, ուր սա՞ է գնացել, հա, տէր-
տէր, էս խաչի վրայ Մեռնձզը:

—Հա, որդի, նոյն ճանապարհով, աշխարհի համար:

—Մեղայ Աստուծու, մեղայ Աստուծու, ես մեղա-
ւոր եմ. պառաւի ձայնը կերկերաց, արցունքները թա-
փուեցին, նա Աւետարանը սղմեց շրթունքներին՝ մրմրն-
ջալով,

—Խեղճ մայրեր, խեղճ մայրեր...

Ա. ԱՀԱՐՈՒԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

I

Արագի ափին բոստանըս լինի,
Սալվի-ուռ. *) տնկեմ վարդեր ու լալայ.
Հով ուռենու տակ բողտիկս **) լինի,—
Օջաղիս մէջը կրակ բոցկլտայ:

Ու սրտով սիրած Շուշանս լինի,
Օջաղիս կողքին գուրզուրենք իրար.—
Արագի ափին բոստանս լինի,
Ծով-քրտինք թափեմ Շուշիկիս համար:

II

Մուլժ անտառով լուռ ման կուդամ,
Բուն ու ագռաւն ինձ կ'ըսեն.
—«Ա՞յս, խեղճ տղայ, ինչ գունատ ես,
Դուն հիւանդ ես...» ինձ կ'ըսեն:

Մուլժ անտառով լուռ ման կուդամ,
Ճողը կը շաղէ ծառերէն.
—«Ա՞յս, խեղճ տղայ, վէրքդ խորն է,
Վերադ կուլանք...» ինձ կ'ըսեն:

Քամին փչեց ու ծառերէն
Տերեւները վար ընկան.
—«Է՞հ, խեղճ տղայ, տերեւներն են
Քու մահիճն ու գերեզման...»

ԱԻ. ԻՍԱՀԱԿԵԱՆ

*) Սալվի-ուռ՝ լացող ուռենի:

**) Քողտիկ՝ փոքրիկ խրճիթ բոստաններում:

ՀՈՒՆԳԱՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

Ա.

ՀՈՒՆԳԱՐԱԿԱՆ ԳԱՇՏԱՎԱՅՐԸ

(Petöfi Sandor-ից)

Ո՞վ դուք, կարպաթեան բիրտ սարեր, ինչ էք ուզում ինձ
ձանից. ինչ է ուզում ինձանից ձեր վայրենի երկիրը՝ եղենի
անտառներով ծածկուած; Ես հիանում եմ նրանց վրայ, բայց
չեմ կարող սիրել. սարեր ու ձորեր չեն կարող իմ հոգին
բարձրացնել:

Բայց ձեր ստորոտում, ծովի պէս միազազաղ այդ դաշ-
տում, ես արդէն իմ տանն եմ զգում ինձ. հոգիս, իբրև արծիւ,
որ դուրս է թռչում իր բնից, ընդգրկում է անհունութիւնը:

Ես թռիչք եմ առնում եւ բարձրանում այս աշխարհից
վերև, շատ բարձր, այնտեղ, ուր ամպերն են թռչում. և իմ
ոտքերի տակ տիսնում եմ այն ծիծաղկոտ երկիրը՝ որ տարած-
ում է թէյիսից մինչեւ Դանուբ:

Կումանիկում, երկնքի տակ, ուր խազում է Դելիբարը,
հարիւրաւոր պարարտ հօտեր՝ իրանց բոժոքներն հսչեցնելով՝
գնում են կէսօրին, լայնատարած ջրհորների լայն աւազանում
իրանց ծարաւն յագեցնելու:

Կայտոող երիվարների խրխնջիւնը հնչում է քամու մէջ.
Լսում է հեռուից սմբակների տոփիւնը՝ չիօշների (ձիարած)
զուարթ աղաղակները և իրանց երկար մտրակների խլացնող
շաշիւնը:

Խրճիթների մօտ, զեփիւոի քնաքոյչ չունչի տակ, ցորեննե-
րի ովկէանն է օրօրւում: Յօզունները հրնկտում են *). և ամեն

*) Վանեցիների լեզուով “հրնկտալ” նշանակում է կանաչների քա-
մու առաջ տառանելով վայլելը:

կողմ հացաբոյսերը պատում են հորիզոնը զմրուխտի կենդանի գոյներով:

Երբ երեկոն աւելի մօտ է ատրածում երկրի վրայ, վայրի բագերը դուրս են թռչում մօտակայ շամբերից. և երբ եղէզները քամուց յուղուած սարսում են հանդարտիկ, նրանք սոսկահար փախչում են իրանց օդային շաւիզներով:

Խրճիթներից հեռու, պուտայի խորութեան մէջ, կանգնում է չարդան՝ առանձնացած իր փլիկած ծիննելոյզով: Մարաւի բեյսյարները, որոնք այլնայլ ճանապարհներով դէպի շուկայ են գնում, կանգնում են այնտեղ:

Թմբիների ցած անտառների մէջ տեղ, չարդայի մօտիկ, գեղին աւագի մէջ, թաւուտի խողբում, բոյն է դրել սրասոյլ շահէնը՝ խոյս տալով աւերիչ երեխաների ձեռքից:

Կնիւններն այնտեղ աճում են տիսուր. ուղտափուշի ծաղկիները ծօճում են և իրանց սուր փշերի ներքեւ խատուտիկ մողէները թմբած պառկել են արհի տակ:

Հեռուն, ուր երկինք բոցավառ երկրի հետ միախառնուել է, պտղատու ծառերի շարքեր նայում են մշուշի միջից, որ իրանց մի ինչ-որ կապտաւուն գոյն է տալիս: Նրանցից վերև, ինչպէս մի սիւն, բարձրանում է գիւղի զանդակատունը՝ կանաչ արօսների միջից:

Հիմնալի ես դու ինձ համար, ով գաշտավայրերի երկիր: Այդտեղ է, որ իմ օրօրոցն օրօրեցին, այդտեղ է, որ ես կեանքի մէջ մօտայ: Այդտեղ է, որ մի օր պատմաքն ինձ պիտի փաթաթէ և այդտեղ՝ պիտի բարձրանայ իմ մահու հողակոյտը:

Բ

Ս Ո Հ Ա Զ *

(Kisfaludy Károly-ից)

Քեզ ողջունում իմ հառաջելով, ով Մոհաչ, ով եղերական դաշտ՝ կարմրած մեր դիւցազների արիւնով. մեր աղջային փառքի ընդարձակ գերեզման, ողջն քեզ:

Սոսկալի ապականութիւնը իր ագուաւի թեւերով տարածում է քո վրայ. իր սոսկալի կատաղութեան մէջ նա քո վրայ

* Հունգարական մի նշանաւոր դաշտ, ուր Հանգարիան կորցրեց իր ապատութիւնը 1526 թուին:

թափեց իր բոլոր աւերիչ ուժը. և իր կոյր յաղթութեան հետքը անդաւ մեր կտրիճ կռուոզների ոսկորների վրայից:

Տոմորի, վիառաւոր զօրապնտ, ինչու թողեցիր զուքո արքեպիսկոպոսական աթոռը: Փառքը, մեր հայրենիքի ծաղիկը չը սլետք է մեռնէր քեզ հետ: Կռուի սաստկութիւնը սլացրեց քեզ դէպի մի անխուսափելի կոտորած: Որքան դիւցազներ սպանուեցան քո պատճառով: Ա՛հ, քո երկիրը շատ նեղ էր քեզ համար... որքան փոքր և լսին է այսօր քո փերջին բնակարանը: Վերջացան քո յոխորտանքները: Ժանզն ուտում է քո զէնքերը: Հանգիբը զու այժմ խարուսիկ բախտը փորձեց քո վրայ իր քմահանգին երբը: Թող հաշտարար գերեզմանը ծածկէ թեթեւակի քո փոշին:

Որքան մատաղ սրտեր, լի քաղցր յոյսերով, հնձեց այստեղ պատերազմի անողոք դիապուածը. որքան երիտասարդ կռուոզներ իրանց կեանքի գարնան մէջ վաղահաս մահ գտան այնտեղ, մինչդեռ երջանկութիւնը մինչեւ այն ժամանակ նրանց մնալիկ օրօրեւ էր իր ծոցում: Երանք այստեղ հանգչում են, իրանց ոսկորները ցրուած և իրանց հսկայ հասակը կոխոտուած իրանց փախստական ձիերի պայտերով:

Սիրուհին չը պիտի այլ եւս խաղայ նրա գեղեցիկ վարսերի խարտեաչ փունջերով, որ այժմ արիւնով ու ցեխով թաթախուած են: Ի զուր զեղեցիկն սպասում է ճանապարհին՝ թարմ պատկը ձեռքին: Լսում է վախով և յուսով թէ՝ իր դիւցազնը դեռ չի գալիս արդեօք: Տերեւի շրջիւնը յիշեցնում է իրան իր սէրը: Նայում է միշտ, իր այտերը բոցավառ են, իր կուրծքը բարձրանում է գողդոջ, բայց իր նայուածքներն ի զուր են աշխատում հեռու մշուշը թափանցել: Իր սիրելին չի գալիս, նա ենթակայ է լինում խոր վշտի. վերջապէս լսում է Մոհաչի ծախորդութիւնը և իբրեւ մի մատզաշ ծաղիկ՝ նա թառամում է, զեղեցիկ երիտասարդ աղջիկը, մի գառն տիրութեամբ:

Երեկոյեան զետիւնները անցնում են շնչալով իր գերեզմանի վրայից, և հաւատարմութեան հրեշտակը պահպանում է իր ածիւնը:

Ո՞րքան դիւցազներ, արժանի դարեր ապրելու, ննջում են այստեղ մոռացուած. չը կայ մինչեւ իսկ մի քար՝ իրանց վերջին օթեւանը յոյց տալու: Կռուեցան իրանց նախնեաց ազատութեան համար առնական բաջութիւնը, անսանձ կատաղութեամբ թաթախելով իրանց սրերն արեան մէջ:

Բայց ուր է նա, այն հերոսը՝ որին հազար բազուկներ չեն կարող ընկճեր կռուում է դիակների դէղերի մէջ՝ զգալով իր ուժերի թուլանալը: Իր կատաղի նժոյգը չի կրում այլ եւս իր

սովորական բեռք՝ խրիմնջում է, աքացում, գլուխը խոնարհեց-նում, իր բաշը ծածանում է։ Փախչում է դէպի տուն, իր տի-րոջ կորուստն իմայնելու։

Թող իր կինը, սրտարելի, լայ հեծեծելով, մինչեւ որ իր արդունքները չորանան և ինքն էլ իր հաւատարիմ ամուսնուն հետեւի։

Եւ այդ աւերուած տնից՝ միայն փլատակներ են մեռում։

Կաղնին՝ որ հապարտ դիմագրաւում է մրրկին, իր անկման ժամանակ հետան է տանում իր կանաչ ձիւղերը։

Ո՞րչափ քաջեր մեռան այսպէս։ Միայն բախաւորն է զտնում իր զարձը։ Յաղթուածի աստղը անհետանում է իր հետ։ Կորան նրանք մամոստ փոսերի մէջ և մոռացութեան խաւարը ծածկում է նրանց անունները։

Հովիւը պառկում է խոտերի վրայ և մեղմիկ երգելով աւրածացնում իր հօտը։ Նա չը գիտէ թէ այնքան հերոսների աճիւնների վրայ է հանգչում։ Բայց նա թուլանում է։ ախուր երգը խուսափում է իր շրթունքներից—Հերոսների ստուերներն են որ ներշնչում են նրան։

Պատերազմի դաշտի վրայ մտախոհ ճանապարհորդը գնում է՝ մտածելով մարդկային ճակատագրի անհաստատութեան վրայ։ Նա նայում է և տիրում։ աչքերը գետին են խոնարհուելու և իր պիրտն արիւնում է իր բաց զէրքերով։

Այստեղ, ուր երեկոյեան ճառագայթները լուսաւորում են այս առուակից բարձրացած գոլորշին, իբր թէ ինձնից ծածկուել ուզէր, այստեղ է կուգովիկոսը (Lajos). մեր գերախու թագաւորը, գառն յիշատակներով լի։ իր արոյրապատ նժոյգի ծանրութեան տակի իզնուր նա տարտծում է իր ձեռները. չը կայ մէկը, որ նրան բարձրացնի։ Կոռուզներն ընկել են. չը կայ մէկը, որ ազատի անբախտին... Անզունդը բացւում է։ իր հարուստ զէնքերի ոսկին դժգունում է. և իր ջախջախուած մարմինը ծածկուել է փրփուրով և ցեխով։

Սոսկալի է այդպիսի մանր բայց դու այգպէս ընկար, ով արքայական մատաղ արծիւ։ Ու քո օրհասի հետ, հունգարական երկնքի արեւը մայր մտաւ երկար։ Դու երիտասարդ էիր։ չէիր վախում անդունզից և սոսկալի կերպով վճարեցիր քո հարկը բնութեան։ Թող խազաղ ննջի քո աճիւնը։ Աւաղ, անմիաբանութիւնը և բիրտ նախանձն էր, որ բոլոր այս դժբախտութիւնների պատճառ եղաւ։ Երբ խորտակուեցաւ մեր միութիւնը՝ անհետացաւ և մեր ուժը. և մեր լքեալ հայրենիքին շղթաներ կռանուցան։ Թշնամին չէր, այլ քո հարազատ որդին էր՝ որ այս հարուածը տուեց իրան։ Ո՞վ եղերական յիշատակների երկիր, դու

ազբիւր գարձար բազմաթիւ տրտունջների, որոնք, միայնակ քո ճահճուտ դաշտերի մեռելական մահարձանն են: Բուդայի պարիսպները հեծում էին փառահեղ Սուլէյմանի հպարտութեան առջեւ, և որչափ աւերումներ հասցըն մեզ իր վայրենի կատաղութեան անյագութիւնը: Քանի քանի բանտարկեալներ իշխան Դանուրի վճիռ ալիքների տակ: Սեպհականութիւնն անհետացաւ, հունգարացին օտար էր իր տան մէջ, և մահիկը վայլում էր մեր քաղաքների աշտարակների վրայ:

Հեռու գնացէք, տխուր պատկերներ, հեռու գնացէք, խաւարային տեսիլներ:

Այսպան վտանգներից յետոյ մի նոր օր է փայլում մեր վրայ: Հունգարը գեռ ապրում է: Բուդան կանգնած է տակաւին: Անցեալը մեղ համար թող օրինակ լինի: Եւ լցուած մի վառ սիրով մեր հայրենիքի համար, թող մեր աչքերը գէպի առաջ նայեն:

Եւ դու, ով եղերական դաշտ, կանաչիր նորից նուիրական խաղաղութեան ծոցում: Մոհաչ, վաղեմի գերեզման մեր ազգային մեծութեան:

Թարգմ. Քրանս. Հ. ԱծԱՌԵԱՆ

Հ Ո Գ Ե Հ Ա Ռ

(Լեզունդա)

Փոցխովի ձորում^{**}) ծաղկում էր Շամօն
Կուսական գարուն ու սէր շընչելով,
Փոցխովի ձորում թօշնում էր Համօն
Ծաղիկ աղջըկայ սիրուց տանջուելով:

—Զէ, չեմ հաւատում իսկի քո սէրին,
Դու սուտ ես ասում, դու չես սիրում ինձ...
Ասում էր Շամօն սիրահար տըղին
Ու հեռու-հեռու հըրում իրանից:

Ու դարձեալ գընաց տըղան սիրակէզ.
—Ո՞ր կըրակն ընկնեմ, Շամօն, որ գըթաս.
Սիրտս չեմ կարող թէ հանեմ տեսնես—
Ինչ անեմ ուրիշ, որ ինձ հաւատաս:

—Տեսնում ես, ահա, ասաւ աղջիկը,
Ճոյց տալով լերան դագաթը ահեղ.
Ինձ դիր քո ուսին, սրինգըդ փըչիր,
Ու վեր, պարելով՝ տար մինչև այնտեղ:

*) Մի բարձրութիւն է Ախալցխայի և Արաւելի մէջ տեղը: Վրացիք
առում են „Սուլթանիա“—հոգին դուրս եկաւ. իսկ թուրքերը՝ „Օղլան
փաթրալան“—տղայ ճաքեցնող:

**) Ախալցխայի ձորն է:

Երբ որ կը հասնենք էն սարի գըլխին,
Այնժամ կ'իմանամ, որ սիրում ես ինձ,
Այնտեղ կը լինեմ եռ քո սիրուհին,
Ու սիրով կապուած կ'իջնենք այնտեղից:

Ու գըրաւ ուսին սիրած աղջըկան,
Սրինդը հընչեց, ըսկըսեց պարը,
Ճանապարհ ընկաւ սիրահար տըղան
Դէպի ամպամած լերան կատարը:

Գընում է, գնում սեալ ժայռերն ի վեր,
Ու պար է գալի, և անվերջ ածում.
—Դեռ շատ է հեռու... որտեղ ես դու դեռ...
Դու ինձ չես սիրում, դու սուտ ես ասում...

Մալւում են յոգնած ծընկները տակին,
Քըրտինքը վազում ճակատից ներքեւ,
Բերանն է հասել—թըռչում է հոգին,
Աչքերը մթնում, շընչում հնիհեւ:

—Զէ, չեմ հաւատում ես դեռ քո սէրին,
Դեռ շատ է հեռու գագաթը լերան...
Ասում է Շամօն նըստած ուսերին,
Ճըգնում է նորից ուժասալառ տըղան:

Արդէն ամպերի տակին է պարում,
Մօտիկ է արդէն գագաթը ձիւնոտ,
Վերջին ուժերը հաւաքում, լարում,
Դարձեալ մի պըտոյտ, դարձեալ մի ոլորտ...

Մի քիչ էլ... քիչ էլ... վերջապէս հասաւ,
Վայր գըրաւ ուսից սարի կատարին.
— «Հոգիս հանեցիր, օֆ, Շամօ...» ասաւ,
Ասաւ ու ընկաւ սըրինդը ձեռին:

—Այժմ քո սէրին հաւատում եմ ես,
Այս ժամից ահա քոնն եմ յաւիտեան,
Ճըշաց աղջիկը, գըրկեց վերջապէս,
Դըրկեց Համօի... դիակն անկենդան:

Այժմ էլ ժէռուտ սարի գագաթին
Դեռ ցոյց են տալի մի հին գերեզման,
Պատմում, ափսոսում անբաղդ իգիթին
Ու սարի՝ անունն ասում «Հոգեհան»...

ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

Մ Ա Կ Ո Ւ

(Ճանապարհութական նկատքութիւն)

Մակու գաւառը իր համանուն քաղաքով Պարսկաստանու մը բոլորովին անկախ մի խանութիւն է. Մակուայ խանը կամ իշխաննը ժառանգաբար ստացած է երկիրը կառավարելու իշխանութիւնը, որտեղ տիրում է աւատական (feodal) զրութիւնը. պարսիկ կառավարութիւնը այդ երկրում ոչ մի պաշտօնեայ և ներկայացուցիչ ունի. խանն է միեւնոյն ժամանակ թէ երկրին տէրը, թէ գատաւորը, թէ զինու որական և քաղաքական կառավարիչը:

Մակուայ իշխանը՝ սէրդար իկրալը Սալտանա Ռիզա Կուփիան՝ 35 տարեկան է, բարձրահասակ և զեղեցկադէմ մի երիտասարդ, բաւական զարգացման տէր, ճանապարհորդել է եւրոպայի զանազան երկիրները, մի քանի տնդամ կովկաս և Պետերբուրգ: Նրա երկրորդ կինը Երեւանի Փանահ խանի աղջիկն է, որը աւարտել է ոռուսական պրօդիմնազիայի ընթացքը:

Սէրդարը բաւական նուրբ ճաշակի տէր է. Մակուից մի ժամ հեռաւորութեամբ Բաղձէշիք զիւղում կառուցել է երկյարկանի մի մեծ ամառանոց, որի պլանը ինքն է գծել և 20 տարուց աւելի է շինութեան սկսուիլը, բայց տակաւին չէ վերջացել. մինչեւ այժմ բանուորներ և արհեստաւորներ աշխատում են այդ շինքի մէջ, որի իւրաքանչիւր սենեակը կէս եւրոպական և կէս պարսկական ճաշակով իւղաններկ պատկերներով զարգարուած է: Եւնքի նիւթերի մեծ մասը Եւրոպայից և Ռուսաստանից է բերել տուել. շինքը ունի մի դահլիճ, որի չորս պատերը և առաստաղը գաճէ զարդանկարներով և այդ զարդանկարների ձեւով կտրուած հայելիններով է զարդարուած, յատակը ամբողջ մարմարեայ է, մէջ տեղը մի աւազան-շատրուանով: Նէնքի զլիաւոր սանդուխները մարմարեայ են, որոնք բերուած են Ռուսաստանից:

Ամառանոցի կահ կարասիքը Բերլինից է բերել տուած, իւրաքանչիւր սենեակ կամ դաշիճ եւրոպական ճաշակով զարդարուած և կահաւորուած է, ամենաթանկազին տեսակներից են աթոռները, թիկնաթոռները, լուսայարանները, տուալէտի սարգը, հայելիները, սեղանները, վարագոյնները, կարնիզները, և այլն, բարորն էլ ընկուզից, մետաքսից, պլիւշից, թաւիչից:

Մակուայ իշխաննը Պարակաստանի ամենահարուստ անձնաւորութիւնն է. Մակուայ գաւառի 300 գիւղերից 120 գիւղը իր անձնական սեփականութիւնն է, ամեն տարի 2—3 հարիւր հազար ոռուրի պահեստի զրամազլիսի վրայ է աւելացնում, որ գտնում է ոռուական և եւրոպական զանազան բանկերում:

*
**

Մակուայ սահմանները տարածւում են մինչեւ իլոյ (Յօրուայ ճանապարհ), Արսքսի ավիր—Շախտախտ (2 օրուայ ճանապարհ), Թրքաց Բայազիդ քաջարի սահմանը (6 ժամ հեռու) և Մասիսի ստորոտները: Ի միջի այլոց աւելացնենք, որ Մեծ և Փոքր Մասիսները Մակուայ կողմից աւելի որոշ և աւելի վեհապանծ են երեւում:

Դիրքը լեռնայինն է, կլիման բարեխառն, հողը արդիւնաբեր:

Փողովուրդը կիսավայրենի է, քաջարի և զինավարժ. զինուած է Մարտինի, Մազլէր և այլ նորածի հրացաններով: Անուտնի են իրանց քաջութեամբ Մակուայ ձիւաւորները: Պարսից կառավարութիւնը դժուար պարագաներում զիմում է նրանց օգնութեան, որոնք միշտ յաղթական են դուրս եկած իրանց մղած կայւներում:

Սահմանագլուխները բնակւում են գլխաւորաբար քրդերը, որոնք աւազակաբարոյ մի կեանք են վարում. շարունակ անշնուած են թրքս և ոռուաց հողը և այն կողմերից խլում են ոչխարներ, կովեր, և գներ, ձիեր և ուղտեր, երբեմն էլ սպանութիւններ են գործում: Իմ Մակու գտնուած մի ամսուայ ընթացքում երեք աւազակութեան դէպքեր պատահեցին, կողոպտուածները՝ երկու ոռուահապտակ թուրք ուղտաղաններ և մի ոռուահապտակ հայ դիւզացի՝ սէրդարի մօտ գանգատի էին եկել. սէրդարը անմիջապէս մարդ ուղարկեց քրդերի մօտ և թուրքերի Յ ուղտերը և հայի Յ եղները ստանալով վերագարձրեց իրանց տիրոջ:

Մակուայ գաւառում ճանապարհորդելը շատ վտանգաւոր է. շարունակ ամեն օր այսանդ կատարւում են մարդասպանութիւններ, աւազակութիւններ և այլն:

Բացի աշխրէթական կոհւներից, որոնք շատ սովորական դէպքեր են, վերջերս սէրդարի հօրեղբօրորդիներից ոմանք հակառակում և թշնամական դիրք են բանում սէրդարի դէմ, փոխադարձաբար սէրդարը և նրան հաւատարիմ մնացող միւս հօրեղբօրորդիները նրանց հնու թշնամաբար են վարում: Սակայն ցաւալին այն է, որ այս թշնամութիւնների մէջ տուժողը լինում է միշտ հապատակ ժողովուրդը, որովհետեւ այդ խաներից իւրաքանչիւրը ունի 20-ից 30—40 սեփական գիւղ և երբ սկըսում են թշնամութիւններ միմևանց դէմ, աւերում, կողոպտում և այրում են միմևանց գիւղերը. խեղճ գիւղայիները երկու հակառակ բանակներ կազմելով կոտորում են իրար ու իրանց գիւղերը քարուքանդ անում... խանի խաթեր համար:

Մի քանի օր առաջ, ո. Թադէս վանքի շրջակայ գիւղերը աւարի դրուելով, թալանուած գոյքերի մնած մասը բերել զեւեղել են իրեն ապահով տեղ՝ վանքի և վանահօր սենեակները. վանահայրը՝ Գէորգ ծ. վ. Նալբանդիանը այդ միջոցում Խոյ գտնուելով, եղելութիւնը իմանում և ուղղակի Թաւրիզ է գալիս, թազաժառանգ իշխանին և քեարզիւզարին բողոքելու, որոնցից սէրդարի վրայ մի պաշտօնագիր ստանալով, անցեալ հինգաբթի օր մենքնեցաւ դէպի Մակու:

Ահա այս պատճառներով գիւղայիների գրութիւնը անտանելի է և ապրում են վերջին ծայր թշուառութեան մէջ:

Բարեբաղդաբար երկու կողմներից եղած այս թշնամութիւնների մէջ հայ ազգաբնակութիւններին ձեռք չեն տալիս. գուցէ վախենում են հայերից, այն պատճառով, որ հայերը ունեն առաջնորդներ, որոնք կարող են իրանց ժողովրդի գանգատները հասցնել բարձր տեղեր և մինչեւ անգամ օտար պետութիւններին: Մինչգեռ խեղճ թուրք կամ քուրդ ժողովուրդը լաելեայն և ստոյիկեան համբերութեամբ տանում է այս զըրկանքները և վնամները, բողոքի ձայն չէ բարձրացնում և չէ էլ կարող բարձրացնել. ամբողջ Մակուայ գաւառում և քաղաքում ոչ հեռագիր կայ և ոչ էլ պօստ. նամակներ կարելի է ստանալ միայն երեք օրուայ ճանապարհ հեռու Խոյ քաղաքից:

Պէտք է խոստովանել, որ սէրդարի չնորհիւ և պաշտպանութեամբ Մակուայ հայերը բաւական ազատ և ապահով են, պարսիկների հայհոյութիւններին և ծնծերին փոխարինում են հայհոյութիւններով և ծնծով, ոչ մի խարութիւն կամ տարբերութիւն կայ հայի կամ թուրքի մէջ:

* * *

Մակու քաղաքը կառուցուած է մի կիրճի մէջ բարձր ժայռի

կողքին, որի տակից անցնում է մի մեծ գետ, շատերի կարծիքով Տղմուս զետք քաղաքի դիրքը բնականից բոլորովին անառիկ է, քաղաքը պաշտպանուած է երկու ձորաբերաններից բարձրացած բնական և արհեստական պատճէներով և բերդերով։ Տների մեծ մասը չինուած են ժայռերի վրայ, ժայռի ստորոտից մինչև ամենավերջին տունը բարձրանալու համար պէտք է 20 րոպէ ուղղահայեաց և քարուա փողոցներից մագրցել և երկու երեք տեղ կանգնել, չնչասպառ չը լինելու համար։ Ճիով բարձրանալու դէպքում ևս, մարդ ստիպուած է ճին տեղ տեղ կանգնեցնել, խեղճ կենդանիներին չունչ առնել տալու համար։

Ամենավերջին տնից կարելի է տեսնել բոլորովին ուղղահայեաց ժայռի վերեւի մասը, որի բարձրութիւնը մօտաւորապէս 75—80 մետր է, վերջին տներից 20 մետր բարձր ժայռի մէջ տեղում կայ մի անցք, բոլորովին անմատչելի։ Այդ անցքի վրայ կան արհեստական կամուրջներ, որոնք միացնում են իրարից հեռու գտնուող ժայռերի երկու մասերը, անցքի շարունակութիւնը ապահովելու նպատակով չինուած։ Այդ անցքի վրայ փորուած կայ մի կամարածե գիծ, որ ծառայելիս է եղել իբրև եկեղեցու խորան, որովհետև այդ կամարի մէջ կայ մի մեծ խաչ գուրս ցցուած և հայերէն տառերով արձանագրութիւններ, որոնք ընդօրինակել տալու համար ոչ մի հսար կար, որովհետև ժայռի վրայ բարձրանալ կարելի չէր, իսկ զիտակով կարելի չեղաւ կարգալ, թէն ասացին, որ մի թուրք կարող և վարժ է մագլցելով բարձրանալ այնտեղ, սակայն այդ թուրքը բացակայ էր քաղաքից Փուշէ մի փորձ անէլնք, եթէ այդ թուրքը քաղաքում լինէր *։

Մակու քաղաքը ունի 700 տուն բնակիչ, որի 60 տունը հայ, հայերը ունեն մի եկեղեցի և մի գպոյց։ Նոր վարձուած ուսուցիչը բնիկ վանեցի է և եղել է Սանասարեան և Մուրադ-Ռաֆայէլեան գարոցներում, թէնւ գպոցական ընթացքը չէ աւարտել։ Հայերը արհեստաւորներ և մանր առեւտրով զրադողներ են և միջակ կարողութեան տէր։

Քաղաքի թուրքերը և խաները բաւականին համեստ և քաղաքավարի են. այդ տեղ զոյութիւն չունի մոլեռանդութիւն,

*.) Եթէ երբէք այդ արձանագրութիւնը հայ կամ օտարազգի ճանապարհորդների կողմից ընդօրինակուած չէ, ես կ'աշխատեմ անպատճառ մի կերպով վերցնել նրա ընդօրինակութիւնը, զալ տարի նոյն կողմեր ճանապարհորդած միջոցում նւատի խնդրում եմ հայ բանառէրներից այս մասին տալ հարկաւոր տեղեկութիւններ կամ լրագրութեան միջոցով և կամ ուղղակի ինձ։

որովհետև գոյութիւն չեն ունեցել նաեւ մահմեղական կրօնաւորներ։ Խաների տները մեծ մասով շինուած են ժայռից հեռու, գետափի մօտ՝ պարտէզներով շրջապատուած։ Եւրոպական ճաշակով շինուած երկյարկանի տուներ են, մեծ մտսամբ չորս կողմի վրայ պատուհաններով և բալկոններով։ պատուհանները զարդարուած են կէս մարդահասակ հաստ և մաքուր պապակիներով, որոնց կարելի չէ պատահել թաւրիզում։ Կահ կարտսկը ճոխ և ճաշակաւոր, մաքուր և կոկիկ են։ Թուրք կանոնք մուծ մասամբ կրթուած են, շատեր հարս են եկած նախիջեւանից և Երեւանից, մի քանիսը աւարտել են ուռսական գիմնազիաներ։ Առհասարակ բարոյականութեան համեստութիւն է տիրում։ պարսկաստանում սովորական եղած բորիկ ոտքերով կանանց չես պատահել, ամենաաղքամար ոտքն ունի երկայն գուլպա և կօշիկ։ անբարոյական կանայք մահով են պատժում։

Ամբողջ գաւառում բժիշկ չըկայ, նոյն-իսկ թուրք ինքնակոչ բժիշկներ էլ չըկան, որոնք Պարսկաստանի ամեն կողմեր մեծ թուռով են գտնուում։ շատ զարմանալի է այս, երբ խանների սներում հեւանդներ են պատահում, Նախիջեւանից կամ Բայազից են հրաւիրում բժիշկներ, ի հարգէ, մեծ գումարներ զնարելով, մինչդեռ այդ կարգի գումարներով կարելի էր պահել մշտական մի բժիշկ, որից օգտուելու էր ամբողջ գաւառի ազգաբնակութիւնը։

* *

Մակու գաւառը հայկական յիշատակարաններով, փլատակ և կեղեցիներով, գերեզմանաքարերավ և խաչքարերով լիքն է։ Նախապէս հայկական եղող բազմաթիւ գիւղերի մէջ ապրում են ներկայումս թուրքեր և քուրդեր, միայն մնացել են երեք գիւղեր հայքնակ։ Մակուից Յ ժամ հեռու Կիւմիւ-Թէվիկ գիւղը ունի 80 տուն հայ բնակիչ, մի եկեղեցի, մի քահանայ և մի խեղճ ու կրակ գպրոց, Ծ ժամ հեռու Կըրկբուլաղ գիւղը՝ 25 տուն հայ, առանց գպրոցի և առանց եկեղեցու, իսկ այդ գիւղից երկու ժամ և վանքից 20 րոպէ հեռու կայ Կարակիլիսէ գիւղը՝ 25 տուն հայ բնակչով, որոնք ունեն մի քահանայ, իսկ գպրոց և եկեղեցի չունեն, օգտում են վանքի եկեղեցուց, ինչպէս նաեւ վանքի սեփական հողերից, առանց վանքին օգուտ տալու, այդ գիւղը վանքի սեփականութիւնն է։ վանքը ունի նաեւ մի քանի լաւ գիւղեր, որոնց տիրացել են Մակուայ խաները, վանահայրերի թուրութեան և անտարբերութեան պատճառով, այդ գիւղերի կալուածազրերը մինչեւ այսօր մնում են^{*}։

* Կարծեմ Խաչիկ վ. Խատեան Էջմիածին է տարել։

Խոյից Մակու տանող ճանապարհի վրայ և Մակուից 5
ժամ հեռու կըզբջածեփէ թրքաբնակ գիւղում պատահեցինք
հայկական մի բերդի, որ շինուած էր ձորաբերանում հսկայ
մի ժայռի վրայ: Գիւղի վրայ և բերդի ստորոտը կային խաչա-
կիր գերեզմանաքարեր, նրանց մէջ կար մի մեծ ժայռի կտոր
վրան հասարակ փորուած խաչով, որին ուխտ են զնում և մոմ
վառում նոյն գիւղի և շրջակայ գիւղերի թուրք բնակիչները.
Նրանից քիչ հեռու կար կիսով հողի մէջ խրուած ջրաղացի մի
կոր քար:

Մակուից գէպի Ա. Թաղէսս վանք տանող 3 ժամ հեռու
լեռնային ճանապարհի վրայ պատահեցի խաչքարերի, գերեզմա-
նաքարերի և սրբատաշ քարերի, որոնք եկեղեցական մի շէնքի
մնացորդներն էին ներկայացնում: Այդ վայրերը այդ պատճա-
ռով կոչւում են Կարա-Խաչ և խաների ամառնային բնակու-
թեան են յատկացրուած: Կարա-Խաչ ունի շատ բարձր գիրք,
առատ բուսականութիւն և բաղմատեսակ վայրի ծաղիկներ, զով
և քաղցրահամ ջրերի աղբիւրներ, այս սարի վրայ իրարից բա-
ւական հեռու և գետնաբուխ տղմիւրների շուրջը կառուցուած
են խաների ամառնոցները, որոնք յունիսի սկիզբներից մին-
չեւ օգոստոսի վերջը մնում են տյուտեղ: Ամառնոցի գիրքը
սրանչելի է, մի կողմից երեւում են Նախիջեւանի գիւղերը, Ա-
րաքալ և Շախուախսալը, իսկ միւս կողմից Մեծ և Փոքր Մասիս-
ները իրանց գաշտով: Ամառնոցի գիրքը այնքան բարձր է, որ
օգոստոսի 28-ին ձիւն եկաւ, միեւնոյն ժամանակ ձիւնը ծած-
կեց Մեծ Մասիսի կէսը, իսկ Փոքր Մասիսի գագաթը:

Այս սարի մէջքին, երկու ժայռերի մէջ, սարի գլխից գըլ-
տորուած մի մեծ միակտոր սրբատաշ քար տեսայ, որ ունէր փո-
րած քառակուսի աւազանի ձեւ, ներքեւում նոյնպէս քա-
ռակուսի 30 սանտիմետր երկայնութեամբ և 50 սանտիմետր
լայնութեամբ մի կոթ, կոթի վրայ քառակուսի մի շրջանակ 75
սանտիմետր հաստութեամբ և 125 սանտիմետր կողերի երկայ-
նութեամբ, սրա վրայ 75 սանտիմետր բարձրութեամբ, 1 մետր
երկայնութեամբ և 85 սանտիմետր լայնքով աւազանն է փո-
րուած, որի խորութիւնն է 35 սանտիմետր, իսկ տրամագիծը 50
սանտիմետր: Երջանակի մի կողմի վրայ կայ հայերէն երկա-
թեայ քրերով մի սրճանագրութիւն 4 տողից բաղկացած, որ
անձրեւից և ձիւնից տեղ տեղ մաշուած էր: տառերի նմանա-
կան ընդօրինակութիւնը և քարի ձեւը ուղարկելու եմ «Բանա-
սէրին», գուցէ կարողանայ կարդալ և մի բան դուրս բերել:

Ինչպէս երեւում է, Մակու գաւառը Պարսկաստանի ամեն-
նագիշ ուսումնասիրուած մի մտանէ: արժէ ուսումնասիրել այս

գաւառը հնագիտական և պատմական հետազոտութիւններ կատարելով, հողի տակ թաղուած և հողի վրայ կանգուն մնացած հնագիտական և պատմական գանձեր կան, որոնց գուցէ տակաւին մարդկային ձեռք չէ գտած, ֆրամսիացի հնախոյզ գը Մօրդան երկու տարի առաջ այցելած է Մակու, գուցէ նա կարողացել է մի քիչ լոյս սիսել այս յետընկած և վայրենի երկրի անցեալի և ներկայի վրայ:

Մեծն Շահ-Աբբաս իր արշաւանքների մէջ հանդիպել է նաև Մակու քաղաքը և նրա ժայռի վրայ, վերջին տուների մօտ արձանագրել է իր անունը և քաջազորութիւնները պարսկերէն ցցուած տառերով: Այդ արձանագրութիւնից քիչ հեռու գտնւում է ժայռի մէջ փորուած մի մատուռ, փորուած խաչերով և հայերէն անընթեռների գրերով, հայերը միշտ ուխափ են գնում այդ տեղ և վառած մոմերով սեւացրել են պատերը: Այս մատուսից քիչ հեռու, վերջին տների շաբուռում կայ մի խոր փոս —հոր, որի մէջ լիքն է մարդկային ոսկորներով: Ինչպէս երեւում է, դա եղել է մեր նախահայրերի ղերեղմանոցը, չը համարձակելով ձորի մօտ փոխադրել իրանց մեռելները յատուկ գերեզմանոցում, հորի մէջ են կատարել թաղման հանդէսները, դիակները միմեանց վրայ նետելով:

* * *

Մակուից Թաւրիզ վերադարձիս, հանդիպեցի նաև Օվաջըկ գաւառը, Մակուայ խանութեան մէջ, բայց նրանից անկախ մի խանութիւն է այս, Թրքաց Բայազիդ քաղաքի սահմանակից: Օվաջըկի խանը՝ Միրպէնճ փաշա խան՝ 70 տարիքը անց մի ծուրունի է: Նրա մեծ որդին Սէրտիպ Կուլի խան, քաջութեան մեծ հոչակ է հանած այդ կողմեր: Անցեալ տարի թրքական կանոնաւոր զօրքը սահմանագլխից անցնելով տիրել էր Օվաջըկի սահմանակից գիւղերին, Սէրտիպը 100-ի մօտ ձիաւորներով թրքական կանոնաւոր զօրքի դէմ կախւ մղելով, նրանցից շատերին սպանեց և մնացածներին քշեց սահմանագլխից հեռու, միայն մի քանի վիրաւորուածներ ունենալով: Օվաջըկի ժողովուրդը Սէրտիպի այս քաջազորութիւնը անմահացնում է ժողովրդական երգեր հիւսելով: Յետ նահանջող թրքական զօրքի հրամանաւարը իմ այնուեղ գտնուած միջոցին Բայազիդի պարսկական կօնսիւլին հետ եկել էր Օվաջըկ հաւատութիւն կնքելու և սահմանագլխում հողային խնդիրներ կարդագրելու համար:

Օվաջըկի ժողովուրդը եւս կիսավայրենի է: Մակուից փախած չարագործը Օվաջըկ է ապաստան գանում և փոխադարձաբար Օվաջըկից փախած չարագործը Մակուումն Այս դա-

ւառը բազկացած է 40-ի մօտ գիւղերից, որոնց 5—6-ը պատկանում է Միքայէնճին, 10—15-ը միւս խաներին, և մնացածը Մակուայ խաներին:

Միքայէնճը նստաւմ է Բայաղիշ-Խոյ տանող պօստի ճանապարհի վրայ գտնուած Կիլիսկ-Քենդում (Եկեղեցու գիւղ): Գիւղը իր անունը առել է իր մէջում գտնուած հոյակապ հայկական Եկեղեցուց, որ մինչև այժմ կիսաւէր կանգուն է մնում: Եկեղեցին բաւական մեծ է և շինուած է ներսից ու դրսից սրբատաշ մեծ քարերով, որոնց մէկը լցրել են կիրի, մանր քարերի և աղիւսի կտորների մի շաղախուած, որ քարացել և ամրացել է. Եկեղեցու առանց սիւնի գմբէթը նոյնպէս ներսից և դրսից կորացրած սրբատաշ քարերով է շինուած, հիանալի ճարտարապետութեամբ. այնպիսի մեծութեամբ քարեր են շարած, որոնք փոխադրելու համար 40 լուծ եղ կամ գոմէշ է հարկաւոր, իսկ բարձրացնելու և գմբէթը կազմելու համար կըրկնապատիկը հազիւ բաւականանայ: Եկեղեցու չորս պատերը և գմբէթի մի մասը կանգուն են մնում. գմբէթի մեծ քարերը օդի մէջ ճօճում են առանց վայր ընկնելու: Դժբաղդարար ոչ մի արծոնազրութիւն չը կար. միայն զիւղից 10 րոպէ հեռու գաշտի մէջ գտնուած հայկական գերեզմանատան քարերի վրայ կարգացւում են անուններ և յիշատակութիւններ: Գաւառի հայ ազգարնակչութիւն չը կայ. միայն խանը յիշում էր, որ նոյն զիւղում տակաւին մնում է չ մի տուն, որ պատկանելիս է եղել նախկին բնակիչներից մի հարուստ հայի. ուրիշները ուզել են քանիքել և նոր տուն շինել, բայց խանը չէ թոյլ տուել, իբրև յիշատակ կանգուն պահել ցանկանալով:

Երեի այդ Եկեղեցին կամ մի վանք է եղած և կամ այդ տեղը մի մեծ քաղաք, որտինեատն գժուար թէ մի գիւղ այդքան հոյակապ, մեծածախս և ճարտարարութեատ մի Եկեղեցու մասին մտածէր: Երա անունը ես մեզ անձանօթ է:

Մակուից Թաւրիկ իմ ճանապարհորդութիւնը տեւել է ձիով 8 օր, 1 օր Օվաչըկ, 3 օր Խոյ, 1 օր Սալմաստ և 3 օր Թաւրիզ:

Մակուայ խանութեան անկախութեան մասին մի գաղափար տալու համար, յայտնենք, որ սէրդարի տուած անձնական մի յանձնարարական նամակով մէկը կարող է անցնել թիւրքաց կամ ոռոսաց հողը, Բայազիդ կամ Նախիջևան: Սէրդարը ոռոսաց հետ լաւ յարաբերութիւններ է պահպանում և ամեն անդամ, որ ոռոսաց հողը ոտ է զնում, վայելում է մեծ յարգանք և զինուորական պատիւներ:

Փոխադարձաբար ինքն էլ մեծ պատիւ և յարգանք է ցոյց տալիս Մակու այցելող ռուս պաշտօնեաներին. օգոստոսի սկզբներին Բայազիդի ոռւսաց կօնսուլը իր կնոջ և զռքանչի հետ եկել էր Մակու և հիւր էր եղել սէրդարի ամառանոցում, որի համար յատկացրած էր մի մեծ վրան և ծառաներ։ Կօնսուլը մեկնելիս, սէրդարը տալիս է նրան մի ձի ընծայ, կնոջը և զռքանչին շալեր։

Սէրդարի տաճ կառավարիչը Կարապետ անունով մակուացի մի հայ է, որ եղել է նաև սէրդարի հօրը մօտ նոյն պաշտօնով։

Դօկտ. Կ. ՓԱՇԱՅԵԱՆ

ՄԱՐԱՆԻ ԴԵՂԱՊԵՏԸ

Ամառնային շոգ օր էր. տօթը խեղդում էր, մի ծառի տերև, մի խոտի թերթիկ չէր շարժում. թեթև զեփիւռ անգամ չէր խաղում, որ տոշորուող մարմիններին վայրկենական զովութիւն բերէր:

Եւ այդ ժամանակ Ծուփկենց բակի պատի ստուերում, հնամաշ թաղիքի վրայ փռուած, աղքատիկ անկողնու մէջ շնչասպառ տնքում էր մի հիւանդ կին. դա ընտանիքի մայրն էր, Ծուփկենց Մարանը:

Երկու ամեռող ամիս էր անցել այն օրից, երբ Մարանը գուլխը բարձին էր դրել: Ծանր հիւանդութիւնը իսպառ հալ ու մաշ էր արել նրա վաղեմի առոյգ կազմուածքը. նրա թուլի գէմքի կաշին փափկել, նրբացել ու դեղին մոմի գոյն էր ստացել. իսկ հիւծուած մարմնի բարակ մորթու տակ զանազան տեղում դուրս էին ցցուել սուր անկիւններով հալուած սոկորներ, որոնց երեսից նշմարւում էին կապուտակ երակների բազմատեսակ ճիւղաւորութիւնները:

Երեւի կէսօրուայ խեղդող տօթը շատ էր նեղում Մարանին. նա պառկած էր մէջքի վրայ խուփ աչքերով և բերանը լայն բացած արագ արագ հեւում էր: Հիւանդի գլուխը թոյլ թոյլ ընկած էր անլուայ բարձի վրայ. սոկորացած բազուկները տարածուած էին վերմակից դուրս աջ ու ձախ, իսկ կիսամերկ կըծքի չորացած տախտակը հեւոցի հետ մեղմօրէն բարձրանում ու իջնում էր:

Մարանի գլխավերեւը, գտակը յօնքերին քաշած նստած էր Յարութը, նրա ամուսինը, որը հիւանդապահի գեր էր կատարում: Ուստենու գալար ճիւզերից կազմած մի փունջ ունէր նա ձեռին, որ անդադար տարուբերելով հիւանդի երեսի վրայով, թէ ճանճերին էր հալածում և թէ մեղմիկ քամի առաջացնելով, ցաւատանջ ամուսնու տօթախորով դէմքին թեթև զովութիւն բերում:

Լուս էր Յարութը և տիսուր, նրա կոպիտ արեւառ դէմքը պատած էր վշտի խոր կնճիռներով: Ի՞նչ անէր խեղճը. ախար հեշտ բան չէր նրա պէս անճար աղքատի համար սաղ շաբաթներով բան ու գործ թողած տանը վեր ընկնել ու հիւանդի հետ մաշուել, արոբուել Բայց նա արեց այդ զոհողութիւնը. արեց, որովհետեւ սիրելի ու թանկ էր նրա համար վերմակի տակ գալարուող հիւծուած հիւանդը, որովհետեւ շատ մեծ էր նրա տան վրայ Մարանի ունեցած հոգոն ու երախտիքը: Եւ Յարութը ձեռքից եկածը չը խնայեց իր թանկագին կողակցին առողջացնելու համար: Շրջակալքում էլ սրբավայր ու ուխտատեղ, էլ ժամ ու մատուռ չէր մնացել, որոնք անմաս լինեին Յարութի ջերմեռանդ սրտից բզիող մոմ ու մատաղից, բայց մահուան հրեշտակի ճիրաններում տառապող դժբախտ հիւանդին և ոչ մի կողմից փրկութիւն չեկաւ: Գաւառում գտնուող բոլոր հնարագէտ գալլաքները, բժշկական հմառութեամբ հոչակուած պառաւներն ու մինչեւ անդամ գրբաց մոլլաներն ու սօղոմնագէտ տիրացուները, բոլորն էլ փորձել էին Մարանի վրայ իրանց գիտութեան բուժարար ոյժը, բայց և ոչ մէկը չէր մեղմացրել սոսկալի ցաւի տանջանքը: Ցաւն անբուժելի է.— այսպէս էր նրանց վերջնական եղբակացութիւնը: Եւ այդ անողոք վճիռը Յարութին յայտնողը եղաւ մի պատկառելի նետադիր պառաւ, որը վերջում արտասուբը սրբելով աւելացրեց. «Մարանի փրկութիւնը մընաց դեղապետին. թէ նրան ճար լինի, գեղապետը պի-

տի լինի, թէ չէ, որ Լողմանն էլ գերեզմանիցը դուրս
դայ, էլի չի կարող նրան ազատել»:

Պառաւի այդ անսիրտ յայտարարութիւնը սուր
կացնի հարուածի ներգործութիւն ունեցաւ Յարութի
վրայ. նրա ողնաշարը կատես մէջտեղից կոտրուեց, նրա
գլուխը քաշ ընկաւ կրծքին և նա սկսեց դառնագին
հեկեկալ: Գուժաբեր պառաւը հեռացաւ, բայց Յարու-
թի բորբոքուած աչքերից բղխող աղի արցունքի խոշոր
կաթիւները դեռ երկար երկար թրջում էին հնամաշ
թաղթի խունացած նաշխերը և աղեկտուր հեկեկանք-
րերի ընդհատ հնչիւնները մինչեւ երեկոյ լսում էին
խարխուկ խրճիթի սև խաւարի մէջ:

Վերջապէս, առատ արցունքը փոքր ինչ հովացրեց
Յարութի այրուող սիրտը. նա չուխի թեւով աչքերը
սրբեց և սկսեց ինքն իրան մխիթարել ու սիրտ տալ:
Զէ որ պառաւը զեռ նրա սրտում յոյսի մի փոքրիկ
կտոր էր թողել՝ գեղապետը, իր փրկարար զօրու-
թեամբ—ուրեմն գեռ մնում էր էլի մի շիւզ, որից կա-
րող էր բռնել վշտերի ծովում խեղդուող թշուասը:

Եւ այդ օրուանից Յարութը ամեն կերպ աշ-
խատում էր լսել Մարանի բերանից թէ ինչն է նրա
սրտով ուզած գեղապետը. ինչնվ կը կամենար նրա
բազմատանջ կեանքի այդ հաւատարիմ ընկերը վերջին
անգամ թրջել իր այրուած ու տապակուած լեզուն.
«Մարան չան, անունիդ մեռնեմ, ախր մի ասա սիրտգ
ինչ ա ուզում, ինչ կուզես ուտել, — բազկալի սպաս, լաւ
ոսպախաշու, կանաչ պօլօնիկ. բացախով դանդուռ, ա-
լանի շորվա, նոր խեցած ծիրան, կամ թթուաշ խնձոր.
որ մէկից կուզես արեիդ մատաղ»: Այս հարցերը օրա-
կան տասն անգամ կրկնում էր Յարութը. և ան-
թարթ աչքերը ամուսնու երեսին ուզած՝ ամբողջ ժա-
մերով նայում էր նրան ու պատասխանի սպասում.
բայց իզուր... Մարանը չէր պատասխանում. նա երբեմն
միայն ցաւալի ճրլոցով ոսկրացած մէջքի տեղն էր փո-
խում ու կարմրատակած աչքերը կիսով չափ բանալով,

պապանձուած շրթունքներն էր կամացուկ շրպպացնում.
դա նշան էր որ հիւանդը ջուր է ուզում:

Յարութը շտապով հիւանդի չորացած բերնին
էր մօտեցնում սառը ջրով լիրը փարչը, որից յետոյ
Մարանի գլուխը կրկին բարձի վրայ էր ընկնում: և
հիւանդը կրծքից դուրս խուժող օդի առատ հոսանքը
մի սրտամաշ «ճֆ» էր առաջացնում: Այսուհետեւ էլի
նոյն սպանիչ լուստիւնը, էլի հիւանդի միօրինակ ան-
շարժութիւնը և յուսահատ Յարութի խեղդուող հեկե-
կանքը:

Ահա այս դրութիւնն էր տիրում Ծուփկենց բակում,
երբ գարբասի ջախլախ գուռը աղմկալի շառաչիւնով
յետ գնաց ու փոքրիկ Աւէտը կանաչ խոտը կոնա-
տակին թռչկոտալով ներս եկաւ: Դա Յարութի տղան
էր, որ իր քոյր Սաթօի հետ այգուցն էր վերադառ-
նում:

—Հայրիկ,—գոռաց Աւէտը դեռ. բակի շէմքից,—
պօրինջան են ծախում, պօրինջան, տեսել ես, կարմիր
պօրինջան. Էն որ անցեալ տարի քեռոնց այգում խո-
րովեցինք հա. լաւն էր, թթուաշ...

Եւ երեխան բերած խոտը բառաչող հօրթի առա-
ջին ածելով, սկսեց շոյել փոքրիկ կենդանու սիրուն
ճակատը:

Կայտառ մանկան առողջ կրծքից դուրս թռած
բարձր ճիչը սժափեցրեց հիւանդին, նա կողքի վրայ
շրջուեց, ծանր ճրաց, յետոյ աչքերը բացեց, փորձեց
նստել:

Ուրախացած Յարութը նստացրեց հիւանդին և
նրա թիկունքի յետեւը մի կլորած թաղիք դրեց, որին
յենուել կարողանար Մարանի թռուացած մէջքը:

Մարանը մի քանի բերան տնքաց, մէկ էլ նորից
հառաչեց, յետոյ իր լայնացած բիբերի սարսափելի
հայեացքը ամուսնու երեսին յառելով դժուարութեամբ
արտասանեց՝ Յարնւթ...

—Զանի,—սրտապատառ ուրախութեամբ պատաս-

խանեց Յարութը, —ինչ ես ուզում, անունիդ մեռնեմ, բազկալի սպաս, լաւ ոսպախաշու, կանաչ պոլոճիկ... և այսպէս նա պիտի վերջացնէր իր սիրելի ուտելիքների ամբողջ ցուցակը, եթէ հիւանդի երեսի զգուանք արտայայտող կնճիռները և ձեռի բացասական շարժումը չը ստիպէին նրան լռել: Ըստ երեսոյթին Մարանը չէր ուզում լսել հազար ու մի անգամ կրկնուած այդ անտանելի բառերը:

—Յարնւթ ջան, —կրկնեց նա փոքր ինչ բարձր և ապա, խօսքը շարունակելու համար, իր հիւանդ կրծքի բոլոր զօրութեամբ օդի պաշարներ չնչեց:

Այս անգամ Յարութը լուս էր և ականջը հիւանդի շրթունքներին մօտեցրած իր ամբողջ էութեամբ լսողութիւն էր դառել:

—Պօրինջան, —ջնչասպառուելով վանկ վանկ մրմրնջաց Մարանը, —կարմիր պօրինջան, —կրկնեց նա գողգոչուն ձայնով, և իր բոլբոքուած աչքերի աղերսական հայեացը ուղիղ ամուսնու ճակատին մեխեց:

Հիւանդը գժուարանում էր երկար խօսել, բայց նրա խղճալի հայեացը պարզ ասում էր. «Հը», այս չորացած շրթունքներին կարող ես հասցնել իմ գեղապետը, թէ պիտի հոգուդ վրայ պարտ թողնես իմ վերջին արտասուելիքը»:

—Ես բոպէիս կը բերեմ, —յուզմունքից դողացող ձայնով բացականչեց Յարութը. և աեղից վեր թռաւ ու գէպի գուռը վազեց, բայց նա գեռ գրան շէմքին չէր հասել, որ յանկարծ ձեռը գրպանը տարաւ, և մնաց տեղում արձանացած. խեղճի քսակը բոլորովին դատարկ էր...

Այսպէս մի ըոպէ նա մնաց ձեռը գրպանում շուարած կանգնած, բայց յետոյ նրա գլխում մի յուսատու միտք ծաղեց. —գուցէ յաջողուէր ասլառիկ բերել, և նա դառնալով որդուն հարցրեց.

—Աւէտ, այ Աւէտ, ով էր ծախում պօրինջանը:

— Իլանենց Պապիկը, էնքան լաւն էր, — հրճուանքով վրայ բերեց երեխան:

Բայց պատասխանը դուր չ'եկաւ Յարութին: Պապիկը էն պտուղը չէր որ ապառիկ բան ծախէր: Հարկաւոր էր մի հնար անել, և նա եղունգները կրծոտելով կանգնել էր Մարանի գլխավերեւը ու իր ուղեղի ամբողջ ոյժը լարած աշխատում էր մի ճար գտնել՝ որ դեղապետը հիւանդին հասցնի:

Հիւանդը իր կախուած գլուխը բարձրացրեց և յօնքերի տակից ամուսնու երեսին նայելով արտասանեց.

— Բերի՞ր:

— Հա, բերում եմ, էս րոպէիս, — շշկուելով պատասխանեց Յարութը, և սկսեց կանգնած տեղում ինչ որ աննպատակ շարժումներ գործել. յետոյ գառնալով աղջկանը, ասաց.

— Աղջի Սաթօ, ինչ էի ասում... հա... մի շնչ, պօրինջանի համար շոր տուր, շնչ: Աղջիկը բերեց շորը, բայց հայրը գեռ չէր շարժւում:

Մարանը մէկ էլ նայեց ամուսնուն, և տեսնելով նրա շփոթմունքը հարցրեց.

— Յարութ, այ Յարութ, փող ունիս, փնդ:

— Փնդ... ասենք... հեշտ ա հեշտ, մի տեղից կը ճարեմ, — լեզուն ծամծմելով պատասխանեց նա, թէեւ ոչ մի տեղից փող ճարելու յոյս չունէր:

Հիւանդի ճաքճաքուած շրթունքները միմեանց մօտեցան, բերանի մկանունքները ձգուեցին և նրա այլակերպուած դէմքի ոսկրոս մակերեւոյթի վրայ ժպիտի պէս մի բան նշանաւեց. բայց որքան դառը, որքան կծու էր այդ սպանիչ ժպիտը, կասես թէ թոյն էր կաթում նրանից:

Մարանը հառաջեց ու աչբերը երկնքին յառելով մի բան մրմնջաց. անէծք էր դա, թէ աղօթք—չիմացուեց, բայց ցաւոտ թոքերի խորքից գուրս վիժող երկար հազի մէջ խեղդուեցին նրա վերջին բառերը:

Հազարուց յետոյ Մարանը նշանացի կանչեց աղջը:

կանը, և նրան ականջին ծանր հեւալով ինչ որ բան առաց Սաթօն հեռացաւ և երկու րոպէից յետոյ վերադառնալով, մի փաթեթ բերեց ու յանձնեց մօրը:

Յարութը ճանաշեց փաթեթը. դա Մարանի բաժինքի ամենալաւ դաւլունի էր, որ կարուած էր զանազան վառ գոյնի շալերից ու մետաքսի գործուածքների մանր կտորտանքներից:

Հիւանդը առաւ նախշուն դաւլուղը, դանդաղութեամբ շուռ է շուռ տուեց իր ցամաքած ձեռների մէջ և սրտի խորքից մի հոգոց արձակեց: Ո՞վ դիտէ ինչ քաղցր յիշողութիւններ, ինչ սիրուն պատկերներ վերակենդանացան այդ վայրկեանին տարաբախտ կնոջ մուլորուած մտքում: Զէ որ նրա անցեալի կարմիր օրերի հետ էր կապուած այդ նուիրական դաւլուղի սիրելի պատմութիւնը:

Մարանը իր հալուած մատների բոլոր ոյժը լարելով արձակեց դաւլուղի կապը, յետ տուեց փաթոյթը և նրա արանքից վարդադոյն չթում կապած մի փոքրեկ բան հանելով, մեկնեց Յարութին: Վերջինս առաւ, քանդեց նրա ամուր կապը և ինչ... մի պստիկ շողշողուն արծաթէ դրամ մի հատ տաս կոպէկանոց:

— Տար, — մըմիշաց հիւանդը, յոդեած գլուխը բարձին գցելով. — տար ինձ համար պօրինջան բեր. ախսրտով ուզում եմ, — աւելացրեց նա ու ցամաքած, պուօշները շրպպացրեց: Իսկ Յարութը չէր շտապում: Նա կանգնած էր նոյն տեղում և փոքրիկ դրամը մատների մէջ խաղացնելով, կասես զուարճանում: Էր նրա փայլով: Բայց իսկապէս նա տանջւում էր, դառը մըտքերը խեղդում էին նրան և վրդովուած խիղճը չարաշար դալարում էր նրա ներսում: Յարութը յիշեց որ այս դրամը ինքն էր ընծայել Մարանին նոր նշանուած ժամանակ և հէնց այն օրը, երբ նրան յախողուել էր առաջին սիրային համբոյրը քաղել սիրուն նշանածի ալվարդ թշերից: «Հէյ դիտի, անցած օրեր» շշնջաց նա

ատամների արանքից և այնուհետեւ մտաբերեց, թէ քանի անդամ էր տեսել, երբ խեղճ Մարանը իր այդ թանկագին գանձը հանում էր սնդուկից, սրբում, պրապեղացնում, մի փոքր զուարճանում և նորից սնդուկի ապահով անկիւնում թագյնում:

Յարութի ձեռը չէր զօրում այդ փողը ծախսելու. նրա խիզճը բողոքում էր, որ տասնեակ տարիների ընթացքում այնքան խնամքով ու գուրգուրանքով պահուած փոքրիկ դրամը իր մահամերձ տիրոջ վերջին սրտուղելիքի վրայ գործադրուիր Ոչ, դա կը լինէր Յարութի կողմից մի աններելի ապերախտութիւն, մի անսիրտ ու ստոր վարմունք, և ի հարկէ, նա ոչ մի կերպ չի հաշտուի այդ մտքի հետ. նա կը հանի իր հագի չուփիւն, դրաւ կը դնի նրան, կը ծախի գտակը ու նրա փողով իր բաղմաշխատ ամուսնու համար գեղապետ կը գնի. իսկ այդ փոքրիկ պապղուն դրամը էլի սունդուկի խոր անկիւնում կը պահուիր:

—Ա՞ս պօրինջան, —շշնջաց Մարանը և լայնացած բիբերի սարսափելի հայեցքը Յարութի երեսին ուղղեց, —շնուարէք, —աւելացրեց նա, —թէ չէ անդեղապետ կը մեռնեմ...

Վերջին խօսքերը կասես ծակեցին Յարութի սիրտը, այլ եւս անկարելի էր սպասել. նա արագութեամբ երեսը չուռ տուեց և շտապով բակից գուրս եկաւ:

Յարութի փոքրիկ տղան, սիրուն հօրժուկը թողած, հօր յետեւից թռչկոտալով դուրս վազեց, իսկ Սաթօն սկսեց օջախը վասել, որ մինչեւ պօրինջանը բերելը, կրակը պատրաստ լինի:

Յարութը փոքրիկ դրամը պտղնցում սեղմած անհաստատ բայլերով առաջանում էր դէպի Խանենց Պապիկի խանութը և ճանապարհին մտածում. «Ի՞նչ անեմ, էս րոպէիս ես ում գիմեմ, որտեղից մի երկու փունտ պօրինջանի փող գտնեմ...» Յանկարծ նա կանգ առաւ, մատը բերանը դրեց և սկսեց մտքում այսպէս դատել. «Բայց ի՞նչ պիտի լինի, եթէ ես էս փողով պօրինջան

առնեմ, իսկ էզուց կամ էլօր երբ որ ձեռու փող ընկոնի, Մարանի գրամը իրան վերադարձնեմ. չէ որ միեւնոյն բանը կը լինի»:

—Ի հարկէ, միեւնոյն բանն ա,—համարեա լսելի ձայնով արտասանեց Յարութը և այս անգամ հաստատուն քայլերով մօտեցաւ Պապիկին:

—Բարի օր, Պապիկ:

—Բարով,—կիսաբերան պատասխանեց խանութապանը, աչքի պոչով նայելով իր անեղ մուշտարուն:

—Պօրինջան ունի՞ս:

—Եմտ, բայց քո ուտելու ժամանակը չէ, ախտէր Յարութ:

—Խչու, Փունտը քանի արժի:

—Հինգ կտպէկ:

—Օ՛օ, ինչ թանկ ես ծախում,—ակամոյ վրայ բերեց Յարութը:

—Բաս դու ինչպէս էիր ուզում. փութը հինգ կոպէկ, համ, դէ, դէ քաշուիր, դնա բանիդ, դուռը մի կտրի շոդ ա:

Բայց Յարութը չէր հեռանում, ընդհակառակը նա մօտեցաւ պօրինջանի սալակին և սկսեց ջոկջոկատել նրա միջի լաւերը:

Խանութպանը զարմացած աչքերով ոտից գլուխ չափչփում էր Յարութին:

Այդ ժամանակ, երբ Յարութը գլուխը կախ՝ զբագրուած էր պօրինջանը ջոկելով, խանութի դռանը մօտեցաւ մի ալեղարդ ծերունի: Երեցփոխ Պետրոսն էր դա. գիւղի առաջնակարդ իշխաններից մէկը, թէեւ եկեղեցական գումարների ուղիղ երեք քառորդը գողացել էր:

Երեցփոխ Պետրոսը մի խոտասիրտ ու հոգեհան վաշխառու էր. դա այնպիսի մի հրեշ էր, որ ձեռն ընկածին էլ բաց չէր թողնի, մինչեւ որ նրա արեան վերջին կաթիլը ըք ծծէր: Ով նրանից մի քանի ոռութի պարտք վերցնէր տարիներով պիտի տառապէր, որդէց որդի պիտի հալուէր ու մաշուէր նրա անիծուած դաւ-

թարի սոսկալի ծանրութեան տակ: Այսպէս համարեա-
ամբողջ գիւղը տնքում էր այդ անիրաւ մարդու առհելի
ճիրաններում:

— Բարի աջողում, Պապիկ, ասաց երէցփոխանը
խանութի չէմքից ներս մտիկ տալով:

— Այ հազար ու հազար բարով, պատասխանեց Պետ-
րոսը ոտքի ելնելով:

— Ես ինչ ա, մեր տղայ, նուբար և բերել, հա՞-

— Հրաման քեզ, կարմիր պօրինջան ա,—ստրկական-
ժպիտը շրթունքներին պատասխանեց Պապիկը:

— Ի՞նչ արժի ֆունտը:

— Հինգ կոպէկ:

— Պա, պա, պա, պա, —սարսափով բացական-
շեց երէցփոխը և երեսը շուռ տալով անսովոր արա-
գութեամբ հեռացաւ այնտեղից:

Բայց մի րոպէից յետոյ նա կըկին յետ գարձաւ և
խանութի գռանը մօտենալով ուշի ուշով ներս նայեց:

Յարութը թիկունը գռանը գարձրած դեռ շա-
րունակում էր իր գործը «ֆունտը հինգ կոպէկ ա, հեշտ
բան չի» մտածում էր նա, և աշխատում էր ընտրել
պօրինջաններից այնպիսիները որ համ կարմրած լինէին,
համ խոշոր, համ կլոր:

Երէցփոխը իր ծերացած բիբերի բոլոր զօրութիւնը
լարած՝ երկար ժամանակ նայելով, աշխատում էր ճա-
նաչել Պապիկի մուշտարուն, բայց չը կարողացաւ:

Վերջը նա Պապիկի փէշը ձգեց ու հաղիւ լսելի
ձայնով հարցրեց. «Էդ ո՞վ ա»:

— Յարութն ա, —պատասխանեց Պապիկը բաւական
բարձր ձայնով:

Երէցփոխը աչքերը կուչ ածեց ու զլուխը հարցա-
կանօրէն շարժեց «ո՞ր Յարութը» ուզում էր ասել նա:

— Ծուփկենց Վարդանի տղին, —համարեա գոռոցով
պատասխանեց Պապիկը:

Յարութը յետ նայեց, տեսաւ չէմքում ցցուած
Պետրոսին և նրա սիրալ մի տեսակ ալէկոծուեց: Նա

զգաց, որ երեսը կարմրատակեց ու ականջները տաքաշան, բայց թէ ինչու, չը կարողացաւ իմանալ:

— Ծուփկենց Յարութը, — ծորելով, կրկնեց երէցփոխը և բթի տակ մրթմրթալով հեռացաւ դռնից։ Նա նըստեց առուփի կողքի ուռենու շուաքում և շրթունքները կրծոտելով մի հաստ և կարճ պապիրոս փաթաթեց։

Ծուտով Պապիկի խանութից դուրս թռաւ Աւէտը և ջիրիդի երգելով ու փորին բարձրաձայն թմբկահարելով առաջ վազեց։

Որդու յետեւից դուրս եկաւ Յարութը, պօրինջանը չուփի փէշում բռնած։

Նա հեռուփից նկատեց երէցփոխի գարշելի կերպարանքը, որ առուփի կողքին՝ ճանապարհի վրայ պըսպըզած բուլա բուլա բաց էր թողնում պապիրոսի գառը ծուխը։

Յարութին պատեց մի տխուր նախազգացում։ և նրա սիրտը սկսեց անսովոր արագութեամբ բարախել։ որքան աւելի էր նա մօտենում Պետրոսին, այնքան սաստիանում էր սրտի թրավրտոցը և ոտները ակամայ սկսում էին թուլանալ։

Մէկ նա մտածեց յետ դառնալ և ճանապարհը ծուել, որպէս զի երէցփոխի ատելի երեսին չը հանդիպի, բայց տեսաւ որ արդէն ուշ է, քանի որ շատ էր մօտեցել Պետրոսին։

Նա գլուխը կախեց, աչքերը գետին յառեց և որպան կարող էր քայլերն արագացրեց։

Այդ րոպէին նա սովորական անցորդների պէս չէր գնում, այլ ուղղակի վազում էր, սրտապատառ փախչում, կասես մէկը հրացանը կրծքին սեղմած նշան էր բռնել նրան։

Բայց ինչ, չը նայելով գործ գրած բոլոր ջանքերին, նա չը կարողացաւ խուսափել վերահաս վտանգից և դեռ նոր էր ուզում անցնել անողոք վաշխառուի առջեւից, երբ կողքից հնչեց երէցփոխի խրոխտ ձայնը։

— Յարութ։

Եւ այդ մի հատիկ բառը կասես շանթահար արեց
Յարութին։ Նա կուզէր չը լսելուն տար այդ բառը,
կուզէր երեխալի պէս վազելով փախչել և որքան կա-
րելի է շուտ տուն հասնել, բայց ոտները թուլացան,
ծնկները ծալուեցին ու նա մնաց տեղում մեխուած։

—Յարութ,—կրկնեց Պետրոսը—էստեղ արի, բան
եմ ասում։

—Գամ,—խղճալի եղանակով պատասխանեց Յա-
րութը և յուզմունքից դողացող ձայնով կանչեց իր առ-
ջեւից վազող Աւէտին։

Երեխան լսեց իր անունը և փողոցի ոլորանից յետ
դառնալով մինչև հօր մօտք՝ մի չնչի վազեց։

—Պօրինջանը տար տուր մօրդ,—կամացուկ ասաց
Յարութը որդուն և չուխի փէշը մեկնեց դէպի նա։

—Լաւ, լաւ,—աղաղակեց երեխան ուրախութեամբ
և իր թաղիքէ փոքրիկ գտակը գլխից առնելով բռնեց
հօր առջեւ, որ պօրինջանը նրա մէջ լցնէ։

—Է՛՛է, բղաւեց երէցփոխը և իր հասակին անպատ-
շաճ արագութեամբ տեղից ցատկելով, վազեց դէպի
Յարութը։

—Մի գատարկի, —շարունակեց նա Յարութի կու-
ռը բռնելով, կաց, հէնց սրա համար էի քեզ կանչում։

Պետրոսի բարձրացրած աղմուկի վրայ հաւաքուե-
ցին պարապ մարդկանց մի պատկառելի բազմութիւն,
որոնք կլորիկ շրջան կազմելով ուշագրութեամբ հետե-
ւում էին կենտրոնում կատարուող գործողութեանը։

—Էս ինչ ես առել,—հարցրեց երէցփոխը, պօրին-
ջանները չօշափելով։

—Սկի, մի պուճուր պօրինջան առայ, —պատաս-
խանեց Յարութը այնքան ցած ձայնով, որ միայն Պետ-
րոսին լսելի լինէր։

—Ի՞նչ ա, բարձրածայն հարցրեց երէցփոխը, ար-
համարական կերպով բերանը ծռելով ու աչբերը սաս-
տիկ կուշ ածելով։

—Պօրինջան ա,—ստիպուած եղաւ բարձր ձայնով
կրկնել շշկլուած Յարութը:

—Քանիսով առար:

—Ֆունտը հինգ կոպէկ:

—Հը՞, բարձր խօսիր, չեմ լսում:

Յարութը աչքերը քաշ դցեց և արեխի բժոյի դե-
տինը չանգուելով բարձր կրկնեց:

—Ֆունտը հինգ կոպէկ:

—Լսեցէք, այ մարդիկ,—ասաց երէցփոխը կըռ-
ները կողքին կանթելով և ունկնդիրների դէմքերի վրայ
զարմանքի արտայայտութիւն որոնելով,—ֆունտը հինգ
կոպէկ:

—Պա, պա, պա,—բացականչեցին զանազան կող-
մերից,—կրակի դին ա, տօ:

—Բաս,—շարունակեց Պետրոսը,—Ծուփկենց Վար-
դանի տղէն ֆունտը հինգ կոպէկով պօրինջան ա առ-
նում ուտում, Աստուած կը վերցնի:

—Տը՛, տը՛, տը՛,—արտասանեցին մի բանի բե-
րաններ:

Յարութը հազար, յետոյ թուքը կուլ տուեց և
գլուխը բարձրացրեց որ մի երկու խօսքով իրան ար-
դարացնի, բայց հէնց որ նրա աչքերը հանդիպեցին
անողոք դատարորի այրող հայեացքին, խեղճը բոլորո-
վին շփոթուեց, անելիքը մոռացաւ և բթի տակ մի
բան կմկացնելուց յետոյ էլի աչքերը քաշ դցեց և ու-
ռենու ճիւղերի խաղացող ստուէրներին նայեց:

Փոքրիկ Աւէտը մնացել էր գդակը ձեռքին հօր
փէշի մօտ բռնած ու ջիրիդի երդը շրթունքների վրայ
սառած: Նա իր պլշած աշքերի երկչոտ հայեացը Պետ-
րոսի կնճռոտ դէմքին ուղղելով աշխատում էր հաս-
կանալ, թէ ինչու էր բղաւում չար ալեռը և ինչից էր
այնպէս վախում իր խեղճ հայրիկը:

—Գիտէք ով ա սա,—որոտաց երէցփոխը շրջապա-
տողների ուշադրութիւնը Յարութի վրայ հրաւիրելով,
—լաւ մտիկ արէք, սա էն Յարութն ա, որ տասներ-

կու տարի սրանից առաջ վող ապարագ արել, տարել պսակուել ու մինչեւ էսօր պարագը չի տուել... Լսում էք,—ասաց Պետրոսը և մի վայրկեան լոեց, համակրական ցոյցերի սպասելով:

—Է՞՞հ, նամուսից զուրկ մարդ ա էլի, —ասաց մուխասի Մարգարը բռնոթու փոշին քիթը քաշելով, —Էդտեսակ մարդկանց երեսին կուզես օրը տասն անգամ թքիր, նրանք կասեն՝ թէ անձրեւ ա գալիս:

—Ախպէր, չափը ճանաչելը լաւ բան ա, —վրայ բերեց մի ուրիշ ծերունի, որ ՅՅ տարի շարունակ դինեցածառութեամբ էր պարապել, —մի մարդ որ պարտը ունեցաւ՝ նրան չի սազի ուտել-խմելը:

—Սիրուն կնկայ ծոցին քնելն անոնց ա, հա՞,—գարձաւ երեցփոխը Յարութին, —իսկ պարտը տալը...

Այդ լսերը խօսքելը Յարութի բոլոր ջղերը ցնցեցին. նա աչքերը բարձրացրեց և մի խղճալի հայեացք գցելով ունկնդիր գիւղացիների վրայ, կասես պաշտպանութիւն էր աղերսում նրանցից:

Բայց ամենքը լուս էին և խօսողն էլի եղաւ Պետրոսը:

—Պօրինջանը լաւ բան ա, —ասաց նա Յարութի երեսին նայելով, համեզ, թթուաշ, իմ սիրոն էլ աշատ ուզում, ամեն միտս ընկնելիս բերնիս ջուրը գնում ա, բայց ինչ կանես, ոյժս չի պատում որ մի քիչ առնեմ: իսկ դու, քենթիկ շուն, գոգերով ես տուն տանում ու փողատիրոջ աչքերը հանում: Էդ Աստծուն դժւր ա գալիս:

Յետոյ երեցփոխը ձեռը տարաւ չուխի տակ, մի կարմիր ազգուղ գուրս քաշեց գօտկից և տաներից բանալով, մօտեցրեց Յարութի փէշին ու ասաց.

—Ածիր, ածիր, էդ պօրինջանը սրա մէջ ածիր, թող ես էլ տանեմ նուբարն անեմ:

Յարութի ամբողջ գէմքը գարնան պուտի պէս կաս կարմրել էր. նրա ականջները սկսեցին այրուել և քրտնքի խոշոր կաթիլները լայն ճակատից ծորան ծոս

րան հոսելով թուխ միրուքի վրայով գէպի գետին գլուխուեցին:

—Պօրինջանը էստեղ լցրու, անամօթ, գոռալով
կրկնեց Պետրոսը:

—Ինձ համար չեմ առել, Պետրոս ամի, Աստուած
վկայ, ես չեմ ուտելու...—գոգի բերանը ամուր սեղմե-
լով, մերենայաբար պատասխանեց Յարութը:

—Դիտեմ որ բեղ համար չի, ես պիտի ուտեմ, ա-
սում եմ աղլուզա լցրու, և նա բաշելով Յարութի փէ-
շից ուզում էր զոռով խել նրա գոգի պօրինջանը:

—Պետրոս ամի, գեղապետ ա, Աստուած սիրես,
• թող տանեմ, լայակակնած աղաչույ էր խեղճ աղքատը:
Բայց ամին չէր լսում, և Յարութը ատամներին
հուալ տարով յուսահատական ճիգ էր թափում գոգի
բերանը պաշտպանելու երէցփոխի կատաղի յարձակու-
մից:

Տեսնելով հօր յուսահատ դրութիւնը զօրեղ հա-
կառակորդի ճանկերի առջեւ և նկատելով նրա անօդ-
նական խեղճութիւնը, Աւէտը բնազգօրէն առաջացաւ
պաշտպանելու Յարութին, և իր մատաղ ձեռների բո-
լոր զօրութեամբ ամուր բռնեց հօր գոգից:

—Կնրիր, շան լակոտ, բղաւեց Պետրոսը կիսադլուխ
ձեռնափայտը նրա գլխին շարժելով:

Սարսափահար երեխան ճչաց և արագութեամբ
փախչելով ամբոխի մէջ թագնուեց:

—Յարութ, ասում եմ քո կամքովը տուր թէ չէ...
սպառնաց երէցփոխը:

—Պետրոս ամի, հիւանդի գեղապետ ա... ջրակա-
լած աչքերը երէցփոխի գէմքին ուղղելով աղերսում էր
Յարութը:

—Ասում եմ գոգիդ պօրինջանը տուր, թէ չէ, քո
շուն հօրդ էլ ու հիւանդիդ էլ իրար կը խառնեմ, գի-
տեսա Տէր Աստուած, բեղ մեղայ:

Յարութը բարացել էր. շրջապատողներին տիրել
էր ծանր ու հոգեմաշ լուսթիւն: Լուռ էին նաև մուխ-

սի Մարգարն ու գինեվաճառ Ալէքը. երեւի նրանց էլ դուր չեր գալիս չար երէցփոխի անսիրտ վարմունքը:

Եւ տասնաւոր բերաններից ծխի ամպեր էին բարձրանում գէպի ուռեննու կանաչ կատարը:

—Երէցփոխ Պետրոս, թոյլ տուր թող տանի. գեղապետ ա, բան չը կայ, —հնչեց մօտիկից մի խրօսաբաս ձայն:

Վաշխառուն յօնքերը կիտեց և գլուխը բարձրացնելով անկոչ պաշտպանին սրմնեց:

—Էդ գու ես, խէլառ Տիկօ, —խորին արհամարհանքով արտասանեց երէցփոխը. —«Նման զնմանն սիրէ» ասում է աւետարանը, ախր դու էլ բարի պտուղ չես:

—Այ անաբանդ, բա դու Աստուած չունես, —ըսորբոքուելով դուռաց խելառը. ով ա տեսել որ գեղապետը մարդու ձեռից խլեն, ինչ անենք որ քեզ փող ա պարտ. ախր վերեւից կրակ կը թափի:

—Թէ դու սրտացաւ, հոգեվախ մարդ ես, քո ջէրից հանիր սրա պարտքը տուր, թէ չէ՝ լեզուդ քեզ քաշիր ու ձէնդ կտրիր,

—Զէնս ինչպէս կտրեմ, այ անաստուած, ախր լերդաչոր հիւանդը աշքը ճամբին գեղապետի ա սպասում:

Այդ միջոցին շրջապատող գիւղացիների շարքերի միջից լսում էր Աւէտի աղեխարչ ողբը. իսկ Յարութը՝ ատամները սեղմած՝ հաղիւ էր զսպում կոկորդը խեղդող արտասունքները:

—Բա էն երեխու աղի արցունքը սիրադ չի այրում, հողիդ չի ցաւեցնում, —շարունակեց խելառը, — էդ շինքը ծուռ մարդի պաղատանքը բո դութը չի շարժում. պահ, պահ, պահ էդքան էլ անիրաւութիւն:

—Է՛հ, ակապէր Պետրոս, խեղճ ա, թող տանի, — համարեա միաձայն ասացին մօւխսին ու գինեվաճառը, —խլած գեղապետը ուտել չի լինի:

—Խեղճ ա թող տանի, խեղճ ա, խեղճ ա, —լսուեցին չորս կողմից տասներակ ձայներ:

Ընդհանուր խղճահարութեան այդ միահամուռ

արտայայտութիւնից յանկարծ փղձկուեց Յարութի լցուած սիրտը և նրա կոպերը սկսեցին այրուել աղի արցունքի վարար հոսանքից:

Յարութը ամեն բան մոռացաւ. նա բաց թողեց չուխի փէշը և ձեռները աչքերին մօսեցնելով ուզեց թագցնել իր արտասունքը նայողների հետաքրքիր հայեցքից, բայց տեսնելով, որ չի կարող, բոլոր թափով տռաջ անցաւ և գիւղացիների կաղմած շրջադիմը պատռելով, վազեց գէպի տուն:

Կռուածաղիկ գարձած պօրինջանները Յարութի գոգից թափուելով ու կեղտոտ փողոցի հաստաշերտ փոշիների մէջ թաւալելով, զանազան կողմեր ցրուեցին:

Երէցփոխը կուզը կախ՝ սաւնարիւն կերպով ժողովում էր հասած պօրինջանները, նրանց վրայի փոշին խնամքով մաքրում ու իր կարմիր աղլուխի մէջ գնելով, բեղի տակ ասում.

— Դուք չեք իմանում, գրանց ակտի մին մին էսպէս սիրուն դաս տաս, որ խելքի գան:

Յարութը չիմացաւ, թէ ինքը ինչպէս անցաւ մի բանի ծուռտիկ փողոցներ և մօտեցաւ իրանց տանը: Հասնելով դարպասի մօտ, նա կանգ առաւ գռան առջեւ ու ինքն իրան հարց տուեց՝ «մտնել թէ՞ ոչ», բայց ինչ երեսով մտնել, չէ որ Մարանը աչքը գրանը դցած դեղապետի կը լինի սպասում. ինչ ասել նրան, ինչպէս խաբել այդ լերդաշոր հիւանդին... Զէ, աւելի լաւ է դեռ մի քիչ նստել:

Եւ նա նստեց առօտի կողքին, ջրլիցքի մեծ քարի վրայ: Խորունկ առօտի վարար ջուրը ուժգին հոսանքով վազում էր առաջ ու հին կամուրջի փթած փայտերը հետով լիզում: Նրա պարզորակ մեղմ ալիքները թեթև յորձանքով գնում էին գալիս ու զարնուելով ջրլցքի քարին, աշխուժով պարում, խնդում, ծափ տալիս:

Առուի կողքին, լեռաբարերի արանքում բուսել էր ձմերուկի մի հիւանդոտ թուփ, որի գունատ տերևները դողդողում էին ջրի հետ եկող գուրնկան հո-

վից Մի բոպէ Յարութի ուշադրութիւնը գրաւեց կամուրջի ստուերում բուսած այդ արևազուրկ, դալկացած բոյսը, որի խղճալի տեսքը ակամայ յիշեցրեց նըստան իր հիւծուած ամուսնուն:

Եւ այդ վայրկեանին նրան թուաց, թէ լսում է դռան յետեից դժբախտ հիւանդի ծանր տնքոյցը:

«Երկի խեղճը դեղապետի է սպասում» մտածեց Յարութը և մի և նոյն ժամանակ նրա պղտորուած սրտում մի տարօրինակ փափագ առաջացաւ. ախ, ինչը բան լաւ կը լինէր. եթէ կամուրջի հովում տնկուած այդ հիւանդ ու նուազ բոյսը պօրինջանի թուփ դառնար, կանաչէր, փարթամանար և առասպելական արագութեամբ աճելով հէնց իսկոյննեթ հասնէր, պտուղ տար ու նրա դալար ճիւղերին կպած կարմիր ու կանաչ պօրինջանները առուի վրայ կախուելով սառնորակ ջրի բիւրեղային կոհակների մէջ լողային...

— Եղբան էլ անիրաւութիւն... լսուեց հեռուեից խելառի բանձրագոչ ձայնը, որը հանեց Յարութին մտքերի երազական աշխարհից:

Նա ճակատը շփեց, զով ջրով լուացուեց ու փոքր ինչ թարմանալով սկսեց մտածել, թէ տեսնես ով հաւաքեց իր գոգից թափուած պօրինջանները, ինչ ասաց իր յետեից երէցփոխ Պետրոսը և թէ ինչու է դեռ մինչեւ հիմա այդպէս բորբոքուած խօսում խելառը... Օ՞ք. ինչ անտառուած մարդ է էդ երէցփոխը... Եւ նրա մտքում վերակենդանացաւ չարաբախտ պարտքի բոլոր պատմութիւնը իր սոսկալի մանրամասնութեամբ:

Բակի դուռը կամացուկ բայցուեց և Սամօն գլուխը շէմքից հանելով ամաչկոտութեամբ հօրը ձայն տուեց.

— Դնա, դալիս եմ, մեքենայաբոր պատասխանեց Յարութը, բայց էլի մնայ տեղումը նստած. նրան զբաղեցնում էր այն միտքը, թէ ինչ պիտի պատասխանի Մարանին. ստել, խաբել նրան՝ չէր ուզում, իսկ ճշմարտութիւնը պատմել՝ ամաչում էր:

—Հայրիկ, հայրիկ, բացականչեց լացակուկնած Սաթօն կրկին անդամ՝ դուռը բանալով, —շուտ արա հասիր, ես վախենում եմ:

Յարութը նստած տեղից ծլունգ եղաւ ու չնշառակառ տուն վաղեց:

Մարանը կուրծքը բաց, դզգուած գլուխը դէպի յետ շրջած՝ տաքութեան մէջ զառանցում էր. նրա դէմ ու դէմ օջաղի միջի թէժ կրակներից կանաչ ու կապոյտ բոցեր էին բարձրանում:

Յարութը նստաց ամուսնու գլխավերեւը, իր նախկին տեղում և սկսեց ուռենու շիւերից կապած փունջը միօրինակ դանդաղութեամբ տար ու բերել նրա այրուող ճակատի վրայով:

—Մաթօ, Մաթօ,—բացականչեց հիւանդը տռանց՝ աչքերը բանալու, —անդուկս փակիր, սպիտակ փողս չը գողանան... վայ, խաս զաւլուզս ընկաւ առօն, —աւելացրեց նա և ձեռները մեկնեց առաջ ու լալադին ձայն նով գոչեց «բռնէք, բռնէք», նա լոեց և մի վարկեան արագ արագ հեւալուց յետոյ պոօշները շրպպացրեց. նա ջուր էր ուղղում: Հոդատար ամուսինը կնոջ ցանկութիւնը կատարելուց յետոյ, մի շորահին էլ սառը ջրում թրջելով Մարանի այրուող ճակատին գցեց:

Մարանը աչքերը կիսով չափ բացեց և երկար ժամանակ ապուշ ապուշ Յարութին նայելուց յետոյ հարցրեց:

—Դեղապետս բերի՞ր:

Ամուսինը լուռ էր ու ջարդուած,

—Յարութ, պօրինջանը բերի՞ր, դէ խորովէք, շնոր, ասաց նա և աչքերը խփելով շարունակեց հեւալ:

Յարութը դտակը յօնքերի վրայ իջեցրած՝ լուռթեամբ արտասունքը կուլ էր տալիս և ուռենու թոռումած փունջը անընդհատ տար ու բերում:

Մարանը իր կարմրատակած աչքերը բանալով, օջախի թէժավառ կրակին նայեց ու բացականչեց.

— Աղջի, Սաթօ, այրուեց, այրուեց, պօրինջանը
կրակի վրայ այրուեց, վրայ հասիր, շնուռ:

Յարութը հեկեկանքը դժուարութեամբ զսպելով
փոխեց նրա գլխի սառը շորը:

Հիւանդը իր սարսափելի աչքերը մէկ էլ բացեց,
նրանց թունալից հայեացքը Յարութին ուղղեց ու կար-
կամելով ասաց.

—Ինչու պօրինջանը չառար, հը*, անիրաւ մարդ...
ուզում ես որ անդեղապետ մեռնեմ համ, լաւ...
դէ երեսս ազօթարան... վերջին բառերը սառեցին նրա
պապանձուած շրթունքների վրայ: Հիւանդի այլակերպ
դէմքը աւելի ու աւելի սպրզնեց և մեծ աչքերում վա-
ռուող կրակը կամաց-կամաց մարել սկսեց:

—Անիրաւներ... մի անգամ էլ շնչաց հոգեվարքի
մէջ տառապող հիւանդը իր փակուած ատամների ա-
րանքից, և լոեց ընդմիշտ... Յարութը մի ցաւոտ ճիչ
արձակեց և հեկեկալով կռացաւ նրա սառը դէմքին:

Ա. ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ

ԳԱՅՐԻԵԼ ՄԻՐԶՈՅԵԱՆ

(Յիշողութիւններ)

Շատ քիչ եմ պատահել մի ուրիշի, որին մանկութեան ընկերները այնչափ սնկեղծ և բուռն ուրախութեամբ հանդիպելիս լիսէին, որպէս Գարրիէլ Միրզոյեանին Ամենքի համար նա «Գարօ» էր, «Գարօ ջան» էր կաղուց անցած ժամանակների անջինջ յիշատակները պայծառութեամբ նորոգւում էին հանգիպողների սրտերում և մի լայն ժայռի վայրեցնում էր գէլքը: Բայց այդ ժայռի հետ խառնում էր նաև մի անհանգըստութիւն: Տարիներ անցան, կեանքի անողոք կոփւը խոր ակոսներ անցկացրեց հոգու և ճակատի վրայ, վաղեմի վսեմ յոյզերը ծածկուեցին առօրենայ մանր հոգսերի, նախանձի, անափառութեան ընչասիրութեան տակ—և ծանր էր, երբ մէկը իր ձեռքն էր խրում այդ մոխրի մէջ և քրքրում գեռ բոլորովին չը մարած կայծերը: Միրզոյեանի ներկայութեամբ յանկարծ հին ընկերները զգում էին հոգու այդ անդարձ անկումը, և անձնապատան ինքնագոհութիւնը խարուսիկ էր երեւում նրանց, ու սիրտը լցւում էր կսկիծով: Տեսակյութեան ուրախութիւնը պղտորում էր երկիւզով, չը լինի թէ նա իր ճակատախօսութեամբ ասի, «Ա՞յդ ես դառել, միթէ ինքոյ չես զգում քեզանից» նա կարողացաւ մինչև վերջ հոգով մաքուր մնայ և կենդանի նախատինք լինել այն բոլորի համար, որոնք կեանքի յարմարութիւնների յիշեւից ընկած՝ ոտնատակ արին պատանեկան վառ յոյսերը:

Դեռ զիմնաղիական ստորին դասարաններում նա զիտէր հոգու ամբողջ զօրութեամբ սիրել և ապրել: Պատմում են, թէ նրափի կատաղութեամբ նա իր փոքրիկ, թոյլ տեղովը յարձակւում էր դասարանի ուժեղ չարամիտ, ընկերատեաց աշակերտների վրայ Ծնկերական զգացմունքները դեռ այն ժամանակ լցնում էին նրա կուրծքը և նա օգնութեամն էր հասնում թոյլե-

բին և կարօտեալներին։ Մէկին նա թուաբանութիւնից էր պատրաստում, միւսին երկրաչափութիւնից, երբորդին ոռուերէնից եւ մի այնպիսի սիրով էր անձնատուր լինում պարապմունքներին, որ ընկերը չէր էլ քաշում նրանից, եւ որ նշանաւորնէ, հէնց այդ պատանեկական օրերում նրա մէջ նստած էր բընազդով ուսուցիչ, օրինակ, երկրաչափութեան թէօրեմները մի բթամիտ ընկերոջը հասկացնելու համար, նա կարտում էր հաստ թղթից քառակուսիներ, եռանկիւնիներ, խորանարդներ... Հասկանալի է, որ նա սիրուած էր ընկերներից։

70-ակոն թուականների կէմն էր թիֆլիսումն էլ արձագանք գտան այն բարձր ձգտումները, որոնք վաժտունական թուականներից արդէն զրաւել էին մայրաքաղաքների լաւագոյն գործիչների միտքը։ Գիմնազիստներն էլ զուրս չը մնային դըրանց ազգեցութիւնից։ Առաջին զիմնազիօնի աշակերտների մէջ կազմուեցին զրական շրջաններ, սկսուեցին դպրոցական ձեռագիր հրատարակութիւններ։ Բարձր զասարանցիք խմբուեցին երկու բանակների, մէկի գլուխն էր հանդուցեալ իշխ։ Արդութեան-Երկայնաբազուկը՝ նեմերօնիչ-Դանչենկօյի (այժմեան յայտնի ուսու վիպասանի եղբօր, նոյնպէս վիպասանի) հետ, միւսինը—Գ. Միրզոյեանը, որի „Էխօ քրասնաց շտոլա“ (Կարմիր քննական սեղանի արձագանք) ամսաթերթի մէջ, ի միջի այլոց, սկսեց զետեղել իր մանրանկարները, փոքրիկ թատերական տեսարանները և իշխ։ Սումբատօվը, այժմ Մոսկուայի ոռուսաց թատրոնի առաջնակարգ գերասանը և մի շարք պիեսների հեղինակը, երկու բանակների յարարերութիւնները պատերազմական էին։ Էխօ-ի շուրջը հաւաքուել էին, այսպէս ասած՝ դեմօկրատները և հակառակորդներին անարգանքով կոչում էին արիստոկրատ։ Տաղանդների մեծագոյն մասը աշխատակցում էր Թէօ-ին իր ֆելիքտօններով, բանաստեղծութիւններով, մանրանկարներով։ Հայ, վրացի, ոռուս-բոլորն էլ հաւասար եռանդով ողեւորում, զրում, վիճում էին։ Գ. Միրզոյեանը միշտ զերծ մնաց ստորացնող, անպատուաբեր, միտքը խաւարացնող ազգաւեցութիւնից... Երկու բանակների թշնամութիւնը այն տեղը հասաւ, որ «Էխօ-ի հակառակորդները որոշեցին ծեծել Միրզոյեանին, և ընարեցին զրա համար իրանցից ամենատժեղին։ Մի երեկոյ սա պատահում է Միրզոյեանին Ալեքսանդրիան այզու ճեմելիքներից մէկի վրայ և սաստիկ հարուած է տալիս նրան յետեւից։ Գարօն շուռ է զալիս և վիզը ծոելով ասում։ «Միիր, էլլի խփիր, ինչ կայ... Ուրիշ միջոցի որ ընդունակ չէր... Տղան փախաւ, բայց միւս օրն ենթ եկաւ Միրզոյեանի

մօտ՝ էլ ներողութիւն, էլ զջում եւ յետոյ դառաւ Միրզոյեանի առաջին ընկերն ու պաշտպանը:

Վերջին ոռւս-թբքական պատերազմը Միրզոյեանի վրայ, որպէս և շատերի վրայ, մեծ տպաւորութիւն թողեց Եղբայրակիցներին թբքական լծից ազատելու գաղափարը կրակել էր և ոռւս ազգի սիրտը, ե՛ կովկասցիներինը, Միրզոյեանը սկսում է հայերէն զրել-կարդալ սովորել, ու նրա համար բացուեց նոր զգացմունքների մի այնպիսի աշխարհ, որի քաղցրութիւնը սըրակին հնչում էր մայրական երգի պէս անուշ: Գնալով համալսարան, նա իր հետ առաւ ոռւս-հայկական բառարան ու քերականութիւն և կիեռում, ուր մտել էր բժշկական մասնաճիւղը, շարունակում էր պարապել հայերէնով և սկսեց թղթակցել «Մշակին»:

Ուսանողական նստարանի վրայ Միրզոյեանի սիրտը բարձում էր մի ցանկութեամբ—ծառայելու Կովկասի քաղաքակրթական զարգացման նրան ոգեւորում էին մանուկ սերունդն ու դպրոցը: Նա երազում էր՝ աւարտելով բժշկական մասնագիտութիւնը, անցնել ուսուցչականը և՝ ծանօթանալով մանկական մարմնի և հոգու գործունէութեան օրէնքներին, ասպարէզ մտնել իրեւ բազմակողմանի պատրաստուած մանկավարժ: Սակայն մի քանի անակնկալ հանգամանքներ հարկազրեցին նրան կիեւից վերադառնալ հայրենիք:

Այստեղ նա վերջնական մկրտութիւն ստացաւ, սիրահարուելով Գայեանեան դպրոցի մի ուսուցչուհուն, օր. Նատալիա Տէր-Մարկոսեանին (ապագայում՝ իր ամուսնուն), և երկուսով որոշեցին սկսել մանկական զրքերի հրատարակութիւնը: Մեր մանուկներից ով չէ կարդացել պատկերազարդ «Կարմիր լապտեր», «Թաւամազ մեղու», «Եղրօր Թոմասի անակը» գրքոյները: Դրանք այդ երիտասարդ իդէալիստ մտերիմների կազմածներն են և լոյս ընծայուեցին մասամբ հանգանակած, մասամբ անձնական գումարներով: Միաժամանակ Գարօն ոգեւորեց մի քանի գիմնազիստների, որոնք նրա զեկավարութեամբ սկսեցին կազմել հայերէն շարժական այրուբէն, այրուբէնական խորանարդներ, զրերի շարժական տառեր և այնու Այս հրատարակութիւնները համոզեցին Միրզոյեանին, որ ժամանակ է Թիֆլիսում մի հրատարակչական ընկերութիւն հիմնելու: Նա ուղարկում է հրատիրատումներ քաղաքի բոլոր նշանաւոր հայ գործիչներին, առանց կուսակցութեանց խորութեան, և երեւակայեցք—Արձրունուն, Արգ. Յովհաննիսեանին և Պետրոս Միմէօնեանին մի սեղանի շուրջը նստած, հաւասար ոգեւորութեամբ

գրքերի տպագրութեան և տարածման մասին խօսելիս, և այն էլ ում չնորհիւ. մի ինչ-որ քսան, քսաներկու տարեկան ուսանողի չնորհիւ: 1880 թուին սկսեց գործել Հրատարակչաւկան ընկերութիւնը, որին և յանձնեց Միրզոյեանը իր կաղմած մանկական գրքոյէները, իբրև գործի սկզբնաւորութիւն:

Մի փոքր ժամանակից յետոյ նա հեռացաւ Թիֆլիսից և զնաց Ղազանի համալսարանը ուսումը շարունակելու նպատակով: Բայց շրջակայ կեանքը չափազանց անհանգիստ էր, որպէս զի նա կարողանար խաղաղ վիճակի մէջ մնալ, ու նա վերադառաւ Թիֆլիս, որտեղից ի միջի այլոյ տիսուր լուրեր էր ստանում այն էակի հիւանդութիւն մասին, որը նրա համար կեանքի չափ թանկ էր: Սկսուեցին փորձանքների տարիներ: պակուելով և մի վեց ամսից իր պաշտած ամուսնուց զրկուելով, հրաժարուելով հայրական հարստութիւնից, համալսարան վերադառնալու յոյսը թողնելով, նա ուսուցիչ մտաւ Թիֆլիսի Սրհեստաւորաց դպրոցը և չը մոռանալով իր նախկին ծրագիրը՝ սկսեց աշխատել մանկական թերթի հրատարակութիւնը գլուխ բերելու: Նա յաջողեց գտնել մի անձ, որ թւում էր իրան՝ յարմար էր ամսաթերթի արտաքին խմբագրի պաշտօնի համար, այն է պ. Տիգրան Նազարեանին: Ամբողջ երկու և կէս տարի Ալզբիւրի իսկական զնկավարը, յօդուածների ընտրովը, նիւթերի մշակողը, աշխատակիցներին ուղղութիւն տուողը միայն Միրզոյեանն էր: Սակայն թիւրիմացութիւնները պ. Նազարեանի և հանգուցեալի մէջ սկսուեցին հրատարակութեան հէնց առաջին համարից: Տ. Նազարեանը լոյս ընծայեց (1883 թ.) առաջին համարը առանց՝ Միրզոյեանին վիրշնականապէս ցոյց տալու, կեղտոտ, անփոյթ կերպով: Այս ժամանակ ամբողջ խօմբագրութիւնը յայտնեց որ հեռանում է գործից, և Նազարեանը սովիպուած էր ինդրելու, որ իսկական զնկավարը իր խմբով վերադառնայ, բացատրելով պատահածը իր անփորձութեամբ: Որպէս յայտնի է, «Ալզբիւրի» առաջին համարը նորից հրատարակուեց, աւելի շքեղ: Կոկիկ ձեւով և թերթը հէնց սկզբից լաւ ընդունելութիւն գտաւ հասարակութեան կողմից: Խմբագրութեան անդամների թւումն էին Ռաֆֆին, Աղայեանը, Կոստանդին Մելիք-Շահնազարեանը և նոյնպէս ուսւաց զրականութեան ոյժերից մէկը, այս տարի վախճանուած Սօլօվեօվ-Նեսմէլօվը, որի փորձառու ցուցմունքները շատ նպաստեցին գործի աջողութեանը: Հէնց այդ միջոցին պ. Գուլաձէն սկսեց հրատարակել վրացերէն՝ «Նօրաթի» մանկական ամսագիրը և Միրզոյեանը, Սօլօվեօվ-Նեսմէլօվը (որը աշխատակցում էր ուսւաց «Պօնիկ»

մանկական առաջնակարգ թերթին) ու Գուլաձէն կազմում էին մի ամբողջութիւն և փոխադարձաբար օդնում:

Իմ համոզմունքով, այդ տարիները «Աղբիւրի» լաւագոյն շրջանն են կազմում: Երկու տարուայ ընթացում թերթը հաստատ հողի վրայ դրուեց և արգէն որոշ եկամուտ սկսեց բնիքը: Այստեղ յանկարծ պ. Տ. Նազարեանը զիմում է Միրզոյեանին, յայտնելով, թէ ինքն է ստանձնում թերթի իսկական խմբագրութիւնը, իսկ Միրզոյեանը կարող է մասնակցել, իբրեւ սոսկ աշխատակից: Վերջինս հրապարակով, լրագրի միջոցով ընկերական դաստի հրաւիրեց պ. Նազարեանին, բայց սա, որպէս յայտնի է մեր լրագրութեանը հետեւողներին, խոյս տուեց այս դատից: Սակայն գտնուեցին դրականաւոր, որոնք աշխատեցին խրախուսել պ. Տ. Նազարեանին...

Հէնց այդ ժամանակ Գր. Արծրունին, որոշելով թողնել Կովկասը և տեղափոխուել արտասահման, առաջարկեց Միրզոյեանին զնել իր օրաթերթը: Վերջին տարիները Միրզոյեանը ամենամօտիկ և մտերիմ մարդն էր «Մշակի» հիմնադրին, Նոյնպիսի սերտ բարեկամութիւն կար հանգուցեալի և Բաֆֆիի մէջ: Մնձ հրապարակախօսի և ոչ պակաս մեծ վիպասանի փոխադարձ յարաբերութիւնները, նրանց ներքին կուտանքը, տնային հանգամանքները այդ ժամանակամիջոցում՝ ոչ մէկին այնպէս լաւ ծանօթ չէին, որպէս Միրզոյեանին: Պէտք է ափսոսալ միայն, որ այն թանկադին յիշողութիւնները, որոնք կարող էին բացատրել թէ Արծրունու և թէ Բաֆֆիի գրական գործունէութեան շատ և շատ նշանաւոր կողմերը, անդառնալի կերպով ոչնչացել են Միրզոյեանի մահով: Ունէր սա և Բաֆֆիի բազմաթիւ ընդարձակ նամակներ, որոնց մէջ նա զրում էր իր գրական մտադրութիւնների մասին և բացատրում իր վէպերից մի քանիսի իմաստը, խօսում էր իր ուղղութեան, նպատակների մասին, բայց դժբախտաբար, այդ անդնահատելի նիւթն էլ կորած է մեզ համար, որովհետեւ Միրզոյեանը վերջին տարին, յոռետեսութեան անախնակալ բռնկման միջոցին, աշխարհի ունայնութեան և ոչնչութեան մտքի ճնշման տակ (հիւանդութեան ժամանակ), իր ասելով՝ կրակն էր նետել այս ամենը:

Ինձ մօտ գտնուում է 1884 թ. յուլիսի 16-ին կապած՝ Գր. Արծրունու և Գ. Միրզոյեանի նօտարական պայմանագիրը, որով «Մշակը» ժամանակաւորապէս անցնում էր Միրզոյեանի ձեռքը, այն պայմանով, որ երկու ամսուայ ընթացում Գր. Արծրունին զիմէր ուր հարկն է, խնդրելով վերջնականապէս նրան յանձնել թէ հրատարակութիւնն և թէ խմբագրութիւնը, իսկ եթէ Միրզոյեանը չի հաստատուի խմբագրի և հրատարակչի պաշ-

տօնի մէջ, Արծրունին պարտաւորւում էր խմբագիր և հրատարակիչ առաջարկել նրան, ում որ մատնացոյց կանի Միրզոյեանը իսկ «Մշակը» ամբողջ խմբադրական գոյքով զառնում է Միրզոյեանի լիակատար սեփականութիւն։ Որպէս հրատարակուեցայն ժամանակուայ թերթերում, Միրզոյեանը չը հաստատուեցիրըն «Մշակի» հրատարակիչ և խմբագիր, Արծրունին էլ, գնալով արտասահման, չէր կարող ներկայացնել նրանց, ում որ առաջարկում էր Միրզոյեանը, Եւ մէկ տարուց աւելի անցնելով՝ «Մշակի» հրատարակութեան իրաւունքը կորցուեց, այնպէս որ Արծրունին՝ վերադառնալով Կովկաս, պիտի նորից խնդրամատոյց լինէր, որպէս զի թոյլ տրուի իրան նորոգել թերթի հրատարակութիւնը։ Այսպէս մի առժամանակ Միրզոյեանը ապրում էր զրական ասողարէզից հեռու։ Այդ միջոցին նա թաղեց իր մտերիմներից մէկին, Շաֆֆիին, գլուխ կանգնեց այն մասնաժողովին, որ ժողովարարութիւն էր անում յօդուտ վիպասանի մահարձանի, և աշխատում էր աջողեցնել նրաց գրուածքների լիակատար հաւաքածուի հրատարակութիւնը։ Գրական գործին ձեռնամուխ եղաւ նա կրկին միայն 1892 թուին ինձ հետ միասին։

Այն պայմանագրի համաձայն, որ այդ թուականի սեպտեմբերի 26-ին դրուեց մեր և Տ. Նազարեանի մէջ, «Աղրիւր» և «Տարագ» թերթերի հրատարակութեան և խմբագրութեան գործը անցնում էր մեր ձեռքը, և Նազարեանը խմբագիր պիտի առաջարկէր նրան, ում որ մենք ուզենայինք։ Այսպէս նա նախ խմբագիր ներկայացրեց իմ հօրս՝ բժ. Դ. Կիսիցեանին, իսկ յետոյ ապ. Վարդան Սուլթանեանին թերթերը սակայն լոյս էին տեսնում մեր ղեկավարութեամբ, այն է՝ «Աղրիւրը» Միրզոյեանի, «Տարագը»՝ իմ Զեմ կամենում խօսել այդ ժամանակի (1892 թ. նոյեմբ. 1—1893 նոյեմբ. 14) մեր գործունէութեան մասին։ Այդ օրերում ես առիթ ունէի աւելի մօտիկից ճանաչելու Գաբօին և գնահատելու նրա բնաւորութեան անզուգական կողմնը։ Պէտք էր տեսնել, որպիսի սիրով նա խմբագրում էր «Աղրիւրի» ամեն առջը և գուրգուրանքով լոյս ընծայում համարները։ Դժբախտաբար, այդ տարին պիտի վերջանար մի սարսափելի յուսախարութեամբ։ Պարզուեց, որ Նազարեանը, նախ քան թերթերը մեզ կապալով տալը, մէկ տարի առաջ, նօտարական պայմանագրով, ծախել է նոյն այդ թերթերը մէկ ուրիշին և յետոյ մեզ տուել առանց տիրոջ համաձայնութեան, պարզուեց, որ ծրագրի այն մասերը, որոնք թուած էին «Տարագի» բաժանորդագրական յայտարարութեան մէջ, իսկականի մէջ չը կային։

Այլ ես շատ անակնկալ բաներ պարզուեցին, և ի միջի այլոց, այն էլ, որ նրանք, որոնք ամենից աւելի տչսատում էին «Աղբիւր-Տարագի» մեր ձեռքն անցնելու համար, «յանուն գաղափարի, յանուն մամուլի շահերի», հէնց այդ մարդիկ անձնական շահերով էին կապուած նազարեանի հետ և մտածում էին այն բանի մասին, թէ ինչպէս փրկեն՝ պ. նազարեանին հաւատացած իրանց դրամները, Դնևով վեց հազարից աւելի մի գումար թերթերի հրատարակութեան վրայ և անհնարին գտնելով նախագուշակելու այն ամեն պատահելիքները, որ կարող էին լոյս աշխարհ գալ, մենք թողինք հրատարակութիւնը, նախօրգք առաջարկելով նազարեանին՝ Պետերբուրդից վերադառնալ Թիֆլիս և ստանձնել թերթերը։ Դրա համար, Թիֆլիսի խմբագիրների մի ժողովի վճռով, նրան ժամանակամիջոց տրուեց։ Տ. նազարեանը Պետերբուրդից գնաց... Լօնդօն։

Այս բոլոր գէպերի ծանր տպաւորութեան ներքոյ, Միրզոյեանը լիովին անձնատուր եղաւ ուսուցչութեանը ներսիսեան դպրոցում, ուր մտած էր գեռ 1892 թուից տուած։ Նրա վերջին մտադրութիւնն էր նպաստել մանկական խաղերի, խաղալիքների և զրքերի տարածուելուն կովկասում, բայց նրա ընդարձակ ձեռնարկութեանը վիճակուած չէր իրադորել։ — նա մահացու հիւանդացաւ։

Կուզէի մի քանի խօսք ասել նաև Միրզոյեանի հասարակական և ուսուցչական գործունէութեան մասին։ Նա այն կարծիքի էր թէ հրապարակօրէն մեծարել որ և է վաստակաւոր գործչի՝ ոչ միայն արդարացի երախտագիտական զգացմունքների արտայայտութիւն է, այլ և մի զօրաւոր կրթիչ խթան մանուկ սերունդի և անզիտակից ամբոխի բարոյական զարգացման համար։ Այդ պատճառով նա ամեն ջանք գործ զրեց պատշաճաւոր հանդիսաւորութեամբ տօնելու Շաֆֆիի յօրելեանը և յետոյ նոյնալիս ազգու յուզարկաւորութեամբ ճանապարհեց իր մտերիմ վիպասանին մինչև վերջին հանգստեան տեղը։ Նա նոյնպէս մէկն էր այն չորս-հինգ անձնաւորութիւններից, որոնք ընարուած էին կարգադրելու և Գր. Արծրունու թաղման հանդէսը, սրանից տասը տարի առաջ։ Իր չափազանց զարգացած գեղարուեստագիտական ճաշակով նա կարողանում էր տալ այդ հանդէսներին արտաքին փայլ և պատշաճաւորութիւն, ի սրտէ հակառակ էր ամեն անվայելչութեան, խլրտման և անկարգութեան, և առաջինն էր բողոքում այսօրինակ միջնադէպքերի գէմ։

Իմ ծանօթութիւնը Միրզոյեանի հետ սկսուել է գեռ այն ժամանակից, երբ նա՝ հիմնելով «Աղբիւրը», ինքն էր զնկավա-

րում այդ թերթը ես, այն ժամանակ դեռ մի զիմնազիստ, միքանի խնջուրոյն և թարգմանական պատկերներ էի զետեղում այդ ամսագրում Այդ յարաբերութիւնները տարեց տարի ամրապնդուելով, վերջապէս 1891 թ. այն տարին մօտեցրին մեզ, որ այնուհետեւ մի ծրագրով և ընդհանուր համաձայնութեամբ մասնակցեցինք, ի միջի այլոց, և կաթողիկոսական ընտրութիւններին։ Նախ և առաջ հարկաւոր էր կանդ առնել հայրապետական մէկ թեկնածուի վրայ, Յիշում եմ՝ խչպէս 1891 թ. ամառը Միրզոյեանը շտապեց Աղքուլաղից Կօնօր, որպէս զի Արծրունու հետ խորհրդակացնք բռնելիք ընթացքի մասին։ Այնուհետեւ էլ Միրզոյեանը ամենայն եռանդով մասնակցեց ընտրութական ամբողջ պայքարին թէ եկեղեցական պատգամաւորների և թէ թեմական ներկայացուցչի ընտրութիւններին։ ոչ ոք նրա պէս պարզ և ազդու կերպով չէր կարող համոզել ծըխականներին և պատգամաւորներին՝ սրան կամ նրան քուէ տալու։ ոչ ոք նրա չափ անձնամուաց կերպով չէր ծառայում գաղափարին։ Այդքան ոգեսորութիւնից յետոյ աւելի խորն էր և հիասթափութիւնը...

Նոյն եռանդն ու ոգեսորութիւնը մտցնում էր նա և իր դասաւութեան մէջ։ Արհնաստագիտական դպրոցի նախկին աշակերտները մինչև այսօր էլ չեն մոռանում նրան։ Նա ամեն կերպ աշխատում էր զի՞ւրացնել երեխանների գործը, զիմելով նկատողական եղանակին, պատկերներով, իրերով կենդանացնում էր ցամաք դասընթացքը, զբոսանքների էր տանում աշակերտներին, բնութեան զրկում ուսումնասիրում էր բնութիւնը և զարգացնող ուղղութիւն էր առլիս ընթերցանութեանը։ Նա կարողանում էր ուրախութիւն և յախտակութիւն մտցնել աղքատիկ աշակերտների խնդուկ կեանքի մէջ և խմբելով իր շուրջը՝ աւագ և ինամակալ եղրօր տեղը բռնել։ Նոյնն էր նա և Ներսիսեան դպրանոցում, ուր աջքի էր ընկնում իր մանկավարժական նախապատրաստութեամբ։ Ոքքան յայտնի է, մեր զերմանական մանկավարժների մի քանի ծայրայելզութիւնները առաջացրին մի խումբ ուսուցիչների մէջ ծայրականարհամարհական վերաբերմունք, և սրանք պնդում էին, որ բոլոր մնիթօգիկաները և ուղևորութիւնները ոչինչ կարեւորութիւն չունեն։ Միրզոյեանը այդ մարդկանց թուին չէր պատկանում։ Ատելով մանկավարժական չոր սքօլաստիկան և պեղանուութիւնը, նա այնուամենանիւ անհրաժեշտ էր համարում որ ամեն ուսուցիչ ու զաստիարակ օգտուի և ուրիշների փորձասութիւնից, ինքն էլ հետեւում էր մանկավարժական գրականութեանը և այդ պատճառով նրա կարծիքները շատ զնահատելի էին ուսուցչական

խորհրդակցութիւնների ժամանակի Զարմանալի չէ, որ նա իր գասառութեանը մէջ (ոռւսերէն լեզուում) լաւ արդիւնքների էր համառում:

Բայց աւելի մեծ էր նրա բարոյական աղղեցութիւնը: Մի երկու խօսքով նա կարողանում էր սիրտ տալ անընդունակ աշակերտին, զարթեցնել փշացած տղայի մէջ հոգու նիրհող բարի ոյժերը, շիտակութիւն մտցնել դասընկերների յարաբերութիւնների մէջ, հրաւիրել նրանց կարօտեալ աշակերտին օդնելու, և պէտք է խոստովանել, որ այն դասարանը, որի դաստիարակն էր լինում նա, միշտ ամենակարգապահներիցն էր լինում և ամենախաղաղներից: Նրա բարեսրտութեան ապացոյցներ շատ անդամ են առիթ ունեցել տեսնելու երեխանները: Նկատելով, որ սա կամ նա չունի զիրք, հագուստ կամ բնակարան, փայտ, ճրագ, նա դասարանական գանձարան էր հիմնում, որտեղ ամեն աշակերտ տալիս էր իր կարողութեան չափ, ինչն էլ մասնակցում էր այդ արևական նուիրաբերութիւններին և յաճախ իր մօտ էր կանչում կարօտեալին և, փող տալով, ասում՝ իբր թէ մէկ ուրիշն է նպաստ վերցրել այդ տղայի համար: «Են անպիտանից մէնակ այսքան կարողացայ զջլել» ասում էր՝ աւելի չեմ կարող: Արհեստաւորաց զպրոցում նա ունէր նոյն խոկ սեփական թոշակաւորներ, որոնց փողը յանձնում էր տեսչին, իսկ անսուչը բաժանում էր իբր թէ ուսուցչական խմբի վճռուի: Պատահել է, որ աշակերաններից մէկը ի չարն է զործ գրել նրա բարութիւնը, դիամամբ ձեւանալով աղքատ և չունեւոր, բայց այս խարերայութիւնը չէր սառեցնում նրան, և, քանի քանի օրինակ զիտեմ, որ աշակերտը ուսումն աւարտել է միայն Միրզոյեանի ժամանակին օժանդակութեան չնորհիւ:

Իր ճշտակատարութիւնը, նուանգը, ճաշակն ու անձնանուիրութիւնը նա ցոյց տուեց վերջադէս նաև Ա. Նշան Ակեղեցու երէցփոխանութեան մէջ: Արդէն բոլորովին հիւանդ, նա ընտրուեց այս պաշտօնի, և չը կարողացաւ հրաժարուել, քանի որ իր ցուցմունքներով և խորհուրդներով էր նախկին երեցփոխ Շագինեանը եկեղեցին նորոգել և կարգի բերել դրամական հաշիւնները: Նրա վերջին հոգն էր—երգեցիկ խումբ կազմելը եկեղեցու համար, Կարա-Մուրզայի զեկավարութեամբ, Նա անձամբ տունէ տուն էր ման գալիս, ինդրում ծնողներին թողնել իրանց երեխաններին և աղջիկներին, իր տանը կրկնութիւններ նշանակում և վերջապէս կարողացաւ մի չնորհալի խումբ սաւեզծել, որը, երտիտագիտական զգացմունքից դըրգուած, թոյլ չը տուեց որ յուղարկաւորութեան ժամանակ Ա. Նշան Ակեղեցում երգէ ներսիսեան գպրանոցի խումբը և մին-

չն Վերայի գերեզմանատուն ուղեկցեց նրա դիակին:

Միքոյեանը հողին յանձնուեց իր վազամեռիկ կնոջ կողքին 45 տարեկան հասակում: 1897 թուից նա էր և Թիֆլիսի քաղաքային խորհրդի ձայնաւոր, բայց հիւանդութեան պատճառով նա չը կարողացաւ իր ուղածի չափ մասնակցել ինքնապարութեան գործերին:

Համառօտ մի հայեացը եմ ձգում աչքից նոր ծածկուած այդ ազնիւ էակի բազմաչարչար կեանքի վրայ: Որչափ բնատուր ձիք, շինարար չնորհ, նուրբ ճաշակ և անհուն եռանդ էր տրուած նրան և որչափ ցրիւ եղան այդ ոյժերը կեանքի ոլորտի մէջ, առանց մի շօշափելի, մեծ գործ ստեղծելու: Նրան միշտ ճնշում էր այն զիտակցութիւնը, թէ հանգամանքները չեն ինողնում իրան մի բանի վրայ կենդրոնանալու և ցանկացած ուղղութիւնը տալու իր հոգու մէջ վառուող բոցին:

ՍՏ. ԼԻՍԻՑԵԱՆ

ՈՂՋՈՅՆ ՔԵԶ ԿԱՐԻՔ

(Աղա Նեգրիից)

Զը դիտեմ ով է դռնակս բաղխում...
—Այդ դժւ ես եկել, այ դաժան կարիք,
Դերեղմանների բնակչող ողջնյն,
Հպարտ իմ հոգուն գալըդ է բարիք,
Եւ քեզ, օ կմախք, մահուան բօթաբեր,
Դիմաւորում եմ ահա անտարբեր:

Բայց ինչու լուռ ես, բռնակալ ոգի,
Է՞ր չես շտապում մոնել իմ լործիթ,
Դէ, շնւտ, թևերս ջարդիր, անհոգի,
Ցցիր մագիլներդ սրտիս մէջ վճիտ.
Կանգնիր խեղճ մօրս մահճի դլսի տակ,
Որպէս մահաբեր հոգէառ հրեշտակ:

Դու տատանւում ես, կմախք այլայլուած,
Թէ ինայում ես գարունը կեանքիս,
Օ՛, անհոգ կացիր, չեմ ընկնի յաղթուած՝
Կեանքի գոռ մարտում ծաղիկ հասակիս,
Տարերքների մէջ, տանջանքի բովում
Կամրանայ հոգիս, կը փթթի գարուն:

Իմ մըրկածուփ չարասաւնջ կրծքում
Սրտիս յոյզերը դեռ անհանգչելի,
Երկնից անսահման, անհուն բարձունքում
Մտքիս թռիչքն է անհասանելի.

Որբան էլ նայես խիստ, մույլ դէմքով,
Ես պիտի չնշեմ իմ սիրած կեանքով:

Տեսնում ես դաշտը ծաղկունքով զուգուած՝
Ողջ բնութիւնն է եռում, բորբոքում...
Լսում ես երգը արտօւտի յուղուած՝
Արձագանք տալիս եթեր-բարձունքում:
Ողջը չնշում է վառ յօւսոյ արե,
Ողջը թե առած՝ ձգտում է վերե...

Օ, դաժան կարիք, վհճուկ այլանդակ—
Սև ծածկոցի տակ, քեզնից չեմ սարսում.
Տանջուած, բորբոքուած անյաղթ կրծքիս տակ
Խեղճ ժողովրդիս արիւնն է հոսում:
Թոնդ կորչի վախը—ես չեմ վհատել,
Հոգիս ճախրում է դէպի ջինջ եթեր:

Իմ կէտ նպատակ՝ յաղթական, իշխող
Աշխատանքն է սուրբ, ցհորքը յուղով,
Հիասքանչ նուագն դիւթիչ երգերի
Եւ շոյումները գարնան թովչալի,
Մաքուր, անազարտ անհուն եթերը,
Շողը աստղերի, ծաղկանց հիւթերը:

Չքացիր ուրեմն, եղկելի ստուեր,
Չքնազ բնութեան պայծառ ցոլքերում,
Իեանքն արթնացաւ, շուրջ մանուշակներ
Տատասկների մէջ ծաղկում են, բուրում.
Դու կապանքներդ ես կը խորտակեմ,
Որ նորոգ կեանքի դարունը երգեմ...

Թարգմ. Յ. ՅԱԿՈԲԵԱՆ

* * *

Յոդնած եմ, անտառ, յոդնած, ուժասպառ.
Խորտակուած կրծքումն էլ չի բռնկում
Հոգիս թռցնող սէրը բոցավառ...
Ա՛յս, մայրի անտառ, քո մենիկ գրկում
Քնել եմ ուզում—անհնդ ու անդնրը.
Եւ թհղ քո անճւշ, թովիչ սօսափիւն
Խոնջացած հոգուս միմնջայ օրծր.
Եւ առուի խողխոնջ, ծառերի ստուեր
Կախարդեն ուշբս ինքնամոռացման
Չընաղ երազով...

Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ

ՄԻ ԳՐԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԱՌԻԹՈՎ^{*)}

Մի քանի ամիս առաջ լոյս տեսաւ իմ «Դէպի վեր» գրաւ-
մատիկական պօչման, որի նկատմամբ իր կարծիքն յայտ-
նեց քանի մի ոռւս և հայ պարբերական թերթերի հետ
նաև «Մուրճը» (№ 9): Այս վերջինի մատենախօսական նկատո-
ղութիւնները լաւ առիթ եմ համարում պարզելու իմ տեսա-
կէտները գրական գեղարուեստական մի քանի հարցերի մասին:

Իմ պօչմայի քննադատ պ. Տ. Յ. միակ բանը, որ հաւա-
նել է իմ հեղինակութեան մէջ, ասիրուն ու կոկ ոտանաւորն է, որի մասին, սակայն, նա վազօրօք յայտնել էր, թէ դա, այսինքն
ոտանաւորը, «ինքն ըստ ինքեան անբնական երեսյթ է»: Ահա
բոլորը, ինչ վերաբերում է արտաքին ձևին, ոտանաւորն ։
Մնացեալը, բուն պօչման, ոչինչ բան է: Հեղինակը «պօչմայի
նիւթ է փնտուում զիտնականի ձգտումի մէջ, որ աւելի զլսից է
բզիսում, քան սրտից նա գրամա է տեսնում այնտեղ, ուր
չը կայ կրքերի ընդհարում, բնազդի բռնութիւն, կամքի մաքա-
ռում, ուր զգայմոնը կայ միայն հօմէօպաթական շավով, ուր
երեակայութիւնը դժգոյն է, և մարդկանց մղումէ գլխաւորապէս
առոք դատողութիւնը»:

Գլխաւոր կէտերը, ուրեմն, սրանք են, որ ես յարմար նիւթ
չեմ ընտրել իմ պօչմայի համար, որ զգացմունքը շատ սա-
կաւ է և, վերջապէս, գրամայի կատարեալ բացակայութիւն
կանգ առնենք այս երեք կէտերի վրայ, որոնք չօշափում են
զուտ գրական գեղարուեստական տեսակէսները ինչպէս յայտնի
է, զրուածքի իդէան գտնելու համար, պէտք է ալարզել նախ և
առաջ այն, թէ ինչն է գրդել հեղինակին ձևոն առնելու գրիչը և
գեղարուեստորէն մշակելու այս կամ այն նիւթը և ապա քայլ առ
քայլ հետեւել գլխաւոր անձնաւորութեան կամ հերոսի խօսքերին և

*) Այս յօդուածը տպագրում ենք թէ սկզբունքով համբերատար լի-
նելով դէպի ամեն մի անկեղծ ու չի տակ համոզմունք և թէ կարեոր
համարելով հեղինակի շօշափած տեսակէտները:
Ծ. Խ.

արարքներին և սրանցից եզրակցութիւն անել երկասիրութեան ղեկավարող գաղափարի մասին, ինչպէս մենք վարւում ենք, օրինակ, «Մակրեթի» կամ «Համլէտի» էական իմաստը որոնելիս Այժմ ինչն է ստիպել կամ մինչև անդամ ոգեսրել «Դէպի վեր»-ի հեղինակին, որ նա դրիչն առնէր ձեռը և մշակէր մի հում նիւթ, որպիսին է առաջին անդամ Մասիսի զլուխը բարձրանալը: Իհարկէ, ոչ թէ ուսուցչապետ Պարրօտի զիտական ձգտումը, այլ միայն և միայն այն հանգամանքը, որ այդ համարձակ ձեռնարկութեան մամնակից էր նաև մեր Աբովեանը և որ այդ վերելքի հետ զարմանալի խորհրդաւորութեամբ կապւում է մեր մտաւոր վերածնութեան մի նշանակալից վայրկեանը:

Հասկանալի է ուրեմն, որ պօէմայի առաջնորդող գաղափարը բղիում է ոչ թէ Պարրօտի ձգտումից, այլ Աբովեանի սրտից ու մտքից, նրա բուռը ձգտումից—համնել մտաւոր և հոգեկան կատարելութեան: Մի երոպացի լուսամիտ անձնաւորութիւն Ասիայի խաւարի մէջ հանդիպում է մի ընտիր հայի, որի վրայ հմայիչ աղղեցութիւն է գործում իր մարդկային արժանիքով, իր բարութեամբ, իր հաստատակամութեամբ, իր անհուն հաւատով դէպի զիտութեան զօրաւոր և պայծառ լոյսը: այդ շփումից, կարծես էլեքտրական ուժով, առաջանում է վերեկարար կայծ, և այդ կայծը այլ ես չէ հանգչում, այլ մեռմ է իր գործը կատարելու, որովհետեւ զա Պոմմեթեսի, զա քաղաքակրթութեան կայծն էր, որ փայլեց Ասիայի դարաւոր և թանձր խաւարի մէջ: Ահա այդ խորհրդաւոր հանդիպումը, իր հետեանքներով այնքան կարեոր նշանակութիւն ունեցող այդ դէպքն է, որ ես ներկայացրել եմ իմ պօէմայի մէջ այնպիսի մանրամասն ճշտութեամբ, որ իմ քննադատն էլ խոստովանում է, թէն ոչ առանց հեգնութեան: Բայց այդ ոչ միայն մշակած, այլ նոյն իսկ հում նիւթի մէջ մի առանձին հետաքրքրութիւն է ստանում նաև մի հանգամանք, այն է՝ ֆիդիկական վերելքի և մարդկային բարձր ձգտումների զուգաղիպութիւնը: Բայց, եթէ կ'ուզէք, ես աւելին կ'ասեմ Ոչ միայն զիտնականի ձգտումը կարող է զառնալ բանաստեղծութեան նիւթ, եթէ զրա մէջ կայմի որեւէ փրկարար կամ բարձր զաղափար, այլ և հասարակ մահկանացուի արարքը, եթէ նրա մէջ պարունակւում է մի արտասովոր երեսյթ: Գիտնական Պլինիոսի տրագիկական մահը՝ Վեզուվի հրաբղյային վիժումը զիտելու ժամանակ—զա ինքն ըստ ինքան մի բարձր սիւժետ է բանաստեղծութեան համար: Անմիտ Հերոստրատը, որ հրձիգ է անում իր հայրենի Եֆես քաղաքի մէջ կառուցուած Դիանայի հրաշալի տաճարը, իր անունը անմահացնելու նպատակով, այդ էլ մի գեղեցիկ նիւթ է:

որոշ տեսակի մարդկանց փառասիրութիւնը և աւերիչ ողին բանաստեղծօրէն ներկայացնելու համար:

Բոլոր խնդիրը նիւթի մշակութեան մէջ է: Նայած թէ ում ձեռքին է նիւթը, միևնոյն մարմարիոնից կամ մետաղից հմուտ վարպետը կերտում է գեղարուեստական սքանչելիք, իսկ անշնորհ արհեստաւորը—այլանդակութիւն:

Երկրորդ կէտը, որի մասին ես կամենում եմ խօսել, զգացմունքն է: Իմ քննադատը ոչ թէ մտքեր, այլ զգացմունքներ է փնտում իմ հեղինակութեան մէջ և, վայ ինձ, չէ գտնում կամ, աւելի ճիշտ, գտնում է շատ սակաւ («հօմէօպաթական»)

Իմ քննադատը կարծում է, քանի որ պօչման բանաստեղծական մի երկ է, ուրեմն արի և զգացմունքներ փնտունք նրա մէջ: Անշուշտ, բնարական բանաստեղծութեան մէջ ամենից առաջ պէտք է որոնել զգացմունքը, որովհետեւ ամբողջ քնարական բանաստեղծութեան էութիւնը և հիմքը—զգացմունքն է. եթէ քնարական բանաստեղծութիւնը զուրկ է զգացմունքից, նաշատ բան է կորցնում: Բայց երբ խօսքը ոչ թէ քնարական, այլ զրամատիկական և մանաւանդ վիպական բանաստեղծութեան մասին է լինում, այն ժամանակ հարկ չը կայ ամենեին ծանրանալու զգացմունք ասած հասկացողութեան վրայ: Վիպական բանաստեղծութեան մէջ, օրինակ, կարող է նոյն իսկ ամենեին բացակայել զգացմունքը, տեղի տալով հանգիստ պատմութեան նկարագրութեան—տարրեր, որոնք այնքան մեծ տեղ են բռնում Հոմերի էպոպէնորի մէջ: Ի՞նչ կը լինէր մի «Ֆառատ», մի «Համլէտ», մի «Ըմանֆրէդ» առանց այդ «մաքերի», որոնցով նրանք այն աստիճան հարուստ են:

Դրամատիկական բանաստեղծութիւնը, ճիշտ է, ներկայացնում է մաքառում, բայց ոչ անպատճառ զգացմունքների, Վըրքերի, կամ «բնազդի» մաքառում, այլ և, օրինակ, մի որոշ «գաղափարի» և նրա խոշնդոտների մաքառում: Դրամայի հիմքը ոչ թէ զգացմունքն է, այլ մաքառումը, ինչ տեսակ էլ ուզում է լինի: Միւս կողմից, աւելի յաճախ միևնույն զրուածքի մէջ խառն են լինում զանազան տարրեր՝ նկարագրութիւն և պատմութիւն, միտք և դատողութիւն, զգացմունք և մաքառում: Այդ բոլորից առատութեամբ կարելի է գտնել հին և նոր ժամանակների դասական երկասիրութիւնների մէջ՝ սկսած Հոմերից մինչև Շէքսպէր, Բայրն, Գէօթէ, Հառլապտման, Իբսէն: Եթէ կամենայի առաջնակարգ տեղ տալ իմ գրուածքի մէջ զգացմունքին, ես այդպէս էլ կանեի և իս պօչման կ'անուանէի քնարական, չընայած, որ նրա արտաքին ձեզ զրամատիկական է, ես կվարուէի այնպէս, ինչպէս Շելլին, որը իր մի գրուածքը

անուանել է «քնարական դրամա», թէ նրա արտաքին ձեզ զրամատիկական է («Ազատուած Պոռմեթեսը»): Ես կարող եմ թուել մի շարք պօէմաներ, որոնք էութեամբ քնարական են, որովհետեւ նրանց մէջնմէն տեղ է տրուած զգացմոնքին, բայց միևնույն ժամանակ պարունակում են իրանց մէջ ոչ քնարական տարրեր, այն է նկարազրութիւն և պատմութիւն (օրինակ, «Շիխօնի կալանաւորը»—Բայրնի, «Մծիրի»-Լիրմօնտովի):

Այսպէս ուրեմն ես յայտնում եմ, որ պ. Տ. Յ. Քննադատելով իմ «Դէպի վերա-ը», հարկազրուած չէր ամենեին ծանրանալու զգացմոնքից վրայ և կարիք չըկար նոյնպէս միտքը և զգացմունքը միմեանց հակադրելու:

Բայց միթէ զգացմունքներ չեն պարունակում իմ հեղինակութեան այն տեղերը, ուր երեւում են՝ հրապոյր մի մարդասէր և լուսամիտ անձնաւորութեամբ, զմայլուելը բնութեան տեսարաններով, սէրը դէպի հէզ ժողովուրդը», վիշտը շրջապատող տղիտութեան համար, հոգեկան վերացումը, երանութիւնը դժուար նպատակին հասնելուց յետոյ և վերջապէս խորին տենչը մտաւոր և հոգեկան կատարիլութեան և սևփական անձի ու միջնավայրի վերածնութեան կարօտը:

Արդեօք դրանք զգացմունքննր են թէ՝ միայն մտքեր և սառը գատողութիւնն եւ եթէ պնդելու լինեն տակաւին, որ դրանց մէջ չըկայ զգացմունք, այն ժամանակ ես ինձ օգնութեան պիտի կանչեմ Տէսին և խնդրեմ, որ նա խօսէ իմ փոխարէն. և նա կ'ասէ հետեւեալը. «Մարդիկ հաօկանում են միայն այն զգացմունքները, որոնք նման են իրանց կրած զգացմունքներին, ուրիշ տեսակ զգացմունքները, որքան էլ զեղեցիկ արտայայտուած լինին նրանք, ոչ մի ազդեցութիւն չեն զործում զրանց վրայ, աչքերը տեսնում են, բայց միրաը ոչինչ չէ զգում»: Այն, սովորական, առօրեայ զգացմունքներից բացի, կան շատ աւելի բարձր զգացմունքներ, որոնք դժբաղդաբար, անյայտ են շատերին:

Դանք այժմ երրորդ կէտին: Այդ երրորդ կէտն է՝ դրամա. զրամատիկական տրամադրութիւն, մաքառում ասուած հասկացողութիւնները:

Իմ քննադատը զգրամայի նշոյլ՝ անգամ չէ տեսնում իմ պօէմայի մէջ. իբր թէ այստեղ չը կայ մաքառում, և մարդկանց մղում է սառը գատողութիւնը:

Բոլոր ինչիրը նրա մէջ է, թէ իմ երկասիրութեան մէջ կայ արդեօք մի դժուար իրագործելի նպատակ թէ ոչ, յետոյ՝ այդ նպատակին հասնելու համար կան արդեօք խոչընդոտներ թէ՝ ոչ և, վերջապէս, այդ խոչընդոտներին յաղթելու համար հար-

կաւոր է արդեօք կամքի բոլոր ոյժը լարել թէ ոչ, ուրիշ խօսքով, կան արդեօք այն բոլոր տարրերը, որոնք ստեղծում են դրամա:

Պատասխանենք այդ հարցերին:

Այն դժուար նպատակը, որ դրուած է Պարրօտի և Ամրովեանի առջև, առաջին անգամ Մասիսի գլուխոր բարձրանան է:

Կարծեմ, ամեն մարդ ինձ հետ կը համաձայնի, որ դա այնքան էլ դիրին բան չէր, մանաւանդ մի դար առաջ:

Հաւատացած եմ նոյնպէս, որ ոչ ոք չի ուրանալ, որ այդ նպատակը իրազործելու համար կան խոչընդոտներ, որոնց յաղթել էր հարկաւոր: Եւ այդ խոչընդոտները բազմաթիւ են, հարկ չըկայ որ նրանք զեռ հալածանքի էլ ենթարկուեն, ինչպէս այդ ցանկանում է զրախօսը: Նախ և առաջ հարկաւոր էր մաքառել աեղի բնութեան ոյժերի դէմ, «ամենայն վայրկեան մահն առաջն ունենալով»: Ճանապարհը դէպի Մասիսի գագաթը հարթ ու հաւասար չէ, այլ վտանգաւոր, մազի կամուրջի նման: Դա մահուան և կեանքի ճանապարհն է: Միւս կողմից, ոչ միայն քաջալերութեան բացակայութիւն, այլ և, հակառակը, ամեն կողմից խորհուրդ և յորդոր՝ թողնել վերելքի անմիտ դիտաւորութինը: Եւ չըկայ մէկը, որ մեզ յուսազեր, բացականչում է Պարրօտը ոչ թէ պարծանքով, այլ վշտոտ և զառնացած սըրտով: Խրախոյս չը զանելով իր շուրջը, նա իր սեփական անձի մէջ է գտնում այն: Որ, իրաւ, խոչընդոտները բազմաթիւ էին և զօրեղ, այդ երեսում է և նրանից, որ վերելքի առաջին երկու փորձերը յաջողութեամբ չ'պակաւեցին, և խմբին մասնակցողներից շատերը ստիպուած էին յուսահատուած վերադառնալ վանքը և ամենին հրաժարուել բարձրանալու յոյսից:

Վերջապէս, չ'յուսահատուելու և արգելքներին գրոհ տալու համար հարկաւոր էր ունենալ Պարրօտի զօրեղ կամբը և տոկունութիւնը և Արովեանի զերմ հաւատը դէպի գիտնականի լուսամիտ և հաստատակամ անձնաւորութիւնը: Արդարն, Պարրօտը և Արովեանը կամքի ոյժը պիտի լարէին՝ մահուան երկիւղը իրանց սրտից վանելու համար: «Հեռոն ուրիշն վեհերոտութիւն և մահուան երկիւղ... Լարենք մեր կամքը» և այլն, —սիրտ է տալիս Պարրօտը ինչն իրան և ընկերներին:

Ահաւասիկ դրամայի բոլոր տարրերը պատրաստ են:

Իմ քննադատը կամենում է, որ ես դրամատիկական դրութիւն ստեղծէի նաև իմ զիւղացիների համար: Առաջին անգամն եմ լսում, որ դրամատիկական դրուածքի մէջ երկրորդական անձինք էլ պիտի կրեն դրամա:

Ոչ մի քննադատ մինչև օրս այդպիսի պահանջ չէ արել

ոչ միայն հասարակ դրամաներից, այլ նոյն իսկ զօրեղ տրագեդիաներից։ Միթէ «Համելէտի» մէջ գերեզմանափորերը, գերասանները, Օզրիկ, Ռոզենկրանց, Գիլտենշտերն կրում են դրամա։ Միթէ գռնապամնը, վհուկները «Մակրէթ»ի մէջ կրում են դրամա։ Եթէ ևս ստիպէի իմ գիւղացիներին, փոխանակ իրանց օրավարձի մասին մտածելու, միանալ վանահօր հետ և աշխատել յետ կանգնեցնելու Պարուաժն և Արովեանին իրանց դիտաւորութիւնից, այդպիսով ոչ թէ դրամա, այլ մի իսկական կոմիզմ կըստեղծուեր իմ խեղճ գիւղացիների համար...»

«Կերջայնում եմ ամելիքս մի քանի խօսք էլ աւելացնելով։

Մեր ժամանակակից գեղարուեստական գրականութիւնը, պօէզիան ընդարձակ մաքով, —բանաստեղծութիւն, վէստ և դրամա, —իր նիւթի, բովանդակութեան կողմից պտտւում է խիստ, նեղ շրջանակի մէջ։ Դրա այժմեան գլխաւոր մոտիւներն են սիրային և սեռային յարաբերութիւնները, սէրը իր բոլոր պարագաներով, եարը, վարդ և սոխակը, անյայտ, անորոշ անհասկանալի վիշտը և, բարեբախտաբար, մասամբ նաև ժողովրդական տարրը։ Ես հաւատացած եմ, որ մեր մէջ կըդանուեն մարդիկ, որոնք բացառապէս սիրային և նման մոտիւնների մէջ են որոննում ամբողջ պօէզիան, և ուր չըկայ սէր, այնտեղ դրանց համար չըկայ և պօէզիա, այլ կան միայն ձանձրոյթ և անհետաքրքրութիւն։ Բայց ևս չեմ կարող թագցնել իմ կարծիքն այդ մասին։»

Սէրը, իրև մարդկային բնական զդացմունքներից մէկը, ևս ընդունում եմ բանաստեղծութեան մէջ, մի պայմանով, որ նա գերակշռող տարր չը հանդիսանայ գրականութեան մէջ, չըխլացնի բոլոր ուրիշ մաքեր, զգացմունքներ և հետաքրքրութիւնները նա գալիս է հեղինակների ուշ ու միտքը կլանելու մինչ այն աստիճան, որ նրանք էզօխստական սէրից դուրս ուրիշ ոչինչ չեն կարողանում տեսնել և պատրաստ են աշխարհը դնել սիրած եարի ոտների տակ, այն ժամանակ ևս այդպիսի ուղղութիւնը պօէզիայի մէջ չեմ ընդունում և յայտարարում եմ այն միակողմանի և ճանապարհից շեղուած։ Միանգամայն իմ սրտիցն է խօսում Տարգը, երբ նա իր «Գեղարուեստի էութեան» մէջ ասում է. «Թէև սէրը գնալով աւելի և աւելի հեղեղում է գեղարուեստը ամբողջովին, բայց սիրոյ դերը այնուամենայնիւնուազում է այն չափով, որչափ մենք ձգտում ենք դէպի գեղարուեստի աւելի բարձր սահմանները. ստոր տեսակի արտադրութիւնների մէջ սէրը կազմում է ալֆա և օմեգա... իսկ վեհ և

լուրջ արտադրութիւնների մէջ նա, ընդհակառակը, այն սահմանն
է, այն վիմուտը, որից հարկաւոր է խուսափել:

Այս մեր գեղարուեստական գրականութիւնը պէտք է
ընդունէ իր մէջ ժողովրդական և ժամանակակից-կենսական
բազմակողմանի տարրեր, նրա վերցրած նիւթերը, մոտիւները
պէտք է ձգտեն ընդզրկելու աւելի լայն շրջան, նրա մէջ պէտք
է մտցնել լրջութիւն և իմաստ նա սղմուած է նեղ շրջանակի
մէջ։ Հարկաւոր է վերցնել այդ շրջանակը, որպէս զի աւելի
լայն հորիզոն բացուի մեր նորագոյն բանաստեղծութեան հա-
մար։ Այդ ուղղութեամբ է ընթանում ժամանակակից եւրոպա-
կան գրականութիւնը յանձին լաւագոյն ներկայացուցիչների՝
Հաստալտման, Զուղերման, Իրսէն, Ադա Նեզրիի և այլն և այլն,
ինչպէս և ոռւսաց գրականութիւնը յանձին Տօլստօյի և միւս-
ների։ Գնանք և մենք նոյն ճանապարհով։

Լրջութիւն և իմաստ—թող սա լինի մեր, գեղարուեստի
մարդկանց, բնաբանց։ Զարհամարենք միտքը և զաղափարը,
իբր թէ զգացմունքները ջատագովելու համար։ Զմոռանանք
երբէք Գէօթէի խօսքերը, որ ասում է։ «Թափանցիր զիտու-
թեան մէջ! Առանց մտքերի հանճարը չէ ստեղծագործում, և
հազուագիւտ խելքի տէր մարդն էլ լոկ իր բնական զգացմուն-
քով հազիւ թէ կարողանայ դէպի վեր բարձրանալ։ Գեղարուես-
տը միշտ կը մնայ գեղարուեստ, այստեղ չէ կարելի կուրօքն և
շօշափելով առաջ գնալ, և միայն զիտութիւնն է, որ կըտանէ
դէպի յաջողութիւն»։

ԼԵԽՈՆ ՄԱՆՈՒԵԼԵԱՆ

ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՌՈՒՍԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

Չեխովի՝ «Տրի Սեռ»—Գօրկիի՝ «Մեղան».

Ժամանակակից ոռւսաց գրականութեան մէջ և. Տոլստօվը յետոյ ամենաժողովրդական գրողներն են Ա. Չեխով և Մ. Գօրկիյ: Ոչ միայն ոռւս ընթերցող հասարակութիւնը, այլ և քաղաքակիրթ աշխարհը հետաքրքրութեամբ է հետեւում գրանցամեն: Մի ստեղծագործութեան:

Միայն վէպիկներն ու պատմութիւնները չեն գրանց գրչի բաժինը կազմում: Չեխով վաղուց յայտնի է նաև իր թատերական գրուածքներով, յայտնի են նրա „Մեծքնձ“, „Պրեջունի“, „Պայրա“, „Վաճառք Վառյ“, բայց ամենից աւելի հետաքրքրութիւն շարժեց նրա վերջին գրաման—„Տրի սեռ” (Երեք քոյրեր), որը լոյս տեսաւ անցեալ տարի:

Գօրկին էլ այս տարուայ սկզբում առաջին անգամ փորձեց իր ոյժերը գրամայի մէջ: Նրա „Մեղան“ (Քաղքենիներ) գրաման այժմ գնուում է եւրոպական մայրաքաղաքներում:

Մենք կաշխատենք մեր ընթերցողներին ծանօթացնել ոռւսաց գրականութեան այդ երկու նորութիւնների հետ: մանաւանդ որ հայոց բեմի վրայ, ինչպէս երեւում է, դեռ շուտ չեն գնուի այդ պիէսները:

Բուրժուական մթնոլորտից է վերցրած «Երեք քոյրերի» սիւժետը: Գործողութիւնը տեղի է ունենում նահանգական քաղաքում: Այդտեղ ապրում են երեք քոյրերը՝ Օլգա, Մաշա և իրինա Պրօզօրօվները իրանց եղբօր Անդրէյ Սերգէյիչի հետ: Տաղտկալի է կեանքը, մոայլ ու միակողմանի: Շնչու, արդեզք, ասում է Անդրէյը, զեռ կեանքի սկզբում մենք դառնում ենք այսպէս ձանձրալի, անհետաքբքիր, ծոյլ, անտարբեր, անօգուտ, անքաղդ... Արդէն երկու հարիւր տարի է, որ գոյութիւն ունի

մեր քաղաքը, նրա մէջ հարիւր հազար բնակիչ կայ, բայց լուլո՞ն էլ իրար նման Զը կայ ոչ մի հերոս ոչ անցեաւում և ոչ ներկայումս, Զը կայ ոչ մի գիտնական, ոչ մի նկարիչ, ոչ մի շատ ու քիչ յայտնի մարդ, որ զարթեցնէր նախանձ ու նմանուելու ջերմ ցանկութիւն։ Միայն ուտում, խմում, քնում են և յետոյ մեռնում... Ծնուում են ուրիշները և գարձեալ ուտում, խմում, քնում և, որպէս զի ձանձրոյթից չը բժանան, իրանց կեանքը բազմակողմանի են զարձնում կեղտոտ բամբասանքով, օղիով, թղթախաղով ու խորամանկութեամբ»...

Ի՞նչ բաւականութիւն պիտի ստանային երեք քոյրերը, այդպիսի միջավայրում, մանաւանդ որ նրանց հոգեկան աշխարհն էլ ծածկուած էր սեւ-սեւ ամպերով, նրանց սիրոն էլ լցուած էր վիշտ ու թափիծով, կեանքը ծանր բեռի նման ճընշում է նրանց։ Մաշան ամուսնաշած է գիմնազիայի ուսուցիչ՝ Կուլիգինի հետ, բայց չի սիրում նրան։ «Ինձ ամուսնացրին, ասում է նա, երբ ես դեռ տասնաւթը տարեկան էի։ Ես վախեղում էի իմ ամուսնուց, որովհետեւ նա ուսուցիչ էր, իսկ ես դեռ նոր էի վերջացրել ուսումնական մասնակ նա իմ աշխին երեւում էր չափազանց գիտուն, խելացի ու երեւելի, իսկ ալժմ, գժբաղդաբար, այն չէծ։ Եւ այդպէս հրամափուած սիրու նոր կեանք է որոնում, նոր սէր է ուզում...»

Սիրոյ, կամ աւելի ճիշտն ասած վեսայացուների համար հալ ու մաշ են լինում նաեւ միւս քոյրերը—Օլգան և Իրինան։ Հասակն առած օրիորդներ են երկումն էլ։ մէկը վարժուհի, իսկ միւսը հեռագրատան ծառայող։

Աշխատում են նրանք, բայց աշխատանքը սփոփանք չի տալիս մաշուած սրտերին Նրանց համար միայն մի իդէալ գոյութիւն ունի—ամուսնութիւն, բայց դա էլ անմահական խընձորի նման ձեռք չի ընկառում։ Միմնանց յետեւից անշնում են օրեր, ամիսներ ու տարիներ, իսկ վիսսայացուները չը կան ու չը կան։ Կեանքն աւելի ու աւելի անտանելի է զառնում։ Ի՞նչ անել...

—Թողնել անիծուած քաղաքը։ տեղափոխուել Մոսկուա, Մոսկուա, Մոսկուա...

Մոսկուան դառնում է աւետեաց երկիր քոյրերի համար։ Քոյրերից պակաս ձանձրոյթ չի զգում Անդրէյը։ Նա իբր թէ սիրում է նատալիային և վերջը ամուսնանում հետք, բայց շուտով ամուսնական կեանքն էլ տաղտկալի է զառնում նրա համար։ «Ինձ հարկաւոր է մէկի հետ խօսել, ասում է նա, իսկ կինս ինձ չի հասկանում, քոյրերիցս էլ վախենում եմ։ Վախենում եմ, թէ ինձ կը ծաղքեն, կ'ամաշչեցնեն... Ես չեմ խմում,

արակտիրներ չեմ սիրում, բայց ինչպիսի բաւականութեամբ կը նստէի Մոսկովայում—«ԵՎԵՏՈՎԵ»-ի՝ մօտ... Նստում ես բեստորանի ահազին դահլիճում, բայց այնուամենայնիւ քեզ օտար չես զգում: Իսկ այստեղ գու բոլորին ճանաչում ես, բոլորը քեզ են ճանաչում, սակայն օտար ես, օտար... Օտար ես և միայնակ: Այդպիսի դրութիւնից ստիպուած Անդրէյը գերի է դառնում թղթախաղին: Խաղում է անվերջ, պարտքեր է անում, գրաւ է գնում և տանուլ տալիք իսկ կինը—Նատաշան: Նա էլ կամաց-կամաց սիրաբանութիւններ է սկսում ուրիշի հետ:

Այդպէս մոայլ է Պրօզօվլների կեանքը: Բայց ահա գալիս է գորքը. քաղաքը քիչ կենդանանում է: Սակաւում են ծանօթութիւններ, երթեւելութիւններ և դրանց հետեւանք՝ սիրաբանութիւններ: Մոայլութեան մէջ լոյս են ընկնում յուսոյ ճանանչներ, անուրջներ ու յոյզեր: Ամենից առաջ սիրահարւում է Մաշան: Նա սիրում է Անթագնդապետ Վերշինինին:—«Ես ուզում եմ մեղքս խոստովանել, ասում է Նա իր քոյրերին, կը խոստովանիմ ձեզ և այլ եւս ոչ ոքի, երբեք... Կասեմ այս բոլիքին: Այդ իմ գաղանիքն է, բայց դուք պիտի բոլորն իմանաք... Չեմ կարող լոհն... Ես սիրում եմ, սիրում եմ... Սիրում եմ Վերշինինին... Այս, սիրում է Մաշան և այն առանց խղճի խայթոցի, առանց ամուսնուց քաշուելու: Վերշինին էլ փոխադարձ զգացմունք է տածում դէպի նա:—«Ես սիրում եմ, յուզուած բացականչում է նաև Սիրում եմ ձեր աշքերը, ձեր շարժումները... Օհ, հիմնալի, հրաշալի կին:... Եւ այդպէս երջանիկ օրեր է անցկացնում սիրահար զոյգը, մինչեւ որ հասնում է անջատման ժամը:

Իրինան էլ գառնում է սիրոյ առարկայ: Նրա վրայ միանգամից երկու զինուորականներ են սիրահարւում—շտաբս կտապիտան Սալեօնին և կոմս Տուգենբախը: Երկուան էլ խոստովանում են իրանց սէրը ամենավատ դոյներով, ամենանուրը դարձուածքներով: Սակայն իրինան աւելի հակուած է դէպի կոմաք, թէեւ նրան էլ չի սիրում: Բայց ինչ փոյթ: Զէ որ կարելի է տուանց սիրոյ էլ ամուսնալի Ահա թէ այդ մասին իրինային ինչ խորհուրդ է տալիս մեծ քոյրը—Օլգան:—«Սիրելիս, ասում եմ քեզ իրեւ քոյր, իրեւ բարեկամ, եթէ ուզում ես իմ խորհուրդը, ամուսնացիր կոմսի հետ: Զէ որ դու նրան յարգում ես, բարձր ես գնահատում... Նա, ճշմարիտ է, տգեղ է, բայց կարգին մարդ է, մաքուր... Զէ որ ամուսնում են ոչ թէ սիրոյ, այլ պարտքը կատարելու համար: Գոնէ ես այդպէս եմ կարծում և ես կամուսնանայի առանց սիրոյ: Ով որ ինձ առաջար-

կութիւն անէր, միեւնոյն է, կընդունէի, միայն թէ նա կարգին մարդ լինէր... նոյն իսկ ծերունու հետ կամուսնանալի...

—Այս, համաձայն ևմ, պատասխանում է իրինան, կամուսնանամ նրա հետ, միայն թէ գնանք Մոսկուա: Մոսկուայից լաւ բան չը կայ աշխարհումա, գնանք, Օլեա, գնանք...

Ահա թէ ինչ աստիճանի է հասել ամուսնանալու տենչնու կեանքի ձանձրոյթը: Սակայն շառանց սիրոյ ամուսնութիւնն էլ վիճակուած չէր իրինային: Երկու ախոյեանների—Սալեօնիի և Տուզենբախի—մէջ մենամարտութիւնն է տեղի ունենում և վերջինս կորցնում է իր կեանքը... Այդպիսով ամուսնատենչ օրիորդը գարձեալ մնում է սպասելու և տանջուելու:

Բայց այդ գլու բոլորը չէ: Առաջին հարուածին հետեւում է երկրորդը: Շուտով բոլոր զինուորականները ընդմիշտ հեռանում են քաղաքից և կեանքը նորից ընդունում ու իր սովորական հոսանքը—տաղտկալի ելեւեցներով:

Այդ բոլորից յետոյ, ինչպէս իրաւացի կերպով նկատում է Փրանսիայի քննադատ Վօգիւէ—(„Revue des deux mondes“ 1902, յանվեր), պէտք էր սպասել, թէ քոյրերը աւելի պիտի տիրեն ու հիասթափուին: Բայց այդպէս չի անում Զեխովը. նա ընդհակառակը վերջին բոպէում մի առանձին յոյս ու ոգեւորութիւն է ներչնչում իր հերոսուհիներին, որոնք իրար յետեւից բայց ականչում են, թէ պէտք է ապրել, ապրել ու աշխատել...

Մաօմ.—Նրանք հեռանում են մեզանից... Մենք կը մանք մենակ, որպէս զի նորից մեր կեանքն սկսենք... Պէտք է ապրել... Պէտք է ապրել...

Թրինա.—(Գլուխը օլգայի կրծքին դնելով)՝ Աը գայ ժամանակ, երբ բոլորը կիմանան, թէ ինչո՞ւ համար էր այդ բոլորը, ինչու համար էին այդ տանջանքները. ոչ մի գաղտնիք չի մնայ, իսկ այժմ հարկաւոր է ապրել... Հարկաւոր է աշխատել, միայն աշխատել Վազը ես մենակ կը գնամ, զատ կաւանդեմ դպրոցում և իմ ամբողջ կեանքը կը տամ նրանց, որոնց նա, զուցէ, հարկաւոր է: Հիմա աշուն է, շուտով կը գայ ձմեռը, ամեն ինչ կը ծածկէ ձիմով, իսկ ես կաշխատեմ, կաշխատեմ...

Օլգա.—(Գրկում է երկու քոյրերին)՝ Ա՞հ, Աստուած իմ, կանցնի ժամանակ և մենք բոլորս էլ կը գնանք յափտենականութեան զիրկը... Մեզ կը մոռանան, Կը մոռանան մեր դէմքերը, ձայները, մեր թիւը, բայց մեր տանջանքները որախութիւն կը զառան մեզանից յետու ապրողների համար: Նրջանկութիւն և խաղաղութիւն կը սկսուի աշխարհում: Այն ժամանակ բարի խօսքով կը յիշեն և կը օրհնեն նրանց, որոնք ապրում են այժմ: Օ՞հ, սիրելի քոյրեր, մեր կեանքը զեռ չէ վերջացել: Ապրենք: Մի քիչ էլ և այն ժամանակ մենք կ'իմանանք, թէ ինչու համար ենք ապրում, ինչու համար ենք տանջում... Եթէ իմանայինք, եթէ իմանալինք...

Դրանով վերջանում է դրաման:

Դառնանք այժմ Գորկիի «Մէպահ» դրամային:

Մեշանական ընտանիքի կեանքն է կազմում այն կանուան, որի վրայ հիւսուած է զրամայի ամրողջ բովանդակութիւնը, Ծնողների և զաւակների ընդհարումն է այն ներքին ոյժը, որի շուրջը կատարւում է գործողութիւնը:

Դրամայի հերոսներն են Բեզսեմնով ամուսինները և նրանց զաւակները՝ Պետրն ու Տատիանան: Բեզսեմնովը հասակն առած և ունեւոր մարդ է—մէկը նրանցից, որոնք ներկայ կապիտալիզմի ազգեցութեան տակ համարձակ քայլերով առաջ ան ընթանում, հարստութիւն են հաւաքում՝ առանց խորութիւն գնելու միջոցների մէջ, առանց ճնշուելու մեղքից ու խարեւայութիւնից: «Դու ինձ գուր ես զալիս, ասում է գործող անձերից մէկը—Տետերեվը—Բեզսեմնովին, որովհետեւ գու չափաւոր խելացի ես և չափաւոր յիմար, չափաւոր բարի ես և չափաւոր չար. չափաւոր ազնիւ ես և սառ, վախկոտ և քաջ... Դու օրինակելի քաղաքացի ես: Դու լիովին իւրացրել ես դատարկութիւնն ու ցածութիւնը—այն ոյժը, որ յաղթում է նոյն իսկ հերոսներին և ապրում է և փառաւորւում»:

Սակայն բոլորովին այլ տիպեր են ներկայացնում այդ «օրինակելի քաղքենու» զաւակները՝ Տատիանան և Պետրը: Ժամանակակից մասաւոր հոսանքներն ու հասարակական կեանքը դրոշմել են նրանց վրայ իրանց կնիքը: Նրանք իրանց հոգեկան աշխարհով, իրանց ձգտումներով ու համոզմունքներով տարբերում են ծնողներից: Ահա հէնց այդ տարբերութիւնն էլ դառնում է ընտանեկան գժուութեան հիմնաքարը: Զաւակները դըժգոն են ծնողներից, իսկ ծնողները—զաւակներից, նրանց վարքից ու կենցաղից:—«Ի՞նչ է ձեր նպատակը, բացականչում է Բեզսեմնովը, հառաջող Տատիանային տեսնելով. մեր կարգերը ձեզ գուր չեն զալիս, այդ մենք տեսնում ենք, զգում ենք... Բայց, որն է ձեր մտածած կարգը... Ահա հարցը:—Անխիղձներ, բացականչում է նա մի ուրիշ անգամ, ճնշում էք մեզ. ինչով էք հպարտանում, ինչ էք արելո... իսկ մենք ապրել ենք, աշխատել ենք, տներ ենք յինելո... ձեզ համար մեղքի մէջ ենք ընկել. այս, շատ մեղք ենք արել ձեզ համար...»

Հէնց այդ պատճառով Բեզսեմնովը իրան երախտաւոր է համարում և պահանջում է, որ զաւակները հպատակուեն իր կամքին, ամեն ինչ անեն իր խորհրդով ու հաճութեամբ: Սակայն այդպիսի բռնակալական պահանջը աւելի ծանրացնում, աւելի վատացնում է Պետրի և Տատիանայի առանց այն էլ դառն կեանքը: Ծնողների այդպիսի վերաբերմունքը և շրջապատող մթնոլորտը արաջափ բեռի նման ճնշում են նրանց:

Տատիանան հասակն առած օրիորդ է և պարապում է մանկավարժութեամբ։ Բայց այդ պարապմունքը նրան չի մխիթարում, նրա կեանքի դառնութիւնը չի մեղմացնում։ «ԱՌ, որքան ձանձրալի է կեանքը», բացականչում է նաև իսկ երբ եղբայրը—Պետրը խորհուրդ է տալիս թողնել չը սիրած պաշտօնը—վարժուհութիւնը և գնալ սովորելու «Կանանց դասընթացներում», Տատիանան պատասխանում է։

—Ինձ ինչ հարկաւոր են դասընթացները, Ես ապրել, ապրել եմ ուզում և ոչ սովորել, Բայց չը դիտեմ, չեմ երեւակայում, թէ ինչ է նշանակում ապրել, թէ ևս ինչպէս կարող եմ ապրել։

Տաղտկալի է կեանքը Բեղսեմենօվի ընտանիքում։ Ի՞նչ է ներկայացնում այդ ընտանիքը։ Օստրօվսկու «ՏՅՄԻՆ պարտե»-ի մի անկիւնը։ Նմանութիւնը շատ մօտ է...»

Ցոռետես է Տատիանայի հայեացքը կեանքի վրայ, յոռետես է նաև նրա եղբօր հայեացքը։ Պետրը համալսարանից արտաքսուած ուսանող է և ամենից բարձր դասում է անհատական ազատութիւնը։ Նա չի ուզում կատարել ոչ միայն ծնողների, այլ նաև հասարակութեան պահանջները։ Նա դառնացած բացականչում է։

—Հասարակութիւն—ահա իմ ուզած բառը։ Նա անհատից բարձր պահանջներ է անում, բայց հնարաւորութիւն չի տալիս նրանց ուղիղ ճանապարհով, առանց խոչընդուների զարգացնելու։ Մարդու ամենից առաջ քաղաքացի պիտի լինի, բղաւում էր հասարակութիւնը իմ ընկերների բերանով։ Ես քաղաքացի էր... Բայց չեմ ուզում, պարտական չեմ հասարակութեան պահանջներին հպատակուելու։ Ես անհատ եմ։ Անհատը ազատ է...»

Ահա այդպիսով քոյր ու եղբայր իրանց յոռետես հայեացքը ներով կարծես լրացնում են միմեանց և կազմում մի ամբողջութիւն, կեանքից հիասթափուած, շրջապատողներից դառնացած ամբողջութիւն։—Այդ երկուսի հոգեկան աշխարհն էլ այնքան մոռյլ է, այնքան սեւ, որ իրան զգացնել է տալիս ամեն մի քայլափոխում, ամեն մի դէպում։ Այսպէս, օրինակ, Տատիանային թատրոն են հրաւիրում, բայց նա փոխանակ հրաւէրն ընդունելու, դառնացած պատասխանում է։

—Թատրոն, ինձ զզուեցրել է։ Ինձ չարացնում, զրգում են այդ բոլոր գրամանները—լաց ու հառաջանքներով։ Այդ բոլորն էլ ճիշտ չեն կեանքը մարդկանց կոտրատում է առանց ձայնի, առանց աղմուկի ու արցունքի, աննկատելի կերպով...»

—Դրամաներ են խաղում սիրոյ տանջանքների մասին, քրոջ խօսքը լրացնում է՝ Պետրը, բայց ոչ ոք չի տեսնում

այն գրամաները, որոնք հալ ու մաշ են անում «ուղում եմ» և «պարտաւոր եմ» գաղափարների մէջ տեղը կանգնած մարդու հոգին:

Այդ մարդկանցից է ինքը Պետրը և նրա քոյրը՝ Տատիանան. նրանք երկուսն էլ «ուղում են» յագուրդ տալ իրանցներքին՝ անհատական պահանջներին, բայց ծնողներն ու շրջապատող կեանքը շարունակ կանգնում են այդ ցանկութեան դէմ և միշտ կրկնում՝ «Պարտաւոր էք»...

Սակայն բոլոր գործող անձննքն էլ այդպիսի տրամիկ գրամեան մէջ չեն: Նրանց մէջ կան այնպիսիները, որոնք կենսուրախ են և հաւատացող, որոնք գործում են և հաւատում, թէ կեանքը պիտի լարեփոխուի, թէ մարդիկ վերջ ի վերջոյ պիտի համսեն իրանց տենչալի նպատակին: Դրանց թուին են պատկանում Բնզսեմնովի սանը՝ Նիլը, այրի Ելենան Կրիւցովան, վարժուեկի Յուետանան և այլն: Դրանք հաւաքւում են միասին, և երկայացումներ են սարգում բանուորների ու զինուորների համար—աշխատում են ու հաւատում...

Բոլոր գործող անձերից ամենակատարեալն ու բնորոշ երգիչ Տերենաեմն է, նա Գորկիի սիրած թափառաշրջիկների—բուեկների տիպերից է: Նա հարբեցող է, բայց երբէք չի ճշնշում զրանից. և նա փշացնում է ոչ թէ օղին, այլ իմ ոյժը, առում է նա: Աւելորդ ոյժ—ահա իմ կորուսոր: Այժմ հարկաւոր է ոչ թէ ոյժ, այլ ճարապիկութիւն, խորամանկութիւն, օձի ճկունութիւն... Նա հարբում է, որովհեաւ «Աւելի յարմար է, աւելի հանգիստ է լինել հարբեցող, թափառաշրջիկ, քան թէ պահեցող, ազնիւ ու գործնական մարդ»: Ամբողջ գրամայի ընթացքում նա անհոգ կերպով մերթ սրախօսում է, սերթ փիլիպովայութիւն անում—և միշտ էլ իր տեղումն է, իր գերումը...

Այդքանը դրամայի տիպերի մասին: Դառնանք այժմ նրա կոլլիգիային, գործողութեանը, որը այնքան էլ բարդ չէ: Բեզսեմնովի աղջիկը—Տատիանան սիրում է մեքենավար Նիլին, բայց առանց փոխադարձ սէր ստանալու կենսամաշ էր Տատիանան, իսկ Նիլը ուժով ու եռանդով լցուած: Յուսաբեկ ու ջախշախուած էր Տատիանան, իսկ Նիլը վառ յօյսերով, գործելու տենչով տոգորուած: Պարզ է ուրեմն, որ նա չէր կարող սիրել Տատիանային: Ժամանակը սահում է առաջ ու առաջ, իսկ սիրով սիրում միշտ սպասում է, միշտ յօյսեր է տածում: Վերջառիս բացում է դառն իրականութիւնը և մի բոպէում ջարդու փշուր անում այդ բոլոր տենչերն ու յօյսերը: Մի զեղեցիկ օր իմացւում է, որ Նիլը սիրում է դերձակունի Պոլիային և արդէն վճռիլ է ամուսնալ նրա հետ ի՞նչ պէտք է անէր թշուառ

Տատիանանու Միայն սիրոյ կայծն էր, որ կեանք էր տալիս նրան, միայն աղօտ յուսոյ թեխն էր, որ կապել էր այդ կեանքը այս աշխարհի հետ և ահա յանկարծ կտրուեց այդ թելը, բաց անելով յուսահատութեան անձայր, անյատակ վիճը Տատիանան գլորւում է նրա մէջ: Նա թոյն է ընդունում, որպէս զի վերջ դնէ իր չարքաշ կեանքին:

Սկսուում է աղմուկ, իրարանցում Բեզսեմննօվի ընտանիքում: Շտապում են բժշկի յետելից: Լալիս, ողբում են Տատիանայի ծնողները, անհանգստանում է նրա եղբայրը: Հաւաքւում են ծանօթներն ու ընկերները: Բոլորն էլ ցաւում են, բոլորն էլ հետաքրքրուում են, թէ ինչը պիտի ստիպէր այդ քայլն անելու... Բարեկաղջարար բժշկական օգնութիւնը նորից առողջացնում է Տատիանային:

Առողջանում է նա, բայց կատարուած փաստը խորը հետքեր է թողնում և մի տեսակ նախարան գառնում ապադայ փաթորիկների համար: Բեզսեմննօվը ամեն մի քայլափոխուում ցոյց է տալիս իր ատելութիւնն ու թշնամանքը դէպի Նիլը և Պօլիան: Ինչպէս, իր սանը, իր մնծացրած Նիլը, համարձակւում է ամուսնանալ առանց իր խորհուրդն ու թոյլտուութիւնն ստանալու: Ինչպէս, իր տանը կար անող Պօլիան յանդկնում է Խլել Տատիանայի սիրած փեսայացուին... Դա կատարեալ դաւաճանութիւն է նրա կարծիքով, կատարեալ անսամօթութիւն...

Բայց Նիլը երկար չի տանում Բեզսեմննօվի կշտամբանքները: Նա յայտնում է, որ ինքը ազստ անհատ է և ոչ ստրուկ, որ ոչ ոք իրաւունք չունի նրա վրայ բռնանալու... Եւ այդ աղմէկալի ընդհարումից յետոյ ընդմիշտ հեռանում է Բեզսեմննօվի տանից: Վերջինիս կատաղութեան չափ չը կայ. «Վերադարձէք, գլուխ տուէքու... Կանչում է նա հեռացող Նիլի և Պօլիայի յետելից, բայց անօգուտա...»

Հեռանում է զայզը, իսկ Բեզսեմննօվը դեռ շարունակում է անզուսապ զայրոյթի արտայայտութիւնը: Տատիանան և Պետրը աշխատում են հանգստացնել, սակայն նրանց գլխին էլ թափւում է կշտամբանքների հեղեղը: Միջամտում է այրի Ելենա իւանօվսան, բայց այդ միջամտութիւնը իւղի նման սաստկացնում է կարաղութեան բոցը: Բեզսեմննօվը վաղուց արդէն առում էր, որովհետեւ նկատում էր, որ Պետրը սիրում է նրան, քաշ է զայիս նրա յետելից: Նա երբէք չէր հաշտուում այս մտքի հետ, թէ իր որդին կարող է ամուսնանալ մի այդպիսի կնոջ հետ, որ ոչ մեծ բաժինք ունէր և ոչ էլ յայտնի անունու նա իր կնոջ Ակուլինայի հետ միասին ամեն կերպ աշխատում էր հեռու պահել Պետրին Ելենայի աղդեղութիւնից, բայց ա-

Նոգուտու Ատելութեան մազձը օրէցօր հաւաքւում էր նրա սըրառում և մի յարմար բոպէի էր սպասում, որ գուրս թափուիր Ահա և այդ բոպէն ների և Պօլիայի հեռանալուց յետոյ; երբ Բեղսեմենովը գեռ շարունակում էր իր յանդիմանութիւնները, երբ գեռ կատաղած էր բոլորի վրայ, Ելենան միջամտում է և իր մօտ է հրաւիրում Պիոտրին ու Տատիանային: Բեղսեմենովը արգելում է:

—«Ներդութիւն, հայր, պատասխանում է Պետրը, ես երեխալ չեմ: Կը գնամ, եթէ ուզենամ!»

Թեզսեմենօվ.—«Ե՞ս գնայ...»

Ելենա.—«Թոյլ տուէք, Վասիլի Վասիլեվիչ...»

Թեզսեմենօվ.—«Ո՞չ, այժմ արդէն դուք թոյլ տուէք, թէեւ դուք բարգացած մարդիկ էք, թէեւ դուք կորցրել էք ձեր խիղճն ու ո՞չ «քի չեք լարգում...»

Տատիանա.—(հեծկլտալով) Հայրիկ, բաւական է...»

Թեզսեմենօվ.—լոխ'ր, երբ դու քո բազդի տէրը չես, լոխ'ր... սպասի՛ր, ո՞ւրի... Պէտք է ինձ լսել: Արէք ինձ ալդ բարութիւնը—լոեցէք: Բոպէք, որ հասկանամ թէ ինչուն է բանը: Խորոշ հեռանում են, առանց բացատրելու իրանց մտադրութիւնները, ալնպէս, վիրատրական է և ամօթալի: Դու ո՞ւր կարող ես զնալ, Պետր: Դու... դու ի՞նչ ես: Խնչպէս կարող ես ապրել... Խնչ պէտք է անես... Դու երիտասարդ ես, դու զեռ լիմար ես... Յիսուն ութ ասրի ես աշխատանքի մէջ ջղերս եմ մաշել զաւակներիս համար...»

Պետր.—Այդ ես լսել եմ, հայրի Սո հարիւր անդամ...»

Թեզսեմենօվ.—Սպասի՛ր, լոխ'ր...

Ակուլինա Խվանօվինա.—Ա՞խ, Պետրա, Պետեա...»

Տատիանա.—Մայրիկ, դուք ոչինչ չէք հասկանում...»

Թեզսեմենօվ.—Լոխ'ր, Խնչպիսի խօսքեր ես ասում...»

Պետր.—Հայր, դու տանջում ես ինձ: Քեզ ի՞նչ է հարկաւոր, ի՞նչ ես ուզում:

Ակուլինա Խվանօվինա (լ ա ն կ ա ր ծ ք ա ր ծ ք).—Ո՞չ, սպասի՛ր, ես էլ սիրո ունեմ, ես էլ ձայն ունեմ: Որդեա՛կ, ի՞նչ ես ասում, ի՞նչ ես մտածել, ո՞ւմ ես հարցըլ:

Տատիանա.—Սա արտափելի է, սա մի՛ բթացած սղոց է... (մօրք) դուք պատառուում էք մարդու հողին ու մարմինը...»

Ակուլինա Խվանօվինա.—Մայրը՝ սղոց է: Մայրը:

Թեզսեմենօվ.—Պառա՛ւ, սպասի՛ր: Ահա նա... թող խօսի:

Ելենա (Պ ե ս տ ր ի ն).—Նո՞ւ, բաւական է: Ես այլ եւս չեմ կարող, ես զնում եմ...»

Պետր.—Կանգնեցէք, ի սէր Խոտուծոյ: Խոկոյն ամեն ինչ կը պարզուի...»

Ելենա.—Ո՞չ, սա խելազարների տռւն է... Սա...»

Թեզսեմենօվ.—Դուք, պարո՞ն, դուք...»

Տատիանա.—Երդիօք վերջանալո՞ւ է այս ամենը: Պետր, հեռացի՛ր...»

Պետր, (բ զ ա ւ ե լ ո վ).—Հայր... Նայի՛ր: Մայր... Ահա սա իմ հարժանացուն է:

Թեզաւմնություն.—Ենորհակալութիւն, որդի, ուրախալի լուրի համար: Ակրպինա Թամավիտ:—Կորած ես զու, Պետկա, մի՞թէ նա քս զուզն էր...

Թեզաւմնություն (Ե և ն ա յ ի ն).—Զեզ էլ շնորհակալութիւն, ոփկին... Այժմ, կը նշանակէ, նա կորած է: Նրան հարկաւոր էր սովորել, իսկ այժմ... Թէ ես ես այդ զգում էի... Ենորհաւորում եմ ձեր որոշ... Պետկա, քեզ համար այլ ես օրհնութիւն չը կար իսկ զու; զու... որոշցի՞ր, զղացա՞ր: Կատո՞ւ... Կեզ...

Պիօսր.—Հա՛յր, զու... անմիտ ես...

Նլենա.—Ո՛չ, սպասեցէք: Այսո՛, այդ ճշմարիտ է: Այսո՛, ես ինքս խլեցի նրան ձեր ձեռքից: Ես ինքս առաջարկեցի ամուսնանալ ինձ հետ: Լսո՞ւմ էք... Ես ինքս խլեցի նրան, որովհետեւ ցաւում էի նրա վրայ: Դուք նրան տանջում էք... Դուք մի տիսակ ժանդ էք և ոչ մարդիկ: Ձեր մէրը կորուստ է նրա համար: Դուք կարծում էք—օ՛հ ես այդ դիտեմ, դուք կարծում էք, թէ ես այդ ինձ համար արի... Նո՞ւ, կարծեցէք... օ՛խ, ի՞նչպէս ատում եմ ձեզ...

Տատիանա.—Լինա, Լինա, ի՞նչ ես անում...

Պիօսր.—Ելենա՛, գնանք...

Նլենա.—Եմացա՞ծ եղէք, կարելի է ես զեռ չը պսակուեմ նրա հետ: Դուք ուրախ էք, այսո՞ւ օ՞հ, զա շատ կարելի է: Դուք ժամանակից առաջ մի վախենանաք: Ես այնպէս կապրեմ նրա հետ... Առանց պսակի, բայց նրան այլ եւս չեմ տայ ձեզ: Ձեմ տա՞յ: Դուք այլ ես չեք տանջի նրան: ո՞չ: Եւ նա չի զայ ձեզ մօտ երբէք, երբէ՞ք, երբէ՞ք:

Այդ փոթորկալի տեսարանից յետոյ հեռանում են Պիօսրն Ելենան, Բեզաւմնությունը շարունակում է իր կատաղութիւնը, թշուառ մայրը—Ակուլինան արտասունքն աշքերին մրմնջում է.

—Բոլորը թողին միզ: Հեռացան մեղանից... Ինչն էր պատճառը...

—Ենչն էր պատճառը—այդ միեւնոյն հարցով դիմում է զարմացած ականատեսը—Պէրչեխինը Տատիանային:

—Ի՞նչն էր պատճառը, ասում է նա, որ նրանք փախան, հեռացան, իսկ սրանք լաց են լինում: Տարօրինանք մարդիկի...

Ահա այդ բառերով էլ եզրափակում է հնդինակն իր դրաման: Բայց միթէ, իսկապէս, տարօրինակ էին նրա հերոսները: Ո՞չ, նրանք տիպիկ ներկայացուցիչներ են ժամանակակից հասարակութեան որոշ դասակարգի: Նրանց վարժունքն էլ բնական հետեւանք էր շրջապատող պայմանների: Այդ միեւնոյն պայմաններն էին, որ ճնշելով անհատական ազատութիւնը, Զուգերմանի հերոսուհուն—Մագդային դուրս մղեցին հայրենական տանից (Heimat): Դրանք էին, որ գժոտութեան սերմ ցաւնեցին բժիշկ Շոլյի ընտանիքում (Das Friedensfest), որ թշուառացրին Կրամերին (Michael Kramer): Կոյւ հնի և նորի մէջ: Մաքառումն անհատական ձգտումների և ընտանեկան ու հասարակական պահանջների—ահա զա է այդ զրամաների անկիւ՛նաքարը: Միեւնոյն երգը՝ զանազան ելեւեցներով, զանազան վարիացիաներով:

Գալով „Մեղանե“-ի բեմական արժանիքներին, պէտք է նկատել, որ նա զուրկ է այսպէս ասած զրամատիզմից, զուրկ է գործողութիւնից: Նրա հերոսները բեզօնեօրներ են, որ աւելի շատ խօսում են, քան թէ գործում: Ամրողջ զրաման աֆորիզմների ժողովածու է, մի շարք տեսարանների հաւաքածու, որոնք տեղ-տեղ նոյն-իսկ տաղակալի են դառնում: Բայց չը նայելով այդ թերութիւններին, զրաման իր վրայ կրում է Գօրկիի տաղանդաւոր զրչի զրոշմը և ունի լեզուի գունաւորութիւն, ոյժ և մի առանձին զրաւչութիւն: Բացի զրանից նա հետաքրքրաշարժ է իբրև աշխարահոշակ հեղինակի առաջին զրամատիկական երկը:

Ե. ԹՈՓՉԵԱՆ

ՀԵՆՐԻԿ ԻԲՍԵՆ^{*)}

„Զօն Գարցիել Ռուկման“ (Զօն Գարցիելի ֆիքս յօւս-ն, — Քօրկման իր առանձնավարում, — Վիշէլք Ֆոլդալ, — Ելլա Ռէնթհայմ, — Գունհիլդի երազները, — Երհարդ, — Տիկին Վիլտոն, — Ելլալի և Քօրկմանի բացատրութիւնները, — Քօրկմանի տեսիլը և վախճանր, — Քօրկմանի իդէալիզմը, — Հիանդու իդէալիզմի „սառնութիւնը“, — Իրսէն հակաիդէալիստ), — Մըր մենք մեռածներ սրափառենք“ (Խակական և quasi արուստագէտը, — Ռուբէկի ստեղծագործութիւնը, — Իրհնէն իբրև մօղէլ, — Իրհնէի անկումը, — Ռուբէկի ճակատագիրը, — Մայեա, — Ռուբէկամ, — Իրենէի և Ռուբէկի հանդիպումը, — Մթափուած մեռելները“, — Ինչպէս պէտք է հասկանալ ողբամատիկական վերջաբանի՝ հիմնական հայեցքները). — Վերջաբան:

XVII

Իրսէն, որ իբրեւ մեծ գրամատուրգ վազուց էր արդէն յարդարել իր փառքի ուղին, կամաց-կամաց մօտենում էր իր կեանքի արեւմուտքին, նրա հսկայական, փարթամ գլուխը հետզհետէ արծաթափայլ էր գասնում, առնական բերանի բնորոշ ծալքերը, ինչպէս և լայնարձակ ճակատի ակօները տւելի և աւելի էին խորանում: Սակայն նրա գոլգոջուն ձեւների մէջն անգամ բազմարդիւն զրիշը գարձեալ պահպանել էր զօրեղ ստեղծագործութեան աւիւնը, որի բռնկումներից գեռ հանձարի բիւրեղներ էին ցայտում: Այս պատճառով զարմանալի չէ ի հարկէ, որ նրա ամեն մի ճնորութիւնը քաղաքակիրթ մարդկութեան լայնածաւալ շրջաններում մի տեսակ նկարչային, լարուած անհամբերութեամբ էր կլանւում: Այնքան մեծ էր և համատարած իրսէնի հոչակը, որ նրա երկերը լոյս էին տեսնում ոչ միայն նօրվէգիայում, այլ և միաժամանակ եւրոպական զամագան կենդրուններում՝ առնուազն գերմաներէն, ֆրան-

*) Տես „Մուրճ“ № 8.

սերէն և անգլիերէն լեզուներով։ Դեռ սկսնակ ուսանող էի երբ 1896-ի վերջերին լոյս տեսաւ «Ջօն Գաբրիել Բօրկման» („John Gabriel Borkman“)՝ յիշում եմ այն զօրեղ ցնցումը, այն ահազին աղմուկը, որ առաջ բերեց իրսէնի այս նոր դրաման արտասահմանեան թէ մամուլի շրջաններում և թէ թատրոնական կետնքում (Բներինի նշանաւոր «Deutsches Theater»-ում շաբաթներով շարունակ «Ջօն Գաբրիել Բօրկման» էին ներկայացնում): Իրսէնեան երկար համայնքի համար դա մի ցնծութեան և յաղթանակի տօն էր յանուն իրանց ծերունազարդ «առաքեալի»։ Խսկ հակառակորդների համար՝ ատամները կրճտացնելու և զբիշները սրելու մի յարմար առիթ։ Ումանք Ջօն Գաբրիելի ողբերգական վախճանի մէջ տեսնում էին անհատականութեան գաղափարի անանկութիւնը և առհատարակ ամբողջ դրամայի մէջ՝ իդէալիզմի անկումը, անզօրութիւնը—խսկ ումանք անհատականութեան մարտիրոսութիւն և իդէալիզմի անդրդուելի ոյժը։

Այս երկու ծայրերի մէջ սակայն անհերքելի է այն հանգամանքը, որ «Ջօն Գաբրիել Բօրկման» մի կողմից հեղինակի ներքին, սեփական պահանջների, ընդհանուր աշխարհահայեացքի և միւս կողմից՝ ժամանակի, շրջապատղ հանգամանքների ծնունդն էր։ Ջօն Գաբրիելի նման մի ներսում իրսէն անհատականութեան սկզբունքին տուեց նոր գունաւորում, բովանդակութեան նոր աստիճանաւորում։ Սրա հետ միայն չի կարելի ուրանալ ի հարկէ և այն հանգամանքը, որ նա նորից կամեցաւ պատկերացնել ժամանակակից ամենավանդապաւոր ուրուականներից մէկի, ուկէ հորթի ոյժքը Բօրկմանը ներկայացնում է եթէ ոչ այս հորթին ստրկապէս երկրպագող, այլ տնտեսական թագաւորութեան մէջ մի նոր նապօլէօն դառնալու։ Հիւանդութեամբ բռնուած մի ցաւագար, որի վերջնական նպատակն է փողի, նիւթական հարստութեան ոյժով բաղդաւորացնել ամբողջ մարդկութիւնը և որը սակայն ճակատազրի անողոք հարուածների տակ պէտք է ընկճուէր, սոսկալի հիասթափութեան պիտի մատնուէր և իբրեւ «խոտորուող» մի հանճար խելագարութեան անգունդի եղերքին միայն գտնէր իր վախճանը։

Անցնենք սակայն դրամային, որից և կը պարզուի այս նոր նապօլէօնի ամբողջ էութիւնը իր տարրեր դիմագծերով։

Ջօն Գաբրիելի դրամայի մի մասը դրամայի սկզբնաւորութիւնից առաջ է կատարուած։ Նա նախնկին բանկի մի վերատեսուչ է, որ իր նախանձելի դիրքից և փառքի բարձրութիւններից իջած՝ ութ տարի շարունակ առանձնասենեակի մոայլ պատերումն էր անցկացնում իր կեանքը։ Անցեալի ճնշող ստուեր-

ներք նրան հանգիստ չեն տալիս. միւս կողմից այս անախորժ ուրուականները երբեմն փարատելու համար նա ապագայ նորանոր յաջողութիւնների երազով է մխիթարուում:

Բայց ինչումն էր կայանում այս առանձնացած վերատեսաչ, այս «հիւանդ գայլի» մութ անցեալը: Զօն Գարբիէլ մի հանքանի որդի էր և համոզուած էր, որ իրան է միայն վիճակուած երկրի տակն ամբարուած միլիոնները լոյս աշխարհ հանել ևա համարեա միստիկական գգայնութեամբ էր վերարեւում դէպի այս ծածուկ, անմշակ զսնձերը, որոնց ձայնը կարծես նա իր նուրբ լսողութեամբ լսոններով անցնելիս շրունակ լսում էր: Միայն անձնական շահը չէ Բօրկմանի նպատակը՝ այլ նրա ոլլաւոր մտադրութիւնն է իր զիւտերով բազդաւորացնել հազարաւոր մարդկանց: Իր նպատակին հասնելու և առհասարակ խոշոր ձեռնարկութիւններ ակսելուն նա ձգտում է ամենից առաջ զիրք ձեռք բերել և բարձրացնել իր վարկը: Եա դառնում է բանկի վերատեսուչ, բայց ինչ զնովի: Ամբողջովին յափշտակուած իր հեռաւոր նպատակով՝ նա այլ եւս ոչ մի սըրբութիւն չէր ճանաչում. պատրաստ էր ամեն ինչ ոտնակոի անել, միայն թէ մի քայլ աւելի արած լինի դէպի այդ նպատակը: Այս խստասիրտ, չոր և անողոք հանքահանի հոգին մեղմութեան մի հետք էր միայն կրում՝ զա էլլայ Շէնթհայմի սէրն էր: Սակայն նա պատրաստ է անխնայ հետեւողականութեամբ ուռնակոի անել նաև նաև այս սէրը: Եւ ինչ զզուելի կօմպրօմիսով Փաստարան Զինկել, որի աջակցութեամբ նա յոյս ունէր վերատեսուչ դառնալ, սիրում է էլլայն: Բօրկմանը նրա օժանդակութիւնը վայելելու և նրա վերաբերմամբ մրցակից շը հանգիստանալու համար հրաժարուում է էլլայից և ամուսնանում այս վերջինի քրոջ՝ Գունհիլդի հետ, որին նա ամեննեւին չէր սիրում: Բայց Բօրկման որքան խստասիրտ էր իր այս տգեղ քայլով՝ նոյնքան էլ կարծամիտ—նա ամենողունակ էր նախատեսել, որ էլլայից յօժարակամ հրաժարուելը դեռ չէ նշանակում նրան Զինկէլի զիրկը մատնելը էլլան երկուսից էլ իր երեսը զզուանքով շուռ է տալիս:

Զինկելը էլլայից զրկուելով՝ բնականաբար ամեն ջանք ի գործ պիտի գնէր իր կարծեցեալ հակառակորդից՝ Բօրկմանից վրէժինդիր լինելու: Վերջինիս գաղտնիքներին նա ամենայն մանրամասնութեամբ ծանօթ էր. զիտէր թէ խարդախութիւնների և կեղծիքների ինչ ծանրութիւն է բարձուած նորընտիր վերատեսչի ուսերին—ինչու ուրեմն չօգտուել հանգամանքից և նրան դատաստանի մատնելը եւ ահա վազեմի նպատակին բաւական մօտեցած՝ Բօրկմանին յանկարծ մի սոսկալի հարուած է

համուռմ: Նա ամբաստանւում է իրրե խարդախ և գող. դատարանը նրան հինգ տարուայ բանտարկութեան է դատակարառում: Նա ընկնում, արատաւորուում է՝ արատաւորելով և անբաղդացնելով իր հետ նաեւ մի ամբողջ ընտանիք՝ զուցէ և ուրիշ բազմաթիւ մարդկանց:

Բանտից գուրս գալուց յետոյ, ինչպէս նկատեցինք: Նա ամբողջ 8 տարի առանձնութեան մէջ է առլրում—թէև իր ընտանիկոն յարկում, բայց ոչ ոքի հետ չէր տեսնուում: Ընտանիքի միւս անդամները՝ իր կինը (Գունէիլը) և միակ որդին (Երնարդ) նկրքնի յարկումն էին ապրում: Իսկ ինքը՝ վերեւ, նո ոչ միայն ոչ ոքի հետ չէր տեսնուում: այլ և ամեննեւին տնից չէր գուրս գալիս: Նոյն իսկ «երեկոներն անգամ խուսափում էր»: Քանի անգամ գուրս գալու նպատակով հօրկման ՝ ախաւաննեալում մօսեցել էր իր վերաբերուն վերցնելու, բայց մի անվատահ և անվճռովական մղումով իր քայլերը նորից ուղղել էր դէափի իր առանձնավայրը: Այստեղ նա իրան երեւակայում էր իրեւ գնդակահար եղած մի արծիւ կամ ո. Հեղինէում շըդթայուած նապօլէօն: Զօն որ նա երբեմն արքայավայել փառքի մէջ էր—մի փառք, որի պահպարդ ցուցանակի վրայ շքեղութեսն մի նշանախէց անգամ չէր պակասում: «Նա ոլտում էր քառածի կառուով՝ ճիշտ այնպէս, ինչպէս թաղաւորը. ստիպում էր մարդկանց խօնարհուել իր առաջ՝ ինչպէս թագաւորի առաջ՝ նրան ամենքը, ամբողջ երկիրը, մինչև իսկ ուղղակի իր անունովն էին կոչում՝ ճիշտ այնպէս, ինչպէս թաղաւորին—«Զօն Գարրիէլ, Զօն Գարրիէլ»: Ամենքը շատ լաւ էին ճանաչում նրան, զիտէին թէ ինչ ոյժ էր Զօն Գարրիէլը—դառնութեամբ և հեգնախամն շնչառով նկատում է իր կինը:

Իսկ այժմ՝ ճակատազրի անողոք հարուածից ընկնուած՝ նրա հողին կառաղի մրցկի մի ծով էր ներկաւացնում, որի վրայով ուակայն նա յոյս ունէր իր բաղդի նաւը զնկավարել: Արգարեւ, ծանր հիսութեափութեան ձնչումը կարծես այնքան էլ յուսահատական չէր ոյս կամաւոր բանտարկեալի համար նա իր առանձնավայրում գետ իր նախկին ծրագրիներովն էր ապրում: Փայլուն տինկարկութիւններից, վարդագոյն երաղներից տրամադիր չէր բաժաննուելու—նա յոյս ունէր ոչ միայն իր անունն արտաւորող խայտառակ բիծը մաքրել, այլ և բարձրանալ փառքի այն գագաթնակէտին, որին նա ձգտում էր սոսկալի անկումից առաջ: Կատաղի ասիւծը, կամ ինչպէս իր կինն էր ասում, «հիւանդ գայլը» իր առանձնավայրում մոայլ մասրում՝ ների յորձանքի մէջ թաղուած՝ ահա թէ երբեմն ինչպէս գիտէր

յոխորդալ—բայց ապագայի անգոյն հեռանկարի մէջ օդային ամրոցներ էր միայն, որ նա կառուցանում էր:

Զօն Գաբրիէլին պէտք է բեմի վրայ տեսնել, նա մի տարիքաւոր մարդ է—վաթսունից անդ—սև սիւրտուկով, սպիտակ փողկապով, մտածկոտ, ճարպիկ և հնարագէտ տակտականի զլխով, որ շարունակ անց ու դարձ է անում սենսակում՝ ձեռները կրծքին ծալած կամ յետեւը գրած. իսկ նստած ժամանակ ձախ ձեռքը սեղանին յենած, իսկ միւսը՝ սիւրտիւկի երկու կոճակների մէջ ամիսոված *)—նա մտածում է, անվերջ խոների ամպիւրով է պաշարուած: Ի՞նչ է նրա մտածմունքի գըլ-խաւոր առարկան: Նա համոզուած է, որ անմոռնչ դանձերը դարձեալ իրան ևն սպասում, որ նորից ինքը պէտք է լինի սրկրի տակի միլիօնների ազատարարը:

Այդ դեռ բաւական չէ. նա կատարելապէս համոզուած է, որ բայցի իրանից ոչ ոք ընդունակ չէ բանի զեկավարութիւնը այնպէս օրինակելի և արդիւնաւէտ կերպով տանել՝ ինչպէս ինքն էր տանում: Այնպէս որ ամեն րոպէ սպասում էր, որ բանկից մի յատուկ պատգամաւորութիւն կը գայ անզուզական վերատեսչին նորից գործի գլուխ հրաւիրելու: Ով որ խփում էր դռան՝ նրան թւում էր թէ հէնց պատգամաւորներն են այնտեղ կանգնած. և նա մի կողմից խրոխս և ինքնավստահ շեշտով «մտէք» էր կանչում, իսկ միւս կողմից իր սիւրտուկը և փողկապն ուղղում՝ պատգամաւորութեանը վայելուչ կերպով հանդիպելու համար:

Առանձնութեան մէջ միակ անձնաւորութիւնը, միակ «բարեկամը», որ երբեմն այցելում էր Բօրկմանին՝ գա Վիլհէլմ Ֆոլդալն էր, մի գրագիր, մի հասարակ պաշտօնեայ. իսկ Ֆոլդալի մատաղահաս աղջիկը՝ Ֆրիդան նրան երբեմն երաժշտական բաւականութիւն էր պատճառում՝ զաշնամուրի նուագով: „Danse macabre“—մահերգ—ահա այն տիսուր խորհրդանշանը, որի մէջ անփոխուած էին Բօրկմանի երաժշտական յոյզերը և որի մելամաղծոտ հնչիւններն այնքան գրաւիչ էին դժբաղդ մենակեացի համար: Ֆոլդալի բաղդի անիւն էլ էր շեղուել, այնպէս որ երկու «բարեկամները» իրար շատ լաւ էին հասկանում: Բայց լոկ եսականութիւնը, փոխադարձ շողոքորթութիւններ լսելու հաճոյքն էր այս «բարեկամութեան» աստանը:

Ֆոլդալը երիտասարդ ժամանակ մի ողբերգութիւն էր գընել, որ ոչ գնահատուել և ոչ ներկայացման էր արժանացել:

*) Իբաէն գերասանների համար ցուցումներ սովորաբար միշտ ինքն է տալիս և երբեմն ամենամանրամասն կերպով:

Միակ անձնաւորութիւնը, որ այսպէս թէ այնպէս գնահատութեան մի նշոյլ էր ցոյց տուել—Բօրկմանն էր: Զէ որ վերջինս էլ ըստ արժանւոյն չէր գնահատուած: Ահա թէ նա ինչ է նըկատում իր բարեկամ Ֆոլդիխն—«Մեզ միակ ընտրեալներիս վրայ մի սոսկալի անէծք է ծանրանում. ամբոխը, ժողովուրդը, տոհասարակ միջնավայրը չէ հասկանում մեզ, Վիլհէլմա: Եւ երբ Բօրկման ինքն իրան համեմատում է առաջին արշաւանքում յազմուած Նապոլէօնի հետ—«Այդ գգացմունքը ինձ էլ է ծանօթ»—միամիտ ինքնավստահութեամբ վրայ է բերում Ֆոլդիլը: «Այս, բայց մանրանկարով ի հարկէ»—Նկատում է Բօրկման: «Եմ փոքրիկ ստեղծագործող աշխարհը ինձ համար մեծ նշանակութիւն ունի, Զօն Գաբրիէլ»—պատասխանում է Ֆոլդիլը՝ դառնացած, բայց ինքնազուսպ շեշտով:

Պարզ է, որ այս տեսակ զոյզի բարեկամութիւնը անկարող էր երկարատեւ լինել: Դա կարող էր շարունակուել միայն մինչև այն աստիճան՝ քանի որ նրանք փոխադարձ հաւատք, վստահութիւն էին տածում դէպի միմեանց. կամ աւելի ճիշտ՝ քանի որ նրանք ընդունակ էին փոխադարձ ինքնախարէութեամբ դրազուել: Երբ Բօրկման ինքնավստահ կերպով գալիք «պատգամաւորութեան» մասին է խօսում—կամ երբ ոգեսորուած իր ապադայ միսիայի մասին է ճառում ։ Նոր հորերի, նոր ջրէմների, բաժնետիրական ընկերութիւնների, մի խօսքով՝ տոհարական ամեն տեսակ խոշոր ձեռնարկութիւնների մասին—և Ֆոլդալը համարձակուում է իր կատածը յայտնիլ, որ այս բոլորը հոգիւ թէ շուտով տեղի ունենայ և որ առհասարակ Բօրկմանի ճակատագիրը դժուար թէ շուտով դէպի լաւը փոխուի—այն ժամանակ Բօրկման խորապէս վիրաւորուած, բայց և յինիկաբար նկատում է: «Մենք խղուր ենք միմեանց հետ ժամականութեամբ լինում: աւելի լաւ է, այլ ևս չը գաս ինձ մօտ... Դու այլ եւս ինձ հարկաւոր չես»:

Վերջին յարկից, նախկին վերատեսչի սենեակից այժմ անցնենք դէպի ներքին յարկը՝ տեսնենք այնտեղ ինչ է կատարւում: Էլլա Ծէնթհայմ՝ Բօրկմանի խստասրտութեան ամենամեծ զոհը, որ երկար տարիներով հեռացել էր իր եղբօր և քրոջ մօտից—այժմ եկել էր այցելութեան: Ընտանեկան ախուր ճգնաժամի միջոցին նա ոչ միայն նրանց փրկել էր կատարեալ չքաւորութեան մատնուելու դժբաղդութիւնից, այլ և իր եղբօր որդուն՝ փոքրիկ էրհարդին իր մօտն էր վերցրել՝ զաստիարակելու համար: Բայց մի քանի տարուց յետոյ էրհարդը նորից վերադարձել էր դէպի իր ընտանեկան յարկը: Էլլան վտանգաւոր և անբուժելի կերպով հիւանդ էր ու շատ կարծ ժամանակ

ունէր միայն ապրելու։ Նա մտադիր էր իր ամբողջ հարստութիւնը կտակել Երհարդին։ այս պատճառվ եկել էր նրան որ զեզրելու Բայց նախ քան Երհարդին անցնելը՝ նա մեծ զարմանքով է տեղեկանում։ թէ ինչպէս իր քոյրը ամեննեւին չէ տեսնւում Յօրկմանի հետ։ Գունհիլզը մինչև անգստ իրան արդարացնում է—«Ճեսնուել նրա հետ, գատապարտուածի, հինգ տարի բանալ նստածի հետ։ Սյս տեսակ ծնշող ամօթ։ Բաւական է յիշել թէ ինչ էր առաջ Զօն Փարրիէլ Յօրկմանի տնունը... ոչ, ոչ, ոչ... ես անկարող եմ նրան տեսնել, երբէք, երբէք, ոչ մի կերպ»։

Նա հաստատում է, որ իրանց կեանքը տմրող 8 տարի այդ ընթացքն է ունեցել որ ինքը ներքեւի մենակեացն է, իսկ Յօրկմանը՝ վերեւի—«Բայց այդպիսի յարակերութիւն ես երբէք չէլ կարող թողլ տալ—նկտում է Ելան—»իրողութիւնն այս է, որ երբէք չի կարող այլ եւս փոխուելը—պատասխանում է խստասիրա Գունհիլզը—«Բայց դա սարսափելի մի կեանք է, Գունհիլզը—»Աւելի քան սարսափելի, շուտով երեւի ես այլ եւս ոյժ չեմ ունենայ զիմանալու»։

Երբ Ելան կարելի ութեամբ նկատում է թէ՝ միթէ չի կարիվ ուրիշ կերպ վարուել—Գունհիլզը վեհանձնաբար պատասխանում է—«Նա (Յօրկման) երբէք այդ բանի համար ոչ մի քայլ չէ արելու—»Միթէ ինքդ չէր կարող աստղին քայլն անելու—զարմանքով շարունակում է Ելան—»Ե՞ս, այս բոլոր շարիքից յետոյ, որ նա հասցրեց իմ զլիխն Ո՛չ չնորհակալ եմ։ Թող գայլը վերեւում շարունակէ անվերջ կերպով մոնշալ—կոպիտ զարյոյթով, ահա թէ ինչ է պատասխանում Գունհիլզը։

Այսպիսի մաքերով զեկավարուող մի կին սակայն երեւակայում էր իրան մի կարեւոր միսիայի համար կոչուած։ Նա յոյս ունէր հին փառքի բնիդներից նոր ծիկը, նոր բողրոշներ պատրաստել, նա «մերականզնուելու» մասին էր մտածում։ Իսկ ինչ գրաւական ունէր նա այս վերականգնան գործի համար—իր միակ սրբին Երհարդը։ Սա էր մաքեւու այն արտաք, որ ծանրանում էր Յօրկմանի ընտանիքի վրայ։ Երհարդը մի ռասող պիտի զամար և իր փայլով պէտք է վանէր, փարատէր այն ստուերը, որ մութ տեսքով սպուտած էր իրանց ամրող ընտանիքի անդամների վրայ։ Բայց այս տեսակ լուրջ պարտականութեան համար նա մտածէլ էր կամ ընդունակ էր արդեօք սատիր որդան և համազատասխան զամափարակութիւն։ Իբրև մայր՝ նրա կատարած կրթական ամենախոշոր զնը կայանում էր նրանում, որ նու աշխատում էր ամեն կերպ ներչնչել իր որդուն տաելութեան և զգուանքի զգացմունք գէպի իր հայրը։

Մինչեւ մօր գաստիարակչական հայեացքներն այսպէս օտարուի էին, միւս կողմից հայրը միանդամայն անտարբեր էր և իր սրգու կրիսն տնդամ չէր տեսնում: «Հիւանդ գայլը» իր դատարկ սնափառութեան զոհ էր բերում նոյն խոկ հայրական ամենատարական պարտականութիւնը—«Եթէ մարդիկ ինձ հետ տեսնուել են ուզում՝ թող իրանք բարեհաճեն ինձ մօտ գուն ես ոչ որի չեմ հրաւիրի:

Թէ ինչ պէտք է լինէր այս տեսակ միմնոլորդի պառազը—սա մենք շուտով կը անմնենք:

Երհարդին ամենից լաւը կլան էր ձանաչում—ռՄիթէ կարծում ես, որ էրհարդի նման մի երիտասարդ, այն տարիքում, որի մէջ նա գտնուում է... առողջ, կենսուրախ... զոհ կը բերէ իրան ինչ որ «միսիայի» համար»: Մեծամիւտ և բարնավըստան մօրը համար քրոջ այս նկատողութիւնը շատ զիրաւորական էր, նա չէր կամնուում, որ իր հաւատքը դէպի էրհարդ շնորամիտ համարուի—«Դու մտադիր ես ուրեմն ցցուել մեր երկուսիս մէջ, մօր և որդու մէջ»—սպառնական շեշտով նկատում է Գունչիլզը:—«Ես կամնում եմ աղատել նրան քո իշխանութիւնից, քո լծից, քո բռնակալութիւնից»:—«Դա այլ եւս քեզ չի յաջողուի: Նա քո որոգայթն էր լոկել... մինչեւ 15 տարեկան հասակը: Բայց այնուհետեւ նա իմ տիրապետութեան տակն է»:—«Ես նորից կը խլեմ նրան քեզանից: Ես քեզ հետ միասին մի անգամ արգէն մահուան և կեանքի կուր եմ մղել մի մարդու համար»:

Ելլայի ակնարկած այս մարզը Զօն Փարրիէլ Բօրկմանն է, որի անոնով տեղի ունեցած մաքասումից Գունչիլզը դուրս եկաւ իրիւ յաղթող Բայց և այնպէս անկասկած է, որ կլան աւելի էր սիրում Բօրկմանին, միւս կողմից՝ եթէ վերջինս առհասարակ լնդունակ էր որևէ է քննոյց զզացմունք տածելու դէպի մէկը-գա միմիւան կլան էր: Այն ինչ Գունչիլզը վասասիրական կրկնակի զզացմունքից գրգուած ձգաել էր դասնալ Բօրկմանի կինը—մի կողմից իր քրոջը յաղթելու, խոկ միւս կողմից «Զօն Փարրիէլի» կինը համարուելու համար:

Բայց ամենակծու հեգնութիւնը, ամենասիրստ ապտակը էրհարդ ինքն է, հասցնում իր մօրը Մինչդեռ վերջինս հպարտ սձով խրախուսում է նրան—«Հաւարիք ոյժերդ, էրհարդ, ամբացիր որդիս, մի մոռանար քո մեծ միսիան»—ահա թէ ինչ է պատասխանում էրհարդը—«Ա՛խ, մայրիկ... թող այդ գատարի խօռերը, ես ոչ մի միսիայի համար պիտանի չեմ: Այնուհետեւ իր մօրը և մօրաքրոջը բարի դիշեր ասելով՝ շտապով հեռանում է: Վերիւից մասնաւութիւնը—մեռելների պարի—յաւիտենա-

կան հնչիւնները ծակում էին քսաներկամեայ երիտասարդ ուսանողի ականջը։ Բայց նա հեռուից երեւակայութեամբ, երաժշտական աւելի ախորժելի ձայներ էր լսում, Անփորձ երիտասարդն ընկել էր մի կասկածելի, կոկչտ և միանգամայն բայրությունը այրի տիկնոջ՝ ֆանի վկիլտօնի ձեռքը, որին նա այդ նոյն երեկոյ հանդիպելու էր—երեւակայցէք, ում մօտ՝ փաստաբան Զինկէլի, որ իրանց ընտանեկան ողբալի զժրաղղութեան միակ պատճառն էր։ Սա արդէն Գունհիլզի դէմն ուղղուած հեղնութեան ապօթէօզն է։ Ահա թէ ինչպէս է պատճւում մայրական յանցանը։ Բայց սա դեռ վերջին պատիքը չէր։ Հետեւեալ օրը նա ուղղակի յայտնում է իր մօրը, որ այսուհետեւ «ինքն է իր կամքի տէրը», որ նա ալլ եւս անկարող է տանկ նրա լուծը, որ նա այլ եւս չի կարող դիմանալ իրանց տան «փեղդող մըթնողրախն», որ ինքը վերջապէս «երիտասարդ է և կամնում է ապրել իսկական կեանքով»։ Այս «փսկական կեանքի» աղբիւրը տիկին վկիլտօնն էր, որ նրան տանում էր գէպի Խտայիա։ Այս փորձուած և անզգամ կինը ահա թէ ինչ է նկատում Գունհիլզին—ւտղամարդիկ այնպէս փոփոխական են, տիկին Բօրկման, ինչպէս և մենք՝ կանայք։ Երբ որ էրհարզը իր հաշիւները կը վերջացնէ ինձ հետ... և ես նրա հետո... այն ժամանակ երկուսիս համար էլ վատ չի լինի, սթէ մէկը մեզ հետ գտնուի իբրև պաշար»։ Իսկ այս «պաշարը» գժրաղղ Ֆօլդալի աղջիկն էր, Ֆրիդան, որ դեռ 15 տարեկան էր միայն։

Բարեսիրտ Էլլան ամեն կերպ աշխատում է պահել էրհարդին, բայց իզուր, նա անդրդուելի էր իր վճռի մէջ, իսկ Գունհիլզը հիասթափութեան տագնապի մէջ՝ սկզբում չոր և խիստ կերպով նկատում է—«Ես ոչ ոքի չեմ պահի։ Թող ամենքն էլ հեռանան ինձանից—թէ մէկը և թէ միւսը—ուր կամենում են թող զնան՝ թէկուզ աշխարհի միւս ծայրը»—բայց անմիջապէս յետոյ դառն հեկեկանքով աղաղակում—«Էրհարդ, մի զնան Գունհիլզը մայր էր միմիայն այս վերջին խօսքերն արտասանելիս։ բայց արդէն ուշ էր։

Տիկին Վկիլտօնի փառանեղ սահնակը արծաթէ զանգակները հնչեցնելով՝ մութ զիշերին երկու որսերին հետ միասին արագընթաց սահում էր ձեան շերտերի վրայով։ Եւ բաղդի ինչպիսի հեղնութիւն—այդ նոյն սահնակը գետին է զլորում ծերունի Ֆօլդալին, որ չը նայելով Բօրկմանի տգեղ վարժունքին՝ եկել էր նրան յայտնելու իր ուրախութիւնը։ Միամիտ ծերունու կարծիքով իր աղջկայ՝ Ֆրիդայի ճանապարհորդութիւնը տիկին Վկիլտօնի հետ մի մեծ բարերազդութիւն էր։

Միայն էրհարդին որդեգրելու ցանկութիւնը չէր, որ էլ-

լային մղել էր դէպի Բօրկմանի տունը։ Նա այս վերջինի հետ շատ կարենոր հաշիւներ ունէր մաքրելու։

Բօրկման վաղուց չէր տեսել կլայխն, որի թուխ գիսակ-ները նա երբեմն չոյսում էր առանձին խաղաքանքով։ իսկ այժմ նրա առաջ կանգնած էր տարիքաւար մի կին՝ սպիտակ մաղե-րով, տանջուած, բայց գեղեցկութեան հետքերը դեռ չը կորց-րած դէմքով։ Գերեզմանի չէմքից ոչ հեռու՝ նա մի մարմնացած բողոք էր Բօրկմանի խստասիրտ և տմարդի վարմունքի դէմ։ — “Դու ամեն ինչ զոհնեցիր” — ասում է նա Բօրկմանին — ինչ որ թանկագին էր քեզ համար — և քո ապագան... և քո կեանքը”, Բայց Բօրկմանի համար „կեանքը միշտ ամենաթանկաղին բանը չէ աշխարհում”։ Բօրկմանին թէ՛ այժմ թուլմ էր թէ իր հա-մար ամենաթանկաղինը եղել է կլան — այնուամենայնիւ իրա-կան տխուր փաստերն անհաշտ էին այս կարծիքի հետ։ „ամե-նաթանկաղին” կեանքը նոյնպէս վիշտուած և խորտակուած էր՝ ինչպէս իր սեփական կեանքը։ Բօրկման մի մեծ ոճիր էր գոր-ծել այն կող դէմ, որ պատրաստ էր իր հետ կրել „ամեն ինչ— և ամօթը և՝ սնանկութիւնը”։

Երկար բացակայութիւնից յետոյ՝ այժմ ոճրագործի առաջ կանգնած՝ արդար զայրոյթի չանթեր են, որ դուրս են ցայ-տում կլայի բերանից — „Դու մարդասպան ես. դու զործեցիր ամենամեծ մահացու մնեղը. դու սպանեցիր իմ մէջ կենդանի հողին, որ ընդունակ էր սիրելու Հասկանում ես թէ դա ինչ է նշանակում։ Ա. Գրքի մէջ խօսւում է մի խորհրդաւոր մնեղի մասին, որի վերաբերմամբ դոյութիւն չունի և ոչ մի ներում։ Առաջ ես ամենին գաղափար չունել թէ դա ինչ տեսակ մնեղ է. այժմ եմ միայն հասկանում։ Ամենամեծ, ամեներելի մնեղը — դա մարդկացին կենդանի հոգու սպանութիւնն է... Դու պա-տասխանատու ևս կրկնակի սպանութեան համար — թէ քո և թէ իմ հոգու”։

Բօրկմանը կլայի սրտի այս աղիսոզորմ փղձկոցը դանում է շատ „բնական” և հասկանալի, որովհետեւ նա մի կին է, որի համար ուրիշ ոչինչ գոյութիւն չունի բրայի սրտի հաշիւներից”։ Բայց նա ուզում էր, որ կլան էլ իրան հասկանայ և չը մտածէ թէ ինքը „Շահի համար ծախել է իր ամենաթանկաղին սեփա-կանութիւնը աշխարհում”։ Բօրկմանի այս ցանկութեանը և նրան անմիջապէս հետեւող պատճառաբանութիւնների մէջ ար-տայայտում է գժրազգ հերոսի բնաւորութեան ամենահետա-քրքիր կողմը, որ և իր անկեղծ ու անարուեստ շեշտով կարծես մասամբ մեղմացնում է նրա չոր, անողուած խստասրտութիւնը — „Ա՛յս, կլա, անցեալի հետ կապուած գործողութիւնների շար-

ժամանելու յիշել այնքան հեշտ չէ: Ազօտ կերպով այսքանն եմ միայն պատկերացնում, որ լուելուայն պատրաստելով իմ հակայական ձեռնարկութիւնները՝ և ինձ համարում էի կարծես մի օդագնաց, որ գիշերներն անքուն մնալով՝ լցնում է իր ահագին գունդը և պատրաստում ընկղմուել անցայտ և բազմաթիւ գտանգներով լի օդային ովկիանոսը... Ես կամենում էի իմ ձեռքն ամփոփել մոր երկրի իշխանութեան բոլոր ազբիւրները. բոլոր հարստութիւնները, որոնցով վիստում են երկիրը և ժայռերը, ծովը և անտառները—ուզում էի ինձ հպատակեցնել, որպէս զի յետոյ գրանցով բազմաւրացնէի հաղարաւոր մարդկանց⁴:

Այս իւսուքից յետոյ կլլան թէն դարձեալ անյազգողդ է— Բօրկանին գարձեալ համարում է „ոճրագործ, կենդանի և ուրախ զգացմունքներ սպանող“—այնուամենացնիւ նա տողբնդմէջ ցոյց է տալիս նաև կարելցութեան ջերմ զգացմունք դէպի Բօրկման Որբան տարրերում է ոյս տեսակէտից Գունհիլդը, որի ասած Բօրկման նօյնպէս բաց է անում իր սիրած—„իմ յանցանը յայտնի է ամբողջ աշխարհին, բայց աշխարհը անտեղեակ է թէ ինչու ևս այդպէս վարուեցի, թէ ինչու ևս այդ յանցանը պիտի է զործէի: Մարդիկ անդնդուակ են ըմբռնելու, որ ես ուրիշ կերպ չէի կարող վարուել, որովհետեւ ես էի այն, ինչ որ եմ—Զօն Գարբիէլ Բօրկման... Ես ունեի իշխանութիւն իմ ձեռքի տակ, միւս կողմից այն ներքին, անյաղթելի մղումը... միլիօններ կուտակուած էին երկրի տակ, ժայռերի խորերում և ինձ էին կանչում, աղաջում էին աղատուելու համար, և ոչ ոք, բայց ինձանից, չէր լսում նրանց⁵: Եւ երբ նա դեռ սմթափաւելու, նոր կեանքի արշալցասի մասին էր մտածում — քարասիրտ կինը իսկայն վրայ է թերում— „Այլ ևս մի նրազիք կեանքի մասին: Աւելի լաւ է հանդիսա կերպով մնաս դերեգմանումդ, ուր որ արդէն ընկած ես“— „Գունհիլդ, Գունհիլդ, ինչպէս կարող ես“...—յուզուած կերպով ընդմիջում է կլլան:

Գունհիլդը իր ամուսնուն „մեռած“ համարելով արդէն յուշարձանի⁶ պատրաստութիւնն էր տեսնում—մի յուշարձան որ ոչ քարից էր իննելու և ոչ մեռազից, այլ ոկենդանի ծիլերից⁷: Այս ոկենդանի յուշարձանը⁸ սակայն գնաց իտալական երկնքի տակ թատամելու:

Ութ տարուայ առանձնութիւնից և վակուած կեանքից յետոյ՝ ծիշտ այն գիշերը, երբ իր որդին ձանապարհ է ընկնում դէպի հարաւ—Բօրկման, առանց ուշադրութիւն զարձնելու ցուրտ եղանակի վրայ, դուրս է զալիս դէպի իր սիրած բնութեան դիրկը, որ մի տարօրինակ զուգացիութեամբ ձեան և

սառոցցի շերտերով է ծածկուած՝ ինչպէս իր սիրտը։ Նրան ուղղեցում է հաւատարիմ էլլան։ Դժբազդ մննակեացի բոպէները սակայն արգէն հաշուած են։ Նա դուրս է եկել այլ ևս յաւիտեան իր առանձնասահնեակի երեսը չը տեսնելու համար։ Ժայռի գլխին կանգնած ցնորամիտ երկայնութեամբ նա այսպէս է զառանցում—”Տեսնում ես հեռու, ֆիօրդերի վրայ մեծ շոգենաւերի ծուխը Յս տեսնում եմ։ Նրանք գնում և գալիս են աշխարհի զանազան ազգերը միմեանց հետ կապում։ Դրանք լոյս և առաջութիւն են տարածում հաղարաւոր մարդկային սրբաւերում։ Իմ նպատակն էր ահա այդ բանն սաւեղծել, որ և մնայ երազ... Խոկ այստեղ, ներքելը գետի տիփին, լսում ես գործարաների ազմուկը, զլրդոցը։ Դրանք իմ զործարաններն են—այն բոլորը, ինչ որ ևս սաւեղծել էի ուզում։ Խօիր, ինչպիսի կենդանութեան մէջ են։ Գիշերային աշխատանքի ժամանակն է—այնտեղ գիշեր և ցիրեկ աշխատաւում են։ Խօիր, լսիր անիւների պատյառը, զլանների վայլը... Բայց այդ բոլորը զեռ իմ կառավարութեան արուարձաններն են... Ի հարկէ իմ կառավարութեանն, այն կառավարութեանը, որին ևս համարեա թէ տիրապետեալու վրայ էի, երբ ևս մեռայ... Ես ահա այդ բոլորն ընկած է անտէր և անօդնական, աւազակների յարձակումներին և կողոպուաններին ենթարկուած։ Էլլա, տեսնում ես հեռուում այն լեռնաշղթաները, որոնք մէկը միւսի յետեից բարձրանում են աշտարակածեւ—ահա իմ անվերջ, խոր և տնսպասելի թագաւորութիւնը... Ես տեսնում եմ կուտակիուած միլիօնները, զգում եմ հանքային երակները, որոնք զանազան ճիշգաւորութիւններով և հանգոյցներով ձեռները դէպի ինձ են մեկնում։ Ես տեսայ այդ բոլորը իրեն կենդանի սառւերներ՝ այս գիշերը... Երբ լսադերը ձեռքիս բանկի ներքնասնեակումն էի (Բօրկմանը սրանով իր կատարած բանկի կողոպուան է յիշում)։ Նրանք ազատութիւն էին խնդրում. և ես փորձեցի նրանց ազատել բայց չը կարողացայ, գանձը նորից անդունդն ընկդմուեց։ (Զեռները բագկատարած) բայց այս գիշերային լուսիթեան մէջ ես կամենում եմ մրմնիցաւ ձեզ—սիրում եմ ձեզ, ով անդունդների և խուարի մէջ թազուած կենդանի գանձեր։ սիրում եմ ձեզ կեանքի ծարաւով տապակեւող նիւթեր, սիրում եմ ձեզ ձեր բոլոր շքեղութեամբ, ձեր փայլով և իշխանութեամբ։ Սիրում, սիրում, սիրում եմ ձեզ։

— „Այս, այնտեղ՝ երկրի տակն էր միշտ քս սէրը, ուր և մնաց, Զօն, խոկ այստեղ՝ երկրի վրայ մի ջերմ, կենդանի մարդկային սիրու էր բարախում քեզ համար և զու փշրեցիր...“

Այդ տեսակ սպանութեամբ զու երբէք չես հասնի քո նը-

պատակին. ամեննեւին յաղթական կերպով մուտք չեն դործի քո ցրտաշունչ և մույլ թագաւորութեան մէջ՝ պատասխանում է էլլան:

Բայց Բօրկմանի շունչն արգէն մարելու վրայ էր՝ կաթուածի նշանները կամաց-կամաց երեւում էին. — «Կարծես մէկը սառոյցի ձեռներով ճշնեց իմ կուրծքը... ոչո՞ երկաթէ, և ոչ թէ սառոյցի ձեռներով» — այս խօսքերից յետոյ նա անշնչացած վայր է ընկնում:

Գումարիլզը աղախնի հետ վրայ համնելով՝ նկատում է.

— „Նա հանքահանսի որդի էր... բանկի վերատեսուչ, այդ պատճառով չը կարողացաւ դիմանալ այս թարմ օդին»:

— „Աւելի շուա նրան ցուրտն սպանեց” — աւելացնում է էլլան:

— „Ցուրտը, ցուրտը նրան վաղուց էր սպանել»:

էլլան հաստատում է իր քրոջ այս խօսքերը աւելացնելով:

— „Եւ ինձ քեզ հետ ստուերի վերածել»:

— „Իրաւունք ունես»:

— „Մեռեալը և երկու ստուերներ — ահա թէ ինչ արաւ սառնութիւնը»:

— „Հոգեհան սառնութիւնը Եւ կարծեմ այժմ կարող ենք ձեռք մեկնել միմեանց, էլլա»:

— „Կարծեմ այժմ կարող ենք»:

Այսպիսով երկու քոյրերը իրանց „սիրածի” դիակի վրայ են միայն հաշտուում: Բայց այլ ես ինչու համար՝ քանի որ նըրանք երկու „ստուերներ” էին միայն — որովհետեւ երկու կանանց մէջ այլ ես ոչ մի կոուածաղիկ չը կար — Բօրկմանը դիակ էր դարձել, իսկ էրծարդը բարյոյապէս մեռել:

Բօրկմանի վերջին խօստովանութիւնները և ողբերդական վախճանը արդէն ցոյց են տալիս, որ նա լոկ իր փառքի և եսի համար չէր ձգտում դէպի առաջ: Թող պարագօքս չը թուի, եթէ նկատենք, որ նա էլ իր տեսակում նոյնպէս մի իդէալիստ էր և մինչեւ իսկ մի մոլեսնդ իդէալիստ: Նա սկզբից մինչեւ վերջ մի երեւակայող, ցնորամիտ երազող է, որ անողոք կեանքի բոլոր անակնկալ հարուածների առաջ մնում է միանգամայն անգրդուելի: Իրականութեան ամենաճնշող բոունցիքն անգամ անկարող եղաւ ցրուել նրա երազը — և նա մինչեւ իր վերջին շունչը երազում էր: Բայց ինչ էր նրա երազը, կամ ուրիշ խօսքով, ինչումն էր կարանում նրա իդէալիզմը — իր „զիւտերով” և կարողութեամբ բախտաւորացնել ամբողջ մարդկութիւնը: Նա այնքան ինքնալիստահ էր և իր ուժերով յափշտակուած, որ ի-

րան մի բայցառիկ և լնտրեալ մարդ համարելով՝ կատարելապէս համոզուած էր, որ միայն ինքն է կոչուած այդ մեծ միսիայի համար—միայն ինքը՝ Զօն Գաբրիէլ։ Նա էր միայն լսում երկրի տակ կուտակուած միլիօնների զնզգնգոցը։ Հանքային բաղմաթիւ որակներ պաշտամանքի մրմունջներով միայն նրան էին մեկնում իրանց բազկատարած ձևոները։ Որ ինքն էր միայն բնտրուած սրանց պաշտամանքը լսելու, այս անկենդան երակներին կեանք պարզեւելու, սա, ի միջի այլոց, որոշակի երեւում է հետեւեալ խօսքերից։—„Ես կը կամննայի իմանալ՝ եթէ ուրիշներ լինէին իմ տեղը՝ նոյն իշխանութիւնը ձևոներին՝ արգեւք ճիշտ այնպէս չէին վարուի, ինչպէս ես... Ոչ, և միմիայն նրա համար, որովհետեւ նրանց պակասում էր այն ոյժը, որով միայն ես ինքս եմ օժտուած։ Եթէ անզամ նրանք նոյնն անէին, ինչ որ ես՝ յամենայն դէպս ուրիշ դրդումներով կը զեկավարուէին, քան թէ ես և այն ժամանակ գործը ինքն էլ ուրիշ կերպարանք կը ստանար”։

„Ուրիշ դրդումներ“ խօսքը արդէն ցոյց է տալիս, որ Բօրկման իրան ազատ է համարում եսական հակումներից և նուիրուած միմիայն իր իգէալին։ Այն ինչ, եթէ ուրիշները նոյն յաջողութիւնը ունենային՝ դա կը դառնար միայն փառասիրութեան և ոչ թէ իգէալիզմի հետեւանք։ Այս ջերմ, անսպատ հաւատքն է դէպի իր իգէալը, որ նրան դարձնում է և իր սեփական դատաւորը—մի դատաւոր, որ անշուշտ պէտք է արդարացնէր ինքն իրան—“Յանտարկութեան տարիներում և այստեղ դահիճում” առանձնութեան մէջ ես կրկին և կրկին քննում էի իմ գործը—ինքս անձամբ... Ես էի ինձ և դատապարտող և պաշտպանող, ես էի իմ դատաւորը—և համարձակում եմ ասել՝ աւելի անաչառ քան թէ ուրիշ որ և է մէկը... Քննում էի այնպէս անինայ, այնպէս անողորմ կերպով՝ ինչպէս մի փաստաբան... Եւ ահա իմ խորհրդակցութիւնների մշտական հետեւանքը—եթէ ես մեղաւոր եմ՝ այն ժամանակ մեղաւոր եմ միմիայն իմ առաջ”։

Ինքն իրան արդարացնելով հանդերձ՝ „անաչառ դատաւորը“ այնուամենայնիւ մի բանում խիստ կերպով դատապարտում է իրան—դա մի անինայ, ոչնչացնող ինքնադատապարտութիւն է։—„Ես այս ամրող 8 տարին իզուր անցկացրի—բանտարկութիւնից աղաւուելուց անմիջապէս յետոյ ես պէտք է նուիրուէի իսկական կեանքին, անդրդուելի և ամեն տեսակ ցնորքից ազատ իրականութեանը... Ես պէտք է ամեն ինչ նորից սկսէի՝ նախկին բարձրութեանը համելու—նոյն իսկ աւելի

բարձր կանգնելու քան թէ առաջ հակառակ այն բոլորին, ինչ
որ աեղի էր ունեցել”:

Այս իրականութեան մզումն է, որ նրան կէս դիշերին
գուրս է բերում իր առանձնասենեակից: Բայց իր ամենավառ
երազից յետոյ երբ նա մի քանի ակնթարթ սիմափում է՝ այդ
նոյն իրականութեան բազուկը—“սառոյցի” և „երկաթի” իմաս-
տալից խորհրդանշով—ճմլում է նրա կուրծքը...

Մենք տեսնում ենք՝ թէ ինչպէս իրսէն մի հին, վաղուց
արծարծած թեմայի տալիս է Նոր արտայայտութիւն—գա ի-
գեալիդմի և կեանքի մէջ եղած յարարերութիւնն է: Այն իդէա-
լիզմը, որի ծիլերը կեանէի հողի վրայ չեն ընկնում, մնում է
անպատճ, այն իդէալիզմը, որ իրական հորիզոնից գուրս է
կազմուկերութում—սմազերի թաղաւորութեան մէջ—գառնում է
մի ցնորք. մի իլուզիօն: Իրան իր բազմատեսակ հերոսներով
հաստատել է այս ձմբարտութիւնը...

Միւս կողմից անկանակած է, որ իրսէն չօշափում է հոգե-
բանական մի վնարին աստիճանի հնտաբրքիր և բարդ խնդիր—
իդէալիզմի էութիւնը, նրա ներքին վերլուծումը և որ զիմա-
ւորն է՝ իդէալի և իդէալիստի մէջ եղած յարաբերութիւնը:
Բացարձակ իդէալիզմը և անհատական կեանքը նա ուղղակի
գէմուդէմ է գնում. և կարծես մէկը հերքում, բացատում է
միւսը: Զօյ որ Բօրկման ինքնն է խոսապահում թէ „կեանքը
միշտ ամենաթանկարգինը չէ”: Նրա համար ամենաթանկարգինը
իր իդէալն էր, որին նա զոհ բերեց իր կեանքը. և ոչ միայն իր
սեփական կեանքը, այլ և շատերի՝ չը խնայելով նոյն-իսկ իր
որդի սիրածին.

Խիստ, բացարձակ մաքով իդէալիզմը կարծես մի տեսակ
ոչնչացում, ինքնարայքայտում է: Եւ հետաքրքիրն այս է, որ Իր-
սէն իդէալիզմի այս քայլայող էութեանը ընդհանրապէս մի տե-
սակ քարացնող սառնութեան արտայայտութիւնն է տալիս—ել-
լան նկատում և Գունհիլզը հաստատում է, որ Բօրկմանի մա-
հուան պատճառը „սառնութիւնն” էր: Բրանդն էլ մարդկու-
թիւնը դէսլի իր աստուածային իդէալն առաջնորդելիս՝ միթէ
նոյն զօրութեան և սառնութեան ներկայացուցիչը չէր, միթէ
նա էլ չը զոհեց թէ իրան և թէ իր ընտանիքի բոլոր անդամ-
ներին: Նոյն սառնութեան զոհերին մենք խսկոյն կը հանդիսենք
նաեւ իրսէնի վերջին զրամայումն:

Սակայն հոգերանական այս նորբ վերլուծումով իրսէն
միթէ համարանում է իրեւ իդէալիզմի հակառակորդ: Այսպէս
մտածել կը նշանակէ իրսէնի ողին միանգամայն խեղաթիւրել:
Չը պէտք է մտանալ, որ նա բացարձակ, կամ ուրիշ խօսքով՝

անառողջ, ցնորտմիտ իդէալիզմ է, որ ներկայացնում է սառ-
նութեան գրօշմակի եթէ այս տեսակ իդէալիզմը պահանջում է
առաջայնան զոհարերութիւն՝ պարզ է, որ առողջ իդէալիզմը
յամենայն գէպս, զարձեալ անմտածելի է առանց զոհարերու-
թեան Սակայն տարբերութիւնը կալանում է նրանում, որ այս
գէպրում զոհարերութիւնն ունի իր սահմանը և որ զվիաւորն
է՝ որակը Զոհարերութիւնն այն ժամանակ է զառնում զնա-
հատելի՝ երբ այս սրակը անուես չէ անում և այդպիսով իր
գրական հիմքը—իդէալիզմի մաքրութիւնը, փսհմութիւնը—բա-
յառականի չէ վերածում:

Ուրեմն, ընդունելով համդերձ, որ ամեն մի իդէալիզմ կա-
պուած է զոհի գողափարի հետ՝ միւս կողմէց ցոյց տալով, որ
զոհարերութիւնն ունի և իր հիմնազարդ ու բացաւական տեսակ-
ները—իրակն միթէ մտադիր է առհասարակ զոհի գողափարը,
կամ ուրիշ խօսքով իդէալիզմը և tout prix հերքել—ամենեւին—
կը պատասխանենք մենք:

XVIII

1899-ին լոյս ահասաւ իրսէնի վերջին դրաման—„Երբ մենք
մեռածներս սրախուենք“;—Դրամայի ճակատին հեղինակը զրել
է „զրամատիկական վերջարան“, որ երկու կերպ կարելի է
հասկանալ—կամ մի շարք դրամաների վերջարան և կամ առ-
հասարակ իրսէնի դրամատիկական զրուածների վերջարանը։
Սակայն ամենահաւառականը վերջինն է, որովհետեւ ծերու-
թեամ պատճառով—1898-ի մարտի 20-ին տօնուեց հանճարեղ
դրամատորդի ճնշեկան 70-տամեայ յօրեկեանը, որ մի ընդհա-
նուր փառանել տօն էր Սահմանդինաւեան թերակզզու բոլոր ազ-
գերի և առհասարակ ամբողջ քաղաքակիրթ աշխարհի համար—
երեւի պատկառելի հեղինակը այլ եւս գաղտրել է զրելուց։

Իրսնւ „զրամատիկական վերջարան“ իրսէնի այս ստեղ-
ծագործութիւնն անշուշտ աւելի մեծ հետաքրքրութիւն պիտի
շարժէր՝ քան թէ նրա որեւ է նախկին դրաման։ Մանաւանդ
որ ընթերցողը կամ հանդիսականը մի ներքին մղումով կամեն-
նում էր տեսնել այս վերջին դրամայի մէջ իրսէնի հանճարի
ամենափայլուն արտազրութիւնը և նրա աշխարհահայեցքի, ի-
մուստութեան և խորհրդառութիւնների գումարը։

Եօթանամամինայ ծերունին ինչքան էլ հանճարեղ լինէր,
այնու ամենայնիւ այս տարիքում անկարող էր, ի հարկէ, տալ մի
արտասովոր, բոլոր նախկինները գերազանցող ստեղծագործու-
թիւն։ Մենք կը տեսնենք, որ նա իր այս վերջին դրամայում

համարեա նոյն գլխաւոր պրօբլեմներն է շօշափում, որոնք արծարծուած էին նրա նախավերջին և նախկին ուրիշ շատ դրամաներում—անհատականութեան, իսկական ամուսնութեան, իդէալի և կեռնքի յարաբերութեան խնդիրները։ Ամենահետաքըրքիրն այն է, որ այս անգամ իրսէնը այս կարեւոր լինդիրները կապում է մի այնպիսի հերոսի հետ, որի ներքին աշխարհի նկարագիրը գուցչ որոշ չափով հէնց իր սեփական հոգու արտացոլումն է—զա մի արուեստագէտ է, մի նշանաւոր քանդակագործ։ Այնպէս որ կեանքի և իդէալի մէջ նղոծ յարաբերութեան փափուկ խնդիրը այս հերոսի վերաբերմամբ երեւան է գալիս իբրև կեանքի և գեղարուեստական իդէալիզմի յարաբերութեան խնդիր։

Ո՞ր իսկական արուեստագէտը միայն ապրելու, կեանքի հաճոյքը մինչեւ յատակը վայելելու մէջն է տեսել իր կոչումը, իր նպատակը։ Կան, ի հարկէ, զազի-արուեստագէտներ, որոնք զուրկ լինելով իրանց կոչմանը համապատասխանող իսկական չնորհքից՝ իրանց արտիստ լինելը ամեն կերպ աշխատում են հոնվանտական ամենաբանալ հակումների, անբարոյականութեան ազմի մէջ միայն որոնելու եւ պէտք է նկատել, որ հասարակաց կարծիքն էլ այս տեսակի „ականաւոր“, օրինակներ ի նկատի ունենալով՝ շատ անգամ մոլորուել է և մոլորում է՝ ենթադրելով, որ այդպէս էլ պէտք է լինի, որ արուեստագէտ ասածը ուրիշ կերպ անմատծելի է, Յիրաւի՞ արուեստագէտ զազափարը—լինի խօսքը բանաստեղծի, նկարչի, երաժիշտի թէ գերասանի մասին, զա միեւնոյնն է—մողովովի մեծագոյն մասը համարեա ամեն տեղ կապում է շարունակ ապականուած բարքի և անբարոյականութեան հետ։

Այն արուեստագէտը, որ ընդունակ է եթէ ոչ լիովին, գունէ աւելի ուժեղ կերպով իր արուեստով և ոչ թէ կեանքի անցողական հաճոյքներով յափշտակուել՝ նա է իսկական արուեստագէտը։ Ամեն մի բանական արարած՝ փողոցային շրջմոլիկից սկսած մինչեւ բարձրագոյն կրթութեան տէր ինտէլիգենտը՝ կեանքի մէջ ունի մի կենդրոնական նպատակ, մի յոյզ, մի կիրք։ Մէկի համար՝ գողութիւն, աւագակութիւնն է կիրքը, միւսի համար՝ անբարոյականութիւնը, երրորդի համար՝ թղթախաղը, չորրորդի համար՝ մտաւոր զբազմունքը, նապօչնի համար՝ աշխարհ տիրապետելը, Բրանդի համար իր աստուածային իդէալը, Քօրկմանի համար՝ երկրի տակից գանձեր հանելու ձգտումը և այլն։ Ահա իսկական արուեստագէտի կիրքն էլ իր սեփական արուեստն է. զա ոչ միայն նրա նիւթական, այլ ա-

ուաւելապէս հոգեկան կեանքի աղբիւրն է *): Quasi-արուեստագէտը մէջ և աղած այս անունով է արուեստագէտ, որովհետեւ արուեստը նրա համար կիրք չէ, նրա յափշտակութեան և ոգեւորութիւնների կենդրունակէտը չէ:

Որոշելով իսկական և quasi-արուեստագէտի մէջ և զած այս բնորոշ տարրերութիւնը՝ այժմ դառնանք դէսի ինդրի միւս կողմը, որի շուրջն էլ իսկապէս պատում է իրսէնի զրամայի գլխաւոր հանգոյցը — չը նայելով, որ բուն արուեստագէտի համար ամենաուժեղ կիրքը իր, այսպէս ասած, գեղարուեստական կիրքն է՝ այնուամենայնիւ միթէ այս կիրքը միաժամանակ պէտք է լինի և նրա միակ կիրքը. միթէ նա բացառապէս իր արուեստով պէտք է ապրի՞ կեանքը, սէրը, ընտանեկան պարտականութիւնները և այլն որէաք է արհամարնէ:

Ահա այս հարցի պատասխանն է, որ մենք գտնում ենք, իրսէնի վերջին զրամայումն թէ այսպիսի հարցին նա ինչ աեսակ պատասխան կարող էր տալ՝ սահատ պարզ է. զա նոյն պատասխանն է, որը մենք գտանք «Բրանդում» և որին հանդիպեցինք նաև Ձօն Գաբրիէլ Խօրկմանում:

Պրօֆէսօր Աբնօրդ Ռուբէկը մի նշանաւոր քանդակործ է. նրա փառքը և հոչակը աւելի է մեծանում մի ստեղծագործութեամբ, որ նա խորհրդաւոր կերպով անուանում է «Յարութեան օրը»: Բայց կարելի է ասել, որ նա իր այս հոչակը մասամբ պարտական էր մի ինոնջ, մի հրաշագեղ կոյսի, որ պատրաստակամ կերպով իր ամբողջ մերկութեամբ նրան իբրեւ մօդէլ էր ծառայել: Իրենէն ոչ այնքան գեղարուեստասէր հակումներից՝ որքան գէսի Ռուբէկն ունեցած վառվուն, բայց ծածուկ սիրուց դրդուած՝ յանձն էր առել իր մարմինն ի ցոյց դնել նրա առաջ:

Ռուբէկը արուեստագէտ է բառի բուն նշանակութեամբ. նա ամբողջովին իր ստեղծագործութեան իդէալով յափշտակուած՝ իրենէի վրայ նայում է լոկ իբրեւ մօդէլի և այս պատճառով ամենեւին չէ չօշափում նրան: Ուրիշ կերպ իրենէն ինչպէս կարող էր գառնալ նրա համար ամենաաղնիւ, ամենամաքուր և ամենաիդէալուկան կնոջն նախապատկերը: իսկ իրենէն՝ երիտասարդ, գեղեցիկ, թարմ՝ իր զգացմունքների բոլոր չերութեամբ սիրում է Ռուբէկի մէջ մարդուն, աւելի ճշշտ՝ տղամարդուն և ոչ թէ արուեստագէտին. իր սրաի խորերում նա

*.) Սա չէ նշանակում, ի հարկէ, թէ իսկական արուեստագէտները առհաստարակ հեռու են ուրիշ տեսակ հաճոյքներ որոնելու ձգտումից:

գուցէ նոյն-իսկ ատում, արհամարհում էր Ռուբէկի առուեստը։ Իրենէն կատաղում, զայրոյթից պատառ-պատառ է լինում, բայց ի զուր, Ռուբէկի մաքով անդամ չէ անցնում գծրազդ կնոջ ներքին, հոգեկան փոթորիկը։ Հասնելով իր նպատակին՝ ստեղծելով մի հրաշակերտ, որ իր փառքի և անմահութեան կոթողն էր զառնալու։ Նա չորհակալութեամբ, բայց միանգամայն անտարբեր կերպով արձակուր է իրենէին՝ նրա հետ հանգիպելը և այս հանգիպման խոշոր հետեւանքը համարելով լոկ ոմի բազգաւոր միջադէս։

Իրենէն գառնութեան և արգար զայրոյթի լեզին կրծքի տակն ամբարած՝ բաժանուում է Ռուբէկից, որին նա տուել էր ոչ միայն իր մարմինը, այլ և նիր հոգին։ Սառն, անտարբեր արուեստագէտից կամովին յետ խլել իր հոգին նա անկարող էր, իսկ մարմինը շարունակ իր տրամադրութեան տակն էր։ Եւ վայ այն նորափթիթ, մատաղ կայսին, որի հոգին ուրիշին է պատկանում, իսկ մարմինը—ոչ Կարելի է ասել, որ այս տեսակ անբազգ արարածի՝ մարմինը ուղղակի գառնում է մի գուանգաւոր խայթոց, մի ոխերիմթնամի հէնց իր սևիական հոգու դէմ։ Որոշ տարիքում այս է կոնացի բնաւորութիւնների հիասթափութեան, զիրաւորանքի և յօւսահատութեան բնական հետեւանքը։ Իրենէն նոյն սեռի և արկածալից տարիքի ներկայոցուցիչն էր՝ հետեւաբար նոյն ուղեղծով ընթանալու վատանգին մասնուած։ Կատալի զայրոյթից մի տեսակ ինքնամուռացութեան մէջ ընկած՝ նա անձնատուր է լինում կեանքի ալիքներին և զգայական հաճոյքների յորձանքում։ Որո՞նում իր «միթարութիւնը»։ Այս մարմինը, որ մի գեղարուեստական հրաշակերտ պատկն էր կողմում՝ նա այժմ ի ցոյց է զնում զանազան Վարլեթ-ներում, որ Ռուբէկի անմնղ աշխերի փոխարէն նրա վրայ մն յառած հազարաւոր մոլի և կըքուս հայեացքներ և առ զառնում է «մի մերկ արձան կենդանի պատկերների մէջ»։

Այս դեռ բառական չէ։ Ռուբէկի գրէմը նա լուծում է այն ըոլոր տարամարդկանցից, որոնց նա հանգիպում է իր կնանքի այս փոթորկալից տարիների ընթացքում։ Քանիսի հետ նա վասնգաւոր, անխիղճ խաղեր է խաղում։ Քանիսին բազգաւորացնելու կնոջ, խարդախի ժայիտ ցոյց տալիս՝ գրաւում, յափրշտակում, բայց դէպի անբազգութեան վիճն առաջնորդում։ Քանիսի մտհուան և ինքնասագանութեան պատճառն է լինում։ Կատաղի ոճրագործը և ոչ մէկի մէջ խարութիւն չէ զնում։ Նո չէ խնայում նոյն-իսկ իր երկու ամուսիններին, որոնցից առաջնը ամերիկացի մի բարձրաստիճան դիսլումատ էր, իսկ երկ-

բորդը Ուրալում ոսկի հանքեր ունեցող մի հարուսաւ ռուս վաճառականն Մէկին նա խելագարեցնում, ինքնասազան է զարձնում, իսկ միւսին՝ իր սփոքրիկ, սրածայր դաշոյնով՝ սպանում։ Նա չէ հրաժարւում գործ զնել նոյն-իսկ ամենավայրագ ոճիրը —որդեսալանութիւն։ իր բոլոր զաւակներին նա մէկ միւսի յետելից սպանում է՝ „ծնունդից առաջ կամ յետոյ։“

Այս սարսափելի ոճրագործութիւններից սթափուելիս՝ հասկանալի է թէ իրենէն ուր պէտք է գտնէր իր փրկութիւնը —խելագարատան մի անկիւնում, որտեղ սակած, ինչպէս յետոյ կը տեսնենք, նա անքումելի իերպով չէ կաշկանդւում։

Այժմ աեմնենք թէ ինչ բնաւարութիւն ունեցաւ Ռուբէկի ճակատագիրը՝ իրենէից բաժանուելուց յետոյ։ Այս անզուգական մօդէլից յետոյ Ռուբէկի ստեղծագործող հանճարը նուազում է։ Նա այլ եւս անընդունակ է նախկին ոգեւորութեամբ ներշնչուել և ըստ այսմ արտադրել։ Իրենէն անդարձ կերպով տարել էր իր հետ մեծ քանդակագործի մուղան։ Այնուհետեւ նա մի քանի „աննշան բիւստեր“ է միայն պատրաստում, որոնք իրան ամեննելին չէին բաւականացնում։ Իր սեփական ստեղծագործութիւններն այնքան անարժեք, այնքան աննշան են երեւում իրան, որ նա կծու հեգնութեամբ ծաղրում, արհամարհում է այն տգէտ ամրոխին, որ ոչխարացին հակումներով կարող է յափշտակուել գրանցով և նոյն-իսկ ոճանրակշիռ ոսկով՝ փոխարինել։ Նա այդ բիւստերը չէ համարում իսկական բիւստեր, այլ զրանց յետեւը տեմնում է զանազան ոկասկածելի և թաքուն“ պատկերներ, որոնք անմատչելի են ամբոխի հայեացքին։ Ամրոխը բերանը բայց միայն ոգեւորուել գիտէ այդ բիւստերի „ապշեցնող նմանութեամբ“։ Եւ զիտէք ինչն է այն ծածուկ և խորհրդաւոր երեւոյթը, որ միայն Ռուբէկի աչքերին է մատչելի—„Ձիերի այլանդակ դէմքեր, պնդագլուխ էշերի քթեր, երկարական և կարճածակատ չների ու պարարտ խոզերի զլուխներ—պակաս չեն նաեւ ապուշ և վայրենի եղների դէմքեր“—մի խօսքով ուժնումի կենդանիների մի ժողովածու։

Իրենէից բաժանուելուց յետոյ Ռուբէկին ամուսնանում է մի կննսուրախ, բայց գեղարուեստասիրական ոչ մի հակում ցոյց չը տուող կնոջ հետ—Մայեա, որի համար նա Տառնից լճի գեղածիծաղ ափերում մի սիրուն Վիլլա է կառուցանում։ Ռուբէկը զգայական յափշտակութիւնների առաջին և վաղանցուկ շրջանից յետոյ է միայն նկատում այն անզունդը, որ գոյութիւն ունի Մայեաի և իր մէջ։ Նա մի ժամանակ խորհրդաւոր կերպով խոստացել էր իր կնոջ բարձրացնել մի ահագին

լեռ՝ այնտեղից ցոյց տալու սաշխարհի ամբողջ փառահեղութիւնը՝ Բայց նա շուտով համոզուեց, որ Մայեան սանընդունակ է լեռ բարձրանալ՝, որ նա սովորաբերի կին է և ոչ թէ բարձրութիւնների: Իսկ երբ Մայեան յիշեցնում է նրան այս մասին՝ Ռուբէկն ուղղակի խոստովանում է թէ դա մի ֆրազ էր, որ նա սիրում էր զեռ գլորոյական տարիններից յաճախ գործածել: Բայց Ռուբէկը կեղծում է. նա այս խոստումը համոզուած կերպով էր արել՝ միայն շուտով հիամթափուել, տեսել, որ Մայեան ոչ իր արուեստով ոգեւորուել գիտէ և ոչ կարող է առհասարակ իրան հոգեալէս բաւականացնող մի կին դառնալ:

Մայեան նոյնպէս ատում է Ռուբէկի արուեստը—միայն այն տարբերութեամբ, որ իրենէն հասկանալով՝ առհասարակ գեղարուեստի էութիւնը, ոգին ըմբռնելով էր ատում, այն ինչ Մայեան՝ առանց որեւ է հասկացողութեան: Նա ամենանպաստաւոր դէպքում իր ամուսնու փառքով միայն կարող էր ոգեւորուել և ոչ թէ այս փառքի իսկական յիշատակարաններով։ Ռուբէկը իր կնոջ հետ անցկացրած հինգ տաղտկալի տարիններումն է վերջապէս համոզւում, որ իր սովորական երազները՝ մրափում են միայն իրենէի սրտում, որ իր ստուգագործական ներշնչումների կախարդական բանալին իրենէի ձեռքումն է և ոչ թէ Մարեայի։

Այս հանգամանքներում իրենէն և Ռուբէկը հարաւային նորվէգիայի ծովեզերենայ ամարանոցներից մէկում անակնկալ կերպով հանդիպում են միմեանց—սրանով էլ համարեա սկըսւում է դրաման։ այնպէս որ գիխաւոր հերոսի և հերոսուհու կետնքի վերոյիշեալ դէպքերը վարագոյրի յետեւն են տեղի ունենում։

Ընկճուած, մելամաղձոտ, հիամթափութեան ենթարկուած Ռուբէկը նախ քան ծովային մի մեծ ճանապարհորդութեան սկալը՝ Մայեայի հետ առժամանակ հանգստանում էր ամարանոցում։ Անգուն գիշերներից մէկում, նա իր սենեակի պատուհանի հանդիպակաց ծառերի տակ, նկատում է մի սպիտակազգեստ կին թափառելիս, սրան անմիջապէս կից որոշում է մի ուրիշ կերպարանք՝ որոլորովին մութ՝ ինչպէս մի ստուեր։ Երբ առաւօտեան Ռուբէկը պատմում է Մարեային իր տեսածք՝ վերջինս կարծում է թէ նա երազած պէտք է լինի։ Սակայն Ռուբէկը իր սեփական աշքերով տեսածին աւելի էր հաւատում, քան թէ իր կնոջ մեկնութեանը—այնպէս որ վերոյիշեալ գիշերային կերպարանքների մասին կիրանոցափիրոջից է բացատրութիւն ինդրում։ Վերջինս սկզբում անտեղեակ և մի քանի բոպէից յետոյ միայն ուշքի եկած՝ հազիւ էր սկսել Ռուբէկին

քացատրութիւններ տալ—երբ յանկարծ հեռուից նկատում է մի նիհար, բարձրահասակ տիկնոջ և նրա հետ մի սարկաւագունու՝ արծաթէ խաչը կրծքին։ Տիկնոջ երեսը դժոյն է և դալուկ, զիմաղծերը անշարժ և անկենդան։ աչքերը դէպի գետին խոնարհած և ըստ երեւայթին կարծես առանց տեսողութեան, քայլերը յամը և դանդաղ։ Առանց իր շուրջը որեւ է հայեացք ձգելու։ նա իր ուղեկցի հետ մտնում է հիւրանոցի պավիլիոն։ Ռուբէկն ակամայ դէպի Պավիլիոնի դուռն ուղղուած՝ նեարդային հետաքրքրաշարժութեամբ հարցնում է—”ո՞վ էր այս տիկինը“։ —”Մի օտարուհի“—պատասխանում է հիւրանոցատէրը։ Նա յայտնում է նոյն-իսկ տիկնոջ անունը—madame de Satow. Մայեան նկատելով իր ամուսնու տարօրինակ հետաքրքրութիւնը՝ հարցնում է—”չը լինի այս տիկինը քեզ երբ և իցէ մօդէլ է ծառայել“։ —”Մօդէլ“—ապշած կրկնում է Ռուբէկ—”ոչ, իմ փոքրիկ Մայեան ես իսկապէս միայն մի հատիկ մօդէլ եմ ունեցել. մի հատ իմ բոլոր ստեղծագործութիւնների համար“։

Այդ միջոցին հեռուից գալիս է կալուածատէր Ռւլֆհայմ՝ պարզասպանը՝ շրջապատուած իր ամենասիրելի բարեկամներով—չներով։ Հիւրանոցատէրը ամեն կերպ աշխատում էր խուսափել նրան հանդիպելուց, որովհետև շատ անախորժ էր նրա հետ խօսել, մանաւանդ նկանանց ներկայութեամբ—բայց արդէն ուշ էր։

Ինչպէս madame de Satow մի բոպէ առաջ դրաւել էր Ռուբէկի ուշադրութիւնը՝ այնպէս էլ այժմ այս տարօրինակ որսորդն է դարձել Մայեայի հետաքրքրութեան առարկան—”Դուք ճիշտ արջերի որսորդ էք“—հարցնում է նա Ռւլֆհայմին։ —”Ամենամիծ հաճոյքով արջերի յետեիցն եմ ընկնում. բայց ինձ ախորժելի են առհասարակ ամեն տեսակի գաղաններ, որոնք կը հանդիպեն գնդակիս—արծիւններ, զայլեր, կանաք, եղնիկներ թէ եղջերուններ—բոլորը մէկ է—միայն թէ պէտք է թարմ, հիւթալից և արիւնառատ լինեն“։

Նրանք շուտով են բարեկամանում։ Ռւլֆհայմը յայտնում է թէ մտադիր է շուտով լեռը բարձրանալ որսի և առաջարկում է Մայեայի ընկերակցութիւնը։ Իսկ նախ քան այդ՝ նա գնում է իր նոր բարեկամի բարեկամների—չների—կերակրուելը տեսնելու։

Այս բաղդաւոր զոյգի հեռանալուց անմիջապէս յետոյ ներս է մտնում տիկին de Satow՝ սարկաւագուհու պատրաստած նախաճաշը վայելելու։ Կաթի բաժակը հազիւ շրթունքներին մօտեցրած՝ նա յանկարծ կանգ է առնում։ անկենդան և արտայայտութիւնից զուրկ հայեացքով նա Ռուբէկին է նայում։

— «Ես քեզ ճանաչում եմ, իրենէ»— նկատում է ապշած Ռուբէկը: — «Դու իմացար ես ով եմ, Արնօլդ»— հարցնում է իրենէն կիսակինդան ձայնով:

Իրենէն խելագարատանը կազդուրուելով՝ գուրս էր եկել և ապրում էր մի հիւանդապահ սարկաւագուհու հսկողութեամբ: Նա այժմ իր երկրորդ ամուսնու անունով՝ ոռուս վաճառականի՝ կոչում էր տիկին de Satow. Նա զարմանում է, որ Ռուբէկը զեռ սկենդանի «է և նոյն-իսկ ամուսնացել մէկի հետ, որին ձեռք է բերել իր (իրենէի) մահուանից յևսոյ»:

«Իսկ զաւակը», հարցնում է իրենէն, նա էլ ի հարկէ լաւ է: Մեր զաւակը ինձանից երկար է ապրում՝ փառքի և պատուի մէջ: Ռուբէկը անցեալի յիշողութիւնները պատկերացնելով՝ հասկանում է «մեր զաւակ» արտայայտութիւնը— իրենէն նրա մեծ ստեղծագործութեան մասին էր ակնարկում, որին ինքը իբրև մօդէլ էր ծառայել, ոիր կիսդանութեան ժամանակ»:

— «Այս, այս, իրենէ, այժմ «մեր զաւակը» ամբողջ աշխարհում հոչակուած է: Դու անշուշտ այդ մասին կարդացած կը վիճես—չը»:

— «Եւ իր հօրն էլ հոչակուոր դարձրեց—այս էր քո երազը»— զառնացած շեշտով վրայ է բերում իրենէն:

— «Այս բոլորը միայն քեզ եմ պարտական, իրենէ, բոլորը Շնորհակալ եմ»:

— «Եթէ ես այն ժամանակ իմ արդարացի իրաւունքը գործ դնէի, Արնօլդ— այդ զաւակին պէսք է սպանէի... սպանէի քեզանից բաժանուելուցս առաջ, քայլայէի, աւերէի, փոշիների վերածէի»:

— «Այդ դու չէիր կարողանայ, իրենէ, դու այդ սիրու չունէիր»:

— «Ոչ, ես այն ժամանակ այդ սիրու չունէի... Բայց այնուհետեւ ես բազմաթիւ սպանութիւններ եմ գործել՝ թէ լոյս արեւով և թէ զիշերային խաւարով: Սպանել եմ ատելութեան, վրէժի և տանջանքի մէջ»:

— «... Գուցէ դու մի ուրիշի վրայ սիրահարուած էիր»:

— «Միայն մէկի վրայ, որին սակայն աւելորդ էր իմ սէրը և որը այլ եւս պէտք չունէր իմ կեանքին»:

Այնուհետեւ իրենէն վշտապին կնքալով պատմում է իր մրրկածուի կեանքի արկածները: Եւ Ռուբէկը «մի խոր միտք է տեսնում» այն բոլորի մէջ, ինչ որ պատմում է նա:

— «... Իւրաքանչիւր խօսքը, որ գուրս է զալիս իմ բերա-

նից՝ կարծես մրմնշում են իմ ականջին«—այսպէս է խոստովանում իրենէն:

— „Քո սրտում լարեր են կտրուած, իրենէ«:

— „Միշտ այդպէս է լինում՝ երբ մնոնում է մի երիտառասարդ, տագրարիւն կին«:

— „Բայց, իրենէ, ազատիր քեզ այդ խանակ մտապատկերներից Դու ապրում ես, ապրում, ապրում«:

— „Ես մեռած էի՝ տարիներ շարունակ, եկան և շղթայեցին ինձ, ձեռներս մէջքիս կապեցին և յետոյ ինձ գերեզման իջեցրին, որ վանդակուած էր երկաթէ ծողերով և ունէր պատառածածկ պատեր—այնպէս որ վերեւը՝ երկրի վրայ ոչ ոք չէր լսում թաղուածի ազաղակը: Այժմ ահա սկսում եմ հետզհետէ մեռեալներից յարութիւն առնել«:

Յետոյ նա պարզապէս յայտնում է, որ իր մահուան պատճառը Ռուբէկն էր, որին սակայն նա պատրաստ էր մինչն իր կեանքի վերջը հետեւել՝ ծառայել, պիտանի լինել նրան ամեն հանգամանքներում—ճիշտ նոյն պատրաստակամութիւնը էլլան էր յոյց տալիս Բօրկմանի վնրարերմամբ:

— „Ազատ, քօզազուրկ մերկութեամբ... ես ինձ ի ցոյց դրի քո առաջ... և դու ոչ մի անգամ չը շօշափեցիր ինձ«:

— „Իրենէ, զիտես, որ երբեմն ուղղակի խելագարուում էի քո զեղսկութիւնից«:

— „Բայց և այնպէս եթէ գու ինձ շօշափէիր՝ քեզ անշուշտ տեղն ու տեղը կը սպանէի: Ես մի սուր ասեղ ունէի ինձ մօտ մաղերումս պահած...«:

— „Ես արուեստագէտ էի, իրենէ... Եւ „Յարութիւնը“ պէտք է մարմնանար մի երիտասարդ կնոջ պատկերով, որ նոր էր ստափւում մահուան քնից... Եթէ ես զգայական ցանկութեամբ քեզ վրայ նայէի՝ այն ժամանակ իմ մագերը կը սրբապղծէին և ես չէի կարող լիովին ստեղծագործել այն, ինչ որ կարօտագին տենչանքով ստեղծել էի ուղում.—Եւ ես մինչեւ այժմ էլ հաւատացած եմ, որ մի ճշմարտութիւն կայ դրա մէջ«:

— „Ասած գեղարուեստական երկը՝ և յետոյ մարդկային զաւակը«:

— „Դու ինձ համար մօղէլ չէիր, այլ իմ ստեղծագործութեան սկզբնական աղբիւրը: Դու տուիր ինձ քո ամբողջ մերկ զեղսկութիւնը«:

— „... Քո և քո զաւակի փառքի համար«:

— „Նոյնպէս և քո փառքի, իրենէ«:

— „Բայց ամենաթանկազին ընծան դու մոռացար: Ես

Նուիրեցի քեզ իմ մատաղ, կենդանի հոգին և մնացի դատարկ կրծքով՝ առանց հոգու։ Այդ պատճառով էլ մեռայ, Արնօլդ։

Այն միջոցին, երբ իրենէն Ռուբէկի առաջ իր սրտի դառն կակիրծն էր արտայայտում՝ Մայեան իր նոր բարեկամի հետ իրան շատ երջանիկ էր զգում։ Նա թախանձանքով խնդրել էր իր ամուսնուց թոյլ տալ այն „զարհուրելի արջասպանի“ հետ լեռը բարձրանալ։ — Զես կարող երեւակայել, թէ նա ինչ հրաշալի բաներ է պատմում լեռների մասին, այնտեղ տիրող կեանքի մասին։ տգեղ, սարսափելի, անհաւատալու չափ զարշելի են նրա պատմած ստախօսութիւնները — համարեա թէ ես հաւատում եմ, որ դա պէտք է սուտ լինի Զը նայելով այս բոլորին՝ չափազանց գրաւիչ, գայթակղեցնող։

Լեռնային զրօսանքից ուրախութեան աղաղակներով յետ գալիս՝ Մայեան առանձին գոհունակութեամբ պատմում է իր ամուսնուն, որ Ուլֆհայմը „ամենեւին արուեստագէտ չէ“։ Բայց նա աւելի է առաջ գնում։ — Դու ընկերութեան մարդ չես՝ Ռուբէկ։ Դու ամենամեծ հաճոցով քո սեփական ճանապարհովն ես գնում և քո սեփական շահերովն զբաղւում։ Իսկ ես միանգամ ընդմիշտ անկարող եմ ևս գործերի մասին կարգին խօսել քեզ հետ—այս գեղարուեստական հարցերի մասին և այն։ Եւ Աստուած վկայ՝ դա ինձ ամենեւին չէ հետաքրքրում։

Վերջապէս Ռուբէկը կարեւոր է համարում, երկարատեւ լուսութիւնից յետոյ, դէթ մը անգամ իր կեանքում բացատրուել իր կնոջ հետ։ — Այն, որ ինձ համար այժմ շատ զգալի է և ցաւալի—դա մի այսպիսի մարդու պակասութիւն է, որ ներքուստ ինձ իսկապէս մօտիկ լինէր։

— Միթէ ես այդպէս չեմ, Ռուբէկ։

— Դու ինձ սխալ ես հասկանում, ես պէտք է տպրէի այսպիսի մէկի հետ, որ ինձ ուղղակի լրացնէր, ինձ հետ մի լինէր։ Իմ ամբողջ կեանքի և ստեղծագործութիւնների մէջ։

— Այո, այդպիսի բարձր պահանջների ես, ի հարկէ, չէի կարող բաւականութիւն տալ։

— «... Ուրեմն դու ինձ հարկադրուած առար՝ իբրեւ փոխարինող մի միջոց։

— «Եթէ անկեղծ խոստովանեմ, համարեա թէ այդպէս էր...»։

Բայց Ռուբէկը ուրիշ յայտնութիւններ էլ է անում։ Նա չէ կարող թազցնել այն ձանձրոյթը, որ այժմ զգում է իր կոչումից՝ գեղարուեստական գործունէութիւնից— «Այդ բոլորը ինձ այժմ դատարկ, անբովանդակ և ոչինչ է երեւում։

— „Դրա փոխարէն ինչ կը կամենայիր“—հարցնում է Մայեան:

— „Կեանի, Մայեա“:

Ռուբէկն ապրել էր կամենում. բայց Մայեան միթէ կարող էր նրան կեանք տալ: Ռուբէկի կեանքի և երջանկութեան բանալին իրենէի ձեռքն էր—„Օգնիր ինձ, որ ես մի անգամ էլ կարողանամ ապրել“—պաղատում է նա իրենէին:—„Դատարկ երազներ, ունայն, մեռած երազներ: Մեր կենակցութիւնից այլ եւս ոչ մի յարութիւն չի կարող առաջ դալ“—յուսահատական շեշտով պատասխանում է իրենէն: Վերջինիս համար մի քան միանգամայն հաստատ էր—„Այն, ինչ որ անդառնալի կերպով կորած է՝ կը տեսնենք միայն այն ժամանակ՝ երբ մենք մեռածներս կը սթափուենք“:

Իսկ ինչ էր այս „սթափուած մեռեալների“ տեսածը—„որ մենք երբեք չենի ապրել“: Բայց յուսահատութեան խաւարի մէջ միթէ չը կար լոյսի մի աննշան ճառագայթ, մեռելածին երազը միթէ մի քանի ակնթարթ գոնէ չը պիտի իրականանար: Եւ ահա իրենէն նոր, ոգեշունչ կեանքի յոյսով յանկարծ վերակենդանացած՝ դառնում է դէպի Ռուբէկը—„Կամենում ես ինձ հետ մի ամառնային զիշեր անցկացնել՝ վերեւը, լեռնային բարձունքներում: Ռուբէկը ցնծութեան աղաղակներով „այն“ է պատասխանում: Նրանք վճռում են „նախ քան նորից իրանց գերեզմաններ վերադառնալը՝ կեանքի վախճանում դէթ մի անգամ ճաշակել կեանքը“:

Բայց չի որ Մայեան էլ էր ուզում „ապրել: Նա էլ իր ուրացուցիչ կէսն“ էր գտել: Ռուբէկը՝ առանց որիւ է զժուարութեան, ընդհակառակն մեծ բաւականութեամբ թոյլ է տալիս նրան Ուլֆհայմի հետ „որսի“ գնալ: Մայեայի ուրախութիւնն անսահման է—„Ես աղատեմ, ես աղատեմ, ես աղատեմ: բանտարկութեան ժամը անցաւ, ես աղատեմ ինչպէս մի թըռչուն—ես աղատեմ“, եւ նա խոստանում է իր ամուսնուն լեռներից մի „զիշատիչ թոչուն“ բերել:

Արշալոյսին՝ երկու դոյջը տարօրինակ պատահականութեամբ լեռների ձիւածածկ բարձրութիւնների վրայ հանդիպում են միմեանց: Զը նայելով Ուլֆհայմի խորհրդաւոր նախազգուշութիւններին՝ Ռուբէկ և իրենէն շարունակում են իրանց ճանապարհը դէպի լեռների անմատչելի կատարները, իսկ Ուլֆհայմը և Մայեան իջնում են դէպի ստորոտը եւ ահա յանկարծ լսում է մի որոտազին աղմուկ: Մի հսկայական ձեան հիւս գլորւում է սոսկալի արագութեամբ դէպի հովիտը և իր թանձը շերտերի տակ թաղում իրենէին և Ռուբէկին:

Սարկաւագուհին՝ Իրենէի զատուերը՝ բազկատարած ձեռներով աղաղտակում է և ապա բոլէական լոռութիւնից յևաոյ՝ օգում խոչափում և արտասանում—„Pax vobisœum“—իւազաղութիւն ընդ ձեզ“:

Այս „վհուկը“—ինչպէս տնուանում էր Իրենէն իր մշտական հսկողին—բարեպաշտութեան խորհրդանշանն էր, կեանքի թշնամին, որ զժբաղդ հանդուցեալներին խաղաղութիւն էր յանկանում:

Այս էր „սթափուած մեռեալննիք“ ճակատագիրը—անցեալ կեանքի մահաշունչ ստուերը փարատելուց յևաոյ՝ յաւիտնական քնի մէջ միայն միանալու ինչու—որովհետեւ նրանք երկրի վրայ գերերկրային երջանկութիւն էին սրոնում—երջանկութիւն լեռնային բարձուելքներում Բազզի մի հեղանական զուգաղիպութեամբ՝ միւս զոյզը երկրային սովորական երջանկութիւն էր վիճակում՝ առանց „բարձուելքների ցաւով տառապելու—և երջանկացաւ Բայց Իրենէի և Ռուբէկի այս տեսակ վախճանը ունէի և մի ուրիշ հիմք։ Նրանք թէեւ սթափուել էին, բայց արդէն ուշ էր—իրրեւ գերեզմանից նոր գուրս եկած մարդիկ՝ նրանց մէջ ապրելու ձգտումը աւելի ուժեղ էր, քան թէ ասպրելու կարողութիւնը։ Իրենէն թէեւ սթափուած, այնուամենայիւ նոյն կիսամեռ արարածն էր, քայլայուած, տակն ու վրայ նպած նեարդերով, նոր գերեզմանի չէմքից ոչ հեռու։ Ռուբէկը թէեւ լի կնանքի նոռն անձանքով, բայց իր մեռած մինելու զիտակցութեամբ զես նոր պաշարուած՝ զղջման զգացմունքով էր տառապում և անկարող էր սրա հետ կապուած մելամաղձոտ յոյզերի աթրապետութիւնից աղատուել ու երբ և իցէ երջանկանալու Իրենէն ինքնասպանութիւն էր գործել, իսկ Ռուբէկը և սպանութիւն և ինքնասպանութիւն—„Ես էլ մի մարդ էի՞—այսպէս աղիողորմ կերպով գանգաւում է Իրենէն—“եւ ես էլ ունէի մի կեանք ապրելու համար... ես պէտք է զաւակներ ծնէի, շատ զաւակներ, իսկական զաւակներ—և ոչ թէ այնպիսին, որին գերեզմաններումն են պահում—այս էր իմ կոչումը։ Ես երբէք քեզ չը սկէտք է ծառայէի, ազ բանաստեղծ“։ Իրենէն զիտակցաբար է գործածում „բանաստեղծ“ խօսքը։ Նա որքան անխնայ է իր դատապարտութեան մէջ՝ այնուամբնայնիւ խորապէս զգում է, որ Ռուբէկի յանցանքը բաւական միզմանում է, որովհետեւ նա բանաստեղծ է։

Ուրեմն ինչ բանաստեղծաբունստագէտը պէտք է իր գեղարուեստական իդէալը զոհէր մի զեղեցիկ կնոջ, որ քօղազուրկ մերկութեամբ իր առաջն էր կանդնած և որը պատրաստ էր լիովին անձնատուր լինել նրան։ Նա պէտք է յարութեան

գաղափարը սրբապզծը և իր ստեղծագործական թոփքների թափը ջլատիք եթէ իսորը քմնելու լինենք՝ կը տեսնենք։ որ Իրսէն խնդիրն այսպիսի երկայրաբանութեամբ չէ զնում։ Իրենէի բողաքի—որ Ռուբէկը իրան իրեւ մօդէլ ծառայեցնելիս ամենեւին չը շօշափեց—իմաստը միայն թեթեւ, մակերեւոյթական կերպով ըմբռնելիս՝ կարելի է զալ այն բանալ եղագակացութեան թէ՝ Իրսէնը հակուած է պնդելու, որ Ռուբէկը իր զեղարուեստական իդէալը պէտք է մի կողմ զնէր և միայն իր զգայական հաճոյքի մոսին մտածէր^{*)}։ Այս եղագակացութեան անմիտ և սիալ լինելու ամենափայլուն ապացոյցը Իրենէի հետեւեալ խօսքերն ան—ոյայնուամենայնիւ եթէ զու ինձ շօշափէիր ևս քեզ տեղն ու տեղը կը սպանէիⁱⁱ։

Մենք տեսնում ենք, որ Իրաչնին հետաքրքրովը զուտ զգայական հաճոյքի պրօբլեմը չէ, այլ բոլորովին մի այլ խնդիր —իդէալիզմի քարայնով սահմութիւնը, որին մենք համդիպեցինք Բօրկմանի և զրանից առաջ՝ Բրանդի մօսու Ամբողջավին իր գեղարուեստական իդէալով յափշտակուած՝ Ռուբէկ սահմանադրքերութեամբ է վերաբերուում գէպի այն կինը, որի գեղնցկութիւնները իրան երբեմն չուզզակի խնդարացնում էր։ Ռուբէկին շատ լաւ յայտնի էր, թէ Իրենէն ինչպիսի գնով էր իրեւ մօդէլ ներկայացնում։ Նա թողել էր իր ծնողներին, ընդհանուր բամբասանքի առարկայ էր գարձել և յանձն էր առել առհասարակ ամեն տեսակ զբկանք։ Եւ ահա այս տեսակ մարմնացած մի զոն շահագործելուց յետոյ՝ Ռուբէկը, տռանց ջերմութեան մի նշոյլի, նրա հետ հանդիպելը համարում է լոկ ոմի բարեբազդ միջադէպⁱⁱⁱ։

Այս, զերմուրիւն—ահա թէ ինչ էր պահասում Ռուբէկին։ իր ստեղծագործութեան հետ կապուած փառքի երազներով ընդարձացած, վաստակելիք կանաչ դավիճներով շլացած՝ նա շատ ուշ միայն գիտակցեց թէ իր աններնի անտարբերութեամբ ինչպիսի թանկագին զանձ էր կորցրել։ Այդ դեռ բաւ-

*) Մի քանի քննադասուներ Ռուբէկի անձնաւորութեան մէջ տեսնում են հէնց իրան՝ Իրսէնին, որ մեր կարծիքով սիալ է նրա մենք այդ չափը դնելու լինենք՝ այն ժամանակ Բօրկմանն էլ է Իրսէն, ինչպէս և Բրանդը և ուրիշ շատ հերոսներ Այն ինչ իրողութիւնն այն է, որ այս հերոսներից ոչ մէկը ուղղակի անկարող է Իրսէն համարուել, այլ զուցէ կրում է միայն հեղինակի բնաւորութեան այս կամ այն զիծը իր մէջ։ Միւս կողմից Ռուբէկին համարելով Իրսէն՝ Հերման Տիրկի նման մի տաղանդաւոր զրող հետեւեալ տպառուող կարծիքն է յալոնում—Շիրսէնի համոզմունքով իդէալական կեանքը՝ կեանք չէ... Այն ամենը, ինչ որ իդէալական է կեանքի ոսովն է։

ւական չէ. նա գործեց և երկրորդ սխալը—փորձեց այս կոռուստը զփոխարինել։ Բայց շատ շուտ համոզուեց, որ կեանքի մէջ կան գանձեր, որոնք միայն անփոխարինելի են։

Նոյնքան, գուցէ և աւելի բանալ կը լինէր թուրեկից պահանջուելիք ջերմութիւնը կապել լոկ զգայական հաճուքի, իրենէին ոչօշափելու հետ Այդ ջերմութիւնը սիրոյ և կարեկցութեան այն զգացմունքն է, այն սրտաբուղիս հուրը, որի առաջ եսականութեան սառոյցը հալւում, գոլորշիանում է և որի կայծերը իրենէն եթէ նոյն իսկ աղօտ լոյսով նշմարած լինէր—երբէք չէր անբաղդանանայ։

Անհատական և ուրիշի նես՝ համերաշխութիւն, կեանքի և իդէալի ներդաշնակութիւն—և ոչ թէ անհաշտութիւն, փոխադարձ ժխտում—ահա իրսէնի ողբամատիկական վերջաբանի իմաստը, որ և կարմիր թելի նման անցնում է նրա համարեաբոլոր ստեղծագործութիւնների շարքով։

Սրանով մենք ծանօթացրինք ընթերցողին իրսէնի բոլոր դրամաների հետ—մի բան, որ պէտք է խոստովանենք՝ մերսկզրնական ծրագրից գուրս էր։ Սակայն նախ քան վերջացնելաւ աւելորդ չենք համարում տալ մի քանի լրացուցիչ և ամփոփուելու կութիւններ իրսէնի գրական նշանակութեան և նրա աշխարհակայեացքի հիմնական տարրերի մասին։

Եթէ ամեն մի անհատ իր ժամանակի և միջավայրի ծընունդն է—կան և բացառիկ, ընտրեալ անհատներ, որոնք իրանց ժամանակի և միջավայրի վրայ դնում են ինքնուրոյնութեան մի դրօշմ—այն, ինչ որ իւրացրել են միջավայրից արգասաւորում, արդիւնաւորում են և իբրեւ սեփական, ինքնուրոյն հանձարի արտագրութիւն աւանդում իրանց շրջապատողներին և յետնորդներին։ Այս հազուազիւտ ընտրեալների շարքին է պատկանում նաև իրսէն։

Այս օտարոսի, բայց հանձարեղ նօրվէզացին ըստն սկանդինաւեան բերք է, հիւսիսային մոայլ երկնքի և դժոյն արեկի իսկական պտուղը Սկանդինաւեան, Ֆեորդների մշտաշառաչ ալլիքների նման՝ փոխանցիկ տրամադրութիւնների, խօլական երազների, վառվուն ցնորդների, խորիմաստ միստիցիզմի հայրենիքն է։ Գերմանական ցեղի ճոխ զիցարանութիւնը միայն սկանդինաւեան բնութեան զրկում կարող էր ստանալ այն ահարկու վարդիանտները, որոնք իրանց տեսակում միանդամայն անզուգական են։ Եւ ինչ—իրսէնի բօմանտիկական շրջանի գրամաների աղբիւրը միթէ այդ նոյն զիցարանութիւնը չէր, միթէ հիւսիսային մոայլ բալլագները չէին։

Հիմնական բանաստեղծները, համարեա առանց բացառութեան, մասնող բանաստեղծներ են—և Իրսէն Սկզբնաւուայի ամենամեծ մտածող բանաստեղծն է։ Նա ոչ միայն բանաստեղծ, այլ և փիլիսոփայ է և նոյն իսկ շատ նրբամիտ մի փիլիսոփայ, որ իր խորհրդածութիւններին տալիս է գեղարուեստական-բանաստեղծական արտայայտութիւն, որովհետեւ բանաստեղծական կրակը այսպէս թէ այնպէս զերակշռող է իր մէջ։ Եթէ իր հայրենակից միւս բանաստեղծները, մանաւանդ նորագոյնները, սիրում են յափշտակուել իրանց փարթամ և ահարկութնութեան խորհրդաւորութեամբ—Իրսէն՝ առանց այդ նոյն բնութեան ազդեցութիւնը թօթափելու, աւելի յափշտակում է կեսնիքի խորհրդաւորութեամբ և այս պատճառով քրքրում է պրօբլէմ պրօբլէմի յետեւից, առեղծուած առեղծուածի յետեւից, որոնք ցայտում են կեանքի աղբիւրից։

Իր շրջապատող բնութեան և կեանքի խորհրդաւորութեան մէջ պէտք է որոնել այն միստիցիզմը, որ թէեւ տարբեր աստիճանաւորումներով. բայց համարեա սկզբից մինչեւ զերջ նկատելի է նրա զրամաններում։ Այս միստիկականութիւնը կրօնական հակումների հետ, ի հարկէ, ոչ մի կապ չունի, այս ինքնամփոփի խորհրդածութիւնների և աւելի ճիշտ, բուն սկանդինաւեան զգացմունքի ծնունդ է։

Դրամատիկական տեխնիկայի մէջ Իրսէնի ցոյց տուած կատարելութիւնը մի կողմ թողած՝ բաւական է կանգ առնել այն հանձարեղ ընդունակութեան վրայ, որով նա քրքրում, վեր է լուծում մարդկային հոգին՝ իր բոլոր խորհրդաւորութիւններով։ Այնպէս որ Իրսէնը նեղ մտքով նատուրալիստ չէ. Նա երեւոյթները միայն դիտել և անփոփոխ նկարագրել չը զիտէ, այլ կերպարանաւորել, ինքնուրոյն զրօշմ տալ։ Նա ոչ միայն երեւոյթները իր սեփական տեմպերամէնտովն է գունաւորում —ինչպէս պահանջում էր Զօլան իսկական նատուրալիստից— այլ և որոշակի կերպով ցոյց է տալիս իր անհատականութիւնը։ Առանց այս անհատական զրօշմի անմտածելի է և ոչ մի մնայուն դրամատիկական ստեղծագործութիւն։ Եւ անհատականութեան ամեն մի ինքնայայտարարումը ընդհանրապէս մի ըմբոստ գործողութիւն է տիրող կարգերի և հայեացքների զէմ։ Իրսէն ոչ միայն կեանքը այլ և բանաստեղծութիւնը համարում է մի ոկարևութեան է իրեւ մի ըմբոստ, մաքառող ոգի, որ իր համար բայց ճակատով՝ նոր շաւիղներ էր որոնում։ Դժգոհ, անբաւական իր ժամանակուայ հասարակական կարգերից՝ նա անխնայ կերպով հարուածում, մարակում է զանազան „սրբագործ-

ուած" սկզբունքների ձեւերը—և սխալ ըմբռնուած ամուսնութիւնը և սէրը և բարեկամութիւնը և հիւանդոտ իգէալիզմը և այնու Եւ որովհետեւ գժգոհութեան ամեն մի արտայայտութիւն սկզբնապէս զեռ բացասական է, քան թէ զրական—այս պատճառով նա աւելի շատ քանդող, աւերող է՝ քան թէ կառուցանող. նոր իգէալիների մշուշի մէջ զեռ եւս տարութերուելիս՝ նրա բուռն ցանկութիւնն է խորտակել, հերքել, բացասել այն ամենը, ինչ որ ինքը վեասակար է համարում. իսկ հին կարգերի ներկայացուցիչները, ճահճացած կեանքի երկրպագուները իրանց շրջապատող ապականուած հոսանքն ալեկոծող ոյժին յայտարարեցին „անբարոյական“, „խելագար“, „անիշխանական“ և այնու Բայց իրսէնի հակառակորդները մի խոշոր թիւրիմացութեան մէջ էին, նրանք անընդունակ էին ըմբռնելու, որ մեծ գրամատուրդի մարակողական հարուածներն ուղղուած են ոչ թէ վերոյիշեալ սկզբունքների դէմ բաժինեան, այլ այդ սկզբանըներին համապատասխանող սխալ հասկացողութիւնների, վտանգաւոր ձեւերի դէմ. Այս անգէտք, վեասակար և վերանորոգութեան կարօտ կարգերի քարացնող ճնշումն է, որ նրան շատ անգամ պաշարում է մոռայլ յունեսուլիքեան ամպերով. Սակայն այս մոռայլ ամպերի միջից հոմարեա միշտ անպակաս են եղել նաև կենսատու օպտիմիզմի ճառագայթները. Այս փըրկարար օպտիմիզմը յատուկ է առհասարակ այն բռլոր ստեղծագործող ողբիներին, որոնք հանդէս չեն եկալ լոկ իրրեւ աւերողներ, այլ և վերանորոգողներ իրսէնն էր իր երիտասարդական խանդավառ շրջանից յետոյ մարակողական ուժգին հարուածների հետ միասին պարզեց և իր գաւանանքի—ազատութեան, հօմարտութեան, առողջ, սննատականութեան, խկական սիրոյ եւ կենսունակ իգէալիզմի—դրօշակը:

Եւ ահա մեծ դրօշակագիրը, հիւսիսի հանճարեղ „մենաւորը“ դուցէ այժմ էլ՝ իր կեանքի վերջալոյսում խորաթափանց հայեացը դէպի ապական յառած նոր մասրումներով, նոր սլորլեմներով է պաշարուած։ Հաւատանք, որ նա տուեց իր դրամատիկական վերջաբանը—մենք կսսկածում ենք։

Վ. ՆԱԼԻՇԱՆԴԵԱՆ

ՇՎԵՅՑԱՐԱԿԱՆ ԳԻՒՂԸ

V

Ահա քեզ մի հետաքրքիր զուգաղթապութիւն, սիրելիս, անցեալ նամակովս քեզ նկարագրեցի այստեղի գիւղական քահանան և եկեղեցին, իսկ այժմ գալիս եմ քեզ պատմելու թէ ինչպէս են կատարւում այստեղ թաղումները, որովհետեւ հէնց այսօր ներիայ եղայ մի յուղարկաւորութեան:

Մեռնողը տան աշխատաւոր էր, մի ընտանիքի հայր Գիւղն ափսոսանքով լսեց նրա կանխահասցաւալի վախճանը, Յուղարկաւորները բազմաթիւ էին Մեռնողի հայրը՝ մի եօթանասուն տարեկան ծերունի, տան բակում ընդունում է յուղարկաւորներին: Նա հազիւ է կարողսնում քայլել տարիների և վշտի ծանրութեան տակ, բայց և այնպէս դոզդողալով զիմաւորում է եկողներին, որոնք նրան ասում են քանի մի միտիթարտկան խօսքիր: Վազուց հետէ պահարսնում քաշ արած սեւ զգեստները այսօր այս սղի ժամին հանել և հազցրել են խեղճ ծերունուն, երեւի օրուայ խորհրդաւորութիւնը, սղի ընդհանուր պատկերը արտաքինի այլանդակութեամբ չը խոռվելու համար: Միայն ծերունին չէ, որ հազել է տխուր ժամին պատշաճ զգեստ, բոլոր յուղարկաւորներն առանց բացառութեան սեւ սիւրտիւկ, սեւ զլխարկ կամ ցիլինդր, ինչպէս և սպիտակ մաքուր օսլայած շապիկ ունեն: Այս մարդիկ կարծես մի հանդիսի են եկել, և իրաւունք ունեն, սիրելիս, մահն էլ մի հսնդիս է և բոլոր հանգէմներից ամենախորհրդացաւորը, ամենաահաւորը: Եթէ որեւ է միրձաւորի հեռաւոր երկիր ճանապարհը ընկնելը առաջ է բնրում առանձին տխուր տրամադրութիւն, որ հանդիսաւորութիւնից գուրկ չէ, որչափ աւելի հանդիսաւոր է լինելու վերջին քարի երթը» դէպի այնաեղ, «որտեղից ոչ մի ճանապարհորդ չի վերադառնում»: Միւս կողմից մահը ինքն ըստ ինքեան արդէն այնքան սարսափելի,

այնպէս ջախջախիչ, այնպէս անյոյտ է, որ միանգամայն աւելորդ է էլ աւելի ծանր, էլ աւելի անախորժ դարձնել այն՝ արուեստական, արտաքին միջոցներով։ Դու յիշում ես մեր երկրում թաղումների ժամանակ առաջ եկած տեսարանները, այն սպանիչ, համարեա ոչչութիւն ներկայացնող պատկերները։ տղամարդիկ այլանդակօրէն հագնուած, կանայք առանց զլիսակապի, մազերը խոփւ, լաց, ճիչ, երգ, բայաթի, զուլք, ոմանք երեներն են չանգոռում, ուրիշները զլուխներին. կրծքերին տալիս, ոմանք գետնին են թաւալում, իրար փաթաթւում, չը գիտես ինչու, և ամենքը միասին ներկայացնում են կարծես աշխարհի կատարածի նախընթաց ժամը։ Արեւելքում իւրաքանչիւր թաղում, մանաւանդ շագիզ մեռելիս թաղում, մի փոքրիկ կրկնութիւն է կարծես մահմենդականների «Ծախսէ, Վախսէի», կամ Մհառամի սուզին։ Զարմանալի է, թէ ինչու արյունքը, ողբը, սուզը ամենալայն չափով այդպէս պատշաճում են արեւելքին, ինչու մարդիկ այնտեղ այնպէս խորը և յուսահատ սզալ գիտեն։

Իսկ այստեղ, շվեյցարական գիւղում, ահա թէ ինչպէս կատարուեց սուզը։ Բակում՝ ինչպէս ասացի, հետզհետէ հաւաքուեցին սեւաղցեստ յուղարկաւորները, եղանակը լաւ էր, հենց այնտեղ դրսում էլ պարզեցին մի սեղան. ապա մէկը դուրս բերեց մատուցարանների վրայ յուղարկաւորների թուին հաւասար քաժակներ, և տուեց ամեն մէկին մի մի հատ, որան հետեւեց մի ուրիշը և իւրաքանչիւրին տուեց մի բաժակ զինի, մի երրորդը մատուցարանով անցաւ բոլորի առաջից և ամեն մէկը վերցրեց մի մի հատ կարկանդակ։

Այս տեսարանն ինձ խիստ հետաքրքրեց, մի բաժակ զինի և մի հատ կարկանդակ, ահա շվեյցարական գիւղում մեռելահացը։ Նայում էի և մտածում մեր երկրի տնաքանդ «Քելեխի» մասին. յիշում էի թէ՝ ինչպէս մեզանում մեռելատէրը աչքերը սրբելով՝ ստիպուած է այս ու այն կողմն ընկնել բրնձի, իւղի, հացի, մսի ճար անել մի քանի հարիւր հոգի կերակրելու համար, այն ժամանակ, երբ տան մնացած անդամները տակաւին տաք դիակի շուրջը կատարում են սոսկալի ողբը։ Անշուշտ, երեխայամտութիւն կը լինի հեզնութեան առարկայ դարձնել առհասարակ որեւ է ժողովրդի ազգային սովորութիւն և մասնաւորապէս մահուան հետ կապուած սովորութիւնները։ Քելեխի, որի մասին այնքան գրուել է և գրւում է մեզանում շատ անգամ, նոյն-իսկ թեթեւամիտ, անպատշաճ լեզուով, ժողովրդի համար կարող է նոյնքան սրբազան համարուել, որքան, օրինակ, իր մեռելի վրայ թաղման կարգ կատարելը։ Եւ դա շատ հասկանալի է, եթէ ի նկատի աւնենանք, որ ամեն մի սովորութիւն, մանա-

ւանդ կրօնական՝ իր խորը պատմական-փիլիսոփայական ծագումն ունի, արմատացած է դարերով և կապուած է ժողովրդի ամենանութիւրական հասկացողութիւնների հետ: Նրանք կը փոխուեն, երբ արմատական փոփոխութեան կ'ենթարկուեն այդ սովորութիւններին ծագումն տուող հասկացողութիւնները: Սա չի նշանակում սակայն, որ ժողովրդի զիտակցական մասը պէտք է հանդարտ սպասի մինչեւ այդ բոլորն ինք իրան փոխուի, պէտք է աշխատել վերացնել այդ վնասակար սովորութիւնները: բայց երբէք չը հեգնել, երբէք թեկիւամտօրէն չը վերաբերուել, և որ գլխաւորն է՝ երբէք չը վիրաւորել ժողովրդի զգացմունքները, որոնց հետ խորապէս կապուած են այս կամ այն սովորութիւնները: Ամեն բան կախուած է միմիայն ժողովրդի կրթութիւնից, նրա մտաւոր մակերեւոյթի բարձրացնելուց, մնացածը ինքն իրան կը կատարուի:

Ես շարունակում եմ նկարագիրը: Յուղարկաւորները բակում սպասում էին, իսկ դադաղը գտնուում էր ներսում: Ինչ որ ինձ դարմացրեց, ներսից չէր լսուում և ոչ մի ձայն: լայն ու ողբեր կատարում էր լուսիթեամբ, առանց աղմուկի, առանց այլանդակութիւնների:

Հասաւ պաստօրը, նա մէկիկ մէկիկ ձեռք տուեց յուղարկաւորներին և սգաւոր բարեկամներին, որոնց ուղղեց քանի մի միմիթարական խօսքեր: Դադաղը տնից գուրս բերեցին բակը: Քահանան կարդաց մի պատշաճաւոր աղօթք, ապա բընարան առնելով «Մեղքով մահը աշխարհ մտաւ» խօսքերը. հէնց այնտեղ, բակում խօսեց մի միմիթարական քարոզ, որի ընթացքում շօշափեց շատ ժամանակակից բարոյական հարցեր: Ի՞նչ ասել է՝ մեղքով մահը մտաւ աշխարհ, բացականչեց նա, ի միջի այլոց, երբ ոչ միայն սկզբնական մեղքը չէր գործուել, այլ նոյն իսկ մարդն էլ գուցէ գոյութիւն չունէր, բայց մահը կար աշխարհում: Մարդու ապրուսի եղանակը, նրա վարք ու բարքը, իր փիզիկական և բարոյական ոյժերի վատնումը շատ անգամ կամաց կամաց պատրաստում են նրան մահը, կամ աւելի ճիշտ մնուցնում են նրան նախ քան վերջնական մահը: Երիտասարդ ոյժերի անխնայ վատնումը, շռայրութիւնը, մեղկութիւնը, ահա թէ ինչ ասել է՝ սկզբնական մեղքը և նրանից առաջացած մահը: Զափաւոր վայելքները, ապրելը լրիւ կեանքով և բնական սահմաններումն աշխատանքը, երբէք մահ չեն առաջ բերում, այլ կեանք: Սապա պաստօրը միմիթարեց սգաւորներին, խօսեց հանգուցեալի առաքինութիւնների, նրա հեզութեան, աշխատասիրութեան, բարութեան մասին և վերջացրեց իր խօսքը՝ կոչումն անելով դէպի մարդկային լաւագոյն առաքիւ-

Նութիւնները, որոնք միայն ընդունակ են գեղեցկացնել կեանքը, խորհուրդ տալ մարդկային ծանր ճակատադրին և թուլացնել մահու սարսափը, յաղթահարել նրան.

Այս, այս շվեյցարական քահանաները, ինչպէս գիտեն խօսել իրանց ժողովրդի սրտին, ինչպէս զիտեն իւրաքանչիւր մօմննտի իսկական նշանակութիւնն ըմբռնել:

Կանայք չը կային, տղամարդիկ վերցրին դագաղը և առաջ ընկան, յուղարկաւորները զոյգ զոյգ չարուեցին իրար յետելից, նախ պաստօրն ու ազգականները, ապա մնացած բազմութիւնը:

Թափօրը շարժուեց դէպի զիւղից դուրս, կանաչապատ լենագոշտի միջից անցնող սիրուն ծառուղիով, Հեռու երեւում է զերեղմանատունը իր մշտադալար մացառների ցանկապատով, որ դաշտերի ընդհանուր կանաչութեան մէջ թւում է մի գալարուն մոյգ երիգ, Ահա և զերեղմանատունը, թափօրը ներս մտաւ երկաթապատ դռնից: Սա կարծես գերեզմանատուն չէ, այլ մի ծաղկագարդ զրոսավայր: Իւրաքանչիւր շիրիմ շըրջապատուած է կանաչի ու ծաղիկների փոքրիկ ցանկով, տեղ տեղ քարերը կորել են պսակների, զիրեանդների մէջ: Ոմնաք նոյն իսկ խնամուտ ձեռքով իրանց մեռած սիրելիների յաւիտենական բնակարանին հովանի անելու համար տնկել են սգատերն ուսիներ, որ կախկիսել են իրանց գալար ճիւղերը մինչև գետին, համրուրում են շիրիմների հետ: Քարեղը բոլորն էլ փոքր են, մեծ մասամբ փոքրիկ մարմարներ՝ սիմվոլներով քանդակուած: Մոռացուած շիրիմներ չեն, իւրաքանչիւր զերեղմանի վրայ երեսում է խնամք, առանձին հոկողութիւն, ծաղիկները մշակուած են, խոտերը յարդարուած: Այս սիրուն, ծաղկաղարդ շիրիմների մէջ մի փոքրիկ փոս է փորուած նաև հանգուցեալի համար: Խորութիւնը մեծ չէ, մի արշինից հազիւ մի փոքր աւելի: Դագաղն իշեցրին փոսի մէջ, պաստօրը կարդաց զարձեալ մի քանի աղօթք: ապա ամենքը հեռացան գնացին գերեզմանափոքերից բացի, որոնք շարունակում էին հողով ծածկել զերեղմանը: Վերադարձին ես տեսայ թէ ինչպէս պատօրը մօտեցաւ հանգուցեալի ծերունի հօրը, որ դժուարութեամբ էր քայլում, իր թեն տուաւ նրան և ճանապարհի բոլոր ընթացքում նա համարեա գրկած տանում էր անզօր ծերունուն, խօսում, միմիթարում էր նրան մի լաւ զաւակի սրտացաւ հոգացողութեամբ, աշխատելով ամոքել վշահար ծերունու ցաւու սիրտը: Թաղումից վերադառնող բազմութիւնը այլ ես հանգուցեալի տունը չը մտաւ, ինչպէս անում են մեր երկրում և հացկերութիւն չեղաւ, այլ իւրաքանչիւր ոք իր տունը, իր

աշխատանքին գնաց, մեռելատէր ընտանիքին ազասնելով այդ ահաղին բազմութիւնը կերակրելու անօգուտ և աւերիչ հոդսից:

Այսպէս վերջացաւ թաղումը:

Յուղարկաւորութիւնից յետոյ, մարդիկ վերադարձան գիւղ, իսկ ես դեռ մենակ թափառում եմ կանաչազարդ, ծաղկապատ դերեզմանատան մէջ, թափառում եմ և միտու է գալիս մեր զիւղի գերեզմանատունը Սարերի կրծքից պոկուած սև սև ժայռերի ահազին կտորներ սղմում են մեր մեռելների կըրծքերը, ասես նրանց կրած յաւը խլացնելու համար Այնտեղ, այն մեր ողբալի ծննդավայրում գեղարուեստը չի մեղմացնում մահի սարսափը և ոչնչացման պրօցեսի արտաքին պատկերը իր միստերի անհասկանալի և ճնշող բոլոր խստութիւնն ունի: Ոչինչ չը կայ գերեզմանատանը, որ սգաւոր աչքի հայեացքը հանգստացնի, ոչինչ, որ կեանիքի ունայնութեան և մեր զոյութեան տխուր վախճանի վրայ մի խարուսիկ քող ձգի: Եւ այդ հասկանալի է, սիրելիս, ցաւերով ու տառապանքներով լի գոյութիւնները գերեզմանների մէջ էլ պահում են իրանց արտասուելի պատկերը: Ժայռեր, ժայռեր, կեանքն ամբողջ ապառաժ, քար է մեր զիւղերում: ինչու զարմանալ, որ գերեզմաններում ժայռեր են շարուած:

Երջում եմ և մտածում նաև մեր երկրի թաղումների մասին, երբ ողբն ու արցունքը այնքան առատ են դառնում: Երբ մարդիկ չեն լալիս, այլ ճշում են, երբ սգի մի փոթորիկ է անցնում մի տան, մի թաղի, մի զիւղի վրայ: Արեւելքում մահերը մի սոսկում են բերում իրանց հետ, որ աւերածի բոլոր ոյժն ունի, այնտեղ ողբերն իրանց յուսահատութեամբ զարհուրելի են, ամեն մի թաղումով կարծես մի տուն է փլչում, մի ընտանիք ջնջում:

Անչուշտ մահերի առթիւ կատարուող սուզը, թաղման ծէսերի յուսահատական մանրամասնութիւնները, ինչպէս նամակիս սկզբում ասացի, արտաքին նշան են այն հասկացողութիւնների, որ այս կամ այն ժողովուրդ կապում է մահուան զաղափարին, անդրշիրիմնան կեանքին, բայց դրա հետ միասին անուրանալի է, որ կան նաև շատ սօցիալական տնտեսական պատճառներ, որոնք մեծացնում են կորուստը և շատ անգամ իրաք աւերած առաջ բերում հարուածին ենթակայ ընտանիքի ծոցում:

Թողնենք դեռ այն մահերը, ուր խօսողը միմիայն սիրան է, կամ ինչպէս մեր երկրում ասում են «ջիգեարի մումուռ», երբ որ և է նիւթական պատճառ չի կարող խառ-

նուել սգին, երբ կիզիչ ցաւը իրը հիմունք ունի միմիայն մի սիրելու կորուստ. բայց այլ է խնդիրը, երբ այդ կորուստին, այդ հոգեկան, բարոյական զրկանքին աւելանում է նաև կեանքի նիւթական դժուարութիւնների մօտաւոր պերսպեկտիվան, երբ ընտանիքը անտէրութեան անողորմ վիճն է տեսնում իր տուած բացուած այն սե փոսին նայելիս, որ ծածկում է մի սիրելու դիակ: Ահա այս վերջին դէպօռմ մահերի առթիւ եղած սուկն ու յուսահատութիւնն ստանում է կրկնակի ուժգնութիւն, և ողբը չափեր է ընդունում, որից մարդու ազիքներն են գալարուում:

Ով երբ և իցէ տեսել է մեզանում մի բազմանդամ ընտանիքի մօր, այրու սուզը իր «զլխաւորի», իր «տէր ու տիրականի», իր ամուսնու համար, նա կը համաձայնի, որ դա սովորական ողբ չէ, դա յաւերով ուսած սրտի մի զեղումն չէ, այլ ինքնասպանութիւնն է. մի սրտաճմիկ կոչումն գէափի մահը, որ դայ մնայածներին էլ տանի, որովհետեւ անտէր են, էլ ապերել չեն կարող: Եւ արդարեւ, ով է հոգացողը, մտածողը նրա, այս ողորմելի այրու և նրա որբ մնացած զաւակների համար: Արեւելքում «զլխաւորից» զրկուած ընտանիքը, եթէ շատ մօտիկ սրտացաւ ազգական չունի, զոհ է ամեն տեսակ պատահականութեան, ամենաանողորմ ոտնձութիւնների, ենթակայ կատարեալ անտէրութեան, դատապարտուած ոչչանալու: Ես, որ արեւելցի եմ, տեսել եմ նկարազրած սուզերը, մասնակից եմ եղել շատերին, ծաշակել եմ նրանց պատճառած յուսահատութեան բոլոր զանութիւնը, տեսել եմ որբեր, այրիներ, այժմ տեսնում եմ նոյնը այստեղ և զարմանքով նկատում եմ, որ տարբերութիւնն ահագին է: Ինչ ուզում են ասեն, բայց համարձակ կարելի է ասել, որ արեւելեան «եթիսի» հասկացողութիւնը հաւասար չէ արեւմուտքի օրինակին և «որբեւայրին» հաւասար չէ այստեղի վեսնե-ին: Դու երեւի կը համաձայնուես ինձ հետ, որ «եթիմ» և «որբեւայրի» բառերը մեզանում այնտքան յուսահատութիւնն, այնքան խեղճութիւնն են պարունակում: որ զբանցից մահուան հոտ է փչում:

Եւ դա շատ հասկանալի է, սիրելիս, արեւելքում, ուր ընտանեկան, ազգակցական կապերն այնքան զօրեղ են, ուր ցեղական եսասիրութիւնը իր արտայատութիւնների մէջ ոչնչով յետ չի մնում անհատական եսասիրութիւնից, ուր թասիրը, ընտանեկան աւանդութիւնները, հաստատուած շահերի նոյնութեան վրայ շաղկապում են իրար այնքան հեռաւոր ազգականներ, նոյն արեւելքում կատարելապէս բացակայ է հասարակա-

կան խնամատարութիւնը, (assistance publique) և հազիւ թէ նա արտայայտում է «ողորմութեան» ստորացուցիչ և վատ ձեռագութիւն անունու «որբ և այրիներն» ու «եթիմները» եթէ տէր ու տիրական չունեն, համարեա մահու բաժին են. Այլ է այստեղ, ուր անհատը, նրա դոյցութիւնը իր մերձաւորներից դուրս դրուած է նաեւ ընդհանուր հասարակական խնամքի ներքոյ, որբերն ու այրիները երբէք անտէր չեն մնայ, նրանց շահերը հնարաւոր չափով պաշտպանուած են չարամիտ ոտնձգութիւններից, խեղճերի կրած ծանր կորստին չի միանում նաեւ ապագայ գառնութիւններով ու ցաւերով լի մի կեանք: Մի ուրիշ անգամ, գուցէ ես առիթ կ'ունենամ քեզ նկարագրելու, թէ այստեղ ինչպէս է կազմակերպուած հասարակական խնամատարութիւնը (assistance publique) գիւղերում, իսկ այժմ թոյլ տուր քեզ յիշեցնել թէ մեզանում հասարակութիւնն ինչ է անում որբերի համար: Օրէնք, ի հարկէ դոյցութիւն ունի, որ պարտք է դնում հասարակութեան վրայ խնամակալներ կարգել որբ երեխաների վրայ, կառավարել նրանց ստացուածքը և հայրութիւն անել: Ինչպէս տեսնում ես լաւ օրէնք է, բայց ինչ անես, որ երբ հասարակական խեղճը զարգացած չէ, պարտքի գիտակցութիւնը լայն կերպով չի ըմբռնուած և անզամ լաւ օրէնքի զործադրութիւնը վատ մարդկանց ձեռքում դառնում է մի կատարեալ չարիք, դու խօմ գիտես, թէ մեզանում խեղճ այրիները, մանաւանդ՝ եթէ ամուսնուց մնացած փոքրիկ ժառանգութիւն կայ, ինչպէս են աշխատում ամեն կերպ, որ իրանց որբերը ազատ մնան համայնքի խնամքից, նրա ընտրած խնամակալներից, որոնց հայրութիւնից սարսափելու բոլոր իրաւունքն ունեն, որովհետեւ փորձը ցոյց է տուել, որ այդ հայրերը միշտ քարուքանդ են անում որբերի փոքրիկ տնտեսութիւնը: Մեր գիւղական խնամակալների մասին խօսելիս միտս ընկաւ մի հետապքը օրինակ: Պարիզի վերջին ցուցահանդիսի գեղարուեստական բաժնում գրուած էր ի միջի այլոց մի բրօնգեայ արձան, որ ներկայացնում էր «փրկութիւն», դա մի յաղթանգամ մարդ էր, պատրաստ ձեռքի պարանը ձգելու ջրում խեղճուղին, բայց դէմքի արտայայտութիւնն այն աստիճան սարսափելի էր, որ ինձ հետ շրջող ընկերս ծիծաղելով ասաց՝ «Եթէ ես լինէի խեղճուղը ոչ մի պայմանով չէի համաձայնի բռնել այդ սարսափելի մարդու պարանը»: Մեր կողմերում որբերի խնամակալներն ինձ ակտմայ յիշեցնում են «փրկութիւն» ներկայացնող այն սարսափելի մարդը: հասկանալի է, թէ ինչո՞ւ «եթիմ» բառը այնքան սարսափ ունի իր մէջ արեւելքում:

Բարքերի տեսակէտից բնորոշ չես գանում նաև մեր երկրի հետեւեալ ասացուածքը՝ «Եթիմին ոչ ծեծիր, ոչ հայհոյիր, միայն հացը ձեռքից խլիր և ճանապարհ դիր»։ Անողորմ առած, որ սակայն իրազործւում է ամբողջութեամբ, ոչ միայն հացն են խլում որբի, այլ և ծեծում են, և' հայհոյում։

Ցը գրութիւն.

Ընկերդ՝

ԿՈՒՐԲԱԹ-ՀԱՐՈՒՆ

Ա Ն Հ Ա Տ Տ Ը Լ

(Ժողովրդական կեանքից)

Գ.

Անցել է մի ամբողջ տարի։ Ե... բաղաքից դէպի
Ն... գիւղը տանող մեծ ճանապարհի վրայ թունդ-թունդ
իրանց ձիերը քշում են երկու երիտասարդներ, ու-
րունց մինը ուսանողական խունացած համազդեստով,
իսկ միւսը՝ մահուդի չերքէզկայով, ճանապարհային կօ-
շիկներով և կակուղ չալ մորթէ գլխարկով։

—Իիտես ինչ կայ, Արշակ-Չան, գնանք իշնենք ջրա-
զացում, այն ուռենիների տակ, Օ... գիւղի մօտ. ուզար-
կենք ինքնաեռը բերեն, թէյ խմենք, հանենք խուրջի-
նիցս պաշարեղէնը, որ մայրս և Սօնան են թիւել, պատ-
րաստել. ախ, որքան ուրախ կը լինի Սօնան էդուց բեղ
տեսնելով....

Եւ երիտասարդը խոր հառաջեց։

—Իսկ բեղ տեսնելով, շարաճճի, ասաց ուսանովը,
նա, երևի կը տրտմէ, չէ։

—Ախ, Արշակ ջան, դարդերս մի նորոգիր. Սօնա-
յին ես երբէք չեմ արժանանայ. հայրդ երբէք այդ-
բանին չի համաձայնի։ Զէ որ ես մի քնձոռու և տրե-
խաւոր գիւղացի եմ, իսկ նա մէլիքի թոռն և բէդի
ազջիկ։

—Ելի այդպէս յուստհատեցիր, Սարգիս, ինչ փոք-
րահոգին ես եղել. չէ որ Սօնան բեղ սիրում է. Էլ ինչ
ես ուզում. ով կարող է, և իրաւունք ունի բռնանալ

նրա կամքի վրայ, երբ որ չափահաս դառնայ: Բայց շտապենք, շտապենք, չափ դցենք ձիերը. ես այնտեղ, ծառերի տակ, այս գիշերը ահադին բաներ ունեմ պատմելու քեզ. ես գեռ քեզ ոչինչ չեմ պատմել. հանդիստ եղիր. երկու երեք ամսից յետոյ Սօնան ձեր տանը նոյնապէս հարս կը լինի, ինչպէս Աննան մեր տանը: Յիշում ես Սննային, մեր վարժապետի սիրուն աղջկան: որքան նա գեղեցկացել է այժմ և որքան զարդացել:

Եւ երիտասարդը մտրակեց ձին, նրա յետեկոց սլացաւ և Սարգիսը:

Մութը արդէն կոխել էր, լիալուսինը փայլում՝ էր երկնակամարի վրայ, երբ երիտասարդները հասան ջրաղացին, որի գոան առաջ, ոտքից մինչև գլուխ ալիւրաթաթախ ծերունի ջրաղացպանը նստած՝ բաղարջ էր թխում օջախի վրայ: Տեսնելով հիւրերին և ճանաչելով նրանց, նա իսկոյն մի կարպետ փուեց ուռենիների տակ, ջրաղացում բանող գործաւորին ուղարկեց գիւղը ինքնառ բեռ բերելու և մի քանի բոպէից յետոյ ծառերի տակ, երեկոյեան թարմ զովութեան մէջ հանգստանում էին Արշակը և Սարգիսը, ու բանալով խուրջինը, փռելով սփռոցը, հանեցին լոշ, պանիր, կաթնահունց, տապակած հաւ և սկսեցին ուտել, հրաւիրելով և ծերունի ջրաղացպանին:

Երբ վերջացրին ընթրիքը, երիտասարդները պառկեցին մէջքի վրայ, կող առ կող և լուռ զմայլում՝ էին գիշերային գեղեցիկ տեսարանով: Նրանք որոշել էին մի քիչ հանգստանալ այդտեղ և օգուտ բաղելով լուսնեակ գիշերից, ճանապարհորդել ու լուսաբացին հասնել ն... գիւղը, որ գեռ բաւական հեռու էր:

Այդ երիտասարդներից մինը Զօհրաբ բէգի որդին էր՝ Արշակ բէգը, որ աւարտելով ուսումը Մոսկուայի համալսարանում, վերադառնում էր, իսկ միւսը մեզ արդէն ծանօթ Սարգիսը՝ Թովմաս ապօր որդին:

Լուսինը արդէն տարածել էր իր արծաթափայլ շողերը դաշտերի, արտերի, բլուրների վրայ. Փչում էր

մի մեղմ հով, որին խառնւում էր խոտերի դէղերից
փշող հաճելի բուրմունքը:

Արշակը առաջինը խզեց տիրող լոռվթիւնը.

—Որքան սիրում եմ այս լուսնեակ գիշերը,
այս արծաթափափայլ դաշտերը, արտերը, այս կիսա-
կործան ջրաղացը, այս ծառերը, այս կարկաչող առուն,
արտասանեց Արշակը մեղմ և զգացուած ձայնով, կար-
ծես պատասխանելով այն ներքին զգացման, որով ողո-
զուած էր ամբողջ նրա սիրտը. ախ, որքան բաղցը է հայ-
րենի հողը, հայրենի ջուրը, որքան բաղցը յիշողութիւն-
ներ է նա յարուցանում մեր մէջ: Որպիսի բերկրանքով
շնչում եմ խոտի դէղերի այս անուշահոտ բուրմունքը,
ինչքան սիրելի են ինձ այս նահապետական սայլերը,
դիւղացու հուժկու բազուկների այս մանդաղահատու-
թիւնը. ինձ թւում է, որ այստեղ, խորհրդաւոր և բիւր
զգացումներ զարթեցնող այս բնութեան մէջ, այս աշ-
խատասէր, ժրաջան դիւղացիների մէջ պէտք է որոնել
խակական, պարզ, անպաճոյն և երջանիկ կեանքը. ինձ
թւում է, որ հէնց այստեղ մենք պարտաւոր ենք դոր-
ծադրել մեր բոլոր ոյժերը, մեր ուսումը: Ես շա-
րունակ յիշում էի, որ մենք երդուել ենք ծա-
ռայել մեր հայրենի հողին, մեր ժողովրդին: Հաւա-
տա, որ նոյն իսկ անախորժ և տիսուր լուրերը հօրս
դժբախտութեան և մեր պապենական հարստութեան,
կալուածների անհետացման մասին, անզօր էին հանդի-
սանում ջնջել սրտից՝ հայրենիք շուտ վերադառնալու
ջերմ փափագը: Ես չը գիտեմ, ինչ ներքին, մի զօրեղ
մազնիսական ոյժ է թագնուած մեր ծննդավայրի հողի,
ծառերի, բարերի, սարերի, անտառների, առուների,
գետերի, այս անմշակ, խոպանացած, բաղաբակրթու-
թիւնից հեռու խուլ անկիւնի մէջ, որ մեզ անզսպելի
կերպով ձգում է դէպ իրան. գուցէ նրա համար, որ
մեր մանկական յիշողութիւնները, մեր պապերի, հայ-
րերի կրած տանջանքները, մեր ամբողջ պատմական
անցեալը կապուած է այդ բիրտ ու կոպիտ սպառաժ-

ների, սարերի, այդ անմշակ ծմակների ու խորտ ու բորտ հովիտների հետ:

— Ուրեմն դու տիրում էիր, Արշակ, Մոսկուայում: ուրեմն քեզ չէին դրաւում մայրաքաղաք իզուարճութիւնները:

— Տիրել, միթէ ժամանակ կար տիրելու, միթէ ժամանակ կար զուարճանալու. ես և մի քանի ոռու ու մալուուս ուսանող ընկերներ այնքան էինք գրաւուել ուսումնվ, համալսարանի գասերով, որ քիթներս սրբելու անգամ ժամանակ չէինք ճարում: Այս, ինչքան գեղեցիկ, վեհ է համալսարանը, գիտութիւնը և ինչ հիանալի, իդէալական ձգտումներով է նա լցնում ուսանողների սիրտը, և ես որ մի ժամանակ սկսել էի շեզուել իմ կուռմից, հենց շնորհիւ այդպիսի մի քանի իդէալիստ ուսանողների սթափուեցի և աւելի պինդ յարեցի այն իդէալին, որին հաւատարիմ մնալ երդուեցինք քեզ հետ, սիրելի Սարդիս, երբ աւարտեցինք մեր ուսումը թեմական գպրոցում:

— Ինչպէս, ինչպէս, պատմիր, շատ հետաքըրքիր է:

— Ես արդէն երկրորդ կուրսումն էի. մեր համալսարանում, այդ տարի ուսումն աւարտող ուսանողների թւում կային երկու ուսուս և երկու լատիշ գիւղացիների որդիներ Արխանգելսկի և Վիլնայի նաև հանգներից, որտեղ բնութիւնը այնքան անհրապոյր ու խղճուկ է, բնակիչները աղքատ ու ողորմելի. այդ ուսանողները ամենաառաջադէմ և աչքի բնկնող անձինք էին իրանց ցոյց տուած ընդունակութիւններով. համալսարանի վարչութիւնը նրանց համար գտել էր շատ շահաւետ ու փառաւոր պաշտօններ, որտեղ նրանք կարող էին շատ և շատ առաջանալ, բարձր աստիճանների հասնել. կեանքը, յարմարութիւններով, զուարճութիւններով, ամեն տեսակ բարիքներով լի կեանքը բաց էր նրանց առաջ, ի հարկէ, և հարուստ հարսնացուներով, բայց ինչ ես կարծում, նրանք մերժեցին այդ բոլորը,

մերժեցին անձնական երջանկութիւնը և ասացին. «Մեր հայրերը խեղճ գիւղացիներ են, մենք ուսումն ենք առել մեր ծնողների ճակատի դառն բրատինքով վաստակած դրամով և հասարակական նպաստներով. մեր պարտըն է վերադառնալ նրանց մօտ, հատուցանել նրանց մեր պարտքը. մեղ սպասում է մեր գիւղը, որի համար մենք ճրագ պէտք է լինենք, մենք իրաւունք չունենք թողնել մեր գիւղը խաւարի մէջ» եւ ինչ ես կարծում. նրանք գնացին իրանց ցուրտ և իրզ ճուկ գիւղերը և վերջին երկու տարուայ ընթացքում մեզ հասնում էին լուրեր որ նրանք հրաշքներ են գործում այնտեղ. նրանք, փայլուն համալսարանաւարտներ, ստանձնել են հասարակ գիւղական ուսուցչի պաշտօն, նրանք օգնում են գիւղացիներին իրանց խորհուրդներով, մանր ժողովրդական կրեդիտներ են ստեղծում, սովորեցնում են գիւղացիներին կատարելագործուած մեքենաներ գործադրել երկրագործութեան մէջ, կիրակնօրեայ դպրոցներ են հաստատում, թոյլ չեն տալիս որ գիւղացիները ընկնեն վաշխառուների ձեռքը, զարգացնում և տարածում են փոխադարձ օգնութեան ընկերակցութեան գաղափարը և գիւղացիները արգէն պաշտում են նրանց:

«Երբ նրանք մեկնում էին Մոսկուայից, ուսանողները գնացին նրանց ճանապարհ գնելու. նրանցից մինը, լատիշ ուսանողը, մի այնպիսի ճառ ասաց հրաժեշտի ժամանակ, որ մտրակի ազդեցութիւն ունեցաւ իմ վրայ. ես սթափուեցի, վերածնուեցի բարոյապէս և այնուհետեւ ես աշխատում էի անընդհատ, շարունակ, պաշարում էի գիտութիւն, և ահա, աւարտելով ուսումն յօգուտիմ հայրենիքի, իմ ժողովրդի, որի բարօրութեան համար այնքան աշխատել և տքնել է իմ պապը. ես այնպէս եմ կարծում, որ իմ վրայ ամենից շատ բարոյական պարտաւորութիւն է ծանրացած աշխատելու իմ գիւղի և գաւառի ժողովրդի համար, ի նկատի ունե-

նալով այն չարիքը, որ հասցրել է նրան հայրս։ Եւ ահա, Սարդիս ջան, ես այստեղ եմ, բռ մօտ և մենք ձեռք ձեռքի տուած, իբրև ժողովրդի զաւակներ, կը գործենք։ Դու ուրախ ես, այնպէս չեւ։

—Ոհ, այնքան ուրախ, որ բացատրելու համար խօսքը պակասում է ինձ. ես ժամը, բոպէն հաշում էի, թէ երբ կը գաս. ես ագահարար լափում էի այն գըրքերը, որ դու ուղարկում էիր ինձ իմ ինքնակրթութեան համար. ես արդէն շատ բան գիտեմ, արդէն դրել եմ մեր ապագայ գործունէութեան հիմքը. գիւղի երիտասարդները անհամբեր սպասում են քեզ, միայն ափսոս, որ...

—Ահ, որպիսի երջանկութիւն, Սարդիս-ջան, ընդհատեց ընկերի խօսքը Արշակը, առանց նոյն իսկ լսելու վերջինը, որքան բախտաւոր կը լինենք մենք, ես՝ ամուսնացած Աննայի հետ, դու՝ Սօնայի հետ։ Աննան կը բանայ և կը կառավարէ օրիորդական դպրոցը, կը սովորեցնէ Սօնային օդնել իրան. մենք ևս, ի հարկէ, կը զբաղաւենք Սօնայի, իմ թանկադին քրոջս ինքնակրթութեամբ, իսկ ես և դու կը բանանք տղայոց դպրոց, կը կազմուկերպենք չափահաս երիտասարդների համար կիրակնօրեայ կամ երեկոյեան դասախոսութիւններ, կը հաստատենք փոխատու կամ մանր կրեդիտի ու փոխադարձ օգնութեան ընկերակցութիւններ, որպէս զի ազատենք գիւղացիներին վաշխառուների ճիրաններից, կը սովորեցնենք գիւղացիներին խելացի գիւղատնտեսութիւն, մի խօսքով, կը գործենք, կաշխատենք, որքան կարող ենք, որքան մեր ոյժը ներում է։ Դու կը տեսնես, որ մենք կը կերպարանափոխենք գիւղը տասնտարուայ ընթացքում։

—Ախ, հառաչեց Սարդիսը, երանի թէ այդ մեր ցանկութիւնները իրադորժուէին, բայց ես շատ եմ կասկածում։

—Ինչու, ինչ պատճառ ունես։

—Դու մնուանում ես, որ հայրդ ոչ միայն չի հա-

մաձայնի Սօնային ինձ տալ, այլ և թոյլ չի տայ, որ դու ամուսնանաս Աննայի հետ։ Նա շարունակ ասում է, որ դու պէտք է պրիստաւ, կամ ըննիշ, նոյն իսկ գաւառապետ դառնաս և սպառնում է դիւղացիներին, որ քեզանով մեր համար կը գայ. նա մտադիր է ամուսնայնել քեզ հարուստ բէգի աղջկայ հետ։

—Դու միամիտ մնայ. Ես նրա համար չեմ տանջուել, շարչարուել, անքուն, քաղցած մնացել, ուսում առել, որ պրիստաւ դառնամ կամ ամուսնանամ մի աղջկայ հետ, որին չեմ սիրում։ Հայրս ոչ մի իրաւունք չունի բռնանալ իմ և Սօնայի կամքի վրայ, ես արդէն չափահաս եմ, իսկ Սօնան Յ տարուց յետոյ կը դառնայ չափահաս և նա այնքան ջերմ սիրում է քեզ, որ երբէք յանձն չի առնի ուրիշի գնալ։ Հայրս արդէն իրան և խեղճ մօրս դժբախտացրեց, նա իրաւունք չունի մեզ ևս դժբախտացնել, ես այդ թոյլ չեմ տայ։ Մի ցաւ որ ունեմ, այդ այն է, որ ես հոգ չունեմ։ դուցէ և տուն. ախ, ինչքան բախտաւոր կը լինէի, եթէ պապիս ագարակներից գոնէ մինը մնացած լինէր, ինչպէս և մեր օջախը, պապենական տունը. բայց հոգ չէ, ես ունեմ բաղուկներ, աշխատութեան ընդունակ բաղուկներ. դու էլ ինձ կօգնես և մենք երջանիկ կը լինենք, կը հասնենք մեր մուրաղին։

—Դու, Արշակ ջան, հոգի և օջախի մասին դարդ չանես, դու կունենաս պապիդ. մեծ ագարակը և օջախը։

—Ինչպէս, ինչպէս, զարմացած և ուրախացած հարցրեց Արշակը։

—Եհ, պատմեմ, թէն հայրս չէր ուզում որ դու վաղօրօք իմանաս։ Հայրս, կամենալով հատուցանել մէլիք Սահակի իրան արած բարերարութիւնները, իմանալով թէ որքան քեզ ցաւ պէտք է պատճառէ պապենական կալուածներից զրկուելը, գնել է աճրդի ժամանակ մեծ ագարակը և ձեր տունը, և որոշել է քեզ

նուիրել, իբրև Մէլիք Սահակի թոռան, հէնց որ հաստատուեցիր գիւղում:

—Ոչ, որքան ազնիւ մարդ է Թովմաս ապերը, ինչքան բարի է նա. ես անպատճառ կը վերադարձնեմ նրան գումարը, երբ որ ամենափաքը հնարաւորութիւն կունենամ:

—Ոչ, ոչ, այդպէս բան չանես, հայրս խիստ կը վիրաւորուի. նա շատ ինքնառէր մարդ է. վերջապէս, միւնոյնը չէ. եթէ դու չընդունես, Խօնային պէտք է տայի ես:

—Իմ սիրելի, ազնիւ ընկեր, համբուրելով Սարգսին, ասաց Արշակը, որքան բարի ես: Ես այժմ հազարապատիկ երջանիկ եմ: դէ, բաւական է, հաւերը արդէն կանչում են. վեր կենանք և ճանապարհ ընկնենք:

Կէս ժամից յետոյ երեք ձիաւորները ուրախ-ուրախ երգելով, աշտանակում էին լուսնի վերջին շողերով փայլող ճանապարհի վրայ, որ տանում էր ն... մեծ գիւղը:

Դ

Հինաւուրց տունը կամ մէլիքենց բերդը մի տարուայ ընթացքում աւելի էր քանդուել, ամայացել Արշակը, պապենական օջախի այս ամայութիւնը տեսսաւ սրտի խորին ցաւով:

Հեռաւոր աշխարհից վերադարձած որդու գալըստից երեք օր էր անցել միայն և հայրը կարծէք էլ ուրախ չէր տեսնել նրան: Երկումն ես, հայր և որդի, տնից դուրս չէին գալիս և վաւկուել էին իրանց սենեակներում: Կիրակի առաւօտեան, երբ պատարագը վերջացաւ և գիւղացիները եկեղեցու բակում հաւաքուեցին, իմացուեց, Շուշան աքոր հաղորդած տեղեկութիւններից, որ հօր և որդու մէջ մեծ ընդհարումն է եղել և Զօհրաբ բէդը փրփրած, կատաղած խօսում: Հայհոյում է որդունք եւ զարմանալի բան, երբ գիւղացիները իմացան, որ հօր ու որդու ընդհարումի պատ-

ճառն այն է, որ Արշակը չէ կամենում չինօվսիկ դառնալ, ինչպէս հայրն է ցանկանում, այլ կամենում է մընալ գիւղում, երկրագործութեամբ և ուսուցչութեամբ պարապել. իրանք ևս շատ զարմացան: Որտեղ է տեսնուած, որ բէզզագէն այդպիսի բաներով զբաղուի, որ նա չինօվսիկութիւնը թողնի. միթէ դրա համար է ուսումն ստացել, որ գիւղացի դառնայ:

— Որքան ես գիտեմ, ասայ Թովմաս ապերը, բէզզագէն խելօք, հասկացող տղայ է, նա, առանց պատճառի չէ այդպէս վարւում, նա մեր գիւղի լաւութիւնն է ցանկանում և մտադիր է պապի, մէլիք Սհակի օջախը նորից շենացնել ու վառ պահել: Գնանք գիւղի կողմից բարի գալուստ մաղթենք և չնորհաւորենք:

Եւ գիւղի ծերունիները, քահանայի առաջնորդութեամբ գիմեցին մէլիքենց օջախը: Երբ նրանք մտան մեր նկարագրուած թալարը, Զօհրաբ բէզզը, որ մի տարուայ ընթացքում, աւելի ծերացել, կռացել և մուայլուել էր, յուղուած, այլագունուած ման էր գալիս պատշտամրի վրայ:

— Աչք լոյս, բէզ, ասացին գիւղացիները, գլուխտալով: Բէզզագէն եկել է, ոտքը խէրով լինի ձեզ համար, այս օջախի համար, մեր գիւղի համար:

Զօհրաբ բէզզը խօժու նայուածք ձգելով գիւղացիների վրայ, ինչ որ փնթփնթաց և գուրս եկաւ թալարից: Մի քանի րոպէից յետոյ ներս մտաւ Արշակը: Ի տեսնրան, գիւղացիները ոտքի կանգնեցին և գլուխ տուին: Երիտասարդը շտապով մօտեցաւ քահանային, համբուրեց ձեռքը, ապա մօտեցաւ Թովմաս ապօր և միւս ձերունիներին ու բարեեց: Թովմաս ապերը համբուրեց երիտասարդին և հրճուանքով ասաց.

— Մի տեսէք է, ինչ գեղեցիկ ջահիլ է, կատարեալ մէլիք Սհակն ինքն է. Աստուած տայ, որդի, նրա փառքին, համբաւին, նրա անունին տիրանաս:

— Ամէն, կրկնեցին ծերունիները:

— Բարի ես եկել բէզզագէ, շարունակեց Թովմաս:

ապերը, աչքի վրայ դու տեղ ունես։ Մենք լսեցինք,
որ դու ուզում ես գիւղում մնալ, մեղ պէս գիւղացի
դառնալ, բայց միթէ այդ կարելի է։

—Բայց ինչո՞ւ չի կարելի։

—Ոլովհետև բոլոր բէգադէները այդպէս չեն ա-
նում։ Նրանք չինօվնիկ են գառնում, որը պրիստաւ, որը
ըննիչ, որը օֆիցէր, բայց եթէ մեր մէջ մնաս, մենք
շատ ուրախ կը լինենք, մենք քեզ մեր աչքի լոյսի պէս
կը պահենք, միայն լաւ կը լինէր պրիստաւ կամ քննիչ
դառնայիր, մեզ համար էլ շատ լաւ կը լինէր, դու մեզ
չէիր նեղացնի, մեր գարդին դարման կը լինէիր, մեզ
ճանապարհ ցոյց կը տայիր։

—Մի վախենաք, ես ձեզ ցոյց կը տամ, որ առանց
պրիստաւ, չինօվնիկ էլ լինելու, ես ձեզ օդտակար
կը լինեմ, ինչպէս օգնում էր ձեզ պապու ես շուտով կը
բանամ այստեղ ուսումնարան և դուք կը տեսնէք, որ
մեր գիւղը բոլորովին կը կերպարանափոխուի,

Եւ երիտասարդի թախծալի գէմքը պայծառացաւ
ու ուրախացած, զուարթացած՝ սկսեց զրոյց անել
գիւղացիների հետ։ Նրա պարզ խօսակցութիւնը, նրա
գեղեցիկ և համակրելի գէմքը, նրա աշխոյժութիւնը և
թարմութիւնը և այն հանդամանքը, որ նա բէգադէ,
ուսում առած մարդ, չէր արհամարհում խօսել գիւղա-
ցու հետ իբրև իր ընկերի, բարեկամի հետ, այնպէս
գրաւեցին գիւղացիներին, որ դուրս գալով մէլիքենց
տնից, նրանք երկար ժամանակ միայն Արշակի, նրա
խելքի և բարութեան մասին էին խօսում։

Մնալով միայնակ թալարում, Արշակը սկսեց ման
գալ, բոլորովին մտազբաղ և անձնատուր իր գեղեցիկ
յոյսերին։

—Ես ցոյց կը տամ այս բարի, պարզ, տգէտ գիւ-
ղացիներին, թէ ինչքան օդտակար կարող եմ լինել նը-
րանց։ Ես կը վերակենդանացնեմ պապիս յիշատակը,
բայց պէտք է վերջացնել հօրս հետ, պարզել ամեն

բան, վճռական լինել. թողնել ինձ և Սօնային այս աշնորոշ գրութեան մէջ անկարելի է:

Թալարը մոտաւ Զօհրաբ բէդը և նրա կնճռուտած, մուայլ դէմքը նոյնպէս ցոյց էր տալիս, որ հասել է վճռական ժամը:

—Ես զարմանում եմ, որ դու, ուսումն ստացած մարդ, ժամերով խօսում ես քնծոսու և տրեխաւոր գիւղացիների հետ. ախր նրանք ինչ քո թայ մարդիկ են: Վերջապէս, հոգիս կոկորդս է հասել. ես քո ասածներդ մինչեւ այժմ հանապի տեղ էի ընդունում: յոյս ունեմ խելքի ես եկել և ինքդ էլ տեսնում ես, որ քո դիտաւորութիւններդ անօգուտ բաներ են:

—Ո՞չ, հայր, դու սխալում ես. ես դիտաւորութիւնս չեմ փոխել. ես հաստատ եմ իմ որոշման մէջ, ես քեզ պարզ յայտնեցի երէկ, որ պէտք է ամուսնանամ Աննայի հետ, որին ես սիրում եմ, որին խօսք եմ տուել. մենք միասին պէտք է ուսումնարան բանանք, ես պէտք է պարապեմ դիւղատնտեսութեամբ և ես յոյս ունեմ, որ մենք ամենքս բախտաւոր կը լինենք:

Զօհրաբ բէդի դէմքը կապտեց բարկութիւնից.

—Այդ քո վերջին խօսքն է:

—Այս, հայր, վերջինը:

Նա զսպեց զայրոյթը և մեզմ, բայց յուղուած ձայնով ասաց.

—Որդիս, բայց դու ինձ չես խնայում. դիշեր ցերեկ աչքս ջուր է կտրել, սպասելով, որ ուսումդ կ'աւարտես, կը դաս, լաւ պաշտօն կը ստանաս, մեր հարուստ բէդերից աղջիկ կուզես և պապիդ, հօրդ քանդուած տունը կը վերականգնեցնես, ինչպէս արել և անում են քո բոլոր ընկերները, միւս բէդզադէները: Տես, մէլիք Խորայէլենց տղան, որ միայն գաւառական դպրոցում է ուսումն առել, այսօր ինչ մեծ պատուի է տիրացել. նա իրանց գաւառի պրիստաւն է և 4—5 տարում լաւ տուն, տեղ, այգի, ջրաղաց, արտեր, փող է ձեռք բերել. հօրը պարտքերը տուել, բանդուած տունը

վերաշինել։ Այս, տղան այդպէս կը լինի. նրա առաջ գողում են գիւղացիները և նա էլ նրանց երես չէ տառիս իսկ դու, որ համալսարանն ես աւարտել, չէ որ դու կարող ես աւելի առաջ գնար։

—Ոչ, հայր, նոյնպէս յուզուած պատասխանեց Արշակը. հենց նրա համար, որ ես համալսարանն եմ աւարտել, ես չեմ կարող այն անել, ինչ որ անում է մէլիք Խորայէլենց տղան. ես չեմ կարող կաշառքներ ուտել, հարստահարել գիւղացիներին, իսկ ոռնկով հարըստութիւն, տուն, տեղ ձեռք բերել անկարելի է։

—Բայց ինչի վրայ ես դրել յոյադ, չէ որ ես ոչինչ չունեմ, պարտքի մէջ խեղդուած եմ. վերջապէս, ինձ չես խղճում, դոնէ քրոջդ խղճայ. չէ որ նա հասել է, մարդու պէտք է տալ, իսկ բէգզադէներից ով նրան կուղի առանց փողի, օժիտի։

—Յոյս դրել եմ իմ ուսման և այս բազուկներիս վրայ, ասաց երիտասարդը. ինչ վերաբերում է Սօնային, նա շատ բախտաւոր կը լինի, որովհետեւ նրան կը տանը Սարգսին, որին նա սիրում է և որը պաշտում է նրան առանց փողի և օժիտի վրայ աչք տնկելու։

—Ի՞նչ, ի՞նչ, պոռաց Զօհրաբ բէգը կատաղած, աղջկանս տամ մի զիւղացի լակոտի. Տէ՛ր Աստուած, միթէ սա իմ որդին է։ Ամենեւին, ես երբէք թոյլ չեմ տայ, որ Սօնան ամուսնանայ Սարգսի հետ, որի հայրը մեր տան ծառան է եղել. աւելի լաւ է տանը պառաւի, քաղցածութիւնից մեռնի, քան այդպիսի խայտառակութիւն տեսնեմ ես. ես երբէք, երբէք չեմ հաշտուի այդ մտքի հետ. ես կ'անիծեմ երկուսիդ էլ, ես ձեղ տնիցս դուրս կ'անեմ։

Եւ շտապ շտապ քայլելով թալարի մէջ, նա աւելի և աւելի էր յագուրդ տալիս իր զայրոյթին։

Արշակը, յուզուած, վշտացած վեր կացաւ տեղից և կանգնեց հօր առաջ։

—Ես շատ ցաւում եմ; հայր, որ դու այդպէս ես մտածում. բայց ահա, խնդրեմ, մի բոպէ հարցրու խըդն-

մտանքիդ, արդեօք դու, որ ապրել ես իբրև բէդզադէ, երջանիկ ևս եղել, արդեօք երջանիկ էր խեղճ մայրս. արդեօք դու կարողացմը պահել և աւանդել որդիներիդ պապենական այն ժառանգութիւնը, որ հայրի թողեց քեզ:

—Ես, ես, կմկմաց Զօհրաբ բէդը և մնաց շփոթուած կանգնած:

—Ոչ, հայր, շարունակեց Արշակը, դու կործանեցիր հօրդ տունը, օջախը, դու թշուառացրիր մօրս կեանքը, դու կորցրիր գիւղացիների սէրը, արատաւորեցիր իմ պապի անաղարտ անունը և դու այսօր դեռ չես խղճահարւում, դու կամենում ես քո զաւակների կեանքը, երջանկութիւնն էլ փշրել: Դու իրաւունք չունես խորտակել նրանց կեանքը, անբախտացնել նրանց. մի լաւ նայիր հոգուգ մէջ, խղճմտանքիդ խորքը և հարցրուքեղ. իրաւունք ունես այդ անելու, ժամանակ չէ արդեօք ուղղել այն շարիքը, որ դու գործեցիր: Եւ որովհետեւ դու ինքդ չես ուղում ուղղելու, ես, ես կ'ուղղեմ այդ շարիքը, ես կը վերականդնեմ քո և պապիս պատիւը: Այսուհետեւ, անիծիր, եթէ կամենաս, արա ինչ որ կուզես:

Եւ երիտասարդը, վեր առնելով դլխարկը ու փայտը, դուրս նետեց իրան սենեակից, յուղուած, արտասուրը աչքերին:

—«Դու իրաւունք չունես խորտակել քս որդիների բախտաւորութիւնը, կեանքը, ես պէտք է ուղղեմ քո գործած չարիքը»—այս խօսքերը անընդհատ թնդում էին Զօհրաբ բէդի ականջին և մի րոպէ անդամ հանդիստ չէին թողնում նրան:

Որդու մեկնելուց յեառյ, նա պառկել էր տախտի զրայ և լուռ, անշարժ, աչքերը սեեռած առաստաղին, մտածում էր, բայց չէր կարողանում կենտրոնացնել մոքերը: Նրա հոգին յուղուած էր. «Ո՞նչ ասաց նա.

շարսւնակ մտմտում էր նա, լաւ նայիր հոգուդ մէջ, խղճմտանքիդ խորը»։ Եւ նա վախենում էր նայել այդ հոգու մէջ, այդ խղճմտանքի խորքի մէջ. նա կամենում էր մոռանալ այդ խօսքերը, բայց նրանք, շարսւնակ, վերադառնում էին, կանգնում էին նրա առաջ, կարծես գրուած լինէին մեծ տառերով՝ քարետախտակի վրայ և նա թէև աչքերը փակում էր, բայց տառերը, մեծ, խոչոր տառերը ծակում էին նրա աչքը և նա կարդում էր. «Լաւ նայիր հոգուդ մէջ, խղճմտանքիդ խորը»։ Եւ վախվսելով, կամաց կամաց նա նայեց...։ Նրա առաջ անցան մէկ մէկու յետևից տեսարաններ, որ երբէք նա չէր յիշել և ոչ մի անգամ. նա տեսաւ հօրը, մէլիք Սհակի վշտահար դէմքը, մօր կըսկիծով և արտասուբով լի աչքերը, նրա մահը. նա յիշեց իր կնոջը, գեղանի Հռիփամէին, տեսաւ ինչպէս նա ազի արտասուբներ էր թափում, իսկ ինքը միայն ծիծաղում, կամ բարկանում և կամ ծեծում էր խեղճ, թշուառ կնոջը։ Նա շատ պարզ տեսաւ իր ցոփ, շուայտ կեանքը, անառակ զուարծութիւնները իր ընկերների հետ, նա տեսաւ, ինչպէս մէկ մէկու յետևից գնում էին հօր թողած բարիքները—այդիները, դաշտերը։ Եւ զարմանալի բան, նա նոր յիշեց, որ նոյն իսկ պապենական օջախը իրան չէ պատկանում. նա գառնապէս ժալտաց, յիշելով, որ որդուն սպառնում էր վոնդել այդ օջախից։ Եւ ինչ օգուտ էր տուել այդ կեանքը. հայրը, մայրը կսկիծից գերեզման իջան, կինը նոյնական օջախը իրան չէ պատկանում. նա գառնապէս ժալտաց, յիշելով, որ որդուն սպառնում էր վոնդել այդ օջախից։ Եւ ինչ օգուտ էր տուել այդ կեանքը. հայրը, մայրը կսկիծից գերեզման իջան, կինը նոյնական օջախը իրան չէ պատկանում. գիւղացիները սկսեցին ատել նրան, ընկերները, բարեկամները հեռացան, իր սեփական զաւակները խեղճութեան մատնուեցին և որդին ստիպուած էր գասեր տալով ապրել ու ուսումնատանալ. ոչ մի բան չը մնաց, ոչ ոքի համար նրա կեանքը օգուտ չը բերեց։ Եւ ահա այսօր ամենքը հեռանում են նրանից, նոյն իսկ իր հարազատ զաւակները, որոնց նա կամենում է անիծել։ Նա իր կեանքի մէջ առաջին անգամ ունեցաւ այն գիտակցութիւնը, թէ իր կեանքը

որքան անօգուտ է եղել։ Բայց Տէ՛ր Աստուած, միթէ
հաշտուել այն մտքի հետ, որ նա այլ ևս հնարաւորու-
թիւն չի ունենայ լուծել իր վրէժը այդ ամբարտա-
ւանացած, գլուխները բարձրացրած գիւղացիներից,
վերադարձնել այն վիրաւորանքները, որ իւր դասա-
կարգի մարդիկ, բէդերը և բէդզադաները հասց-
նում էին իրան, երբ ազքատացաւ. նա ուրեմն
այլ ևս չի գնայ որսի. ճաշեր չի տայ, ձիարշանե-
րին չի մասնակցի։ Եւ նա մէլիքի տղայ, բէդ, նա
պէտք է հօր երեկուայ սպասաւորի հետ խնամնայ, իր
աղջիկը տայ գիւղացու և նրա որդին, բէդզադէ, պէտք է
այդ ողոտ գիւղացիների երեխաներին վարժապետու-
թիւն անի, իսկ նրա տունը պէտք է հարս գայ մի ազքատ
վարժապետի աղջիկ։ Ոչ, ոչ, աւելի լաւ է մեռնել, գլուխ
վերցնել, փախչել, քան տանել այդպիսի անպատճութիւն,
վիրաւորանք։ Եւ թող մարդիկ չասեն, որ մէլիք Մհակի
թոռնը, Զօհրաբ բէգը, որ մի ժամանակ գաւառապետ-
ների, պրիստաների հետ նստում, վեր էր կենում; հի-
մա գարձել է գիւղացու և բազցած վարժապետի թայ։

Նա փակեց աչքերը և աշխատեց քնել, բայց բունը
փախել էր, իսկ որդու թափծալի գէմքը կանդնած էր
նրա առաջ և նրա խօսքերը նորից հնչեցին. «լաւ նա-
յիր հոգուդ մէջ, խղճմտանքիդ խորը»։ Նա աշխատեց
հեռացնել իրանից այդ գէմքը. բայց այս ինչ է. մի
այլ ուրուական կանգնած է նրա առաջ. դա Մէլիքն է,
ինքը՝ Մէլիքը. Նա պարզ, մէկին կերպով արտասանում
է. «Թու արատաւորեցիր իմ անազարտ անունը, դու
քանդեցիր իմ օջախը, ինչու ես արգելը լինում, որ իմ
թոռնը վերականգնէ իմ անունը և օջախը. ինչ վատ
քան կայ, որ նա կամենում է գիւղացի մնալ. ինչ իրա-
ւունքով դու փշու՞՞ ես նրա և քրոջ երջանկութիւնը,
կեանքը»։

Զօհրաբ-բէգը ծլունկ ելաւ այս ձայնից, տրորեց
աչքերը և պոռաց «՞վ ես դու»։ Բայց սենեակի մէջ
տիրում էր խաւար և ամեն բան լուռ էր. նա լսում

Էր իր սրտի արագ բաբախումը։ Նա նոր նկատեց, որ
մութը արդէն կոխել է. ամիողը օրը մնացել էր պառ-
կած, չէր զգացել ոչ ծարաւ, ոչ քաղց։ Բայց ուր են
անեցիք, ուր են Արշակը և Սօնան. միթէ, ճշմարիտ,
նրանք հեռացան, մենակ թողին իրանց հօրը։ Նա դուրս
եկաւ պատշաճամբը, շինական պարզ երգերը խփեցին
նրա ականջին, ինչպէս և հովուական սրնդի ձայնը։ Իր
տղան և աղջիկը նրանց հետ են, այդ գիւղացիների
հետ, ուրախանում, զուարճանում են նրանց հետ։ Ինքն
աւելորդ է և միայն խանգարում է նրանց։

Նա նորից մոտաւ սենեակը, դրեց գլխարկը, վերց-
րեց վերարկուն և մի փայտ և մթութեան մէջ խար-
խափելով, իջաւ երերուն սանդուխներից էյլանը ու
ապա ամայի բակը։ Ոչ ոք չը կար։ Առանց ինըն իրան
հաշիւ տալու, նա մոտաւ գիւղի խուլ փողոցները, հա-
սաւ աղջիւրին և ծռելով ճանապարհը, բարձրացաւ կէ-
ծանով դէպի բլուրը։ «Փախիր, փախիր», լսեց նա իր
յետեւից, «դու խանգարում ես ուրիշների կեանքը»։ Եւ
նա սկսեց վազելով իջնել բլից ու մտաւ հովիտը, որ
ծառերի ստուերից աւելի եւս մժնացել է։ Նա շունչ
առաւ, նստեց կազնու տակ և մէջը դէմ դնելով ծա-
ռի բունին՝ կուչ եկաւ. «ուր է գնում, ինչի է գնում»։
«Գնա, գնա, հեռացիր, գու. խանգարում ես միայն ու-
րիշներին, դու խանգարում ես քո զաւակների բախտա-
ւորութիւնը, այլ եւս աւելորդ է քո կեանքը»—նորից
լսեց նաեւ այնպէս որոշ, պարզ, որ կարծեց թէ մէկը
ծառի յետեւից է խօսում։ Նրա սիրոց վար ընկաւ, նա
վեր թուաւ տեղից և հետեւելով հովտի մէջ հօսող գե-
տակի լնթացըին, գնաց։ Քիչ քիչ նա յամբացրեց քայ-
լերը. լուսինը սկսել էր բարձրանալ և լուսաւորել ուր
ու ձոր. նա նորից բարձրացաւ մի բլից վրայ և հիա-
ցած, սքանչացած այն վեհ տեսարանով, որ բլից գա-
գաթից պարզում էր իր առաջ, պառկեց գետնին
ու սկսեց գիտել արծաթափայլ երկինքը։ Մի բոպէ ան-
գորբութիւն և խաղաղութիւն մտաւ նրա հոգու մէջ,

բայց յանկարծ խորին լռութեան մէջ լսուեց ձայնը.
 «Դու իրաւունք չունես խորտակել քո որդիների կեանքը,
 բախտաւորութիւնը, ես պէտք է ուզգեմքո չարիքները».
 նա տեսաւ իր առաջ կանգնած և Մէլիքի ուրուականը.
 «Դու տրատաւորեցիր իմ անաղարտ անունը, դու բան-
 գեցիր իմ օջախը, յետ տուր իմ օջախը»: Եւ նա նորից
 գալարուեց հոգեկան տանջանքների մէջ, նորից նայեց
 հոգու մէջ, խղճմտանքի խորքը: Յետ դառնալ, դրկել
 որդուն, և ասել, այս, նա համաձայն է, նա յետ է
 առնում խօսքերը, նա չի խանդարի նրան և Սօնային
 վայելելու իրանց բախտաւորութիւնը, միթէ այդ լաւ չի
 լինի, միթէ այդ չէ Մէլիքի ուզածը: Բայց ոչ, ոչ, նա
 երկար դիմանալ չի կարող, նա նորից կը խանդարէ
 նրանց: Եւ վերջապէս ինչի և ում համար է պէտք նրա
 կեանքը. նա ընդունակ չէ ոչ մի աշխատութեան, նա
 անօգուտ է: Ամբողջ կեանքը ապարդիւն է անցել և
 այսուհետեւ նա ապարդիւն պէտք է մնայ: Ահա այն-
 տեղ, սարի տակին հոսում է գետը, և որքան խաղաղ
 է, մոնել նրա մէջ, անձնատուը լինել նրան և հանգըս-
 տանալ: Նա նորից վերկացաւ, սկսեց իջնել բլրից
 դաշտը. գետի մեղմ ալիքները գգւում էին նրա լսե-
 լիքը և ամառային զով ու լուսնեակ դիշերը, երբ ամ-
 բողջ բնութեանը խորհրդաւոր խաղաղութեան մէջ
 հանդստանում էր մի բոպէ սթափեցրեց նրան: Ահա
 նա կանգնած է կամրջի վրայ որ անյնելով գետից
 գնում է գետի միւս ափը, սարի ստորոտը և այգան-
 զից մի նեղ կէծան տանում է ուզեւորին դէպի վանքը
 որի գմբէթները ուրուագծւում են հեռու: Նա կանդ ա-
 ռաւ կամրջի վրայ. գետը, հանդարտ գլորուելով կար-
 ծես կանչում, հրաւիրում էր նրան. նա յիշեց իր պա-
 տանեկութեան ընկերին, որ լողանալիս, խեղդուել էր.
 այնտեղ, ափին, ընկած էր նրա դիակը: Այդ յիշողու-
 թիւնից նրա մարմինը սառսուեց. նա ցուրտ զգաց և մըր-
 մընջաց. այս պաղ ջրի մէջ ես հանդստութիւն կը գըտ-
 նեմ: Նրա հոգին դարձեալ խռովուեց. այժմ մի այլ ձայն

նա լսեց մօտիկից, շատ մօտիկից. «բայց դու դեռ չեւ
քաւել յանցանքդ, ինչո՞ւ քո որդին պէտք է քեզ տեղ քաւե»։

—Այո, այո, խօսեց նա ինքն իրան. ես պէտք է
քաւեմ՝ յանցանքս. ես չը պէտք է խորտակեմ զաւակներիս
երջանկութիւնը, չը պէտք է խանդարեմ նրանց, բայց
ինչպէս, ինչպէս... վերադառնալ տուն, գիւղացի դառ-
նալ ես չեմ կարող, չեմ կարող հաշտուել, ուրեմն ինչ է
մնում անելու։

Եւ ժամերով նա կանգնած էր կամրջի վրայ մտա-
յոյզ ու խոռված. յանկարծ, գիշերային խոր լոռութեան-
մէջ զանգակի զօղանջիւնը, մեղմ, ներդաշնակ զօղան-
ջիւնը լսուեց, որի արձագանքը անմիջապէս կրկնուեց-
նա կարծէր, սաստուած մի հզօր ձեռքից, ծունկ չոքեց,
և նա՝ որ երկար, երկար տարիներ չէր աղօթել այնպէս,
ինչպէս աղօթում էր երեխայութեան ժամանակ, երբ
մայրը ամեն առաւօտ տանում էր եկեղեցի, սկսեց ա-
ղօթք մրմնջալ, այո, այն աղօթքը, որ մայրը սովորե-
ցրել էր երկար, երկար նա աղօթեց և երբ վերկացաւ,
արշալոյն արդէն իր վարդագոյն շողերով վառել էր
հորիզոնը. վանքը շողազում էր և հրաւիրում էր խոռո-
վեալներին ու ալեկոծուածներին գնալ հանգստանալ
մենակեաց կեանքի խաղաղութեան մէջ։ Եւ անհաշտը
լսեց որոշ հօր՝ մէլիքի ձայնը, «գնա, գնա այդ տեղ և մի-
խանգարիր նոր կեանքը»։

Նա շտապ շտապ բարձրացաւ կէծանով, նա գրե-
թէ վազ էր տալիս և չնշասպառ լինում։ Կէս ժամից
յետոյ նա կանգնեց վանքի մեծ դարբասի առաջ, դու-
ռը բացուեց. նա ներս մտաւ ու փակուեց այնտեղ...
Նա մեռած էր աշխարհի համար...։

Չորս ամսից յետոյ ն... գիւղի շինական եկեղե-
ցում կատարւում էր երկու պսակ և գիւղը մէլիքենց
հին օջախում տօնում էր Արշակի և Սննայի, Սարգսի և
Սօնայի հարսանիքը։

Սկսուեց նոր կեանքը, եռուն, դործունեալ կեանք...։

ՄԱՍԵՆԱԽՈՍՈՒԻԹԻՒՆ

ՅԹ) ՆԱՐԴԻՌՈՍ „ՏԱՅԱԺԻՐԾԱ ԱՊՀԻԼՔ“։ ՎԻՊԱԿ, 90 ԿՐ., ԹԻՖԼԻՍ,
7, 20 կ.

Նար-Դոսի վէպիկը, կամ, ինչպէս ինքն անուանել է, վիպակը կարգացւում է հետաքրքրութեամբ Վէպիկի նիւթը վերցրած է իրականութիւնից և մշակուած է ոչ առանց չնորհքի։

Վէպի հերոսուհին մի թիֆլիսցի օղիորդ է՝ ծագումով հայ, կրթութեամբ՝ կէս-վրացի, կէս-ռուս։ Գիմնազիան նանոր է աւարտել և ուրեմն զիտէ, ինչպէս Շչեղրինն ասում էր, «մի քիչ թուարանութիւն, մի քիչ գիցարանութիւն (օրինակ, որ ամառը սիրոյ աստուածն էր) և մի քիչ երաժշտութիւն», կամ մօտաւորապէս այդքան բան ի՞նչ իմաստ, ի՞նչ լուրջ նըպատակ ունի մարդկային կեանքը, ինչ պարտականութիւններ են ծանրանում մարդու և մանաւորապէս կնոջ վրայ—նա ի հարկէ չը զիտէ։ Նա աւարտել է զիմնազիան և մի կտոր թուղթ է ստացել։ Մի քանի տարուց յատոյ նա կ'ամուսնանայ և թիֆլում զրեթէ մնհրաժեշտ էվոլիցիայով կը դառնայ եւրօպացի կնոջ ծաղրանկար կամ Հաւլաբարի կէկէլօ, նայելով ով կը լինի նրա ամուսինը՝ մի զիպլօմաւոր կօսմօպօլիտ, թէ տգէտ փողատէր։

Նա հայ է, բայց հայերէն չը զիտէ և միշտ խօսում է օտար լեզուով։ Նրա անունն էլ վրացիական է—Բալի։

Վէպի հերոսը մի հայ ուսուցիչ է, «Վարժապետ»։ Դուք ամենքդ զիտէք, թէ ինչ է կամ, աւելի ճիշտ ասած, ի՞նչ էր հայ վարժապետը։ Թողէք բացառութիւնները և նկատի առէք ընդհանրութիւնը, թողէք արտաքինը և ուշք դարձրէք էութեան վրայ, և դուք կը խոստովանէք, չէք կարող չը խոստովանել, որ հայ վարժապետը, այդ յաճախ անշնչք—անչնորհք, կոչտ ու կոպիտ վարժապետը ամենահամակրելի տարրն է եղել մեր

կեանքում։ Յառաջաղիմութեան պիօնէրը հայ ժողովրդի ճահնացած կեանքում, լոյսի կարապետը մեր Շխաւարի թագաւորութեան» մէջ, քաղաքակրթութեան տարածող, իսկական կուլտուր-արէգէտը ասիական ամբոխի ամենախուլ խաւերում, մանուկների բարեկամը, ծնողների խորհրդատուն, ժողովրդական թատրոնի հիմնադիրը, ժողովրդական դիակին գաղափարական շունչ տուողը, առաջնորդների ու ազաների զոհը, գաւառների «թափառական հրէան» մի խօսքով միշտ և ամեն աեղ ժողովրդի շահի համար նահատակուողը—ահա հայ Վարժապետը» որ իր պատուաւոր տեղն ունի ամբողջ մարդկութեան ժողովրդական ուսուցիչների պատուաւոր գասակարդի մէջ։

Այդպիսի մի ուսուցիչ, որին պ. Նար-Դոսը դժբախտաբար օժտել է բնաւորութեան կոպտութեամբ և չօժինիատական զգացմունքներով, գաւառներում և նոյն իսկ Պարսկաստանում իր վարժապետական խաչը կրելուց յետոյ, ուսուցչութեան տեղ է գտնում Թիֆլիսում և սիրահարւում է իր տանտիրոջ աղջը-կայ, վերել յիշուած Բալիի վրայ, Բալին էլ փոխադարձաբար սիրում է նրան և սկսում է հետաքրքրուել հայերէնով, հայերէնի դասեր է աւանում նրանից։

Օրիորդի հայրը ոչինչ չունի դրա դէմ, բայց մայրը, զը զուելի նախապաշտումներով ու աւանդութիւններով դաստիարակուած մի զին, լսել անգամ չի ուզում, որ իր աղջիկը կարող է գառնալ այդ քննուոտ վարժապետին կինը։ Աղջիկը, Բալին, լալիս է, տիրում է, բայց վերջ ի վերջոց ի հարկէ տեղի է տալիս մօրը, ամուսնանում է մի տգէտ փողի սրարկի հետ և ապրում է Թամամշեվի քարվանսարայի սովորական յանախորդութիւնների տիպային կեանքով։—ի բաց շամնելով և զրբացների, կիթխաւների այցելութիւնը։ Զէ որ զիմնադիայի ուսումը հայուհիներից շատերի համար երեսին քսած դեղի նման մի բան է, որ անձրեի տակ ընկնելուց յետոյ բոլորովին գնում է, կեղտոտ շերտեր կազմելով դէմքի վրայ։

Բալիի տիպը, իմ կարծիքով, չատ յաջող է դուրս բերուած պ. Նար-Դոսի վէպիկում։ Դժբախտաբար նոյնը չի կարելի ասել վէպի հերսո վարժապետի մասին։ Այսպիսի վարժապետներ, ինչպիսին դուրս է բերել հեղինակը, ի հարկէ նոյնպէս եղել են կեանքում, բայց որովհետեւ հեղինակը ուզել է վերարտադրել հայ համակրելի վարժապետի տիպ, գեղարուեստական տրամադանութիւնը պահանջում է, որ նրա հերոսը լինէր աւելի մարդաբան և լայն հայացքների տէր, ինչպէս եղել է հայ համակրելի վարժապետների մեծամասնութիւնը։

Այն տան բակում, որտեղ ապրում է մեր ուսուցիչը, կե-

նուամ է նաև մի հարբեցող իր կնոջ հետ Մի որ հարբեցողը սկսում է սովորականից աւելի գաղանաբար ծեծել իր կնոջը կինը ճիշեր է արձակում, օգնութեան է կանչում: Ամբողջ բակի կենողները հաւաքում են նրանց փոքրիկ բնակարանի առաջ, բայց ոչ ոք ներս չի մտնում, որովհետեւ բնակարանի դուռը կողպած է և պէտք է արդեօք ուսիլ, որովհետեւ այդպիսի դէպքերում ատիացի ամրոխը սիրում է ձեւնսուռ չէզոքութիւն պահել ուրիշների տրագէդիան տեսարանի բան, «Թամաշա» դարձնել Բայց մեր ուսուցիչը այդ տիպի մարդ չէ: Բացի այդ՝ նա գիտէ որ Յալին ներկայ է, նա ուզում է անպետական գործ կատարել նրա առաջ: Նա ուժեղ է: Նա կոտրում է դուռը, ներս է ընկնում և ազատում է խեղճ կնոջը իր գաղանացած ամուսնու ձերքից: Բայց պ, նար—Դոսի ուսուցչի համար այդ բաւական չէ:

Եթիւնն աչքերս առու, -պատմում է նա, —առաջ վաղեցի, եռեցի... բռնեցի նրա օձիքից և ամենայն ուժով յետ հրեցի: Ձեմ իմանում ինչպէս պատահեց, մէկ էլ տեսնեմ աչք ահաղին մարդը երեսն ի վեր փառած է յառակի վրայ իւր կնոջ կողքին: Ալժմ եւս սկսեցի աքացել նրան: Պէտք է որ շատ մաղալու տեսարան լինէր: Սկզբում նա, երեկի յանկարձակիի նկած, չէ շարժում տեղից, ոչ մի դիմադրութիւն ցոյց չէր տալիս, չէր աշխատում տեղից վեր կենալ: Կարծես չէր զգում աքացիներին հարուածները որ, պէտք է ասած, բառական անողորմաբար էի տալիս նա միայն, բառակի վրայ տարածուած, զարմանք արտայարող աչքերով նայում էր ինձ, կարծես թէ հարցնում էր, օ՞սկ ես, ի՞նչ ես ուզում: Բայց յանկարծ, կարծես, նոր ուշքի զարով, մի ուժգին շարժում զործեց և նոսեց, որ վեր թռչի Խակոյն վրայ ընկայ, նորից պառկեցրի յատակի վրայ, չոգեցի կրծքին և բռնեցի կոկորդից: Նրեկի շատ էի պինդ հուգ տալիս, որ նա բերանը բաց էր արել, խրխրացնում էր, աչքերը չուել էր, արիւնով լցուած զզուելի սպիտակուցները զէմքիս յառած, և մարմինն էլ մի տեսակ խլպտում էր տակս:

Անկարելի բան է, որ համակրելի վարժապետը, ասպետական ձգտումով սգեորուած ինտելիգէնսոր այդպէս վայրենաբար, այդպէս զաղանաբար վարուէր թէկուզ մի անպիտան հարբեցողի հետ և աւելի ևս անկարելի է, որ նա այդ տեսարանը կարողանար «մազալու» անուանել: Ի՞նչ ասպետութիւն է «անողորմաբար աքացիներ» տալ արդէն գետին փոկուած, անզօր դարձած մի թէկուզ զզուելի մարդու և ոք համակրելի ինտէլիգէնտ մարդը կարող է այդպէս հաճոյքով նկարազրել այդ տեսարանը:

Այդ մէկի երկրորդ գեղարուեստական սխալը, որ արել է պ. նար—Դոս, այդ այն է, որ նրա հերոսը չովինիստ է, թթու աղդամէր, մինչդեռ հայ համակրելի ուսուցիչների մեծամասնու-

թիւնը միշտ եղել է հայրենասէր բառի՝ ամենալաւ մոքով, այսինքն սիրելով այն, ինչ որ հարազատ է իրան, սիրելով իր հայրենիքը, իր ժողովուրդը, իր մայրենի լեզուն նա ատելութիւն չի քարոզել դէպի օտարի սրբութիւնները:

Նրա հայրենասիրութիւնը կիմուած է եղել լայն մարդասիրութեան վրայ և միշտ թշնամի է եղել օտարատեցութեան, օտարակերութեան, մարդատեցութեան: Հայ համակրելի ուսուցիչը, իրք տիպ, երբէք թոյլ չի տուել և թոյլ չի տալ իրան արհամարհանքով վերաբերուել դէպի վրացերէնը, «գղուելի» անուանել այդ լեզուի հնչիւնները: Ամենայն դէպս, եթէ երբեիցէ հայ համակրելի ուսուցիչը պատահմամբ, տանստանու բերնից թոցընը է այդպիսի խօսքերը տաքացած բովէն, նա չէր ցանկանալ, որ այդ խօսքերը կրկնուէին լրջօրէն, տպագրուէին թղթի վրայ և մնային իրք ապացոյց զաղափարական անտրամարանութեան: Որովհետև եթէ մեր սէրը կննդանաբանական սէր չէ, այլ մարդկային, բանական, եթէ մննք վիրաւորում ենք արհամարհանք տեսնելով դէպի մեր մայրենի լեզուն, ոչ թէ մեր աքաղաղային բնաւորութեան պատճառով, այլ որովհետև յարգում ենք և մեր ցեղակիցների մէջ մարդկային անձնաւորութիւնը,—մննք չենք կարող չը յարգել նոյնպիսի զգացմունքներ նաև ուրիշների, օտարների մէջ, մննք չենք կարող թոյլ տալ մեզ արհամարհական վերաբերմունք դէպի օտարների հաւատը, դէպի օտարների լեզուն, որոնք չեն որ նոյնպէս սրբութիւններ են այդ օտարների համար:

Տպել որեէ հայ զրգում իրք համակրելի հերոսի բերնով արտասանուած և ուրեմն հեղինակի մտքերը տրտայայտող արհամարհական խօսքեր վրացիների լեզուի, ուրեմն վրացիների սըրբութեան մասին, դա յանցանք է, որ բացի սրբազզութիւն լինելուց, ինչպէս սրբազզութիւն է վրացիների արհամարհական վիրաբերմունքը դէպի մեր նուիրական առանձնայատկութիւնները, նաև մեծ քաղաքական սխալ է:

Ծիծաղկի է և նոյն իսկ զլուելի, երբ ուսւ արխստօկրատը արհամարհելով իր դեղնեցիկ մայրենի լեզուն միշտ խօսում է ֆրանսերէն, որ աւելի ևս զեղեցիկ լեզու է, բայց համ ու հոտից զուրկ է նրա բերնում, սակայն միթէ այդ իրաւունք է տալիս որ և է ոռւսի արհամարհական լեզու բանեցնել ֆրանսերէնի վիրաբերմամբ:

Բացի այդ պակասութիւններից պ. Նար—Դոսի վէպիկը ունի նաև այն պակասութիւնը, որ մի քիչ ճապաղ է, ինչպէս ուսւահայերիս զրեթէ բոլոր վիպական գրուածքները:

Վէպը արձանագրութիւն չէ, ընթերցողի երևակայութիւնը

միշտ աւելի թոյլ է, քան վիպասանների երևակայութիւնը և եթէ նրանց գրուածքում պատկերները խտացած չեն, աղօտ են, ընթերցողի երևակայութեան վրայ նրանք ազդել չեն կարող: Գեղարուեստական դրուածքը պէտք է խտացրած, իր մէջ մեծ քանակութեամբ ոյժեր պարունակող մակարդ (ֆէրմէնտ) լինի, որպէս զի կարողանայ ընթերցողի սովորական, միջակ երևակայութիւնը եռ բերելով՝ վերարտադրել նրա մէջ որքան կարելի է վառ պատկերների մի չարք և նրանց ազդեցութեան տակ զգացմունքների ովերութիւն: Բանսատեղծի մի պատկերը, մի նախադասութիւնը պէտք է լինի այն մի պատղունց մակարդը որ մածուն է դարձնում մի ամբողջ աման կաթ, մինչդեռ հայ, մանաւանդ սուսահայ վիպասանները մակարդի տեղ սովորաբար մեզ տալիս են միմիայն մածնաշուր, չիծուկ: Մեծ մասամբ անզօր ու անհամ:

Տ. Յ.

40) Les souffrances du peuple arménien et le devoir de l'Europe:
Ed. Bernstein. (Հայ ժողովրդի տառապանքները և ներոպայի պարտականութիւնը. Եղ. Քերնշտադն):

Ներկայ տարուայ յունիսի 26-ին Քերլինում գերմանական ռայխսատագի անդամ և յայտնի սոցիոլոգ էդ. Բերնշտայն մի հրապարակական զասախօսութիւն կարգաց նուիրուած թիւրքահայ ժողովրդի դատին: Ահա այդ զասախօսութիւնն է, որ Փրանսերէն լեզուով հրատարակել են հայ ժողովրդի Եւրոպայում ապրող բարեկամները, անշուշտ ի նկատի ունենալով նախ այն, որ առաջին անգամն էր Գերմանիայում տեղի ունենում մի այդպիսի զասախօսութիւն և երկրորդ այն՝ որ խօսողը այն հեղինակութիւններից է, որոնց ձայնը և կարծիքը արժանի է խորին ուշադրութեան: Վերջին տարիները թիւրքահայ ժողովրդի տառապանքների մասին շատ է գրուել և շատ է խօսուել եւրոպական զանազան երկրներում, ուր պատրաստուել և հասունացել է մօտաւորապէս այն կարծիքը, թէ մարդկութեան խղճի վրայ ծանրացած մի խոշոր պարտականութիւն է վերջ տակ հեռաւոր արեւելքում մի չափն անցած բոնութեան տակ հեծող քրիստոնեայ ժողովրդի մարտիրոսութեանը: Տարաբաղդաբար Գերմանիան, քաղաքական և մտաւոր Գերմանիան, կատարուած արիւնալի փաստերի առաջ մի լոռութիւն պահպանեց, որ մի քաղաքակիրթ և հզօր ազգի պատիւ չը կարող բերել: Ամօթալի

այս անտարբերութիւնը բազմաթիւ լաւ. գերմանացիների համար մի ցաւալի երեւոյթ էր. նրանցից ոմանք ժամանակ առժամանակ փորձեցին տաքացնել հիւսիսի այս ժողովրդի սառցէ սիրտը տանջուող ժողովրդի տառապանքների առունուի էզ, Բերնշտայն այդ լաւ, տաք սիրտ գերմանացիներից մէկն է և պէտք է յուսալ, որ նրա հեղինակաւոր ձայնը իր հայրենակիցների համար տուանց խորին ազգեցութեան չի անցնի:

«Այն սառն անտարբերութիւնը, ասում է Բերնշտայն, որ արտայայտուեց Գերմանիայում, անգամ գետուկրատիկ շրջաններում, հայ ժողովրդի մարտիրոսութեան հանդէպ, ամենաամօծթալի երեւոյթներից մէկն է: Սա նախ բնական հետեւանք է այն հանգամանքի, որ Գերմանիայում մենք արտաքին քաղաքականութեան վերաբերմամբ չունենք ազատաժիտ աւանդութիւններ և երկրորդ՝ մեզանում տարածեցին բոլորովին անճիշտ գաղափարներ թիւրքական քաղաքականութեան ոգու և թիւրքիային հպատակ ժողովուրդների վրայ այդ ոգու արած ազգեցութեան մասին: Այն թիւր կարծիքները, որոնք դիտաւորեալ ձեւով թիւրք կառավարութեան ուսկներով տարածուեցին Գերմանիայում և էլաւելի խստացրին այդ ժողովրդի բնական սառնասրտութիւնը դէպի տառապող օտարի ցաւերը, Բերնշտայն համարում է ամենացաւալի երեւոյթ և աշխատում է իր դասախոսութեամբ վերականգնել ճշմարտութիւնը անհերքելի վաստերով և թուանշաններով:

Նրա ամբողջ դասախոսութիւնը մի հակիրճ և պերճախօս տեսութիւն է հայկական դատի և մի զօրեղ մեղադրական ակտ թիւրքական կառավարութեան և ՅԱ-րդ յօդուածի պատասխանատուների դէմ:

«Գուցէ գուրք ինձ ասէք, դառնում է Բերնշտայն իր ունկնդիրներին, միթէ մենք մեր աշքի առաջ թիչ ունենք ամեն տեսակ տառապանքներ ու ճնշումներ, որոնցով կարող էինք զբաղուել, առանց այն հեռաւոր փորր Ասիայում վնասուել և զբաղուելու նրանով, ինչ կատար ում է այնտեղ: Բայց բանն այն է, որ հալածանքները ու անզորմ գաղանացին բռնութիւնները, որոնց զոհն են հայերը, այնպիսի արտասովոր բնաւորութիւն ունեն, որ բոլոր քաղաքակիրթ ազգերի բողոքը գարձնում են անհրաժեշտ:

Օտարի շրթունքներից ընկած այս բառերը այնքան կալիծ են պարունակում, որ արժէ նրանց մասին երկար մտածել հասկանալու և գիտակցելու համար, որ չարիքը հայրենիք չունի և այդ պատճառով մարդաբարութիւնն էլ իր սփոփիչ հայեաբքը պիտի դարձնի այն կողմը, որտեղից հնչուող ազադակները ա-

մենից ցաւագին, ամենից ընցողն են: Ապա Բերնշտայն թւում է Թիւրքիայի և հայերի մասին Եւրոպայում և մասնաւորապէս Գերմանիայում տարածուած սուտ ու սխալ կարծիքները և մէկիկ մէկիկ ջրում, հիմնուելով իրականութեան և պատմութեան մատակարարած փաստերի վրայ: Նա անհիմն ու սխալ է համարում Թիւրքիայի համբերողութիւնը դէպի միւս կրօնները: Եթէ զանազան ազգութիւններ այդ երկրում պահպանել են իրանց անհատական ինքնուրոյնութիւնը, դա վերագրելի է Թիւրքիայի ասսիմիլացիայի անկարողութեան և ոչ թէ համրեռող ոգուն: Յարոյապէս և մատառապէս աւելի վար, քան իր տիրապետած ժողովուրդները, Թիւրքիան ծանրացաւ նրանց գրայ նիւթապէս, քայլայնց, քամնց նրանց և մեծացրեց իր և իր հսկատակներին բաժանող անտագօնիզմը, բայց անկարող եղաւ սրանց ձուլել:

Սխալ է կարծել, ըստ Բերնշտայնի, թէ մահմեղականութիւնը քաղաքակրթութեան դէմ չէ: Այդպէս մտածողները հիմնում են միմիայն այն փաստի վրայ, թէ միջին դարերի վերջին իսլամ արաբացիք քաղաքակրթութիւն ունեցան: Բայց դա պատճենած մէջ շատ կարծ չըջան եղաւ և այդ ժամանակ մահմեղականութիւնը ուղիղ գծով ժառանգն էր Պաղոմէսոսների Նզիստական քաղաքակրթութեան և այն ինչ յաջողուեց արարներին, երբէք չի յաջողուելու թիւրքներին: Մեր օրերում մահմեղականութիւնը Թիւրքիայում իր պրինցիպներով և զօդմերով քաղաքակրթութեան էական մի գործոն չէ: չէ որ հէնց այդ կրօնն է արգելում օտարագաւառներին վայելել մի և նոյն քաղաքական և անհատական իրաւունքները:

Բերնշտայնը, որպէս մահմեղական անհամբերողութեան և փանատիկոսութեան արիւնոտ փաստեր՝ յիշատակում է 1822 թ. Քիսոս կզգում 2000 անգէն յոյների կոտորածը, Լիրանանի մարզիաների կոտորածը, 1877 թուին Բօլզարիայում տեղի ունեցած մեծ կոտորածները, որոնց հետեւեցին վերջապէս հայկական չը տեսնուած օտարագիները, որոնք այնքան ահաւոր եղան, որ անզամ չափաւոր լնգուի աէր զիպլօմատներ սուլթանին կնքեցին մարդասալան անունով: Բերնշտայնի կարծիքով հայերին վեց պետութիւնների հովանաւորութեան ներքոյ գնելը մի չարիք եղաւ այդ ժողովրդի համար, որովհետեւ «երբ խոհարարները շատ են, սուլաը փշացնում են»:

Ինչպէս երեւում է, ականաւոր դասախոսը մանրամասն կերպով ուսումնասիրել է Թիւրքիայի հարկերի սիստեմը: Նրա առաջ բերած թուերը հայերի վճարած ազգակի և սնուղղակի հարկերի մասին այն աստիճան պերճախոս են, որ նիւթական

որ և է բարեկեցութեան մասին խօսք լինել չի կարող: Եւ գեռ ամեն մի տասն տարին աւելացնում են, ասում է Բերնշտայն, և աւելի ծանր կերպով ջախճախում հայ զիւղացոն: բայց վերջի վերջոյ ամենախաղաղ մարդն էլ ըմբոստանում է, երբ զում է՝ որ իրան խեղդում են: Զի կարևի պահանջել, որ այսպիսի պայմաններում մարդիկ հրեշտակներ լինեն:

Նկարագրելով 95—96 թուերի ջարդները, Բերնշտայն շարունակում է:

«Արդէն այս մէջ բերած թուերը (սպանուածների) մեր ականջներում հնչուում են ցաւագինօրէն, բայց եթէ դուք կարդաք այս կոտորածների նկարագրութիւնները, եթէ դուք իմանաք, թէ ինչ պայմաններում մարդ, իին, ծեր, երեխայ—խողխողուել են, որպիսի անզիւթեամբ և որպիսի գազանութեամբ այս ոճիրները գործուել են, որպիսի զիւական, նրբացած յօշոտումներ, որոնց ընդունակ են միայն արեւելցինների ֆանատիկոսութիւնն ու էրզալտացիան, այն ժամանակ դուք կը հասկանաք, թէ ինչու անզիւցի մի պետական մարդ, որ բնաւսանտիմնենտալ չէ, կարողացել է ասել թէ՝ հայերի կոտորածների տեսիլները ամեն գիշեր խոսվում են իր քունը»:

Գեղեցիկ է Բերնշտայնի զասախօսութեան այն բաժինը, ուր նա բացատրում է մեզ Բերլինի գաշնազիրն ստորագրող պետութիւնների զիւումները, որոնցով առաջնորդուած նրանք թոյլ տուին կատարուել մարդկութեան խղճի վրայ ծանրացող մնագոյն ոճիրը—հայկական կոտորածները: Նա մասնաւորապէս ծանրանում է Գերմանիայի ու նրա այդ հարցում խաղացած գերի վրայ: Շատ է խօսուել գերմանական խստամրտութեան, շահախնդրութեան, հրէշաւոր էգոփոմի մասին, որոնք այնպէս խիստ չափեր են ընդունել վերջին տարիններս. այժմ արժէ լսել մի գերմանացու և այն էլ մի այնպիսի ականաւոր գերմանացու կարծիքը, որպիսին Բերնշտայնն է: Նա գտնում է: որ Գերմանիայի թիւրքամիրութեան համառող ձեռնպահութիւնը հայկական հարցում բացառապէս հաստատուած է ամենանեղ, ամենազարշելի նիւթական շահերի վրայ: «Ոչ, բացականչում է նա վրդովմունքով, պէտք չէ հայերը սարսափներ կրեն, որովհետև այս բռակէին գերմանական դրամագլուխը Փոքր-Ասիայում շահեր ունի»:

Բերնշտայն հետաքրքիր բացատրութիւններ է տալիս այն ատելութեանը, որ օտար ազգերը տածում են դէտի Գերմանիան: Այս կտորը մենք մէջ կը բերենք ամբողջապէս.

«Գերմանիան Միջին գարերի սկզբից եղաւ տիրապետողների երկիր, նրան ատեցին և նրանից վախեցան բոլոր հարե-

ւան ազգերը։ Սա իր փառաւոր անցեալն է։ Ես չեմ կամննում դրա համար նրան քարեր շպրտել, որովհետեւ դա մասամբ համապատասխանում էր այն էպօխայի քաղաքակրթութեանը—թէ այն ժամանակ Գերմանիան չը լինէր իշխող, մի այլ ժողովուրդ կը բռնէր նրա տեղը։ Ինչ որ հաստատ է, այդ այն է, որ Գերմանիան նկատուեց որպէս մի բռնացող երկիր և ատելի եղաւ միւս ժողովուրդներին։

«Ես ատելութիւնը տրադիցիայով անցաւ և նա դոյութիւն ունի այսօր իր բոլոր հետեւանքներով հարևան ժողովուրդների մօտ... այսպէս օրինակ գերմանական շվեյցարացիք, սրանց մօտ այդ հին ատելութիւնն արտացոլում է ժողովրդական լեզուի մէջ, որ յաճախ այնպէս արտայայտիչ է։ Կթէ շվեյցարացին գընում է Գերմանիա, նա ասում է՝ „Ich gang nach Deutchländ ս ս ս թ“ այսինքն ես գուրս եմ գնում։ բայց եթէ նա գնում է Ֆրանսիա, նա ասում է „ich gang nach Franckreichinne“— այսինքն ես մնում եմ իմ երկրում։ Այս տարբերութիւնը արգիւնք է պատմական հին տարրեր յարաբերութիւնների։

«Գերմանիայի հին աշխարհակալութիւնը ունեցաւ և ուրիշ հետեւանքներ իր յետադայ պատմութեան մէջ, 1848 թուի յեղափոխութեան ժամանակ եթէ գուք ուշադրութեամբ ուսումնասիրէք 48 թ. գերմանական յեղափոխութեան պատմութիւնը, գուք կը տեսնէք, որ նրա ողբալի անյաջողութեան պատճառը գլխաւորապէս այն հանգամանքն է, որ Գերմանիան ստիպուած էր իր զրախ տիրապետութիւնների վրայ ձեռք պահել, այս կացութիւնը թոյլ չը տուեց գերմանացիներին անկեղծօրէն ազատամիտ դիրք բռնել և գործել իսկական դեմօկրատիկ ժողովրդի պէս։ Այսուհետեւ Բերնշտայն յիշելով, թէ ինչպէս Գերմանիան միշտ խուլ է մնացել տառապող ժողովուրդների կոչին, շարունակում է։

«Ամեն անգամ, երբ Գերմանիան պահանջել է միւս ժողովուրդների սէրը, սրանք իրաւունք են ունեցել նրան պատասխանն Գեօթէի «Պրօմոթէոսի» խօսքերով։

«Ես քեզ մեծարեմ. ինչո՞ւ համար։

«Երբ և իցէ դու մեղմել ես տանջանքները խեղճերի,

«Երբ և իցէ դու չորացրել ես արցունքը նրանց,

«Որոնք տառապանքների մէջ են»։

«Սա ճշմարիտ է գերմանացի ժողովրդի համար մինչեւ իսկ մեր օրերում, երբ Կարլ Մարքս իրաւունք համարեց զրել՝ «Մենք, գերմանացիներս, ընկերանում ենք ազատութեան՝ միայն նրա թաղման ժամանակ»։ Մենք ոչ մի ժողովրդի ազատութիւն չենք

տուել... Թրանսիան, Անդրկան, Թուսաստանը ժողովուրդներ ևն ազատել... ինչ կը ներկայացնենք մենք՝ գերմանացիներս ուրիշ ժողովուրդների արածի հանդէպ, ունինք մենք որեւէ քաղաքական ակա, որով կարողանայինք պարծենալ»:

Դասախոսութեան վերջում համակրելի թերնչտայն հրաւիրում է Գերմանիային գէթ մի անդամ լաւ առիթը բաց չը թողնել և օգնութեան հասնել անարդար տեղը տանջուող թիւրքահայերին, վերջ դնելով թիւրքական գարշելի ռեժիմին:

Ա. Ա.

Յ1) Մ. ՏԻՕՏ, Քիւրդ բէզ. Գծեր հայ-քրդական կեանքէն. ա. հառլիկ, Բարիզ, 1902, գինն է 20 կող.:

Ահա մի փոքրիկ զիրք, զրուած բաւական անհոգ և նոյն իսկ անփոյթ ձեռքով. բայց որ, այսուամենայնիւ արժանի խորին ուշադրութեան: Դա վէպ չէ և ոչ էլ պօէմա, այլ արձանագրութիւն կեանքի առօրեայ պատահարների, մի քիչ համեմուած անճնական զատողութիւններով, որոնք սակայն չեն կարողանում բուն իրականութիւնը խեղաթիւրել Հեղինակը՝ մի թիւրքահայ, այս փոքրիկ զործով չօշափում է մի թէն նին, բայց միշտ հետաքրքիր հարց. այն է՝ թէ ուր պէտք է վնասիլ աղքիւրը այն մեծ չարիքի, որ ծանրանում է թիւրքաց հայերի զմբին: Յայտնի արիւնալի զէպքերից շշմած շատ տափակ զըլուխներ փորձեցին «պատասխանաւութիւններ» սահմանել, անմիտ ու փութկոտ վճիռներ արձակել և հրէանների պէս «Ենաչ հան» ոռնացին: Ողորմելի ոչնչութիւններին մի բնորոշ յատկութիւն է, պատասխանաւուներ ու զոհեր վնասուել իրանց մէջ, իրանց շուրջը, երբ անկարող են աւելի հեռուն տեսնել, աւելի հզօրններին դիմազրաւել, ինչպէս խղճուկ երեխաններ, որոնք քարին դիպչելուց և ընկնելուց յետոյ, վեր են կենում և ոտքով գետինը թակում:

Դատախազի դերը երեւի շատ է զրաւիչ, որովհետև ամեն մի գարշելի սողուն շաւապեց դերազանցել միւսներին իր յախունն մեղաղրանքներով և զաղբելի թուլամորթները, հասան մինչեւ այն աստիճանի, որ ամենանու իրական գերեզմաններն ու անունները չը խնայեցին իրանց բերանի պիղծ փրփուրով: Ասում էին, որ թիւրքաց Հայաստանը դրախտ էր, երջանիկ երեկիր, որ հայերը բաղդաւոր էին այսակը, բայց իրանց ձեռքով

իրանց աչքերը հանեցին։ Միայն կոյր աչքերի տեսած այդ «զրախոտի» մասին շատ է զրուել, նրանոյն իսկ մանրամասը նկարագիրը արեցին նաև շատ օտարականներ, ահա այժմ էլ մի հայրենակից, մի հայ մարդ՝ պ. Շեռտ, որ իր ասելով 23—24 տարի է անցկացրել այդ երկրում, գալիս է իր զրբոյ մեզ ցոյց տալու միայն մի անկիւնը, մի շատ փոքրիկ անկիւնը այն իրականութեան, որ իշխում էր այն «զրախտում» մեղադրանքի հիմունք ծառայող 95—96 թ. գէպքերից առաջ։

Պ. Շեռտ իր նկարագրութեան համար վերցնում է Բալուի մի անկիւնը, և այնտեղ ամեն օր կատարուող փաստերից միայն մէկը, որ սակայն բոլորովին բաւական է տիսուր, սարսեցուցիչ լոյս սփոնելու թիւրքաց Հայտատան կոչուող զժոխքի վրայ։

«Նայելով աւանդութիւններին և ժամանակակից ծերունիների պատմածին, ասում է հեղինակը, Բալու գաւառը ԺԹ դարի սկզբներին ունէր 253 զիւղ, որոնցից 120-ը զուտ հայաբնակ էին, մնացնալ 133 զիւղերում կը բնակէին հայ և քիւրդ խառն։ Այդ 253 զիւղերում բնակուող հայերի ընդհանուր թիւն Բալու քաղաքի հայ բնակիչների հետ 60—70 հազար էր, իսկ քըրդերինը մօտ 30 հազար... Այդ գաւառում այժմնան հայերի թիւն է ընդհանուր 17—18 հազար, մինչդեռ քրդերի թիւը 70—65 հազարի կը յանգի... Հայ աղքաբնակութեան թուի այդ խոչորկէկ սահմանափակումը յատուկ չէ, ի հարկէ, միայն Բալու գաւառինու։ «Ի՞նչ եղան հայերը, ահա մի ուշագրաւ հարց, ասում է պ. Շեռտ, և աշխատում է իրականութիւնից վերցրած իր ճշգրիտ նկարագիրներով պատասխանել այդ հարցին։

Նա նկարագրում է մի գէպք, մէկն այն բիւրաւոր գէպքերից, որոնք այդ երկրում այնքան սովորական են դարձել, և որոնց մասին կրկնութիւնը երբէք անօգուտ չէ։ Ղամիշլուք հայ զիւղում Մէլիք-Խոջի 60—70 անդամից բաղկացած ընտանիքը կայ, հարուստ ու բարեկեցիկ։ Մէլիք-Խոջոն, ինչպէս և շատ ուրիշ հայ մէլլիքներ թիւրքաց Հայտատանում, ենթանիկ ու բարեկեցիկ են», որովհետև կեանքը նրանց սովորեցրել է անծայր, անսամնական համբերութիւն։ Համսում է սակայն մի վայրէկեան, երբ այդ իմաստուն համբերութիւնն էլ չի օգնում Մէլիք-Խոջոն ունի մի զիւղեցիկ թոռ, 15 առանկան Թուրքանտան։ այս աղջկայ զեղեցկութիւնը դրաւում է քրդական Փուրմ զիւղի ցեղապետ Ալի աղայի ուշադրութիւնը, որ պահանջում է Թուրքանտան, իրան տալ կնութեան։ Սրա հակառակորդ Քար-Օր զիւղի ցեղապետ Զէյնէլ աղան լուր է ուղարկում Մէլիք-Խոջոն թէ Թուր-

վանտան իրան է պատկանում և եթէ համարձակուի Ալիքն տալ, նա սարսափելի կերպով վրէժխնդիր կը լինի: Այս երկու արիւնարբու գազանների մէջ ինչ անի ոչխարացած, ստրուկ հայը, նա հանդարտ սպասում է դէպքերի ճակատավրական յաջորդականութեանը: Ալին առաջինը ֆախցնում է Թուրքանտային, Զէյնէլը նրա հետ կոռուի է բռնւում ֆլայ աղջկայ համար, երկու քիւրդ ցեղերն ընդհարում են, հետեւանքը...

Ահա՝ «Երկու արիւնախան» ցեղերի մի շաբաթ տեւող ահելի ճակատամարտի ընթացքում, որ տեղի ունեցաւ Մրջիւնիկ և Սագրաթ հայաբնակ զիւղերի միջեւ ընկնող դաշտավայրում —քրդերի կողմէն աւարառութեան ենթարկուեցան հետեւեալ հայ զիւղերը՝ Գմբէթ, Ապարանք, Նըխրի, Նըպշի, Սղամ, Զէթ, Ղամիշլուք, Սրդիխան, Մէզրէ, Մրջիւնիկ, Նոր-Շնակ և Սագրաթ... զիւղերէն մօտ 200 հոգի կոտորուեցան, որոնց մէջ և Մէլիք Խոտոն ու իր երեք որդիքը, Մարտօն ապաստանած էր իր աղջկայ մօտ՝ Ալի աղայի տանը: Մէլիքին ու գերդաստանին սրի անցնելու համար Զէյնէլ աղան յատկապէս մի խումբ էր զըրկած Ղամիշլուք: Այդ խումբը չը բաւականացաւ իրեն տուած հրամանով, խժդելի արարքներով քարուքանդ արին Ղամիշլուքը աւերակների տակ թաղելով տաննեակ զոներ: Երկու սեռի պատանիներին էլ գերի տարին Քար-Օր, ուր այդ խեղճերը մնացին 1—2 շաբաթ, Զէյնէլ աղայի սպանուելէն յևաոյ, Դոդրքը ցոց շէյխի կարգադրութեամբ զերիներին տարին Բէրիա-Հալէպ քաղաքը և լաւ զնով ծախսեցին պասրացիներին».

Իսկ Թիւրք կառավարութիւնը... նա յաղթող Ալի աղային չնորհեց Բէզի տիտղոս և բազմաթիւ ընծաներ... Այս է եղել իրականութիւնն այն «զրախտի», որի անունից խօսում են ամօթալի մնացրանքների կոյր սիրահարները. որոնք շարունակում են պնդել, թէ այդ բոլորը տաննելի էր, որովհետեւ իրանք այնտեղ, այն «կարմիր զրախտում» չէին գտնւում: Գուցէ նրանք, այդ ողորմելի «աօլիտիկները» իրաւունք էլ ունեն «տանելի» համարել այդ «զրախտում» ապրուստը, քանի որ այնտեղ ժողովուրդ կայ, որ ապրում է հետեւեալ կենսական փիլիսոփայութեամբ, որ մնաք կ'արտազրենք բառապրառ Շւօտի գրքից:

«Զէ որ նրանք քիւրդ են, նրանց համար հալալ է մեր մալն էլ, մեր կնիկն էլ, մեր արիւնն էլ... Միայն թէ մեր լոյս հաւատին չը դպչին, ու մեր հայութիւնը մեղմէ չը խլեն... Մենք ժրաջան մարդիկ ենք... Մենք դարձեալ մալի և կնոջ տէր կը դառնանք... Իսկ քիւրդը էլի չունի և էլի մեզ պիտի կարօտի... Մենք հայերս որ կանք, ոչխար ենք. քրդերը՝ դայլ. որ-

Քան էլ ոչխարը դայլի—կազմանի փայ լինի, որքան էլ նրան մորթեսուուտես, նա չի վերջանար և օրըսոօրէ կ'ածիւ Մինչդեռ գայլը տեսէք, թիւը նուազ, փորը միշտ քաղցած...» Զարմանաւլի է սակայն, որ այս իմաստուն փիլիսոփայութիւնը, ինչպէս տեսանք, չի էլ արդարացել Բալուում. ուր 70 հազար հայերի թիւը իջել է 18 հազարի, սրանք ոչխարներն են. 30 հազար քրդերի՝ այսինքն գայլերի թիւը, նոյն ժամանակում, բարձրացել է 65 հազարի... Թուերը շատ են պերճախօս։ Ասենք այդպիսի փիլիսոփայութիւնն իր կեսանքի առաջնորդ ընտրող ժազովուրդն իրաւունք էլ չունի տրանջալ, պատմութեան օրէնքը անողոք է և անխուսափելի։

Ա. Ա.

Ն Ո Ր Ս Տ Ա Ծ Ո Ւ Ա Ծ Գ Ր Ք Ե Ր

- 1) Գալուստ Տէր-Մկրտչեան—Գրիգոր-Մանաճինը Ռաժիկ Միհրան տոհմից, արտատպ, «Արարատ»-ից, Վաղարշապատ, 1902: թ.։
- 2) " " — Պետրոս Սիւնեաց Եպիսկոպոս Արտատպած «Արարատ»-ից, Վաղարշապատ, 1902 թ.։
- 3) " " — Ստեփանոս իմաստասէր, Արտատպ, «Արարատ»-ից, Վաղարշապատ, 1902 թ.։
- 4) " " — Հազար Փարպեցու ձեռագիրը, Վաղարշապատ, 1902 թ.։
- 5) Բ. եպ. Գէորգեան (Ճուղուրեանց) Վաղարշապատցի. Խորենացուն Խորենացով պէտք է հասկանալ, թիֆլիս, 1902 թ., գինն է 1 ռ.։
- 6) Սոխակ Հայաստանի, հրատարակեց Գր. ք. Գրիգորեանց, 1 հատոր, 5 տպագրութիւն, Բագու. 1902 թ., գինն է 1 ռ. 20 կու.
- 7) Լորդ Լիտոնն, Պօմպէյի վերջին օրերը, թարգմ. անգլ. Յ. Միրդոյեան, հրատ. Գ. Գալստեանի, թիֆլիս. 1903 թ.։
- 8) Ն. Սուվորօվ, Եկեղեցու և պետութեան յարարերութիւնները, թարգմ. Պ. Տէր-Յարութիւնեան, Վաղարշապատ, 1902 թ., գինն է 30 կու.։
- 9) Բժ. Վ. Արծրունի, Նորածին երեխաների հրւանդութիւնները, թիֆլիս, 1902 թ., գինն է 5 կու.։

- 10) Մաքսիմ Գօրկիյ, Ամայի Դաշտում, թարգմ. Ս. Մ.—իսահակեան, Ալեքսանդրովոլ, 1902թ., զինն է 5 կոպ.։
- 11) Կ. Ահարոնեան, Խեղճերը, Թիֆլիս, 1902թ., զինն է 1 ռ.։
- 12) Շահրիար, Զհուդ-Քուշան, վէպ, 1902թ., զինն է 1 ռ.։
- 13) Լէօ, Գրիգոր Արծրունի, պատկերագարդ, Թիֆլիս, 1902թ., զինն է 1 ռ.։
- 14) Եմ. ք. Նազարեանց, Ոտանաւորներ, երեխաների համար, 15 պատկերով, Մոսկով, 1913-ի զինն է 50 կոպ.։

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ

(Մահուան տաճամեակի առիրով)

Անգիտակից և յաճախ անզգայ ամբոխի մէջ ժամանակ առժամանակ ծնւում են անհատներ, որոնք կազմակերպում են նրան, նպատակներ դնում նրա առաջ և մղում են նրան դէպի այդ նպատակները անդիմազրելի ոյժով:

Այդպիսի անհատներից մէկն էր Գրիգոր Արծրունին, որի մահուան տաճամեակը լրացաւ այս գեկումբերի 19-ին:

Արծրունուց առաջ էլ մեզնում կային յառաջադիմական ձգտումներով մարդիկ, կային լուսաւոր գաղափարների նոյն իսկ նշանաւոր քարոզիչներ, ինչպէս Նաղարեան և Նալբանդեան, բայց յառաջադիմական կուսակցութիւն չը կար:

Այդ կուսակցութիւնը ստեղծեց Գրիգոր Արծրունին, որ իսկական լիբէրալ լինելով եւրոպական լիբէրալիզմի գոյն տուեց նրան:

Ես կամաւ գործ զրեցի օտարազգի լիբէրալ և լիբէրալիզմ բառերը: Նրանք շատ որոշ իմաստ ունեն, մինչդեռ ազատամիտ բառը մեզնում գեռ չի հասել այդքան որոշութեան:

Եթէ Տօլստօյին, Միխայլօվսկուն, Բէքէլին կամ Ժօնէսին լիբէրալ անուանէք, նրանք կ'ասեն ձեզ, որ դուք սխալում էք, և սակայն նրանք բոլորն էլ ազատամիտ, ազատ մտածող մարդիկ են:

Լիբէրալ իսկապէս կը նշանակի ոչ թէ ազատ մտածող, այլ ազատութեան սկզբունքի կողմանից, Լիբէրալիզմ բառով հասկացւում է ոչ թէ մտածելու այս կամ այն եղանակ, այլ մի շատ որոշ աշխարհայեացք:

Լիբէրալիզմի տեսակէտից՝ աշխարհիս բոլոր չարիքները յառաջ են եկել ազատութեան պակասութիւնից: Տուէք մարդկանց ազատութիւն, թոյլ տուէք, որ անհատը ապրի և գործի ազատօրէն, և երկիրը դրախտ կը դառնայ:

Լիբէրալիզմը բուրժուազիայի ծնունդն է։ Այն ժամանակ, երբ Արևմտեան Եւրոպայում անհատը շղթայուած էր ամեն տեղ և ամեն կողմից, երբ նա ոչինչ էր համայնքից և համբեարից զուրս, այն ժամանակ, երբ զիւղացին գեռ ճորտ էր, երբ ար- հեստաւորը և առնտրականը կաշկանդուած էին իրանց գործու- նէութեան մէջ մանրակրկիտ կանոնադրութեամբ և ամեն տեղ տիրում էր ֆէօդալական կամայականութիւնը, նոր թեաւորուող բուրժուան ընդհանուր շահեր ունէր ժողովրդի հետ և ոգեւո- րում էր ազատասիրական իդէալիստրով։

Պէտք էր փշմել շղթաները, պէտք էր ազատութիւն ձեռք բերել։

Ժողովուրդը միացաւ բուրժուազիայի հետ և ազատութիւն ձեռք բերեց։ Բայց ժողովրդի տառապանդները շատ քիչ թե- թեացան։ Բուրժուազիան առիւծի բաժին վերցրեց ազատու- թեան տուած բարիքներից։

Ժողովուրդը հիասթափուեց։ Նրան համոզում էին, թէ մարդկանց շահերը համերաշխ են, թէ ամեն մարդ ձգտելով իր երջանկութեանը նպաստելու է ընդհանուրի երջանկութեանը, թէ ազատ մրցումը կունենայ միմիայն բարերար հետեւանքներ։ Մինչդեռ փորձը շուտով յոյց տուեց, որ գոյութեան կոիւը օրէցօր սաստկանում է, որ այդ կուսում յաղթուածների դիակ- ները հետզհետէ շատանում են և ֆէօդալական բուրդի փոխա- րէն, որի ստորոտը ժողովուրդն էր կազմում, իսկ հետզհետէ նեղացող վերին խաւերը՝ ժողովրդի զլիխն նստած իշխող զա- սակարգերը, ստեղծւում է մի նոր հասարակական բուրդ, որի խաւերը բաժանում են հարսաւութեան չափով և որի ամբողջ ծանրութիւնը դարձեալ կրում է նոյն ժողովուրդը։

Պարզ էր, որ միմիայն ազատութիւնը անկարող է գար- մանել բոլոր չարիքները։ Պէտք էր մի ուրիշ բան բացի ազա- տութիւնից։ Եւ ահա այդ ուրիշ բանը չէր տալիս լիբէրալիզմը։

Եւ լիբէրալիզմը Եւրոպայում կորցրեց իր հրապոյը, իսկ շատերի աջում՝ նոյն-իսկ իր ամբողջ վարկը։

Այժմ Եւրոպայում լիբէրալները ժողովրդական կուսակցու- թիւնների ամենաթոյլ տարրն են կազմում։ Մի քանի տասնեակ տարի էլ, և նրանք անախրճնիզմ կը զատնան, որովհետեւ նրանց raison-d'ètre-ը կորաւ այն ժամանակից ի վեր, երբ ժողովրդա- կան աւելի արժատական կուսակցութիւնները հրաժարուեցին ժողովրդին բռնի կերպով երջանկացնելու ցնորդից և սկսեցին ըստ արժանոյն գնահատել ազատութեան գաղափարը, որին չա- փազանց արհամարհանքով էին վերաբերւում մի ժամանակ՝ դառն հիասթափութեան ազդեցութեան տակ։

Համակրելի և տաղանդաւոր լիբէրալներ այժմ Եւրօպայում գուք կարող էք գտնել միմիայն իրենւ հազուագիւտ բացառութիւններ։ Մի Ռիխտէր՝ Գերմանիայում, մի Մոոլէյ՝ Անգլիայում, մի Կլէմանսօ՝ Ֆրանսիայում, և մի Քանի ուրիշ՝ դրանց շուրջը։

Այդպէս չէր այն ժամանակ, երբ լիբէրալ կուսակցութիւնը մողովրդական կուսակցութիւն էր, երբ նա զեռ չէր կատարել իր միսիան։

Այն ժամանակ նա փայլում էր բարոյական և մտաւոր արժանաւորութիւններով։

Կուսակցութիւններն էլ ունեն իրանց բախտը և ժամանակը։

Եօթանամանական թուականների սկզբին, երբ Գրիգոր Արծրունին հիմնեց «Մշակը», լիբէրալիզմի քարոզը կարող էր միայն բարերար ազգեցութիւն ունենալ մեղնում։

Հայ հասարակութեան վերածնութիւնը նոր էր սկսուել և ամրոխը զեռ խարխսափում էր միջնադարեան խաւարի մէջ, Քաղաքակրթուած հասարակութիւն չը կար, Կար տիրացուների ժողովուրդ, պէտք էր քաղաքակրթել այդ ժողովուրդը։ Պէսպ էր Եւրօպականացնել նրան։

«Յիսուներորդ թուականների սկիզբն էր,—զրում էր Գրիգոր Արծրունին իր մահից երեք ամիս առաջ՝ Գամառ Քաթիպայի մահուան առիթով,—երբ հայերին նոր էր վիճակուած շփուել համամարդկային քաղաքակրթութեան հետ։ Այդ տեսակ ըոպէներում ամեն ազգի առջեւ ճակատագրական ձեւով կամ, աւելի լաւ ասենք, բնական օրէնքով դրւում է իր գոյութեան ինդիրը, առաջարկւում է «լինել կամ չը լինել» ստիպողական սարսափելի հարցը... Կամ փաել, մենենել՝ հնաւանդ, անկենդան, անշարժ անցեալի անդունդի մէջ,—կամ հերոսարար իրանից թափ տալով հնութեան փոշին, վճռողարար և աներկիւզ կերպով ոտք կոխել ժամանակակից քաղաքակրթութեան լայն և լուսաւոր շաւզի վրայ...»

Արծրունին այդ քաղաքակրթութեան միսիօնէրը լինելու կոչումն էր զգում իր մէջ և հաւատում էր իր գործին իրր իսկական միսիօնէր։

Եւ այդ հաւատն էր, որ այնքան ոյժ էր տալիս նրան իր բազմաթիւ հակառակորդների դիմաց։

Բեռոնէի նման նա կարող էր ասել. «Ի՞նչն է, որ ինձ վստահութիւն է ներշնչում, թէ ես կը յաղթեմ ամենանշանաւոր խելօք մարդկանց։ Այդ վստահութիւնը ինձ ներշնչում է իմ հաւատը, իմ մաքուր խղճի զիտակցութիւնը։ Միայն մենք հա-

ւատումնենք, մեր հակառակորդները հաւատ չունեն: Անկեղծ ժամանակ՝ նրանք այլապէս են մտածում, քան մենք, իսկ կեղծելիս՝ այլապէս են խօսում, քան մենք, բայց նրանք դաւանանքները չունեն, որ կարողանային հակադրել մեր գաւառնանքներին: Եւ այդ պատճառով մենք կը յաղթենք, իսկ մեր թշնամիները ամօթապարտ կը լինեն:

Նոյն Բէօնէի նման Արծրունին համոզուած էր, թէ «Ճըշմարտութեան յոյզերը, որ հոգով հարուստները կուտակում են մեծ գրքերի մէջ, չեն կարող բաւարարութիւն տալ հոգով աղքատների առօրեայ, կենսական կարիքներին: Այդ կարիքներին գոհացում տալ կարող է միայն շրջուն դրամ դարձրած գիտութիւնը... Ճիշտ է, ամսագիրների և լրագիրների տոկունութիւնն համար էլ, ինչպէս դրամի տոկունութեան համար, անհրաժեշտ է անազնիւ մետաղների խառնուրդ, բայց այն, ինչ որ աւելի պիտանի է դարձնում մի քան, չի կարող ստորացնել նրա արժանաւորութիւնը: Եւ իսկապէս, այն պղինձը, որ լրագիրները տարածում են ժողովրդի մէջ, աւելի արժէք ունի, քան զրքերի մէջ պարունակուած ամբողջ ուկին:

(Բեօնէ, Շարադրութիւններ, II հատոր):

Եւ Արծրունին քսան տարի շարունակ «Մշակի» միջոցով տարածում էր հայ ժողովրդի մէջ «շրջուն դրամ դարձրած գիտութիւնը»: Եւ հէնց նրանունն էր գլխաւորապէս կայանում Արծրունու հրապարակախօսական տաղանդը, որ նա կարողանում էր եւրոպական լիրէրալիզմի գաղափարները մատչելի դարձնել մի ասիացի տիրացուամբու ժողովրդի:

Միշտ ժողովրդին և միմիայն ժողովրդին ի նկատի ունէր Արծրունին զրելիս: Ժողովրդի համար էր զրում և ժողովրդի շահերի տեսակէտից էր գրում: Եւ ժողովուրդը զնահատեց նրան: Նրա թաղումը համաժողովրդական թաղումն էր: Նրան թաղում էր հասարակ, իսեղ ժողովուրդը: պարագլուխ ունենալով ազատամիտ ինտելիգէնցիայի ներկայացուցիչներին:

Այդ ինտելիգէնցիայի մէջ կային ոչ միայն զուտ լիրէրալներ, այլ և արմատական հայեացքների ներկայուցուցիչներ, որոնք, շատ և շատ հարցերում համամիտ չը լինելով Արծրունուն, զգում էին սակայն, որ գեռ իրանց և լիրէրաների ճանապարհները զուգահեռաբար են զնում, և մեծ յարգանքով էին վերաբերում Արծրունուն, իբրև անկեղծ, շիտակ և գէմօկրատ լիրէրալի և տաղանդաւոր մարդու:

Ինչումն էր Արծրունու տաղանդը: Փայլ և զեղեցկութիւն զուր կը լինէր ինտելի նրա զրուածքներում: Արծրունին ու տիլի ստարիստ էր մինչի ուղեծուծ և հոգ չէր տանում ոճի ոչ

միայն գեղեցկութեանը, այլ և յաճախ կանոնաւորութեանը։ Նա զրում էր միայն նրա համար, որ իրան հասկանան և համոզուեն։ Նա արտիստ չէր, ոսի վարպետ չէր։ Բայց նա զրում էր վերին աստիճանի պարզ ու մատչելի լեզուով և համոզմունքի բացասիկ եռանդով։ Նրա ոճը զօրեղ էր և ազդու, անպանոյժ և անկեղծ, և նա գիտէր համակուել ընդհանուրի տրամադրութեամբ, դուրս դալ իր անձնաւորութեան սահմաններից, ապրել ուրիշների կեանքով, վնրզզալ ուրիշների ցաւերն ու խնդութիւնները, և խօսքի ոյժով վարակել ընթերցովներին իր տրամադրութիւններով, հազորզել նրանց իր ցաւակցութիւնը և խնդակցութիւնը, իր զայրոյթը և հիացմունքը։ Նա գիտէր նոյնպէս խարազանել վատութիւնը, նշաւակել ստորութիւնը և ծաղրել յիմարութիւնը։

Եւ զարմանալի չէ, որ նա դարձաւ ահադին բազմութեան մտքերի և սրտերի իշխանը և անջնջելի հետք թողեց իր յետեւից։

Նա մի ամբողջ նոր աշխարհայեացք մտցրեց հայ ժողովրդի գիտակցութեան մէջ՝ և իր անձնաւորութեան կնիքը զրեց հայ յառաջադիմական կուսակցութեան վրայ։ Նա ամենօրեայ ընթերցանութեան պահանջ զարթեցրեց ուսւահայերի մէջ և հասարակական ոյժ դարձրեց հայ լրագիրը։ Քառորդ դար շարունակ նա ապրեց ընդհանուրի ցաւերով, քարտզեց այն, ինչ որ ճշմարիտ էր համարում, և մաքառեց նրա զէմ, ինչ որ չարիք էր իր համոզմունքով։

Նա ջերմ կերպով էր սիրում և խիստ էր ատում, և նոյնապիսի զգացմունքներ էր զարթեցնում իր վերաբերմամբ։ Եղան այնպիսիները, որոնք կուսքի տեղ պաշտում էին նրան։ Եղան և այնպիսիները, որոնք ազգի թշնամի յայտարարեցին նրան։ Բայց անցան տարիներ նրա մահից յետոյ, հանգստացան կրքերը, մոռացուեցին անձնական հաշիւնները, լուսցին անբարեխիղծ յարձակումները ու միամիտ ներբողները, և այսօր, երբ լրացաւ նրա մահուան տաճնամեսակը, անկասկածելի է զրեթէ ամենքի համար, որ Գրիգոր Արծրունին իր պատուաւոր տեղն ունի այն հայ հասարակական գործիչների մէջ, որոնք մեծ ծառայութիւններ ևն մատուցել մեր յառաջադիմութեան գործին։

ՆԵՐՓԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Օտարների սխալ կարծիքը մեր մասին.—Հայ հարուստները և հայ մասսան.—Միջնադարեան և ժամանակակից պահանջները.—Մեր կարիքները և կտակները:

Պաշտօնական հաղորդութիւններ

Օտարները մեծ մասամբ այն կարծիքի են, որ հայերս ընդհանրապէս ունեւոր և հարուստ ազգ ենք: Այդ սխալ կարծիքը նրանք կազմել են մեր մասին այն պատճառով, որ խոշոր առեւտրական-արդիւնագործական կենտրոններում նրանք պատահում են միայն հայ բուրժուազիայի նկրկայացուցիչներին: Եթէ օտարները աւելի մօտից ճանաչէին հային, նրանք կը տեսնէին, որ մեր քաղաքներում և գիւղերում հայ մասսան կարող է բարիս իսկական նշանակութեամբ չքաւոր համարուել: Քաղաքներում գրանք բանուորներ են, արհեստաւորներ և այնպիսի մանք վաճառականներ, որոնք շատ էլ հեռու չեն պրօետար լինելուց: Գիւղերում սակաւահողութեան, տղիտութեան և էժմոն կրեղիափ բացակայութեան պատճառով մեր ժողովուրդը մի ողորմելի, անկուլտուրական կեանք է վայելում:

Այդպէս ուրեմն մի քանի խոշոր առեւտրականների փայլը շացնում է օտարներին և զրանք սխալ գաղափար են կազմում մեր անտեսական իրականութեան մասին:

Օտարները, բացի այդ, կարծում են, որ ընդհանրապէս հայ հարուստները հայութեան նկատմամբ ցաւող սիրտ ունեն և մեծ բարեզործութիւններ են անում իրանց ազգի համար: Եւ այդ բանում համակարծիք են օտարներին և մեզանից շատերը, միշտի նկատի ունենալով: Մուրագ-Խաֆայէլեանների, Լազարեանների, Սանասարեանների և Յովեաննեանների անունները:

Ի հարկէ, չի կարելի ուրանալ, որ այդ մեծատունները իրանց ահազին կարողութեան համեմատաբար չնչին մասը նուիրել են ազգին և աւելի խոշոր մասը կտակել են իրանց

ժառանգներին՝ երեւի, որ զրանք չույլութեան և անդործունէութեան մէջ վարժուին. չի կարելի ուրանալ և այն, որ այդ բարեգործները իմացել են իրանց ժողովրդի ժամանակակից պահանջները և զպրոցի գաղափարը գերադասել են՝ կղերին, վանականներին օգնելու և եկեղեցիներ շնելու գաղափարից, սակայն ինչ է այդ մի կաթիլ բարեգործութիւնը մեր ծով կարիքների դիմաց:

Դժբախտաբար մեր հարուստների մեծագոյն մասը շարունակում է միջնադարեան բարեպաշտ իշխանների և մեծատունների նման Երուսաղէմին և Էջմիածնին կտակել իրանց հարստութեան որոշ մասը, միանդամայն մոռանալով, որ ժամանակները փոխուել են, այժմ զպրոցը, զրականութիւնը և թատրոնը ամենաանհրաժեշտ պահանջներ են ժողովրդի լուսաւորութեան և առաջադիմութեան գործում, զրանք կարծես անտեղեակ են որ մեր կղերը չի կարողանում շահագործել նոյն իսկ եղած լայնածաւալ վանական կալուածները, և այդ ապիկարութիւնը հաւասարապէս երեւում է մեր թէ կրթուած և թէ անկիրթ հոգեորականութեան մէջ:

Այդ հարուստները պէտք է չը մոռանան, որ իրանք կոյր բախտի բերմամբ միայն հանդիսացել են զրամական մեծ ոյժի տէրներ, տնտեսական կեանքի ներկայ ֆաղիմն է ստեղծում այդ կապիտալիսաններին. Կիրակոսը չը լինի Մարկոսը կը լինի նրա տեղ. Կարապեաը չը լինի Իվանը կամ Ալին պէտք է բռնեն նրա բաց մնացած տեղը. Ուրեմն ներկայ տնտեսական կեանքի արդիւնքներ են և մեր հարուստները. Իրրի այդախիներ դրանք պէտք է հասկանան՝ որ որոշ բարոյական պարտականութիւն ունեն զէպի աշխատող մասսան, որից բաղկացած է նրանց ծնող ժողովրդի հակիմն մնծամասնութիւնը. Այդ պարտականութիւնները պէտք է ստիպի զրանց իրանց կտակած զումարներին այնպիսի գործադրութիւն տալ որ ժամանակակիցները լաւագոյն կերպով օգտուեն նրանցից. Մեր աղքատ և տգէտ ժողովրդի կոպէկներով անկարելի է խոչըր և լուրջ զպրոցական, զրական և թատրոնական ձեռնարկութիւններ սկսել, հանրակըրթական դասընթացներ պահել. ահա ինչ կէտերի վրայ պէտք է ծանրանան մեր բարեգործները, ահա կեանքը ինչ պահանջներ է զնում նրանց առաջ. Իսկ կեանքի պահանջներն իսկապէս ըմբռնելու համար պէտք է լսել մամուլին, որ հանդիսանում է իրրի կեանքի մնկնիչ և ժողովրդի իսկական ցաւերի համար գերազանցօրէն հոգացող մի անկաշառ զործիք:

Միթէ տիսուր փաստ չէ, օրինակ, տեսնել որ տասնեակտարիներ Ատրապատականի հայերը ձգում են մի կենտրոնական

գալրոց ունենալ, իսկ մինչև այժմ մեծամեծ ջանքերով կարողացել են այդ նպատակով միայն մի ողորմելի գումար, 15,620 ռ. հաւաքել (Քեանարագեազի եղբայրասիրաց ընկերութեան գումարը): Մինչդեռ մի կենտրոնական միջնակարդ գալրոցի պահպանութիւնը գիտէք ինչ է պահանջում, առնուազն տարեկան 30 հազար բիւդժէ, որ անում է մօտ կէս միջիօն դրամակլիխի տոկոս: Տղէտ և աղքատ ժողովրդի կոպէկսերը չեն տալ այդ գումարը, իսկ մեր հարուստները Երուսաղէմին և Էջմիածնին են կտակում իրանց հսկայական կարողութեան փշրանքները: Գոնեա, օրինակ վերցնէին Լազարեաններից և Սանասարեաններից և ոչ միջնադարեան բարեպաշտ մարդկանցից: Միթէ ժամանակը փոփոխութիւն չէ մտցրել այդ տնաքանդների հասկացողութիւնների մէջ...:

Հ. Ա.

15 դեկտ.

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Նոյեմբերի 7-ին կառավարչական Սենատին տրուած հրովարտակով ֆինանսների մինիստրութեան կից հիմուած առեւտրական նաւագնայութեան խորհուրդը, առեւտրական նաւագնայութեան բաժինը և նաւահանգստային գործերի կօմիտէն, դրանց ենթակայ բոլոր հիմնարկութիւններով հանւում են ֆինանսների մինիստրութեան կազմից և գառնում առանձին ինքնագույին պետական հաստատութեան Առեւտրական նաւագնայութեան և նաւահանգստների Գլխաւոր Վարչութիւն՝ անուան տակ: Այդ Գլխաւոր Վարչութեան կառավարչապետին արւում են այն իրաւունքները և պարտաւորութիւնները, որ այժմ յատկացրած են առեւտրական նաւագնայութեան և նաւահանգիստների նկատմամբ—ֆինանսների մինիստրին, իսկ նաւահանգստներում, տեխնիկական մասերում—ճանապարհների հաշորդակցութեան մինիստրին:

Նորին Կայսերական Բարձրութիւն Մնծ Խշան Ալեքսանդր Միհայլօվիչը նշանակուած է կառավարչապետ առեւտրական նաւագնայութեան և նաւահանգիստների:

Դեկտ. 6-ին լրագրներում տպուած էր հետեւալ Բարձրագոյն հեռագիրը ներքին գործոց մինիստրին:

„Վերադարձէք Միթիրից ուսանողական անկարգութիւնների համար աքսորուածներին: Առայժմ նրանք պէտք չէ ապ-

բեն բարձրագոյն դպրոցներ ունեցող քաղաքներում, բայց այնուամենայնիւ պէտք է հոգալ, որ վերադարձրուած երիտասարդները ըստ կարելւոյն գտնուէին իրանց ընտանիքների հոգաբարձութեան ներքոյ և կարգապահութեան ընտելացնող պայմանների մէջ։

Անդրկասպեան երկրում տեղի ունեցած երկրաշարժը, գեկտ. 3-ին, առաւօտեան մօտ ժամը 4-ին, իսպառ քարուքանդէ արել Անդրիման քաղաքը։ Փլատակների տակ մնացել են աւելի քան 500 զոհեր։ Երկրի ցնցումները զդալի էին նաև թիւրքաստանի միւս կէտերում։ (Թաշկենդ, Կոկանդ, Նոր-Մարգելան)։ Անդրիմանը մերգանեան շրջանի այն կէտերից էր, ուր բամբակի արդիւնաբերութիւնը և առետուրը մեծ ծաւալ են ստացել։

ԱՐՏԱՓԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մաքսալին սակագների օրինագծի ընդունուելը ռայխաստոսգում.—Ֆրանսիական պարլամենտի վերջին նիստը.—Էմբերների ձերբակալութիւնը.—Վենեցուէլուականի գործերը.—Եւրոպական դիպլոմատիան ե՞րբ է խիստ միջոցների դիմում.—Սուլթանի վերջին ծաղրը.—Անդամահատութեան փրկարար նշանակութիւնը.—Ինչ է թելադրում պատմութիւնը Մակեդոնիային.—Կոմս Լամզդորֆի ուղևորութիւնը Պիէննա:

„Պրա. Ենթա.՝ լողուածը մակեդոնական դործերի մասին:

Իտայիստագում փոքրամամութեան և մեծամասնութեան պայքարը, որի մասին անցեալ անգամ գրել էինք, վերջացաւ, ինչպէս գժուար չէր նախատեսել, չքաւոր մասսայի շահերի պաշտպանների պարտութեամբ, ագահ ազգարներին աջողուեց ընդունել տալ մաքսալին սակագների օրինագիծը 202 ձայնի առաւելութեամբ ընդդէմ 100-ի: Այդ յաղթութիւնից յետոյ ազգարները այժմ կարող են վերադառնալ իրանց ընդարձակ կալուածները և Զրօրհնեաց արձակուրդներին ճոխ քէփեր սարքել ի հաշիւ ապագայում՝ մասսայի հացի փողից կտրած կոպէկների:

Պակաս աղմկալի չէր նաև ֆրանսիական պարլամենտի վերջին նիստը. ֆրանսիական հականանրապետականները ամեն կերպ աշխատում են սեւաշնել այժմեան արմատական կառավարութիւնը ժողովրդի աչքում: Օգտուելով էմբերների մալթ գործից, Դէրուլէզի բարեկամ Ֆօթիէ զը Կանյին և ուրիշ նացինալիսաններ՝ մի շարք մեզադրամներ և զրպարտութիւններ թափեցին ներկայ կառավարութեան, մանաւանդ արդարադատութեաններ իտուափել արդարադատութեան մինիստը Վալէի հասցէին, իբրև թէ դա մեզսակից է այն բանում, որ այդ մեծ խարդախների ընտանիքը կարողաց իտուափել արդարադատութեան ձևոքից: Այդ նացիոնալիստները իբրև թէ չը զիտեն, որ նոյն ֆրանսիայում, ոչ հանրապետական ուժիմների ժամանակ, չատ աւելի խայտառակ

գործեր են պատահել. և եթէ ներկայ հասարակական պայմաններում մի ռեժիմ կայ, որի օրօք աւելի մեծ հնարաւորութիւն է տրում երեւան հանելու „այս աշխարհի ուժների“ ստոր արարքները այդ, յամենայն դէպս, նացիօնալիստների ցանկացած ռեժիմը չէ, այլ աւելի շուտ արմատական հանրապետականների կառավարութիւնը:

Այսպէս թէ այսպէս նացիօնալիստների յարձակումները առիթ տուին Վալէին պարզելու, որ մեծ խարդախոների ընտանիքի գլուխը, Ֆրեգերիկ Էմբերը, իբրև պատգամաւոր, պատկանում էր բուլանժիստների կուսակցութեան և, ուրեմն, մօտ էր նացիօնալիստների սրտին: Այդ խօսքերը կատաղութեան հասցրին պահպանողականներին. սոսկալի իրարանցում և աղմուկ բարձրացաւ ժողովում. „Սուտ է“, „կեղասոտ միջոցների է զիմում մինիստրը“ և այլ անվայել նախատինքներով փորձեցին կատաղած նացիօնալիստները փաթաթել էմբերների անպատիթ մնացած արարքները, ներկայ կառավարութեան շնչին: Իրարանցումը այն տեղը հասաւ, որ ժողովինախագահ Լէօն Բուրժուան ստիպուած եղաւ մի առժամանակ ընդհատել նիսար և, կրկին բանալով, առաջարկել, որ ժամանակաւորապէս հեռացնուեն ժողովից նացիօնալիստ պատգամաւորներից երկուսը, որոնք թոյլ էին տուել իրանց անվայել խօսքերով և վիրաւորական ակնարկներով չօշափել մինիստրի պատիւը: Բայց և այնպէս, Էմբերների գործը բնաւ չը պարզուեց այդ աղմուկներից յետոյ էլ: Հեռագիրները վերջերում հաղորդեցին, որ Մատրիդում աջողուել է ձերբակալել Էմբերներին Ուրեմն, շուտով արդարադատութեան առաջ կը մերկացնուեն երկար տարիների ընթացքում իրանց փայլուն և շքեղ սալօններում յարգուած, «բարեգործ» և «բարեպաշտ» պարունակութիւն և տիկինների գերեր կատարող այդ խարդախ ընտանիքի բոլոր անդամները: Սակայն ովզ կարող է ասել, որ ներկայ հասարակական կարգերում այդ մի եղակի երեւոյթ է և ոչ ընդհանրապէս կղերականքուրժուական կենցաղը որոշող մի խոշոր երեւոյթ:

Միթէ բնորոշ չէ նոյն հասարակական կարգերի համար նաև այն, ինչ կատարում է տխուր հոչակ ունեցող մնանկութեան հետ կապուած Պանամայի մօտերքում, Վենեցյուէլայի մէջ Ներկու հզօր պետութիւններ միացած ոյժերով յարձակուել են Հարաւային Սմերիկայի մի փոքրիկ հանրապետութեան վրայ, ովկիանոսի ալիքների մէջ են խեղուում նրա նաւերը, պաշարում են այդ հանրապետութեան նաւահանգիստները, մի խօսքով՝ տեվուսական անդթութեամբ զրահաւորուած բռունցք են ցոյց տալիս մի փոքրիկ ժողովրդի, որովհետեւ մի քսնի անգլիացի և գեր-

մանայի վաշխառու կապիտալիստների շահեր վտանգուած են։ Սակայն միթէ չէր կարելի այդ առեւտրական հաշիւների գործը յանձնել միջաղդային միջնորդ դատարանի քննութեան, կը մտածի միամիտ ոչ-զիվօմատը, որ չը գիտէ թէ ոյժը՝ իրաւունք էն և եւրոպական մեծ, հզօր պետութիւնները գիտեն այդ սկզբունքը գործադրել իրանց օդտին և հեշտութեամբ չեն դիմում միջնորդ դատարանի քննութեան։

Այստեղ կարիք ենք զգում մի քանի տեղեկութիւններ առաջ ընթել, որ աւելի հասկանալի լինն հեռաւոր Վենեցուէլայում կատարուազ զէպերը։

Յայտնի է որ Կոլումբոսից յետոյ դէպի Նոր Աշխարհը կամ Ամերիկան սկսուեց Հին Աշխարհից գաղթային հոսանք, որ դարուց գար ընդարձակւում էր, Անգլո-գերմանական ցեղերը սովորաբար զաղթում էին դէպի Հիւսիսային Ամերիկա, իսկ ումանական ցեղերը, զիլաւորապէս սպանացիները, դէպի Կեդրոնական և Հարաւային Ամերիկան։ Նոր հայրենիքի փարթամքնութեան մէջ այդ ումանական ազգերը աւելի ևս մեղկացան, իսկ իրանց հին հայրենիքի միապետական ուժիմը և կաթօլիկ կղերի ազգեցութիւնը արդէն որոշ դրոշմ էին դրել դրանց աշխարհայեցողութեան վրայ, որ այնքան էլ նպաստաւոր չէր հասարակական կարգերի կանոնաւոր առաջարիմութեան համար։

Նոր հայրենիքում սպանացիները գտան բազմաթիւ վայրենի և կիսավայրենի կարմրամորթ ցեղեր. ապա Աֆրիկայից քերուեցան ստրուկ նեղներ։ Խառն ամուսնութիւնները այդ բոլոր ցեղերի մէջ առաջ բերեց նոր տեսակի մարդիկ ևս։ Արդ, դժուար չէ, ի նկատի ունենալով ժառանգական օրէնքը և այդ ցեղերի մտաւոր զարգացման ընդհանուր մակերեսոյթը, հասկանալի է, որ բարձր կուլտուրական պահանջներն ու հասարակական կարգերը այնքան էլ հեշտ չէին կարող պատուաստուել այդ նոր ումանական երկներում։

Անցեալ զարի սկզբներում ազատուելով Սպանիայից կենարոնական և Հարաւային Ամերիկայի զաղութները բաժանուեցան բազմաթիւ տէրութիւնների, բոլորն էլ հանրապետական կառավարութիւններով, պետական սպանական լեզուով և կաթօլիկ կրօնքով։ Սյդ հանրապետութիւնները չը կարողացան այնպիսի հաստատ հիմքերի վրայ գնել իրանց հասարակական կարգերը, ինչպէս այդ արին անդասակները Հիւսիսային Ամերիկայում եւ այդ հասկանալի է։ բողոքական, սահմանադրական Անգլիայից գաղթող տարրերը իրանց մտաւոր զարգացմումը և բնաւորութեան տոկունութեամբ սպանացիներից աւելի բարձր էին, այնքան էլ չէին խառնուած սեամորթների և կարմրամոր-

թերի հետ, միւս կողմից էլ իրանց նոր հայրենիքը չունէր բնութեան փարթամութիւն և պահանջում էր մարդկանցից եռանգ, աշխատասիրութիւն, չէր մեղկացնում դրանց այսպէս, ինչպէս տրօսիկական բնութիւնը ուժանական ազգերին:

Այդպէս ահա տարբեր են Հիւսիսային և Հարաւային Ամերիկայի ազգերի բնաւութիւնները:

Չը նայած լայն ընտրողական սկզբունքին, որ հիմք է զրուած այդ աշխարհի նաև ուժանական հանրապետութիւնների հաստատութիւններում և կարգերում, այնուամենայնիւ Հիւսիսային Ամերիկայի Միացեալ-Նահանգներից տարբեր կերպով են ընթանում Հարաւային Ամերիկայի այդ տարբեր տարբեր «Միացեալ Նահանգների» ներքին գործերը:

Կուսակցութիւնների պահարը խաղաղ սահմանադրական ճանապարհով չէ ընթանում այդ ուժանական հանրապետութիւնների մէջ, այլ բուռն երկպառակութիւնների, զինուած ապստամբութիւնների պատճառ է լինում: Պարտուած կուսակցութիւնը պատերազմ է մղում իշխող կուսակցութեան դէմ գէնքը ձեռին, եղբայրասպան կոիւներում: Այդպիսի ներքին կոիւներ միշտ լինում են Ամերիկայի ուժանական հանրապետութիւնների մէջ: Այդպիսի կոիւներ տեղի ունէին և այս երկու վերջին տարիներս Կոլումբիայի և Վենեցուէլայի մէջ: Այդ երկու հանրապետութիւնները, որոնք մի ժամանակ մի ամբողջութիւն էին կազմում, այժմ իրարից անջատուած, տունձին տէրութիւններ են: Իրար հետ կուսակցութեան և աշտառական կուսակցութեան մէկում կան կուսակցութիւններ, ինչպէս աշխարհիս ամեն մի ծայրում, ուր ապրում են մարդիկ: Կոլումբիայում կառավարչական զեկը անցել էր կղերական-բուրժուական կուսակցութեան ձեռքը, և ահա դեմոկրատները ապստամբուել էին, սկսուել էր ներքին պատերազմ: Վենեցուէլայում կառավարչական զեկը անցել է դեմոկրատների ձեռքը և պարտուած կղերական-բուրժուական կուսակցութիւնն է ապստամբում և իր զօրքով կանոնաւոր պատերազմներ մղում իշխանութեան դէմ:

Բայց, տեղացիներից բացի այդ երկներում ապրում են նաև եկուոր վաճառականներ, զիխաւորապէս գերմանացիք, անգլիացիք, եանկիններ, նաև իտալացիք, ֆրանսիացիք և այլն: Կղերը չը նմանուելով իր Մեծ Ռւսուցին, ամեն տեղ, ոռվորաբար, բարեկամ է խոշոր դրամատէրներին: այս վերջիններն էլ չափազանց սիրում են իրանց սեւազգեստ այդ հաճոյակատարներին: Իւրաքանչիւր երկրում կան բաղմնթիւ իոշոր և շահա-

և էտ ձեռնարկութիւններ, որոնցից, եթէ ինքը կառավարութիւնը չի կարողանում օգտուել, օգտուում են կապիտալիստները՝ ՀՀՆՍ, օրինակի համար, երկաթուղիները։ Այդպիսի ձեռնարկութիւններ գժուարութեամբ են անցնում կապիտալիստների ձեռքը, երբ երկրի զեկը գտնուում է գնումոկրատ վարիչների մօտ ընականաբար, օտարերկրացի կապիտալիստները այնքան էլ չեն կարող համակրել գնումոկրատ ուժիմները։ Այդ երեւաց նաև Կոլումբիայի և Վենեցուէլայի ներքին երկարակութիւնների ժամանակ։

Օտարերկրացի կապիտալիստները այնքան վրդովուած էին, որ Վենեցուէլայում կառավարչական զեկը անցաւ գնումոկրատ կուսակցութեան ձեռքը, որ նոյն իսկ բացարձակ ըմբոստութեան օրինակներ էին ցոյց տալիս Այդպէս, անցեալ տարի, Վենեցուէլայի երկաթուղիների (որ գերմանական մի ընկերութեան սեփականութիւն է) գերմանացի գիրեկտորը մերժեց փոխադրել կառավարական զօրքերը, և հանրապետութեան նախադահ կաստրօն ստիլուած էր ժամանակաւորապէս գրաւել այդ երկաթուղիները և հետացնել երկրից այդ գերմանացուն, որ իր ըմբոստութեամբ ուղում էր եկրի կղերական կառավարութեան զօրքերին կռուի մէջ մի առաւելութիւն տալ։

Ահա հրաման երես առած են լինում մեծ պետութիւնների կապիտալիստ հպատակները օտար, թոյլ երկրներում։

Երբ Վենեցուէլայում կառավարական զեկը անցաւ գնումոկրատների ձեռքը—այդ երկրում հաստատուած անզլիացի և գերմանացի կապիտալիստները իրանց շահերը վտանգուած տեսան, վախեցան՝ որ իրանց վաշխառութեան ցանցերի մէջ ընկած տէրութիւնը վոթափել իրանից այդ սարդերի ոստայնը։ Եւ նրանք վայնասուն բարձրացրին, իսկոյն օդնութեան հասան զրահաւորուած ու կրուպիֆ թնդանօթներով զինուած նաւերը։ Անզլիայի և Գերմանիայի օրինակից խրախուսուեց և իտալիան, որ նմանապես ներկայացրեց իր վաճառականական գաֆտարները⁶, ուր գրուած էին Վենեցուէլայի պարտքերը շէլոկեան բարդ տոկումներով հանդերձ։

Լաւ «գեշէվտ» էր բացւում և եանկի կապիտալիստների համար, ուստի առայժմ նուզվէլոք ծալեց և մի կողմ զրեց Մօնրոէ՛կի հոչակաւոր գոկտրինը, որով արգելում է ոչ-ամերիկական պետութիւններին խառնուել ամերիկական ներքին զործեր ւմ։ Մի խօսքով, դարուս շահագիտական, սերկանտիլ ողին ցուր տուեց իր նողկալի կողմերը և այդ գործում, ինչպէս անցեալ տարի ֆրանս-թրքական ընդհարման գէսքում, երբ երկու ֆրանսիահպատակ վաշխառուների դատը պաշտպանելու։ համար

թրքական ջրերը ուղարկուեց մեծ հանրապետութեան նաւատարմիզը:

Նոյն Ֆրանսիան, Անգլիան, Գերմանիան և Խտալիան մոռանում են իրանց զրահակիր և թնդանօթներով զինուած նաւերի մասին, երբ պէտք է զուտ մարդասիրական մի դատ պաշտպանել, մոռանում են զինուած բռունցքի զիմել, երբ պէտք է կատարել տան նոյն իսկ իրանց սեփական այնպիսի պատուէրները, որոնցից իրանք դրամական չահ չունեն, բայց ուրիշների վիճել չը լինեն է կախուած: Միթէ Բերլինի վեհաժողովում դրանց ստորագրութիւններով չէին որոշուած Մակեդոնիայի բեֆօրմները:

Եւ ինչ, Թիւրքիան ոչ միայն չը կատարեց այդ պատուէրները, այլ և մեծ պետութիւնների քթի տակ շարունակում է աըրով և հրով յիսազազացնել՝ բողոքով աղքերին, իսկ երբ եւրոպական զիպլօմատիան կիսաբերան, փաղաքչօրէն խնդրում է սուլլանին, որ նա մի բան անի այդ թշուառ բայեաի համար, իլլըզ-Քեսակի ձարպիկ կալանաւորը նուրբ կերպով հեգնում է եւրոպային, առաջարկելով այնպիսի բեֆօրմներ, որոնք Բերլինի վեհաժողովում պահանջածներից էլ պակաս են և անզօր են մազի չափ փոփոխելու քրիստոնեանների անտանելի կացութիւնը:

Լրազեններում տպուած էին Մակեդոնիայում մտյնուելիք այդ սուլլանական բեֆօրմները՝ Դա մեֆիստօֆէլեան ծաղը է: Երեւակայեցէք—իւրաքանչիւր վիլայէթի ընդ հ ան ուր կօմի ս ա ր ը, որ պէտք է գ ե ր ա հ ս կ ի վալինների գործունէութեան վրայ՝ պէտք է հաստատուի իր պաշտօնի մէջ նոյն վալիններից... Եւ կայ մէկը եւրոպական զիպլօմատներից, որ հաւատայ այդ յիսֆօրմների՝ լրջութեան: Ի հարկէ—ոչ: Անշուշտ, շատ աւելի մեծ նրբամտութիւն կը ցայց տացին այդ զիպլօմատները, եթէ ինդիրը վերաբերուէր ոչ խեղճ ու կրակ բայեային, այլ եւրոպայի փայլուն կապիտալիստներին:

Եւ զեռ հարց է թէ՝ որքան ցանկալի է եւրոպական խոշոր բուրժուազիայի տևասկէտից, որ իսկապէս Թիւրքիան վերածնուէր, ընդունակ դասնար ինքը իր բնիկ ժողովրդների միջոցով վարել սեփական գործները, անտեսութիւնը, մշակել իր բնական հարստութիւնները, շնորհ իր միջոցներով երկաթուղիներ և այն: Զէ որ այն ժամանակ զրափ պարագիտների համար նպաստաւոր հող չէր ներկայացնի Թիւրքիան, որ այդ հիմնական բեֆօրմներից կը դառնար կննսունակ, ուժեղ և իր բազմակեզուութեան անընկճելի: Հէնց իրերի գրութեան ամբողջ արագիզմը կայանում է նրա-

նում, որ Թիւրքիան չի հասկանում իր իսկական շահերը, այդ լապէս նա ինքը կ'աշխատէր մտցնել վարչական այն բարենորոգութիւնները, որ թելազրում են նրան իր քրիստոնեայ հըպատակները. դրանք մտաւորպէս աւելի զարգացած լինելով՝ հասկանում են վտանգը և, յոյնները կտրելով Թիւրքիայի վերածնութեան հնարաւորութիւնից, գերադասում են անշարժ, վտող, նեխուած ուժիմից վաղցրօք անջատուել և դրանով ազատել իրանց գոյութիւնը կորստից, որովհետեւ մնալով կապուած մեռնող օրգանիզմի հետ, իրանք ևս պէտք է փտեն, մեռնեն:

Եւ Թիւրքիայի ամբողջ պատմութիւնը ապացուցեց, որ կենսունակ տարրերի անշատումը մի անհրաժեշտութիւն է. Բնչ կը լինէր Բուլղարիայի, Սերբիայի, Ռումանիայի, Յունաստանի, Կրետէի, Բօսնօ-Հերցոգովինայի, Զերնօգորիայի գրութիւնը, եթէ ժամանակին չը գործադրուեր, զիսաւորապէս Ռուսաստանի չնորհիւ, անհրաժեշտ անդամանատութիւնը սպականող մարմնից Պարզ է, որ Մակեդոնիային ևս մնում է նոյն միջոցին դիմելու:

Ինչպէս յայտնի է հեռագրներից ոռւսաց արտանիքին գործոց մինիստր կոմս Լամզդորֆ պէտք է անցնի Սօֆիայով և Բէլգրադով և այցելի Վէննաւ Անկասկած, Աւստրօ-Ռւսկարիայի և Ռուսաստանի արտաքին գործոց մինիստրների տեսակցութիւնը մեծ քաղաքական նշանակութիւն ունի Բալկանիան Բնրակղզու մօտաւոր ապագայի համար: 1897. Բուլղարիայի կայացած Աւրատրօ-ռուսական համաձայնութեան նպատակն էր պահպանել Տատուս զաօն Բալղանեան թերակղզու վրայ, սակայն յաճախ քաղաքէտները անկախ իրանցից անզօր են լինում իրանց ցանկացած գրութիւնը միջոց կը տայ Ռուսաց Կայսեր ներկայացուցչին տեղն ու տեղը ծանօթանալ ժողովրդի տրտմագրութեան հետ թէ Բուլղարիայում և թէ Սերբիայում, լսել մակեդոնացիների արդար բողոքները և Վիէննայում ծրագրել երկու պետութիւնների անելիքը, եթէ գարնան յակարծակի բարդութիւններ ծաղեն Մակեդոնիայի պատճառով: Հեռագրական տեղեկութիւններից երեւում է որ մեծ ոգևորութեամբ են սպասում կոմս Լամզդորֆի գալստեան Բալղանեան ալաւ մները:

Լ. Ա.

„Պրավիտելց Յեշտուք“-ում նոյեմբերի 30-ին տպուած
էր հետեւալը.

„Իրերի գրութիւնը Բալկանեան թերակղզու վրայ, թրքա-
կան Արեւելքից հասնող տեղեկութիւններին նայած, անհարին
չէ գարձնում լուրջ բարդութիւններ ծաղելուն ժամանակին ձեռք
առած միջոցների շնորհիւ և ձմեռային շրջանի վրահասութեան
պատճառով կարելի է յուսալ, որ Մակեդոնիայում ծագած շար-
ժումը այժմ չի շարունակուի ընդարձակուել, սակայն շատ նշաններ
ցոյց են տալիս թիւրքիայի ուղղափառ ազգաբնակութեան մէջ
աճող գժգոհութիւնը. այդ ազգաբնակութիւնը զանազան կօմի-
տէժների ազգեցութեան տակ, ըստ երեւոյթին, պատրաստ-
ում է այս զարնան ընդհանուր ապստամբութեան: Այս յուզիչ
երեւոյթները չեն կարող չը գրաւել ուշադրութիւնը Ռուսաս-
տանի, որ ի սկզբանէ անտի և միշտ հոգացել է իրան ցեղակից
ազգերի վիճակի մասին: Որպէս զի սահման դնուի շարժման,
որ կարող է իր յետեւից ամենալուրջ բարդութիւններ բերել
ամբողջ Բալկանեան թերակղզու վրայ, Կայսերական կառավա-
րութեան կողմից արուած էին Դրան համապատասխան առա-
ջաղրութիւններ, իսկ ոռւսական գետապանին Պօլսում յանձնուած
է, տեղական պայմանները քննութեան առնելով, ներկայացնել
խորհրդածութիւններ հնարաւոր և անյետաձելի բարեփոխու-
թիւնների մասին Մակեդոնիայի վարչական կազմի մէջ և հաստա-
տամատութեամբ խորհուրդ տալ թիւրքաց կառավարութեան՝ շու-
տափոյթ իրադրժել այգափիսի բարեփոխութիւնները, որոնց նախ-
առաջնի է բարւոքել ուղղափառ ազգաբնակութեան կայութիւնը: Սակայն չը
պէտք է ուշադրութիւնից բաց թողնել, որ, մինչեւ
այդ երկրում գոյութիւն ունի ներկայ խոռվութիւնը, որ թիւր-
քաց կառավարութեան օրինական հիմք է տալիս՝ միջոցներ
ձեռք առնելու ապստամբուած հպատակների դէմ, չափազանց
գժուար է թէ գործնականապէս որ և է վարչական բարենորո-
գում մտցնել, և թէ ազգաբնակութիւնը լիակատար կերպով
պաշապանել տեղական իշխանութիւնների խիստ պատիժներից:
ուստի առաջին և գլխաւոր պայմանը այդ ուղղութեամբ աջո-
ղութիւն գտնելու համար պէտք է լինի մակեդոնական կօմիտէ-
տի կողմից զադարեցնել ագիտացիան. այդ կօմիտէտները չը
համնելով իրանց զրոծ հայրենասիրական նպատակներին, լոկ
միայն յետ են կանգնեցնում ազգաբնակութիւնը խաղաղ զբաղ-
մունքներից և հնթարկում են նրան կորստարեր յափշտակ-

ման բոլոր ծանր հետեւանքներին։ Կայսերական կառավարութիւնը յաճախ առիթ է ունեցել յայտնելու իր հայեացքը մակեդոնական հարցի մասին, պահարակելով սլաւօնական ազգերի ամեն մի փորձ՝ բռնութեամբ փոփոխելու Բալկանեան թերակզղու վրայ գոյութիւն ունեցող իրերի զրութիւնը, որ ապահոված է միջազգային դաշնագրերով։ Այդպիսի կարծիք շարունակում է պահպանել Կայսերական կառավարութիւնը և ներկայումս Այդ ի նկատի ունենալ գ' ա նպատակայարմար համարեց նորից հաստատել թէ սերբիական և թէ բուլղարական կառավարութիւններին իր բարեացակամ խորհուրդները, մատնանիշ անելով նրանց անհրաժեշտութիւնը հՀնց սեփական շահերից զրդուած արգելք դնել վտանգաւոր ազիտացիային և ամեն կերպ նպաստել Բալկանեան թերակզղու վրայ խաղաղութիւնը պահպանելուն Կայսերական կառավարութիւնը իրաւունք ունի յուսալ, որ սլաւօնական տէրութիւնները, որ պարտական են իրանց ազատութեամբ և անկախութեամբ Ռուսաստանի անշահախնդիր գոհողութիւններին, կը հետեւեն իրանց տուած ցուցմունքներին, հաստատ հաւատով, որ թագաւոր Կայսեր Բարձրագոյն կամքով արուած առաջարութիւնները կը համանեն զրուած նըսպատակին Բալկանեան թերակզղու վրայ պատահելիք բարգութիւնների առաջն առնելու ոռւսական սնսասան վճիռը զտնում է միւս պիտութիւնների կողմից լիակատար համականք։ Աւստրօ-Ռւսարական կառավարութիւնը չը յապաղեց յանձնել իր ներկայացուցչին Պօլսում, ուուսաց դեսպանի հետ հայեացքների փոխանակութիւնից յետոյ, միանալ այս վերջինի թափանձական առաջադրութիւններին Դրան՝ Մակեդոնիայում չուտափոյթ բարեփոխութիւններ մըտցընելու անհրաժեշտութեան մասին։ Թիւրքական Արեւելքում խաղաղութիւն պահպանելու մէջ ամենից շատ շահազրգուուած հարեւան կայսրութիւնների միահամուս ջանքերը ուղղակի հետեւանք են 1897 թուականին դրանց մէջ կայացած համաձայնութեան, որի թէ բարերար ազգեցութիւնը և թէ գոյութիւնը հնարաւոր է միայն նրա հիմքում զրուած սկզբունքների անշեղ գործադրութեամբ։ այսինքն, արգելումը՝ կամայական փոփոխութիւն առաջացնել դաշնագրերով սահմանուած կալմութեան մէջ Բալկանեան թերակզղու վրայ և խաղաղութեան պահպանումը, որ այնքան անհրաժեշտ է քրիստոնեայ ազգութիւնների բարօրութեան և ընդհանուր խաղաղութիւնը պահպանելու համար ի վերջոյ կայսերական կառավարութիւնը, որ քիչ ապացոյցներ չեն տուել իր մշտական ցանկութեան պահպանել ամենալա-

յարաբերութիւններ թիւրքիայի հետ, չի կարող յոյս չը յայտնել, որ սուլթանի կառավարութիւնը, ձեռք առնելով ամեն տեսակ բռնութիւններ և խստասրտութիւններ դադարեցնելու անհրաժեշտ միջոցները, կը գնահատի յօդուա Մակեդօնիայի քրիստոնեայ ազգաբնակութեան Ռուսաստանի ռարեկամական առաջադրութիւնների նշանակութիւնը, Մակեդօնիայի շուտափոյթ խաղաղոցումը ամենալաւ միջոց է Օտտոմանեան կայսրութեան համար ամենալուսանգաւոր բարդութիւնների առաջն առնելուա:

ԳԵՂԱՐՈՒԵՍԻ ԱՇԽԱՌՀԻՑ

„Անսանձի սանձահարումը“ Շէքսպիրի. — „Կախարդական աշխարհ“ Պօտապենկօի. — „Մօննա-Վաննա“ Մէտէոլինկի. — Հասարակական, ամրոխային և անհատական էզօֆոմ. — Դիփիգենիան և Ծաննա-Վաննա. — Մարդկացին բնութեանը համապատասխան և իդէալական ճշմարտութիւն, — Կեղծիքը կեանքի մէջ. — Մեծ և փոքր անարդարութիւններ. — Անհատական մանր էզօփոմը որպէս հիմունք մեծ չարիքի.

Անցեալ նոյենմբերի 25-ին հայոց գրամատիկական ընկերութեան խումբը ներկայացրեց Շէքսպիրի «Անսանձի սանձահարումը»։ Այս պիեսան Շէքսպիրի ամենաթոյլ դործերից մէկն է և դեռ յայտնի էլ չէ, թէ նրա հանձարեղ արտադրութիւնն է այս արդեօք՝ թխուած հսկայ երեակայութեան ձանձրոյթի մի ժամին, թէ մի այլ խորթ ձեռք է զրել և կապել այն Համլէտի հեղինակի մեծ անուանը։ Այդ պիեսը առանձին հետաքրքրութիւն չի ներկայացնում և եթէ շարունակում է մնալ թատերական բեպերտուարի մէջ, այդ երեխ այն պատճառով, որ Շէքսպիրի անունն է կրում վրան։

Հիմնական գաղափարը լրջութիւն չի ներկայացնում, նոյն իսկ բանալ է. դա մի փորձական դաս է, թէ ինչ միջոցների պիտի դիմի մի տղամարդ իր «անսանձ» կնոջը «սանձահարկուած համար» Մի թեմայ, որի համար չ'արժէ 3—4 ժամ նստել և աչքերը բեմին սեւեռնել։ Միակ հետաքրքրութիւնը, որ կարող էր ներկայացնել այդ պիեսը, դա դիալօգների ժամանակ յաջող ընտրած զուարձալի բեպլիկներն են, որ պէտք էր թափել կարկուտի պէս սրամտօրէն, բայց տարաբաղդաբար և՛ մեր զերասանների բաւական գանդաղաշարժ լիղուն և՛ մանաւանդ ժանձաղ թարգմանութիւնը շատ անբարեկատեհ հանգամանքներ էին պիեսի այդ մասը լաւ կատարելու համար։ Ահա թէ ինչու մենք այդ պիեսան համարեա ծայրէ ի ծայր լսեցինք ձանձրոյթով, ինչպէս և հան-

գիսականների մեծամասնութիւնը, որոնց թիւը, ի դէպ է ասել,
այդ օրը շատ քիչ էր:

Դեկտեմբերի 2-ին իր բենեփիսի համար տիկին Մայսու-
րեան ընտրել էր Պօտապենկօի «Դիւթական-հէքիաթ» պիեսան:
Պօտապենկօն պատկանում է ոռւս տենդենցիով զրողների
այն գասակարգին, որոնց սրատես հայեացքը անընդհատ փոր-
փրում է հասարակական կեանքի զանազան խաւերը ոչ այն-
քան գուտ գեղարուեատական երկերի թեմաներ դժնելու, որ-
քան անխնայ կերպով հարուածելու և ուսուցանելու մի գատա-
ւորի, մի ուսուցչի համարձակութեամբ Պօտապենկօն իր ողջա-
խոն և ուսուցանող ձգտումների մէջ մի տենդոտ եռանդ ունի,
որ նրան կարծես գաղար ու հանգիստ չփալիս. թւում է, թէ
նրա համակրելի տաղանդն այնքան շատ է տեսնում իր շուրջը
մոայլ վհատեցուցիչ երեւոյթներ, որ նա այլ եւս գրական—
հասարակական տեսակէտից մէկին միւսին առաւելութիւն տա-
լու լու ընտրութիւն անելու ժամանակ չունի Փուցէ մեղաւորը
իրականութիւնը, խեղգող միջավայրն է, ուր զարգացել է, գոր-
ծում է այդ համակրելի տաղանդը:

Նրա «Դիւթական հէքիաթ» պիեսան նեղնայեադ մօմննտի
արգիւնք է. նրա մէջ պակասում են գրողի այն լայն ժևառելք,
որոնցով հնարաւոր է գատնում ցնցող ամրողութիւններ ընդ-
գրիել և հասարակական խոշոր վէրքեր չօշափել. նիւթն աւել-
լի քան պարզ է: Համեստ ծաղումից աղջիկ նատակիան, ով գի-
տէ ինչ դիպուածով ընկնում է արխատոկրատներին յատկացրած
ինստիտուտը, ուր բնականապէս ստանում է մի այնպիսի գաս-
տիարակութիւն, որ նրան կարում է իր սեփական միջավայրից:
Վերադառնալով հայրենի տուն, նա չի կարողանում հաշտուել
իր նոր կացութեան հետ, աշխատել չի ուզում, իր մեծացած
պահանջներին բաւականութիւն տալ չի կարողանում, ի վերջոյ
թողնում է և զնում իր մի նախկին ծանօթ երիտասարդ Կոմս
Իժորակու մօտ և կենակցում նրա հետ: Նոր միջավայրում նա
նոյնպէս զժրազդ է, որովհետեւ նրան շարունակ զգալ են տա-
լիս իր համեստ ծագումը: Վերջ ի վերջոյ նա թողնում, հեռանում
է և այստեղից սեփական աշխատանքով ապրելու համար: Կա-
րելի է ասել, որ սա գիտաւածների դուցէ և բացառիկ զի-
տուածների մի պիեսայ է. Նատալիսն գիտուածով է ընկնում
ինստիտուտ, գիտուածով է ծանօթութիւն կապում մի հարուստ
Կոմսի հետ և համարեաւ զիալուածով է սկսում նրա հետ իր
կենակցութիւնը: Եւ այս բոլոր գիտուածների նրա համար, որ
Պօտապենկօն հանի մի ողորմելի մօրալ—աշխատանքի անհրա-

ԺԵՂՋԱՎՈՐԻ ԱՅԼԱԿԻ ՊՐԱՄԱՆ, որ սինտեղ չէ հազարների հոգին ալեկութող զդացմունքների, հազիւ կարողանայ որեւէ կրթիչ դեր խաղալ: Նրա յարուցած հետաքրքրութիւնը հեռու չի լինի լրադրական faits diverses նկրի զարթեցրած հետաքրքրութիւնից:

Դերակատարները լաւ էին. հասարակութիւնը վարձատրեց ա. Մայսուրեանին ծաղիկներով, ընծաներով և կրկնակի ծափահարութիւններով:

Հառապտմանի «Խորասուզաւած զանգից» յիտոյ Մէտէոլինկի «Մօննա-Վաննան» որ խաղացունց գեկտեմբերի Զ-ին, կարելի է ասել՝ երկրորդ զրաման է, որ այս թատրոնական սեղոնում արտակարգ նորութիւն եղաւ Թիֆլիսում: Միանգումայն գովելի ընարութիւն, երբ զառական գործեր խաղալու դժուարութիւն կայ, շատ աւելի լաւ է ներկայացնել այնպիսի ժամանակակից զործեր, որոնք անհանգստութիւններով պաշարուած մարդկային հոգուն որոճալու նիւթ են տալիս, մտքի առաջ լայն հորիզոններ են բաց անում և մեր անդիտակից «ես»ին ստիպում են երկուակ ծալուել իր ներքին խաւար անդունքը սարսափած հայեացքով չափելու համար: Մարդկային հոգին նոյնքան զաղտնիքներ ու տակաւին անհասկանալի պրօբլեմներ ունի, որքան մայր բնութիւնը, կամաց-կամաց յետ քաշել այդ զորհութելի միստերը պատող քողը, «ես»ի եւ «ոչ—ես»ի յարաբերութիւնը պարզել, արտաքին աշխարհի և մարդու ներքինի կապերը աւելի պարզ և որոշ դարձնել, վաղուց հետէ մեծազոյն մտածողների մշտական խոհերի առարկան է եղել Եւ այդ ասպարիզում մտքի տարած ամենափոքր յաղթութիւնը բնութիւնը ծածկող միստերի մի նոր պարտութիւնն է: Շատերից յետոյ այժմ Մէտէոլինին է զալիս մեր զաղտնիքների աշխարհը յուղելու: Բեղջիացի հոչակաւոր զրոյզը, որ մի Փրանսիական միտք է, շատ տեսակիէտով արժանի է առանձին ուսումնասիրութեան, որ գուցէ անպատճն լինի այս տեսութեան մէջ: Թողնելով մի այլ, աւելի յարմարաւոր առթի, գեկադենաների այս շեֆի ամբողջ բարոյական պատկերի գծագրութիւնը, այս անգամ կը զբաղւենք միայն նրա Մօննա-Վաննայով:

Մէտէոլինկի իր այս նոր պինսայի համար նայել է պատմութիւնը մի քանի դար մեղանից առաջ և իջել է հարաւ՝ յոյզվերով, կրքերով ու անդութիւններով հարուստ երկիրը՝ իտալիա: Դժուար էր աւելի յարմար միջավայր և աւելի պատշաճ պատմական մօմենտ ընտրել ասելու համար այն՝ ինչ ասել է Մէտէոլինկի: Իտալական երկու փոքրիկ համբարետութիւններ՝

Ֆլորենցիան և Պիզան արիւնահեղ կոռւով նն բոնուած. մէկն այն անթիւ կոհւներից, որոնք միջին դարերում աւերեցին իտալիան և որոնց ընթացքում հարաւի այդ տաք, բորբագուող ժողովուրդը արեան և մութ ոճիների զարմանալի օրինակներ տուեց աշխարհին:

Պիզան ընկնծուած է. պաշարուած և սովատանջ քաղաքի բնակիչները յիտին ծայր յուսահատութեան մէջ են. թշնամի բանակի առաջնորդ Պրինչիվալէ պատրաստում է վերջին հարուածը՝ քաղաքի աւերածն ու բնակիչների ջնջումը դարձել է անխուսափելի: Պրինչիվալէին մեղմացնելու բոլոր փորձերը մնացել են անօգուտ: Պիզան պաշտպանող բանակի զօրապետ Գուիդօն լսում է իր բնակարանի դրան առաջ խմբուած բազմութեան հաց, հաց, աղաղակները և ծայրայեղ հոգեկան խոռվութեան մէջ ինչ անելը չը գիտէ: որպէս վերջին յոյս, նա սպասում է իր ծերունի հօր՝ Մարկօն վերադարձին, որ զնացել է Պրինչիվալէի մօտ նրա խստասրտութիւնը մեղմելու: Նա զալիս եւ բերում է Պիզայի փրկութեան աւետիսը, Պրիչիվալէն համաձայն է ոչ միայն ինսայել Պիզան, այլ և ուղարկել հարիւրաւոր սայլերով պաշար, արջաբների և ոչիարների հօտեր, ուղամաթերիներ Ֆլորենցիայի դէմ կոիւը շարունակելու համար, և այս բոլորը մի հատիկ պայմանով, որ Գուիդօն համաձայնի իր գեղեցիկ ինոջը՝ Մօննա-Վաննային մնրկ, միայն մի հատիկ ծածկոյթով, ուղարկել Պրինչիվալէի մօտ, նրա վրանում անցկացնելու մի զիշեր:

Գուիդօն կատաղած այս անսպասելի առաջարկութիւնից լսել անգամ չի ուղում իր հօր յորդորները, մինչգեռ Մօննա-Վաննան իրազեկ եղած, ընդունում է ծանր ու անարդ զոհաբերութիւնը իսէր տառապող ժողովրդի, և հայրենի քաղաքի փրկութեան համար: Եւ նա թողնելով իր ամուսնուն ջարդուած ու յուսահատ, ճանապարհ է ընկնում դէպի Պրինչիվալէի բանակը: Տեսակցութիւնը, որ տեղի է ունենում Մօննա-Վաննայի եւ Պրինչիվալէի մէջ վերջինի վրանում, առաջ է բերում մի անսպասելի հետեանք, անողոք ու բիրտ թշնամի զօրականը ընկծուած զոհի մեծութիւնից՝ յայտնում է, որ ինքը գեռ մանկութիւնից սիրում է Մօննա-Վաննային: Այդ սէրը նրա մէջ այնքան մնեծ է և այնքան մաքուր, որ նա՝ այն ստրափելի Պրինչիվալէն, խոնարհուում է Մօննա-Վաննայի տուաջ, պատրաստ է իր խոստումը կատարել Պիզայի փրկութեան համար և արձակել նրան նոյնպէս անբիծ ու անարատ, որպէս եկել էր: Մօննա-Վաննան իր կողմից հիացած է այս մեծահոգութեան վրայ և Ֆլորենցիայի հաստատ վրէ ժինողրութիւնից Պրինչիվալէին աղա-

տելու համար, առաջարկում է նրան իր հետ փախչել Պիզա, ուր նա նրա հովանաւորողը և պաշտպան ոգին կը դառնայ: Սայերը պաշտով հասնում են Պիզա և նրանց յետեից յայտնում են Մօննա-Վաննան և Պրինչիվալլէն: Ժողովուրդը ցնծութեան աղաղակներով է ընդունում Մօննա-Վաննային, որպէս իր փրկչին, բայց Գուիդոն նրան տեսնել չի ուզում, վիրաւորուած արուի բոլոր կատաղութիւնը թափում է նրա գլխին: Նա չի ուզում հաւատալ Մօննա-Վաննային թէ Պրինչիվալլէն նրան անքիծ է արձակել, և միսիթարւում է միայն նրանով, որ իր կատաղի թշնամի Պրինչիվալլէն, գոնէ իր ձեռքումն է, որից վրէժինդիր կը լինի իր այրուած սիրտը հովացնելու համար: Մօննա-Վաննան ամուսնու այս թերահաւատաւութեան հանդէպ և Պրինչիվալլէին փրկելու համար դիմում է մի ծայրայեղ միջոցի, նա կեղծում է, նա հաւատացնում է որ Պրինչիվալլէն նրան վիրաւորել է ամենաանարդ կերպով և պահանջում է իրան յանձնել այդ թշնամուն վրէժինդիր լինելու համար: Պրինչիվալլէի բանտի բանալիքները նա իր մօտ կը պահի և գիշերով կը փախցնի կամ կը փախչի նրա հետ:

Մենք տեսել էինք զրամաններ, ուր անհատի էութիւնը երկինքու է զարձած, ուր մարդկային բնութեան երկուութիւնը դէմ առ դէմ կանգնած իրեւ երկու հակառակորդներ կրծուում: Քրքրում են իրար, արիւնուելով տառապող հոգին, ուր մարդն ինքն է իր փրկութեան նոխազը և զերագոյն զոհաբերք: Դրամաններ, ուր հոգու ներքին պայքարը, մութ ալեկոծումները իրանց յուզիչ յեղնողումներով մարդկային ճակատագիրը գարձնում են այնքան արդահատելի և կրած տառապանքները այնպէս ցնցող: Այժմ Մէտէպլինկը իր Մօննա-Վաննայով անհատական հոգինների գրամաներից հիւսել է մի մեծը, աւելի լայնը, ուր ընդհարւում են անհատական և հասարակական, ամբոխի և մի հատ մարդի էօփիզմը և այնպիսի բացառիկ պայմաններում, որ երկուսն էլ սրուած են ծայրայեղ աստիճանի, երկուսն էլ աղատորէն փուռում են իրանց էութիւնը բնորոշող: Իրանց հիմքերն կազմող յատկանիշներով: Պիզան քաղցած է, Պիզան ատուապում է, հաղարաւոր բերաններ հաց են ոռում, կենդանական ինստինկտը իօսում է անողոք, հրամայող շեշտով, գլուխներ չը կան, խօսողն ստամոքսն է, մարդիկ տարել են ուզում և գոյութեան սպառնացող ծայրայեղ վտանգի առաջ կենդանին ըմբուանում, ցնցում է և ապրելու, շնչելու պահանջը մեծանում, բռնում է նրա բոլոր էութիւնը և նա պատրաստ է ընթացիկ բարոյականութեան, աիրող բարոյական հոտկացողութիւնների վրայ քայ-

լել, նա պատրաստ է անմեղներ գնել իր ոտքի տակ, բարձրանալ, միայն թէ կարողանայ փրկել իր գոյութիւնը...

Եւ ինչու այդ բոլոր զոհերը, ինչու ապրել այդքան թանկ գնով, ուր է այս գոյութեան խորհուրդը, ուր է տանում մեզ բնութիւնը, այդ ով կարող է իմանալ, ինչպէս իմանալ, միստերների միստերն է այն, ինչ որ յայտնի է, այդ այն է, որ պէսք է ապրել ինչ գնով և լինի, այդպէս է զատում ամրոփի էջոփմը՝ Կոյր բնութեան մէջ մարդը գերազոյն խարիսխողն է, ողորմելի կոյրը, որ չափել չի կարող յաւիտենականութեան անգունդները, և սակայն պիտի տքնի, տառապի, և քաշ տայ իր ողորմելի գոյութիւնը դէպի մութ անյայտը՝ էջոփմը իր ծայրայեզ արտայայտութիւնների մէջ անհատի մօտ անգամ սարսափելի է, բայց երբ առանձին առանձին իզերից ծեփւում է հասարակականը, ամբոխայինը, երբ բնութիւնը զալիս է մզումն տալու նրան իր հրամայող պահանջներով—այն ժամանակ նա գառնում է տարերային, աւերիչ, ահաւոր Այսպէս է ամբոխների էջոփմը՝ որ արտայայտուել է պատմութեան ամենատրագիկ մօմենտներում, այսպէս և այն ամբոխային էջոփմը, որի մոայլ պատկերը տալիս է մեզ Մէտէոլինկը հոգեբանական ապշեցուցիչ նրբութեամբ։

Այս հսկայ, ամբոխային էջոփմի հանդէպ կանդնած է մի մարդ՝ Գուիդօն, որի վրայ ընկնում է զոհի բոլոր ծանրութիւնը, որի մէջքը չի գիտանում այդ ահազին բեռին, որ ծառանում է փրիբած երիվարի պէս և դիչել, հնազանդուել չի կամննում։ Նա էլ մէին է այդ զոհ պահանջող բազմութիւնից, մէկն է բնութեան անհասկանալի խաղալիքներից և սիրով յանձն կ'առնէր ուղարկել Պրինչիվալլէին մի կին, մի կոյս, միայն թէ զա իր կինը, իր աղջիկը չը լինէր։ «Բայց ինչու անպատճառիմ Վաննան, Եթէ նա (Պրինչիվալլէն) ունի այդպիսի մի բազանք... Միթէ քիչ կին կայ դրա համար»... Բացականչում է Գուիդօն կատաղած։ «Ինչու անպատճառ իմը», սա մի վերին աստիճանի հետաքրքիր և անհատական էջոփմը բնորոշող հարց է, որ այս խելակորոյս բազմութիւնից ամեն մէկը կարող էր կրկնել, իւրաքանչիւրը կարող էր ասել մնացածների երեսին, եթէ զոհի ծանրութիւնը իր վրայ ընկնէր։ Ամբոխը ուրիշ պատասխան չունի այս հարցին բացի այն, որ Պրինչիվալլէն, զոհ պահանջող այս լեզենդական վիշապը, նրա կինն է ուղում և ոչ մի ուրիշնը։ Այստեղ են ընդհարւում երկու էջոփմները, ամբոխայինը և անհատականը, այսուհեղ է զրամայի բոլոր ցնցող մեծութիւնը։ Յաղթանակն անկասկածելի է, մէկը հազարների դէմ է և այն կատաղած, կենդանական կարիքներից անամացած հազարների։ Հին

աշխարհը մի հրաշալի նմուշ ունի այսպիսի հսկայական, ցնցող պայքարի, դա Իֆիգենիայի զոհուելով է Տրօվադա արշաւող յոյն բանակի պահանջով, Ագամեմնոնը՝ հայրն է, նա հեշտութեամբ չի դիջում. մայրը մինչև վերջին վայրկեան դիմադրում է, Աքիլեսը այս յունական Գուփոն, լսել չի ուզում իր նշանածի, Իֆիգենիայի զոհուելու մասին, բայց այնուեղ ծավի պէս ալեւկոծուղ ամբոխը կայ, որ իր իրաւունքները հիմնում է երկնքի անժխտելի օրէնքների վրայ, Ամբոխի և անհատների մէջ առաջ եկած ընդհարումը լուծում է այնաեղ աստուածների, գերդնականի միջամտութեամբ: Նոր աշխարհը գերբնականը չունի այլ ես, լուծումը մարդկային պիտի լինի, և հին աստուածների գերը Մէտէոլինկի գրամայի մէջ կատարում է ինքը զոհը, Մօննա-Վաննան, զրամայի հերոսուհին:

Սա բոլոր տիպերից ամենամտածուածն է, հոգերանական խորին և ճշգրիտ տրամաբանութեան վարպետ հետեւողականութեամբ: Մօննա-Վաննան կարող է չը գնալ, նա բազմաթիւ հսարներ ունի իսուսափել գերագոյն զոհաբերութիւնից, նա կարիք չունի Իֆիգենիայի պէս աստուածների ձեռքով երկնք բարձրանալու, բայց նա գնում է կամաւ, նա յանձն է առնում պահանջուած զոհը և ըստ նրեւոյթին վերջ է տալիս անհատի և ամբոխի զարհուրելի մանամարտին: Նա Գուփօփ կինն է, բայց և մարդ է, և իրեն այդպիսին, ազատ է զգում իրան հայրենի քաղաքի սիրուն, տառապող մարդկութեան սիրուն զոհ բերել գերագոյնը իր սեփականութիւնից, իր կամացիութիւնը, իր պատիւը, որովհետեւ չը կայ աշխարհում այնպիսի թանկ բան, որ անկարելի լինէր զոհել մի հատիկ մարդկային կեանք փըրկելու համար: «Փողովրդի կեանքը այդ բաներից բարձր է իմ աշքում», ասում է Վաննան Պրինչիվալլէին: Աշխարհում բազմաթիւ են օրինակներ, երբ մարդ զոհ է բերում իր կեանքը իր նմանին փրկելու համար, և այդ զոհը համարուել է գերագոյնը զոհերից: Եւ սակայն կեանքից թանկ բան էլ կայ աշխարհում: Ռուզինետես որքան անգամ մարդիկ մնոնում են անըիծ պահելու համար պատիւը, խնայելու համար ամօթը: Մէտէոլինկը յանձին Մօննա-Վաննայի տալիս է մեզ մի սարսափելի զոհաբերութեան օրինակ, երբ անհատը յանձն է առնում իր նմանի սիրուն զոհել կեանքից էլ թանկ բանը:

Ծայրագոյն զոհաբերութիւնը անշահախնդիր և անդառնալի, նաև իր ծայրագոյն յաղթանակն ունի: Մօննա-Վաննան ընկճում է Պրինչիվալլէին իր հմայքով, ինչպէս հէքիաթների մէջ անռելի գեւին ստրկացնող կոյսերը, և հայրենի քաղաքի գոհութեան և ցնծութեան աղաղակների մէջ նա աեսնում է

իր վսեմ փառքը ձեռք բերած անօրինակ պատրաստակամութեան գնով; Պրինչիվալլէի վրանի գոնից որպիսի հաճոյքով և հպարտութեամբ ցոյց է տալիս նա հեռում երեւացող տեսարանը, որ իր պատրաստածն է, «Բոլոր աշարակները լուսավոռուած են և պատասխանում են ասադերին: Փողոցները լուսոյ շաւիղներ են ձգում երկնքում. ես որոշում եմ նրանց հետքերը, ես աշքով անցնում եմ նրանց վրայով երկնքում ինչպէս այս առաւտ անցնում էի նրանց սալայատակի վրայով... Ահա Պիացցան (հրապարակը) և իր գմբէթը բոցավառ և կամպօ Մանաօն, որ ներկայանում է սառւերի մի կղզի: Կարծէք թէ կեանքը, որ թւում էր կորած, յետ է զալիս հապճեպով, ճառագայթում է սլաքների ծայրերին, շողազում է քարերի վրայ, հուր է թափում պարիսպների վրայից, հեղեղում է դաշտը, զալիս է մեր հանդէալ և մնջ էլ կանչում է... ականջ դիր... Միթէ չես լսում, այնպիսի բուռն և յախուռն աղաղակներ են բարձրացնում կարծես թէ ծովը հեղեղած լինի Պիղան. միթէ չես լսում զանգերի ձայնը, որոնք գեղգեղում են այնպէս, ինչպէս հարսանիքիս օրը... Օ՛հ, ես անչափ երջանիկ եմ և կրկնակի ու գերիշվեր երջանիկ, աեսնելով այս բախտառութիւնը, որի պատճառը նա է, որ ամենից լաւ է սիրել ինձ»:

Քաղաքը փրկուած է. գա մեծ յաղթութիւն է, որ տարաւ կամացի թուլութիւնը միացած ծայրագոյն զոհաբերութեան պատրաստակամութեան հետ: Բայց գրաման զրանով չի վերջանում, և նոյն իսկ սկսում է այն ծանր մօմենտից, երբ Մօննա-Վաննան Պրինչիվալլէի հետ Պլուպայ է համում յայտնելու աշխարհին, Մարկօին, Գուլիդօին, որ նա հայրենիքի փրկութիւնը ձեռք չի բերել իր պատուի գնով, թէ նա պարտական է այդ բոլորը Պրինչիվալլէի անկեղծ սիրուն և մեծահոգութեանը: Դրամայի այս մասը Մէտէոլինկ հասցել է կլասիկական կատարելութեան: Ամբոխը լսում է այս անօրինակ յայտնութիւնը կուշտ մարդու սովորական մնջմ անասրբերութեամբ, նրա համար միննոյն է, թէ վաճնան ինչ գնով է ձեռք բերել իր փրկութիւնը. նա չնորհակալ է, նա ցնծութեան աղաղակներ է արձակում ի պատիւ իր աղատարարի, և երջանիկ է, որ ինքը կուշտ է, և չի մեռնի և իր էգօլիպմը գոհացած է: Բայց Գուլիդօն կայ, զոհուածը, անարգուածը, որ հաշիւ է պահանջում վիրաւորուած արուի կատաղութեամբ: «Ես արեցի ձեր ուղածը, նրա ուղածը, ամենքի ուղածը, ասում է նա, արդարութիւնը պահանջում է, որ իմ կամքն էլ վերջապէս կատարուի. ես լոեցի, ես թաք կացայ, ես շունչ պահեցի,, ինչպէս կարող եր անել մի վախկոտ մարդ, երբ զողերը կողոպտում են

իր տունը... Դուք ի՞նձ մանրակրկիտ վաճառական դարձրիք... Տեսէք, արշալոյսը բացւում է... Տեղիս չեմ շարժուել մինչև այժմ... Ես չափում ու կշռում էի իմ խայտառակութիւնը... Պէտք էր ճշտիւ կատարել սակարկութիւնները և գծարել ձեր ուտելիքների զինը... Այժմ ես արդէն աղատ եմ, այժմ կրկին ես եմ այստեղի իշխանաւորը և դուրս եմ գալիս իմ խայտառակութիւնից...»

Կատաղած արուն շիթունքները կրծոտելով, մէկը մէկից գաժան մտքեր որոճալով հաշիւ է պահանջում, որովհետեւ նա համոզուած է, թէ իրան վիրաւորել են. թէ իր պատիւը անարգուած է ամենանողորմ կերպով. թէ Պրինչիվալէն արարացել է իր կնոջը: Եւ միթէ ուրիշ կերպ կարող էր լինել, միթէ մորդկային ընթացիկ հասկացողութիւնը իր նմանի բարոյականութեան, հողեկան առանձնայատկութիւնների մասին, որ իրն է նաև, կարող էր ուրիշ համոզմունք թելազրել Գուիդօխն: Զէ որ Պրինչիվալէն նրա կնոջը մերկ էր պահանջել. էլ զրանից յետոյ ինչը կարող էր նրան ստիպել զսպել իր անասնական կիրքը, խնայել մի թոյլ ու զեղեցիկ արարած, որն ունենալու համար նա նոյն իսկ զաւածանում է իր երկրին:

Բայց Վաննան ասում է, թէ իր պատիւն անարատ է մնացել, սա անհաւատալի է թւում Գուիդօխն, որ մի վիւզեր հոգի է և այդ աստիճան բարձր, այդքան վսեմ ճշմարտութիւնը ըմբռնել չի կարողանում:

«Աստուած իմ, զուտ ճշմարտութիւնը, բացականչում է նա... ախ, հապա ինչ է իմ վնտառածը... Բայց չե՞ որ հեմարտութիւնը պէտք է զիք փոքր ինչ համապատասխան լինի մարդկային բնուրեանը... ինչեր ես ասում»:

Մարդկային բնութեանը համապատասխան ճշմարտութիւն... զրանով լիքն է կեանքը, դա այն զարշահոտ ճահիճն է, ուր լողում են ամենատեսակ ժամացատեսիլ սողուններ. դա այն հեշտ, սովորական ճշմարտութիւնն է, որ բացատրւում է, որի մօտիւները լոյսի պէս պարզ են բանալ հոգիններին, և որի առաջ մարդկային գարշ բնութիւնը զգում է իրան բոլորովին ազատ, հանգիստ, ինչպէս իր տանը, իր սեփական յարկի տակ: Անշահամենդիր և բացարձակօրէն վսեմ վարժունք, ճշմարտութիւն, որի համունքները այս ցեխէ զնդի վրայ չեն, այլ մի ուրիշ, եթերային աշխարհում, դա անհասկանալի է, դա անընդունելի է. դա վեր է մարդկային բնութիւնից, դա յոգնեցնում է վիւզեր հոգինները, որոնք երես են գարձնում այդ անօրինակ ճշմարտութիւնից և սիրով կուղէին տեսնել նրա տեղ ամենաանարդ կեղծիք: Կեղծիքի և ճշմարտութեան այդ պայքարի մէջ,

մեր գունատ կեանքում իդէալական, բացարձակ և ոչ յարաբերական ճշմարտութեան անկարելիութեան մէջ Մէտէոլինկ դրել է խորին և յուզիչ փիլիսոփայութիւն. «Պէտք է շարունակել սուսը, ասում է ծերունի Մարկօ, որովհետեւ չեն ոգում հաւատալ եւմարտուքեանը»:

Եւ Վաննան շարունակում է սուտը մինչեւ վերջը, նա պնդում է, թէ ինքը խարում էր, թէ Պրինչիվալլէն իրան ափրացել է: Գուփդոն, վոևմ ճշմարտութեան հանդէպ ըմբռստացած՝ թերահաւատ Գուփդոն, լսում է այս կեղծիքը հոգու կատարեալ անդորրութեամբ, չը որ սա զուտ մարդկային է, չը որ վոևմ ճշմարտութեան մեծ փայլին անսովոր հոգու աչքերն էլ ցաւով չեն խտաղում, սա բոլորովին մարդկային է, մահկանացու արամաբանութեան պատշաճ, Պրինչիվալլէն տեսել է իր գրանում մենակ, գեղեցիկ, մերկ կին և տիրապետել նրան, սրանից էլ պարզ բան Եւ Գուփդոն հանգիստ է. «Այժմ ա նո ինչ վերջացաւ, տուում է նա և ամեն ինչ մոռացութեան կը արուի արդար վրէժից յետոյ... Ծանր երազ էր, անցաւ գնուց...» Այս մեր ողորմելի կեանքում, նիւթապաշտ, տափակ հոգիների համար ճշմարտութիւնը միշտ երազ է, որ անդում է, գնում, և նրա տեղ մնում է կեղծիքը, սուտը, խարէւթիւնը, որոնք կառապարում են աշխարհը, կեանքը, սրճնցից հիւսուած է գարշելի իրավանութիւնը:

Մօննա-Վաննայի համար էլ մի երազ կայ, որ անցնում է, բայց դա ճշմարտութիւնը չէ, այլ կեղծիքը, որ խօս է տալիս նրա հոգաւց, որի առաջ այս դէպքը բաց արեց աւելի լայն բարոյական հորիզոններ, որ իր անձնական դառն փորձութեան գնով կարողացաւ կշռել իդէալական գեղեցիկ սիրոյ խորութիւնը. նա կեղծեց սարսափելի տանջանքներով այդ սէրը, այդ ճշմարտութիւնը փրկելու. «Հա, վատ երազ էր... Շուտով կը սկսուի լաւ երազը... Լաւ երազը...» Սա նրա նոր, վերածնուած կեանքն է, այդ լաւ երազը, որ նա կը վայելի Պրինչիվալլէի հետ, իրան իսկապէս սիրով անձի հետ:

Շատերի համար գուցէ տարօրինակ թուայ, որ Պրինչիվալլէն անկեղծ կերպով Մօննա-Վաննային սիրելով հանդերձ, նրան ենթարկում է այդ աստիճանն զիրաւորական փորձութեան, որպիսին է նրան համարեա մերկ իր վրանում աւեսնելու պահանջը: Եւ ճշմարիտ, միթէ նա չէր կարող իր սիրած կնոջը պահանջել առանց այդ վիրաւորական պայմանի: Առաջին հայսացքից կարելի է կարծել, թէ Մէտէոլինկ իր դրամայի այս կէտում մի հոգեբանական անձտութիւն է թոյլ տուել: Բայց ա-

ւելի խորը դիտողութիւնը և հոգեբանական անալիզը պարզում է այս թիւրիմացութիւնը, Բանն այն է, որ Պրինչիվալլէն իր այդ պահանջը յայտնելիս գտնում է հոգեկան մի բացառիկ կացութեան մէջ։ Ֆլորենցիան, որին նա այսքան երկար ծառայել է արժանաւոր կերպով, որի համար իր արիւն է տուել, չնորհիւ մատնութիւնների և քաղաքական հայեցակէտների, ամենասև աներախտագիտութիւնամբ այսօր վճռել է ոչնչացնել նրան։ Պրինչիվալլէն էլ հաւատ չունի դէպի մարդկային առաքինութիւնը, դէպի բարոյականութիւնը, դէպի որեէ գեղեցիկ բան, և անմասում է այն մարդին, որ փոթորկուած ծովի վրայ մէկ մէկ ալիքների մէջ է նետում իր նաւակի մէջ եղած իրերը և վերջ ի վերջոյ փրկութեան յուաը կտրած, պատրաստում է նետուել անդունդների մէջ։

«Միթէ մատադիր էիր մինչև վերջը շահագործել մեր սարսափելի թշուառութիւնը», հարցնում է Վաննան Պրինչիվալլէն ակնարկելով այն մասին, թէ նա հաստատ վճռել էր ափրանալ իրան։ «Ա՛խ, չը գիտեմ, պատասխանում է Պրինչիվալլէ, թէ ինչ էի մտադիր անել... ես զգում էի, որ կորած եմ և ուզում էի ամեն ինչ ինձ հետ կորստի մատնել... Ես ատում էի եեզ սիրոյ պատճառով... Եւ իրաք, այդպէս կը վարուէի, եթէ այդ դու չը լինէիր... Բաւական էր մի հատիկ խօսք, որ տարբեր լինէր քո խօսքերից, բաւական էր մի չնչին բան, որպէս զի բորբոքուեր ատելութիւնս և արձակուէր հրէշիս սանձը... Բայց քեզ տեսնելուն պէս՝ տեսայ և այն, որ այդ անհնար էր...» Պրինչիվալլէի այս խօսքերը կարծում ենք, բացատրում են իր տարօրինակ պահանջը՝ մերկ տեսնել Մօննա-Վաննային։

Այս երեք զլխաւոր տիպերից բացի, Մէտէռինիի դրուման ունի մի չորրորդ հետաքրքիր տիպ, դա ծերունի Մարկօն է, Փուիգօի հայրը, հին ստօիկ, որին երկար տարիների կեանքր, փորձութիւնները սովորեցրել են նայել աշխարհի իրերին փիլիսոփայի անյոյզ, խաղաղ աչքերով։ Նա է, որ մզում է Վաննային յանձն առնել այն ծանր զոհաբերութիւնը, և այդ է, որի սառն գատողութիւնները կազմում են, գուցէ, ըստ Մէտէռինիի բոլոր գործող անձանց արարքների փիլիսոփայութիւնը։ «Այժմ, երբ քաղաքը փրկուած է արդէն, ասում է նա որդուն, մեզ էլ գրեթէ ցաւալի է թւում այդ փրկութիւնը, որ այնքան թանկ նստեց ձեզ և մենք էլ, կարելի է ասել, յակամայից խօսարհեցնում ենք մեր գլուխքը այն մարդու ներկայութեամբ, որին միմիայն անիրաւաբար վիճակուեց կրել ամբողջ ծանրութիւնը... Եւ սակայն եթէ մի հրաշքով երէկուան օրը նորից կրկնուէր, ես ու արտաւոր կը լինէի վարուել այսպէս, ինչպէս երէկ վարուե

ցի, մատնացոյց անել նոյն զոհերը, և պրգել գործելու նոյն անարդարութիւնը, որովհետեւ արդար վարուել ուզողը ստիպուած է շարունակ, դառնացած սրտով ընտրել երկու կամ երեք անհաւասար անարդարութիւններից մեկը կամ միւսը...»

Այս փիլիսոփայութեամբ կեանքը ըստ Մէտէոլինկի մի հրէշաւոր մարդակեր է և նրա հետ ճակատազրապէս կապուած էն մանր ու մեծ զոհաբերութիւնները: Ազատութեան, հարիւր հազարների, միլիոնների ազատութեան կուում ընկնում են այնքան երիտասարդ կեանքեր, խամրում են այնքան ծաղիկներ: Սա մի բացարձակ, մի ողբալի անարդարութիւն է, այնքան մայրեր են սգում, անզան անմեղ սրտեր փշրում, բայց ամենաարդարածէր մարդն անզամ տանում է այդ մտհերը, խաղաղ սրտով է ենանում մայրերի ուաւը, լսում նրանց աղեկառուր հառաչանքը, որովհետեւ այդ բոլորը կատարուում է մի մեծ, աւելի անողորմ անարդարութիւն, մի մեծ չարիք վերացնելու համար, որպիսին է անպատճիւ, ստորացուցիչ բռնութիւնը ծանրացած միլիոնների մէջքին: Կեանքի ամենատիուր, ամենաանողորմ փիլիսոփայութիւնն է այս «երկու կամ երեք ամսաւասար անարդարութիւններից ընարել մէկը կամ միւսը», սա նոյն-իսկ ճակատազրական է, անխուսափելի: Դեռ լաւ, որ մտրզը կարողանայ ընտրել փոքրադոյն անարդարութիւնը: աարաբազզաբար յաճախ հակառական է լինում, որովհետեւ անհատական էգօիզմը մարդկի միշտ գերադասում են բոլոր միւս գերագոյն հասարական շահերից, անզամ մի այնպիսի մեծ, գաղափարական դործից, որպիսին է մի առասպող ժողովրդի ազատութիւնը անկուր բռնութեան լծի տակից: Մեծ չարիքը միշտ օնտում, ապրում է մանր էգօիզմներով:

Այժմ անցնում ենք զերակատարների խաղին:

Հենց սկզբից պէտք է ասենք, որ մենք ինչքան որ յափըշտակուած էինք Մէտէոլինկի այս զեղարուեստական-փիլիսոփայական երկու, նոյնքան թերահաւատութեամբ էինք զերաբերուում դէպի նրա բեմական յաջողութիւնը, ի նկատի ունենալով այն երկար և խորիմաստ զիալօնները, որոնք այնքան լաւ են կարգալու համար և այնքան գտուարտանելի, երբ բեմից են լսուում: Աւրախ ենք ասել, որ մեր և ինչոքս և շտաշատերի այդ կանխուկալ կարծիքը չ'արդարացաւ: և հայ բեմը այդ օրը Մօննաւ-Վաննայի խողով մի քանի աստիճան բարձրացաւ վաստակած կատարենալ յաջողութեամբ.

Խմբի կազմին նայելով՝ զերերը բաժանուած էին աւելի քան յաջող: Մօննա-Վաննալի դերը կատարեց ա: Մայսուրեան մի յաջողութեամբ, որ վեր էր բոլոր սպասածից: Երկորդ գոր-

ծողութեան սկզբում, երբ Վաննան յայտնւում է Պրինչիվալէի վրանում կիսամերկ, որպէս ուխտուած և դողդոջուն զոհ մարդկային ցաւի մնօ սեղանի վրայ, առ. Մայսուրեան կատարեց իսկական արտիստի պէս: Նատ խօսքեր չը կան այնտեղ, մի քանի «այո», մի երկու կարծ, վճռական ֆրազ, բայց որքան խորը հոգեբանական դրութիւն, ինչ ցնցող, անդառնալի և վշտու վճռականութիւն: Եւ այդ վճռականութիւնը, այդ գողգոջուն մարմինը իրքն ողջակէզ բերող անողարմ հողին հիանալի կերպով արտայալտեց վրանի դրան մօա կծկուած կինը, որ այնպէս յիշեցնում էր վանդակի մէջ բռնուած զեղեցիկ թունակին, որ հաշտուած իր կացութեան հետ էլ փորձ չի անում ազատուել: Տ. Մայսուրեան երբեմն աւելի յաճախ է նայում զետին, քան, գուցէ, այդ հարկաւոր է, սա նրա թերութիւններից մէկն է, և ոչ փոքրը, այս անգամ նրա այդ թերութիւնն էլ լրացրեց իր խաղի զրամատիզմը, նա շատ ի դէպ էր կոացնում պարանոցը կարծես չը տեսնելու համար նրան, որ իրան ենթարկել է այդ աստիճան ծանր անարգանքի: Այսուհետեւ նոգեբանական այն գժուար մօմենտները, երբ Վաննայի սրտում աստիճանաբար փոփոխուում են յոյզերը, երբ նրա նողկանքն ու տտելութիւնը, կասկածն ու սարսափը կամաց կամաց տեղի են տալիս Պրինչիվալէի վարմունքի փոփոխութեան ազդեցութեամբ, երբ սի ամսերով պատաժ նրա սիրտը բացւում կամաց ու պայծառանում, որպէս ժպտուն երկինք, ուր Պրինչիվալէն տեսնում է մի շմեցնող մեծութիւն, մի տաձար և խօնարհուում է հեղութեամբ, այդ էլ յաջողուեց առ. Մայսուրեանին: Բայց վերջին գործողութեան մէջ, երբ պէտք էր տամսել այն ծանր փորձութիւնը և կեզծիք դնել ծշմարտութեան տեղ, առ. Մայսուրեան, ինչպէս ասում են, ինքն իրան գերազանցեց: Պէտք է ասել, որ զա բաւական երկար է տեսում որպէս զի մարդ կարողանայ իր ներքին աշխարհը չը մատնել, չը թուլանալ, և սակայն համակերելի գերասանուհին, տարաւայդ փորձութիւնն էլ և դժուար գերից դուրս եկաւ յալթանակով: Համարձակ կարելի է ասել, որ տիկինը գեռ երբէք այդ աստիճան յաջողութեամբ չէր տարել զրամատիկ որեւէ զեր. դա մի բազդաւոր գուգատիպութիւն է, Մօննա-Վաննայի զերի պատշաճաւորութիւնը տիկինը տիմպերամննտին, չափուզանցութիւն չի լինի ասել, որ այդ զերը ժամանակով նրա լաւագոյն գերերից մէկը կը դառնայ:

Համեմատաբար ծանր զեր էր վիճակուած պ, Պետրոսեանին, ոչ թէ այն պատճառով որ Գուիդօի զերը շատ աւելի հոգեբանական բարդութիւններ ունի, քան օրինակ Մօննա-Վան-

նայինը, այլ այն պատճառով, որ Մարկօփ, երկար և ոչ բեմական փիլիսոփայութիւնները լսելու ամենից շատ նա էր դատապարտուած։ Գուիդօփ յանկարծական բռնկումները, խանդոտութեան կատաղի պոոթիկումները, որոնք այլ պայմաններում ցընցող կը դառնային, չորհիւ Մարկօփ փիլիսոփայութիւնների՝ թուլանում, մեղմանում էին, որովհետեւ երկար ընդմիջումները նոսրացնում էին հոգեկան ազդու տպաւորութիւնների խոռոշիմոր։ Այս անյարմարութիւնով հանդերձ ալ. Պետրոսեան հիանալի տարաւ խանդու ամուսնու դերը և անհատի էգօիզմը յանձին նրա իր խելացի բացատրողն ունեցաւ, կարծում ենք ձշմարտութիւնը ամբողջացրած կը լինինք եթէ ասենք, որ խանդու ամուսինը բաւականաչափ կատաղի և անընկծելի միջնագարեան տօպետ չէր։

Պ. Արէլեան յանձն էր առել Պրինչիվալէի դերը, գնդեցիկ ու պատշաճ դեր իր առնական հասակին, իր լայն շարժումներին։ Տրիվուլչիօփ հետ ունեցած միջնադէպը ալ. Արէլեան տարաւ հիանալի կերպով. նա այն ժամանակ իսկական զինուորական էր, որ գիտէ գիմազրաւել մահը։ Գեղեցիկ էր նաև նրա սպասողական վիճակի անհանգստութիւնը և նրա առաջին հսնդիպումը Մօննա-Վաննայի հետ, այն զգոյշ և գիտաւորեալ հարցեր տալու եղանակը։ Բայց իր սիրոյ արտայայտութեան մէջ Գուիդօփ ասածի պէս «մարդկային ընութեան» յարմար ձեւեր առաւ, որոնց մէջ յանկալի իդէալականը մի փոքր նուազեց. մէկ էլ վերջում Գուիդօփ համնէպ իր բռնած դիրքը եթէ նուազ ըմբոսա ու խրոխա լինէր, կարծում ենք խաղը դրանով չէր վնասուի. Այսպէս թէ այսպէս նրա խաղի ամբողջութիւնը այնպէս կատարեալ էր, այնպէս պատշաճ իր անպայման և բազմակողմանի տաղանդին։ «Բազմակողմանի» բառը խիստ ի դէպէ պ. Արէլեանի համար, որի ուսերը սովորաբար չին ծռոււ յանձն առած դերերի բազմազանութեան և բեժիսսօրական պարտաւորութիւնների տակ։

Պ. Յարութիւնեան ծերունի Մարկօփ դերում իր խաղով լրացրեց այդ լաւ երեկոյի տպաւորութեան ամբողջութիւնը. Ամենից անշնորքը այդ երեկոյ բեմի վրայ ամբոխ ներկայացնող բազմութիւնն էր մանկքենների մի ժողով։

Ա. Ղ. Զ. Ի. Կ.*)

(Առողջապահական եւ բարոյագիտական եսթիդ):

XIII

Դ Ա Շ Ա Ն Ը

Հասունութեան գործած կուռումն աղջկայ օրգանիսի մէջ հների եւ առջի կիսավայրենի ազգերի հայեցքը աղջկայ ամսականի վրայ.—Դաւանային արևանը վերացրած գերբնական ոյժը.—Դաւանաւոր կնոջ անմանուրեան զադափարը.—Եռա առանձնացնումն, իբրև պիղծ էակի. —Դաւանանի երեւալը եւ աղջկայ հսկութիւնը.—Սուազին գուստին «օնենը կիսավայրենիների մէջ»:

Հեռատես բնութիւնը դեռ արգանդի սաղմի մէջ դրել է աճման ու բազմնալու գործարանները. թէ տղայ և թէ աղջիկ-սաղմը կրում են արգէն իրանց մէջ սեռական կեանքի սկզբնական տարրելը:

Սակայն սեռական կեանքը երկար մանկական տարիների ընթացքում քնած է մնում թէ տղայի և թէ աղջկայ մէջ և որոշ հասակում միայն, պատանեկան հասակում, նա համարեա զարթնում է և զարթնելիս մի պահանջող, բռնակալ ոյժ է դառնում օրգանիզմի ընդհանուր կեանքի մէջ:

Մանկական խաղաղ բուսական գոյութեան մէջ, մի անսովոր, տագնապալից անհանդստութիւն, յուզիչ, հրատապ վրդովմունքներ են մուտք գործում, ատրոբինակ զգացողութիւններ, գայթակղեցնող մտքեր, անզոպելի հակումներ, ընդունակութիւնների, ձգտումների ուժ-

*) Տէ՛ս «Մորճ» № 9.

գին լարումն և ուղեղի գերաշխատութիւնն,—ամբողջ օրդանիզմի զսպանակային ձգաւորութիւնն.—ահա այն անորոշ, նախագնաց նշանները, որոնք սեռական հասունութեան առաջին սուրհանդակներն են, սեռական և նորաբողբոչ կեանքի գարնան աւետաբեր ծիծեռնակները:

Նրանք աւետում են, որ մի նոր արև է ծագում պատանու մատաղ կեանքի հորիզոնին, արեւ,—որի ջերմութիւնից բացւում է կոկոնը, հոտաւէտ ու գունաւոր գառնում վարդի թերթիկները և հիւթով լցւում է ամբողջ ծաղիկը.

Տաս-տասնհինգ տարի մանկական օրդանիզմը աճում է, փարթամանում, նրա հետ զարգանում են նաեւ սեռական բարդ գործարանները, որոնք կտմաց-կամաց պատրաստում են մայրութեան գժուարին դերի համար:

Եւ աղջկայ նրբակազմ; գեռ անկատար ֆիզիկական ու զգայական կեանքի մէջ մի մեծ, հիմնական կոտրումն է տեղի ունենում, որը, ինչպէս կը տեսնենք, մեծ ցնցումն է զցում նրան ամբողջ գոյութեան մէջ:

Առաջին արիւնհոսութիւնը այս ցնցման ակնյայտ արտայայտութիւններից մէկն է:

Բայց լաւ դիտենանք, որ նա գեռ հասունութեան առհաւատչեան չէ, ինչպէս կարծում են շատերը:

Այդ մի մեծ ու վտանգաւոր սխալ է, որ մենք կը կամենայինք ուղղել, որովհետեւ նա մեծամեծ չարիքների պատճառ կարող է գառնալ և գառնում էլ է (վազաժամ ամուսնութիւն իր հետեւանքներով):

Դաւուանը դեռ հասունութիւն չէ: Դաշտանը բացուելուց յետոյ էլ աղջկայ օրդանիզմը աճման մէջ է: Դաշտանը կրկնուելով ամսէ ամիս տեւում՝ է աւելի, քան երեսուն տարի—ուրեմն կնոջ կեանքի կէսը և ընտրում է նրա ամենաեռուն տարիները: Որչափ ուրեմն կարեւոր է աղջկայ ու կնոջ համար լիակատար ու գլուխան տեղեկութիւններ ունենալ այս մեծ ակտի մասին, որը, կրկնում ենք, ահագին դեր է խաղում նրա կեանքի մէջ:

և այդ նպատակն է մեզ թելագրում երկար կանգ առնել այս երեւոյթի վրայ և խօսել աղջկայ հետ պարզ ոճով, իբրեւ բժիշկ և իբրեւ եղբայր:

Ազիւնհոսութիւնը, պարբերաբար ամսէ ամիս կըրկնուող և որոշ ժամանակամիջոց տեւող արիւնհոսութիւնը, անբացատրելի էր հին մարդուն և իր խորհրդաւորութեամբ գերբնական երեւոյթների շարքն էր անցել:

Եւ հների (նաև նոր ոչշբաղաքակիրթ ազգերի) մէջ, դաշտանը մի ակտ է, որի միջոցով պիզծ, կեղտոտ հիւթեր են դուրս թափւում: Այս հիւթերը, իբր թէ, պարունակում են հոսող արեան մէջ և հաղորդում են սրան զանազան գերբնական յատկութիւններ:

Ճանապարհորդները և հետազոտողները անհամար միապաշտաւթիւններ են արձանագրել, որոնք մինչեւ հիմա էլ կապուած են դաշտանի հետ:

Նվաբիայում և գերմանական շատ երկրներում մինչև հիմա էլ գոյութիւն ունի այն մնապաշտութիւնը, թէ դաշտանի արիւնով թրջած շապիկը հանդցնում է հրդեհը, եթէ կրակը գցեն: Կոյսի շապիկը հագնող տղամարդին չի դիպչի գնդակը ու չի վիրաւորի սուրը:

Հուօմում կարծում էին, թէ կարկուտն ու փոթորիկն անդամ փախչում են դաշտանաւորից:

Պինիուսը զարմանալի պարզամտութեամբ առաջ է բերում հետեւալլ, իբրև դաշտանի արեան զօրութեան նմուշներ.

Եթէ դաշտան ունեցողը մօտենայ խաղողին՝ սա թթւում է բոյսը չորանում է, ծառի տերեները թափւում են: Նրա մի հայեացքից հայելին խաւարում է, սուր գործիքը գուլանում, փղոսկը մուգ գոյն է ստանում, մինչև անդամ երկաթը ժանդստում է և վատ հոտ ստանում և այլն: Դաշտանի արիւնը լիզող շունը կատաղում է և նրա խածնելլ չափազանց վտանգաւոր է դառնում:

իբրև այս հայեացքի հետեւանք, դաշտանաւոր կի-
նը և աղջիկը գառնում են պիղծ, արատաւոր էակներ,
սրանցից պէտք է հեռանալ, կամ սրանց պէտք է հե-
ռացնել, որ չը պղծեն ուրիշներին:

Հին աշխարհում, նոյն-իսկ Յունաստանում դաշտա-
նաւոր կինը անմաքուր էր համարւում:

Մովսէս Մարգարէն նոյնպէս աղջկան ու կնոջը
այդ միջոցին պիղծ է համարում, պատուիրում է նրանց
առանձնանալ եօթ օր և եօթ օրից յետոյ մատաղ ա-
նել: Ոչ ոք չը պէտք է ձեռ տար նրանց իրերին, ա-
մուսինը չը պիտի մօտենար իր կնոջ անկողնուն անգամ:
իսկ յարաբերութիւն ունեցողը մահուան էր գատա-
պարտում կնոջ հետ միասին: Արիւնհոսութիւնը զեր-
ջանալուց յետոյ աղջիկը պիտի լողանար աղքիւրի կամ
անձրեւի պազ ջրի մէջ, թէկուզ ձմեռ լինէր: Այս նպա-
տակի համար առանձին աւազաններ էին շինւում տնե-
րում, որոնք կոչւում էին «միկուա *»):

Նոյն աչքով էին նայում՝ դաշտանաւոր կնոջ վրայ
նոյնպէս և պարսիկները, մեղացիք, իրանցիք: Զենդա-
վեստի մէջ ուղղակի ասուած է, թէ արիւնհոսութիւնը
անմոքուր է գարձնում աղջկան: Նա պիտի առանձնա-
նայ, հեռանայ շրջապատողներից և չը նայի օջախի
կրակին, ոչ չը պղծի նրան. նրան հեռացնում էին 15
քայլ ջրից ու կրակից: Եթէ դաշտանաւոր կինը յարա-
բերութիւն էր ունենում տղամարդու հետ, նա ճիպո-
տի 20 հարուած էր ստանում: Հնդկաստանում այդ
աններելի յանցանք ու մեղը էր համարւում, որի հա-
մար մարդիկ պէտք է տանջուէին դժոխքում: Այնտեղ
աղջկան պառկեցնում էին տան մի հեռաւոր պուճա-
խում: որը դաշտան-սատան էր կոչւում: Պարսիկների
տներումն էլ գեռ մինչեւ այժմ այսպիսի մի անկիւն
կայ: Հնդիկ աղջիկը այդ միջոցին չը պէտք է լուա-
ցուի և լաց լինի. նա իրաւունք չունի մի միջատ ան-

* Յ. Պլոսս Ժենցիա.

դամ սպանելու, ոչ էլ ձի, փիղ, էշ հեծնելու և ոչ էլ կառք նստելու։ Նրան արգելուած է նոյնպէս և զիսին անուշահոտութիւններ, օծանելիք քսել, խաղերի մասնակցել, ցերեկը պառկել կամ բնել, ոչ էլ ատամները մարդել ու բերանը ողողել։ Ծղամարդու հետ յարակցութիւն ունենալու միտքն անգամ մահացու մեզք է համարւում։ Նա չը պէտք է մտածի անգամ Աստծու, արեգակի, զոհաբերութիւնների և ազօթքի մասին։ Նա իրաւունք չունի իր զաւակներին անգամ մօտենալու։

Դաշտանով պղծուած կնոջ, ինչպէս ասել էինք, հեռացնում էին տնից։

Նատ տեղերում այդ նպատակով շինւում էին խրճիթներ, կամ խփուում էին վրաններ, մարդկային բնակատեղերից հեռու, օրինակ՝ անտառներում, ուր ապաստանում էին դաշտանաւորները և մնում մինչեւ արիւնհոսութեան վերջանալը։ Այնտեղ նրան ապրեցնում էին բոլորովին առանձնացած, պառաւ կանանց հսկողութեան ներքոյ և ոչ մի տղամարդ չէր համարձակւում մօտենալ նրանց, որ և է առնչութիւն ունենալ այդ տան հետ։

Առաջին լուսնի յայտնուելը պահանջում է, ըստ ժողովրդի հասկացողութեան, որոշ զգուշութիւններ։ Մի տեղ աղջկան պպածնստած են պահում, միւս տեղ նրան արդելում են սանրով գլուխը սանրել, մի երրորդ տեղ որոշ կերակուրներ են միայն թոյլ տալիս ուտելու և այլն և այլն։

Դաշտանի յայտնուելը մինչև հիմա էլ ցաւակցաբար համարւում է իրեւ աղջկայ կատարեալ հասունութեան ապացոյց, իսկ քանի որ հասունութեան հետ կապուած են որոշ քաղաքացիական կամ հասարակական իրաւունքներ, նա տօնւում է բոլոր ազգերի մէջ։

Եւ յիրաւի մի շարք ծէսեր են կատարւում մեր օրերում անգամ անքաղաքակիրթ աղգերի մէջ։ Նատ տեղեր հասութիւնը տօնւում է շքեղ ծէսերսվ։

Աւստրալիական մի քանի ցեղերի մէջ երեխայի

երկու կարիչ ատամները կոտրում են կամ սղոցում, երբեմն էլ սև ներկում։ Ուրիշ երկրներում մորթագրում են աղջկան (татуировка, tatouage)։ Աֆրիկայում՝ խեղճերին մինչև 4000 ժակոցներ են անում։ Ականջների ու քթի ժակելը կատարում է նոյնպէս հասունութեան միջոցին։ Նատ տեղեր ժակ են անում նոյնպէս և ներքին պոօշը և մէջը փայտ կամ փղոսկը ամրացնում։

Յիշած արարողութիւնները համեմատաբար անմեղ բաներ են։

Նատ տեղերում երեխաներին սոսկալի տանջանք ների և հրէշաւորութիւնների են ենթարկում։

Այսպէս, Գվիանում կենդանու ատամով երկու խոր ու երկար ճեղքուածներ են անում աղջկայ մէջըի կաշու վրայ ու վէրըի մէջ պղպեղ ածում։ Երեք օր նրան քաղցած ու ծարաւ են պահում և զանազան կապանքների են ենթարկում, յետոյ մի ամիս պահում են համակի մէջ։ Մի ուրիշ տեղ տնեցիք ու հիւրերը ճիպուններով ծեծում են մերկացրած աղջկան 6 ժամ շարունակ և նա ըստ պէտք է ձայն հանի և ոչ էլ գէմքի վրայ ցաւ արտայայտի... Տեղ-տեղ հասունացած աղջիկներին տանում են թագնուած տեղեր և յանձնում պառաւ կանանց, որոնք նրանց պատրաստում են տպագայ ամուսնական կեանքի համար, անտանելի խստութեամբ պահելով ու զրկանքների ու տանջանքների ենթարկելով։

Այսպէս է տօնուում նոյն իսկ մեր օրերում առաջին լուսինը կիսավայրենի ցեղերի մէջ։

XIV

**ԴԱՇՏԱՆԸ ԵՒ ՆՐԱ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ԱՊՀԿԱՅ ԿԱԶ-
ՄՈՒԱԾՔԻ ՎՐԱՅ**

Դաւանի Ֆիզիոլոգիան.—Նրա պարբերականութիւնը.—Ո՞ր տարիումն է սկսում նա.՝ ազդեցութիւն, կիմայի ու կենցաղի ազդեցութիւնը ամսականից վրայ. — Դաւանի օփոխանուկութիւնը. — Աւագան զատան. — Նախագաւառային համականեր. — Սպազմականութիւնը. — Ներվային գրգռումն, զգացմունքների չարումն, բնաւորութեան և հօգեկան ածխարհում կատարուած փոփոխութիւնները արբութիւնք: Սիան-Հիլերի օրէնքը. — Աղջկայ կազմուածի առազ զարգացումից առաջած խանգարումները ու երանական շեզումները. — խանգարումներ սեռական զրծարանների ժուկուցիայի մէջ. — Կախի վնասումներ. — Արևատուքիւն և նրա պահանջնորը. — Թօմիսաւ

Այսպէս ուրեմն մարդկութեան մանկութեան մէջ դաշտանը մի տարօրինակ հակաբնական երեւոյթ էր կարծւում; և միայն լուսաւորութիւնը կարողացաւ քաղաքակիրթ ազգերի մէջ վերջ տալ այս անմիտ հաւատալիքներին ու ամսական արիւնհոսութիւնը մտաւ կնոջ ֆիզիոգիայի մէջ:

Անտարակոյս, յիշած հայեացըները դաշտանի վրայ, ինչպէս և ժողովրդական բոլոր մնոտիապաշտութիւնները որոշ, դրական հիմունքեր ունեն, այսինքն որոշ իրողութեան վրայ են հիմնուած:

Դաշտանի վերաբերմանը մենք կարող ենք մատնանիշ անել մի երկար շարք ֆիզիկական ու հոգեկան ցնցումների վրայ, որոնք տեղի ունեն այդ ժամանակամիջոցին և որոնց անմեկնելիութիւնը հենց գրգռել է խաւար ուղեղներ և առաջ է բերել յիշած մնոտիապաշտութիւնները: Ամիսը մէկ անգամ (աւելի ճշտորէն սասած 28 օրը մէկ անգամ) աղջկայ կամ կնոջ սեռական գործարանները (մեզ անյայտ պատճառով) լցւում են արիւնով, որի ճնշողութեան ներբոյ զաւակատան թաղանթի երակներից մի քանիսը պատռում են ու արիւն տալիս: Այդ արիւնն է, որը դուրս թափուելով

կազմում է աղջկայ «ամսականը»։ Մի քանի օր տեւում է այս արիւնիթափութիւնը, յետոյ արիւնը քաշում է աղջկայ կոնքային գործարանների միջից ու գաշտանը դադարում։ Այս ակաը համեմատում են ծովի յորդանալու ու նուռազման (որևէ և ուղարկելու)։ Աղջկայ սեռական օրդանչների մէջ մեծ գեր են խաղում երկու գնդակաձև մարմիններ, որոնք դրուած են զաւակատան երկու կողմերը։ որանք ձուարաններն են, որոնք արտադրուում են ձուիկները, ապագայ երեխայի սկզբնասալմերը։ Զուիկների թիւը ահագին է, մի քանի հարիւր հազար, բայց նրանցից մի քանիսն են միայն բեղմնաւորւում։ Զուիկներից մէկը կամ մի քանիսը ազատում են ու ընկնում զաւակատան մէջ, որտեղ և տեղի է ունենում բեղմնաւորումն, այլապէս նա կորչում է։ Ցեղմնաւորուելու ամենանպաստաւոր ժամանակը դաշտանն է, որովհետեւ այդ միջոցին արդանդի խոռոչի թաղանթը, արիւնից ուռած, փուխր դառած, կնճիռներ է կազմում; որոնց մէջ և բուն է գնում աղամարդու սերմով բեղմնաւորուած ձուիկը, այնպէս, ինչպէս ցորենի հատիկը արմատ է գնում փուխր ու անհարթ հողի մէջ։

Ահա դաշտանի կատարած գերը և պատճառը։ Դաշտանը կրկնում է ամեն լուսնամիաը (չորս շաբաթ՝ 28 օր) մի անգամ։

Այս զարմանալի պարբերումների, ինչպէս և կեանքի շատ երեւոյթների, իսկական պատճառը մեղ անյայտ է մնում։ Ինչի՞ է մեր սիրտը մի բոպէսում՝ 70-80 անդամ խփում, ինչի՞ մենք 16 անդամ՝ շունչ ենք առնում նոյն բոպէի մէջ—նոյնպէս չը դիտենք։ Լուսնամնի տեւազութիւն ունենալու զուգադիպումը կարծել է տուել, թէ դաշտանի երեւալը կապ ունի լուսնի հետ։ Սակայն այդ մի տարօրինակ սխալ հետեւոզութիւն է, որի ժողովրդի հասկացողութեան մէջ արմատանալը թիւրիմացութեան կամ տգիտութեան արդիւնք է։ Եթէ արիւն հոսութիւնը բոլոր աղջիկների ու կանանց համար լուսնի որոշ օրը սկսուեր ու վերջանար, դուցէ գեռ հնար

լինէր կապել այդ երեւոյթը լուսնի շրջանների հետ,
բայց չէ որ երկրի բոլոր կանայք մի օրում չեն տես-
նում իրանց ամսականը:

Դաշտանը բացւում է աղջկայ 13-ից մինչև 16 տա-
րին: Առաջան նա երեւում է նաև աւելի վաղ ու աւելի
ուշ, նայելով երկրի կղիմային, աղջկայ Փիզիկական
զարգացմանը և կենցաղին: Զերմ երկրներում աղջիկը
տեսնում է ամսականը 11—10 տարեկան հասակում:
Նոյն իսկ աւելի վաղ, իսկ հիւսիսային երկրներում 16-ից
յետոյ միայն:

Կատիջան հինգ տարեկան էր, երբ Մահամմեդը
ամուսնացաւ նրա հետ և ութ տարեկան էր, երբ կին
դարձաւ: Հնդկաստանում 10 տարեկան աղջիկը արդէն
հասունացած է համարւում ու ամուսնանում է, իսկ Հա-
րաւային Ամերիկայի հնդիկ աղջիկներին 9 տարեկանից
վաղ են մարդու տալիս:

Մեր երկրում քաղաքաբնակ աղջիկները դաշտա-
նաւորւում են յաճախ 12—13 տարեկան, իսկ լեռնա-
բնակները աւելի ուշ:

Քաղաքի կեանքը ընդհանրապէս աւելի վաղ է հա-
սունացնում աղջկան, քան գիւղինը: Սրա պատճառն
անտարակոյս անընդնատ շփումներն են տղամարդկանց
հետ, որով վաղաժամ զարթնում են սեռական զգաց-
մունքները, նոյնպէս և թատրոններն ու պարահան-
գէսները ու ընթերցանութիւնները, որոնք գրգռե-
լով աղջկայ երեւակայութիւնը, դրա հետ միասին զար-
թեցնում է նիրհած պատանեկան զգացմունքներ:

Փ. Փ. Բուսսօն նկատել է Շվեյցարիայի լեռնա-
կանների մէջ, որ արդէն լաւ կազմակերպուած աղջիկ-
ները գեռ դաշտան չէին տեսած և այս հանգամանքը
նա վերագրում է բարբերի պարզութեանը, բնութեան
գոգում վարած անպաճոյն կենցաղին, որ չի գրգռում
երեւակայութիւնը:

Մի քանի հեղինակներ մատնանիշ են անում այն
հանգամանքի վրայ, որ չափաղանց տաք հագուստը,

տաք տների մէջ ապրելը առաջ է գցում դաշտանի երեւալը։ Այս տեսակէտից մեր գիւղերում գործական հուրսին գուցէ որոշ գեր խաղալիս լինի։

Նկատում է, որ սեւահեր աղջիկները աւելի վաղ են դաշտանաւորւում, քան չեկահերները։ Փափկասունները աւելի, քան հասարակ, աշխատաւոր կեանք վարողները, հիւանդուտ արիւնատները աւելի, քան առողջ և յաղթանդամները։

Բացառութիւններ, ի հարկէ, շատ կան։

Պատահում են դէպքեր, որ արբունը սկսւում է նաև մանկական հասակում, պատահում է նոյնպէս և 18—20 տարում։ Շատ մայրեր տեսնելով, որ իրանց աղջկայ ամսականը չէ բացւում, վրդովում են, դէս ու դէն են ընկնում, զանազան միջոցներ են գործ դընում և աւելի վնասում են աղջկան, քան օգուտ տալիս։

Այստեղ պիտի յիշենք մի երեւոյթի մասին, որը անշափ անհանդասութեան պատճառ է դառնում—այդ փոխանակող արիւնիութիւնն է։ Երբեմն դաշտանի ժամանակ արիշնը, փոխանակ սովորուկան ճանապարհով դուրս գալու, հոսում է մարմնի մի ուրիշ տեղից, օր. քթից, բերանից, աղջիկներից (յետքից) կամ ստամոքսից (փախում է)։ Այս արիւնհոսութիւնները առանձին նշանակութիւն չունեն աղջկայ առողջական դրութեան համար, բայց եթէ չափազանց են լինում, վերջ ի վերջոյ կարող են աղջել և առաջացնել արնատութիւն, այս պատճառով հարկաւոր է բժշկի գիմել։

Յաճախ, առաջին դաշտանից յետոյ, մի քանի ամիս աղջիկը չի «տեսնում»։ առհասարակ առաջին վեց ամիսը ու հէնց մի տարին շատ անկանոնութիւններ են պատահում և գրա մէջ վրդովեցուցիչ բան չը կայ։

Դաշտանը տեւում է 3—5 օր, անօրմալ և հիւանդական գէպքերում նաև աւելի երկար (մինչեւ 8 օր)։ Ամեն աղջիկ փորձով գիտէ, թէ քանի օր է տեւում արիւնհոսութիւնը, և գիտէ թէ ինչ պայմաններ ու հանգամանքներ աղջում են նրա տեւողութեան վրայ։ Դրա

պատճառը լինում է կենցաղի փոփոխութիւնը, ծանր աշխատանքներ, անհանգիստ կեանք, հոգեկան վրդովմունքներ, անքուն գիշերներ, կորսէտի ձգումն, զանազան գրգռիչ խմիչքների գործածութիւնը (սուլճ, գինի), սեռական գրգռումներ և այլն.

Նոյն գործաններն ազդում են նաև կարճացնելով դադարները: Մենք ասել ենք, որ դաշտանը կրկնում է նօրմալ դէպքերում՝ 27—30 օրը մի անգամ: Անզգոյն կենցաղը կարող է կրկնել տալ 26—25, նոյն իսկ 22 օրը մի անգամ, որ կը դառնայ մի անբնական դրութիւն:

Երբեմն դաշտանը բացակայում է մինչեւ 17—19 տարեկան հասակը: Աղջիկը ամեն ամիս զգում է թեթև ցաւեր արգանդում, բայց արիւն չը կայ: Այս դէպքերում անհրաժեշտ է դիմել բժշկի, որովհետեւ երբեմն աղջկայ սեռական գործարանների մէջ որ և է անբնական բան է լինում:

Երբեմն էլ արդէն սկսուած արիւնհոսութիւնը մէկերկու օր տեւելուց յետոյ, յանկարծ կտրում է: Այդ հետեւանք է լինում վախի, մի մեծ հոգեկան վրդովմունքի, կամ մրսելու, վայր ընկնելու: Այդ պատահարներից յետոյ երբեմն դաշտանը մի քանի ամիս դադարում է:

Աղջում ասել ենք, թէ արբունքի մօտենալուն՝ աղջկայ ամբողջ ֆիզիկան ու հոգեկան աշխարհները ցնցւում են:

Այս ցնցումը օրգանիզմի մէջ արտայայտում է մի շարք երեւոյթներով, որ պէտք է լաւ ճանաչել:

Աղջկայ սեռական գործարանները առհասարակ մեծ քանակութեամբ արիւն են ստանում: Իսկ դաշտանի մօտենալուն՝ աւելի եւս: Բայց այդ արիւնլցումն չի սահմանափակում աղջկայ զաւակատնով ու ձուարաններով: Կոնքի մէջ դրուած բոլոր գործարանները լցում են արիւնով: Այդ է պատճառը, որ պատահանուհին, դաշտանը մօտենալիս, մի տեսակ ծանրութիւն է զգում

աճուկների մէջ ու գաւակներում, որը սաստկանում է քայլելիս կամ մէջը ծռելիս. Բացի այդ անոնվոր զգացողութիւններ են առաջ գալիս արտաքին սեռական գործարաններում, որոնք զարմանալի զգայուն ու գրգռուող են գառնում, մազուտում, ու արտագրում լորձանման հեղուկներ։

Որբան շրջահայեաց ու զգոյշ պիտի լինեն ծնողները, որ այս գիւրագրգռութիւնը չը տանի պատանի աղջկան գէպի ախտ, գէպի տուփական զգայնութիւն։ Սեղմուած հագուստը, կոացած նստելը (կար անելիս), սայլով անհարթ ճանապարհ գնալը, սանդուխներ բարձրանալը, վերջապէս պարը և ամեն տեսակ ուժգին շարժութներ, ըստ Թիւրտափի, վնասակար են, որովհետեւ գրգռման են հասցնում սեռական օրգանները. — գրգռումն աւելանում է նոյնպէս և մրսելուց եւ իրաւի, մի որեւ է մարմնամասի յանկարծակի սառեցնումն առաջացնում է արեան ներլցնումն դրսից-ներս նոյն սեռական գործարանների մէջ, իսկ դրանից առաջանում են ոչ միայն գրգռումն, այլ և ցաւեր ու ուրիշ հիւանդութիւններ։

Միեւնոյն ժամանակ զաւակատունն ու ձուարանները մեծանում են, ու որոշ մնայուն գիրք բռնում կոնքի մէջ, իսկ կոնքի ոսկրները յայնանում են, ամրանում, և լայնացնում աւազանը, որի մէջ պիտի զարդանայ զաւակատունը և ապրի ապագայ սազմը։

Ընդհանրապէս զարմանալի արագութեամբ է աճում աղջկայ ամբողջ կմախքը. հասակը երկարում է, լայնանում է կրծքի վանդակը, որով զարդանում են և թոքերը. Քարշը նոյնպէս արագ աճում է հասունութեան միջոցին, մինչեւ անդամ՝ (13—14 տարեկան հասակը) աւելի է գառնում, քան նոյն հասակի տղաներինը. Բացի այդ, առանձնապէս պէտք է յիշատակել աղջկայ ստիճանների մէջ առաջ եկած փոփոխութիւնները։

Ստինքները կնոջ սեռական գործարաններին են պատկանում: Յամենայն դէպս, նրանք ներվային թելերով կապուած են սեռական գործարանների (զաւակատան, ձուարանի և արտաքին մասերի) հետ: Այս պատճառով էլ դաշտանի միջոցին ստինքները լցում են արիւնով, գնդանում, նոյնշակ ցաւում, պտուկները չափազանց հեշտագրդիու դառնում և այլն:

Նկատում է մի տեսակ լարումն համարեա բոլոր զգայարանքների, որոնք զարմանալի սրութեան են հասնում աղջկայ դաշտանային շրջանում:—ընդհանրապէս նկատում է ամբողջ ներվային սիստեմի դիւրագըլւ դռումն կամ, ընդհակառակ, դիւրանուազումն:

Այս միջոցին ամեն հոգեկան շարժում չափազանցրած է և յանկարծահաս, այնպէս որ աղջիկը անկարող է լինում սանձել ստացած տպաւորութիւնների ազդեցութիւնը կազմուածքի վրայ: Ահ, ցնծութիւն, ամօթ, զայլոյթ, բարկութիւն,—ամեն ինչ շփոթում է նրա արեան շրջանառութիւնը, որը լաւ նկատում է աղջկայ մերթ կարմրող, մերթ սպրոտող դէմքի վրայ:

Սրանք են խոչոր, աչքի ընկնող ֆիզիկական երեւոյթները աճող օրգանիզմի մէջ:

Բացի այդ, հասունութեան մօտենալուն նաև բնաւորութեան մէջ առաջացնում է մի շարք փոփոխութիւններ, որոնց վրայ անհրաժեշտ է կանգ առնել:

«Աղջկայ հոգու խորքերում ծագող նորանոր յոյզերը այնպիսի մի ցնցումն են զցում նրա ամբողջ հոգեկան աշխարհի մէջ, որ նրա հին, մինչեւ այժմ փայփայած մոքերն ու զգացողութիւնները միանգամայն տակն ու վրայ են լինում:—ամեն բան ուրիշ նոր ձեւ ու դոյն, նոր նշանակութիւն է ստանում, աշխարհը երեւում է նրա աչքերին մի նոր, անսօվոր լուսով լուսաւորուած:

«Մատաղահաս աղջիկը աւելի բաշուող ու ամօթիած է դառնում, աւելի է զսպում իրան, նրա ձեւերն ու շարժումները աւելի ընթոյշ և չընաղ են գառնում

և միեւնոյն ժամանակ նրա սրտի մէջ զարթնում են յանհկարծակի շփոթումներ, յուզմունքներ, տրամադրութեան փոփոխումներ, առաջ է գալիս հակումն դէպի մելամաղձութիւն և առանձնութիւն, նա յաճախ տիրում է ու հոգոյներ հանում, առանց որոշ պատճառի լալիս է, և զգում է իր սրտի խորքերում ծագումն անհասկանալի է անորոշ իղձերի ու ցանկութիւնների։ Հաճոյանալու ցանկութիւնը, որ բնական է կնոջ մէջ, մի արտասովոր պահանջ է դառնում և իշխում է միւս բնազգումներին։ Այդ ժամանակ զարգանում է նաեւ կրօնական զգացմունքները, որոնք մինչեւ այդ բացակայ էին։

«Սկզբներում անգիտելով այն անսովոր յոյզերի և դէպի միւս սեռն ծագող ձգտման պատճառը, որոնք վրդովում են նրանց, պատանուհին յաճախ իր զգացմունքները վատնում է կամ չափազանց աստուածպաշտութեան մէջ, նուիրելով իրան ազօթքի ու պաշտամունքների, կամ թէ չէ իր սիրածարաւ սրտի բոլոր զգացմունքները ուզզելով դէպի իր ընկերուհիները։ Եւ, եթէ աղջիկը հեռու է պահում հասարակութիւնից և առիթ չի ունենում շփուելու երիտասարդների հետ, այն ժամանակ դէպի իր ընկերուհիները տածած այս ընկերական սէրը դառնում է ուզզակի սեռական սէր։ Ընկերուհուն գրած նամակները նոյն ձեւ են ընդունում, ինչ որ ապագայում պիտի լինեն սիրահարին գրած նամակները»։

Առաջ եմ բերում հետեւեալ նամակը, որ կարող է ծառայել իբրեւ նմուշ այն թղթակցութիւնների, որ վարում են արբունքի հասած աղջիկները իրար հետ։

«Իմ միշտ շատ սիրելի և չընաղ օրիորդ, միթէ դուք չը գիտէք, որ ձեր իւրաքանչիւր բառը ինձ երջանիկ է դարձնում...»

«Եթէ գիտենայիք, թէ ինչ մեծ դատարկութիւն եմ զգում սրտիս մէջ, անշուշտ կը շտապէիք լցնելու,

դուք, որ այդշափ բարի էք... դէպի ինձ: Ես այնպիսի անհամբերութեամբ էի սպասում արձակուրդներին, որ նորից տեսնեմ ձեզ և բերանովս կրկնեմ, թէ սիրում եմ ձեզ...

«Յիշում էք ձեր վերադարձի օրը... Եթէ մենակ լինէինք, ես ձեզ կը խեղդէի համբոյրներովս... վազուց ես պահանջ էի զգում ձեզ հետ միայնակ մնալու... բայց այդ չէր յաջողուում և ստիպուած էի խեղդել մէջս այս իդքը: Հէնց որ հնար գտնէք, երկար-երկար նամակ գրեցէք: Զէ՞ որ, իմ թանկագինս, դուք այնքան բարի էք, որ այդ հրճուանիքը չէք մերժի ձեր Պ. ին: Այլ եւս անկարող եմ շարունակել, վախում եմ. յ'տեսութիւն, սիրածս, ձեր պատկերը միշտ սուտիս խորքերումն եմ պահում: Մի համբոյր...»

Միշտ ձեզ սիրող Պ.» *)

Իտար ասում է հետեւեալը. «Երբ որ մարդ կարդումէ հասունացած աղջկայ օրագիրը, շատ մեծ հըմշտութիւն չը պէտք է ունենայ նա, որ կարող լինի որոշել, թէ որ տողերը գաշտանի: Օրերն են գրուած և որոնք յետոյ: Այդ այնքան պարզ է, որ թւում է թէ՝ այդ տողերը գրելիս աղջիկն ուղեցել է առել. «Այսօր իմ ամսականն է»:

Հասունացող կամ արդէն հասունացած աղջկայ հոգեկան տրամադրութեան այս շրջանը չափազանց արկածալից ու վատանգաւոր մի շրջանն է, որի միջոցին սիրելու ու սիրուելու պահանջը կարող է մղել աղջրկան դէպի անհեռատես վարժունքներ, դէպի անդիմադրելի հակումն դէպի միւս սեռը, մանաւանդ, որ շատերի մէջ ամօթխածութիւնը այնքան զօրեղ չէ, որ սանձ դնի նրանց յաճախ միամիտ, բայց և այնպէս արատաւոր կրքային միտումներին, նոյն իսկ գործողութիւններին:

Այսպիսով աղջիկը երբեմն այնպիսի յանդուզն

*) Marro. La puberté.

քայլեր է անում. որ յետոյ նրանք չեն կարողանում առանց կարմրելու. յիշել:

Վերեւ ասացինք, որ գաշտանի բացուելը դեռ ապացոյց չէ, որ աղջիկը բոլորովին հասունացած է սեռական կերանքի համար:

Ո՞չ:

Կրիզիսը տեւում է սրոշ ժամանակամիջոց, որի ընթացքում պատանուհու թէ սեռական գործարանները, և թէ ամբողջ օրդանիդմբ դեռ աճման մէջ են:

Մարրօի ասելով, ովր տաք կլիմայում (Բառիայում) է արել իր գիտումները, կրիզիսը տեւում է աղջկայ համար 5—6 տարի, իսկ տղայի համար 8—10 տարի։ Այսքան տարիների ընթացքում է, որ կատարում են այն ներքին, մտերիմ, բայց մեզ անյայտ պրօցեսները, որոնք պէտք է կազմեն ամուսին դառնալու ընդունակ անհատներ։

Այս պրօցեսներն են, որ իրանց կանոնաւոր ընթացքում առաջ են բերում աղջկայ ֆիզիկան, բարոյական-հոգեկան աշխարհում վերև յիշած երեւոյթները։

Ցաւակցաբար յաճախ նրանք շեղում են իրանց կանոնաւոր ընթացքից և այն ժամանակ երեւան են գալիս կիսահիւանդական ու հիւանդական դրութիւններ, որոնք հարուածում են աճող աղջկայ կազմուածքը և շեղում են նրան բնական զարդացումից։

Այս շեղումների մասին է, որ մենք մտադիր ենք մի քանի խօսք ասել և որոնք պիտի նկատի ունենան ծնողները։

Գիտական Սիանտ-Հիլէրը ձեւակերպել է հետեւեալ օրէնքը. օրդանիդմի գերաճումն առաջ է բերում նրա ֆունկցիաների զարդացման խանդարումն։ Ուրիշ խօսքերով. քանի արագ է աճում պատանու կազմուածքը, այնքան յետ է մնում մարմնի ամրապնդումն։ Այդ օրէնքը ակնյայտ է բուսական աշխարհում, որտեղ նըկատում է, որ արագ ծլող-աճող բոյսերը շատ նրբակազմ են լինում, անպտուղ են լինում, կամ մանր, ան-

հիւթ պտուղներ տալիս, քան օրինակ. ծառերը, որոնց
աճումն դանդաղ է:

Այս մի իրողութիւն է, որը ամենքին յայտնի է,
քանի որ գիտում է ամեն օր: Ո՞վ չը գիտէ, արագ
հասակ անող (բարձրացող) աղջիկները ընդհանրապէս
թուլամորթ, նուազարիւն ու գունատ են լինում, շուտ
յոդնում են աշխատանքից, տրամադիր են լինում գէ-
պի զանազան խանգարումներ, նոյն իսկ տկարութիւն-
ներ:

Եւ քանի արագ ու ուժգին է պատանուհու ա-
ճումն, այնքան աւելի ակնյայտ են և յաճախակի այդ
խանգարումները:

Աղջկայ կազմուածքը անշուշտ աւելի պէտք է ար-
ձագանք տայ հասունութեան ցնցումին, քան տղա-
յինը, քանի որ նրա սեռական գործարանները, ինչպէս
գիտենք, աւելի բարդ ու բազմատեսակ են, հետեւա-
բար և աւելի կենսական նիւթեր պէտք է խլեն մարմ-
նի միւս մասերից՝ իրանց զարգացման համար»:

Այսպիսով յիշած գործարանները մի տեսակ պա-
րագիտներ են գառնում աղջկայ օրգանիզմի համար,
քանի որ պակսեցնում են միւս բոլոր մարմնամասերի
ստացած սննդահիւթերը:

Եթէ օրգանիզմը ամրակազմ է, եթէ ժառանգա-
կանութիւնը չի հարուածել նրա կենսունակութիւնը,
այն ժամանակ սեռական գործարանների գերաճումն
չի կարողանում վնասել նրան,—այլ ստիպում է աղջկան
աւելի սնունդ առնել և այլպիսով աճման համար բա-
ւարար նիւթեր բաժանել բոլոր գործարաններին և
մարմնամասերին.

Սակայն որչափ և զերծ լինի պատանուհին հի-
ւանդական ժառանգականութիւնից, այնուամենայնիւ
դաշտանսաւորուելիս նրա կազմուածքը ենթակայ է լի-
նում՝ որոշ խանգարումների ու հիւանդական շեղումնե-
րի, որոնց վրայ պէտք է մի քիչ կանգ առնել:

Ամենից առաջ խանգարումները նկատում են սե-

ուական գործարանների մէջ, որոնց գերաճումն տռաջէ բերում տռփային գրգռումն, իսկական արբունք, որի միջոցին աղջիկը տղամարդու հետ հպումներից ստացած հաճոյքին բաւարարութիւն տալու համար, յաճախ անգիտակցաբար կամ ընկերուհիների օրինակին հետեւելով, անձնատուր է լինում մարմնաշարժութեան։ Այս աղջիկները աչքի են ընկնում՝ ֆիզիկական թուլութեամբ, գունատութիւնով, ծուլութիւնով։ Նրանց աչքերը արտասովոր փայլ են ստանում, իսկ կոպերի տակը կապտում կամ՝ մղանում, դէմքերի վրայ գուրս են տալիս զանազան պղուկներ, թշերը յաճախ վառւում են, այն ինչ շրթունքները դալկացած են։ Նրանք սիրում են առանձնանալ, գիւրայուզուող են դաւնում ու վատ տրամադրութեան տէր, միշտ մի տեսակ ահ ու դողի մէջ են, հեռանում են ու խորշում մանկական խաղերից, նոյնպէս և իրանց սիրող անձերից, տարօրինակ վարմունքներ ունեն, գանդաղ են ըմբռնողութեան ու մտաւոր աշխարհի մէջ։

Կմախիթի արտգ աճումն ու ողնաշարի երկարումը, վերև յիշած օրէնքին համաձայն, ժամանակ չի տալիս ոսկրերին ու նրանց կապերին ամրանալ, և մենք նկատում ենք ողնաշարի ծռումներ (կորութիւններ), որոնք աւելի սաստկանում են գպրոցական կեանքում, ինչպէս ցոյց ենք տուել գրքիս նախընթաց գլխում։

Մարսողական գործարանների կողմից նկատում են զանազան խանգարումներ, ինչպէս են. սրտխառնութիւն, բզկոց, փրումն, նոյն իսկ վսիսումն և երբեմն սաստիկ վորկապութիւն։ Երբեմն էլ աղջիկները նեղումն են ստամփային ցաւերով, անախորժութիւնով։

Սոյն հասակումն է զարգանում նաև արնատութիւնը (չլորօզԵ), որի ծագման մէջ մեծ գեր է խաղում, ըստ Մայներտի, նելսոնի և ուրիշների, կօրսէտը որ սեղմում է կրծքի ներքեւի մասը և խանգարում (ինչպէս արդէն բացառել ենք) թէ ստամփսի և թէ թոքերի կանոնաւոր գործունէութիւնը։ Եվեղացի Հուսը պնդում է,

թէ 10—15 տարի առաջ արնատութիւնը անյայտ էր իր երկրում գեղջկուհիների մէջ, որովհետեւ կօրսէտի գործածութիւնը գեռ չէր մտել այստեղ։ Բայց հէնց որ սկսեցին կօրսէտ հագնել, հիւանդութիւնը տարածուեց։ Պարսկաստանում և Հնդկաստանում արեան պակասութիւնը նկատում է միայն այն աղջիկների ու կանանց վրայ, որոնք եւրոպական հագուստ են հագնում։ Սակայն, անտարակոյս, միայն հագուստը չէ աղջիկների արնատութեան պատճառը։

Այստեղ մեծ գեր են խազում նաև քաղաքային աննպաստ կեանքի պայմանները, աղջիկների անհանգիստ, վրդովալից կենցաղը, իր ուսումնով, իր անքուն գիշերներով, իր ներվային թուլութիւններով, մնունդի պակասաւորութեամբ։

Արնատութիւնը մի չարիք է, որը խորապէս հարսուածում է աղջկայ գեռահաս օրգանիզմը, որ դարձնում է նրան ներվային, նոյն իսկ հիստերիկ, ընկճում է նրա հոգին ու միտքը, առաջ է բերում թուլութիւն, գլխի պտոյտ գալ, սրտի բարախումն, չնչարգելութիւն, մարսողութեան տկարութիւններ և այլն և այլն։

Աղջկայ դաշտանային շրջանի միւս, աւելի սպառնալից արտայայտութիւնն է բոխախ կամ բարակացաւը։ Ի հարկէ, այն աղջիկների մօտ, որոնք ժառանգաբար տրամադրուած են դէպի այս սոսկալի հիւանդութիւնը։

Յիշատակենք (ապագայում այդ մասին առանձնապէս խօսել խստանալով) նաև ներվային խանդարումները, որոնք համնում են մինչեւ ներվային ցաւերի, հետերիայի և նոյն իսկ ժամանակաւոր ցնորութեան ու յանցաւորութեան։

Սրանք են համառօտօրէն, դաշտանային շրջանում աղջկան սպառնացող վաճանգները։ Այս վտանգների մասին ծնողները ամեն տեղ և ամեն դաստկարգի մէջ շատ թերի համար աղջկան ունեն, յամենայն դէպս զարմանալի անհոգութեամբ ու կարճատեսութեամբ են

վերաբերությունը նրանք դէպի իրանց աղջիկների առողջութիւնը:

XV

ԴԱՇՏԱՆԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ

Դաշտանի առողջապահութեան անհրաժեշտութիւնը. — Պէտք է պատրաստել աղջկան. — Հանգստաւրեան կարևորութիւնը ամսականի միջացին. — Հոգեկանի դրաբիւր. — Մրակաց առաջացած վճառները. — Մարտուղութեան զրծարանների խանգարումն և նրանց խնամելը. — Դաշտանի անխանութը և նմները. — Ամսականի ժամանակից վաղ և ուժ երեւալը. — Արիւնիութեան պակասումն կամ անխանումն. — Կողմնակի երեւոյքները. — Դաշտանային ցաւը և նրա բժօկութիւնը. — Բանուոր աղջկայ առողջապահութիւնը ամսականի ժամանակ:

Մենք աշխատեցինք ընդգծել այն կարեւոր գիտելիքը, թէ դաշտանաւորումն մի տեսակ մտրակումն է աղջկայ օրդանների գործունէութեան համար։ Նա խորապէս ցնցում է պատահուհու ամբողջ օրդանիզմը և հետեւաբար, ճշմարիտ որ, մի ճգնաշրջան, կրեզիս է կազմում նրա կազմի մէջ։

Ամենաթեթև անզգուշութիւնը դաշտանային շրջանում կարող է ուրեմն առաջ բերել զանազան խանգարումներ աղջկայ ֆիզիկական կեանքի մէջ, որոնք վաղ թէ ուշ արձագանք կը տան նրա ամբողջ կազմուածքում։ Եատ «կանացի» կոչուած հիւանդութիւնների պատճառաներից մէկն էլ դաշտանաւոր աղջկայ անզգուշութիւններն են։

Անտարակոյս շատ աղջիկների վրայ իսկի չի էլ նըկատում դաշտանի բացուելլը, և ուրեմն այսպիսիները առերես իսկի կարիք էլ չունեն որոշ առողջական միջոցներ ձեռք առնելու։ Բայց այդ մի մեծ սխալ է. — Երբէք կինը, որքան էլ նա ամրակազմ՝ լինի, որքան էլ ըիչ քաղաքակրթուած (ուրեմն և քիչ նազուկացած), չի կարող անասունների նման անհոգ լինել դէպի այս կարեւոր շրջանը։ Եատ ենք լսում այնպիսի կիսառասպելական պատմութիւններ, թէ օրինակ, լեռնցի կինը

ծանր դաշտային աշխատանքների միջոցին առանց երկունքի ծնուրմ է, և երեխային մի փալասի մէջ փաթաթած գցում է շալակը ու շարունակում բանել... նոյնպիսի բաներ պատմում են նաև դաշտանաշրջանում աղջկայ գործած քաջութիւնների մասին:

Եթէ հաւատալու էլ լինենք այդ բոլորին, դարձեալ հարց է ծագում, թէ արդեօք ի՞նչ հետեւանը է ունենում այդ վայրենի, ուղիղ որ անասնական առողջապահութիւնը աղջկայ ու կնոջ առողջութեան վրայ։ Այդ մասին ոչ ոք, ի հարկէ, չի խօսում և մենք ամեն իրաւունքով կ'ասենք, որ այդ նման անզգուշութիւնների համար անհրաժեշտաբար պէտք է տուժեն խեղճերը,

Կասկած չը կայ, որ գեղջկուհին ու լեռնաբնակ աղջիկները շատ աւելի ամրակազմ են ու գիմացկուն, քան բաղաբացիները, այսու ամենայնիւ նրանք էլ նոյն կերպ են կազմուած, ինչ որ վերջինները և հետեւաբար հետեւեալում յիշատակած առողջապահական խորհուրդները վերաբերում են նրանց ևս։

Բայց ամենից առաջ բացատրենք մի կարևոր կէտ, որը հետևեալն է.

Պէտք է արդեօք աղջիկ-պատանուհուն բացատրել սեռական գործարանների մտերիմ ֆունկցիաները, հարկ է արդեօք պարզել նրա առաջ այդ օրդանների խաղալիք գերը։

Այդ մասին մենք մանրամասն կը խօսենք, երբ կը զբաղուենք աղջկայ բարոյական կրթութեամբ։ Այն ժամանակ կը տեսնենք, թէ որքան վշահայեցողութիւն, որչափ բնքուշութիւն է հարկաւոր օրիորդի աշըրը բանալու համար, որպէս զի տուած տեղեկութիւնները փոխանակ ամրապնդելու նրա մէջ բարոյական սկզբունքները, հակառակ հետեւանք չունենան։ Այժմ կ'ասենք միայն, որ դաշտանին մօտեցող աղջկան պէտք է անպատճառ զգուշացնել, թէ ինչ է պատահելու, որպէս

զի նա չը սարսափի արիւնհոսութիւնից և ամաչելով չը
թագյնի ամսականի երեւալը, որով կը վնասի իրան:

Մայրը պէտք է քնըշութեամբ զգուշացնի իր աղ-
ջրկան, ներկայացնելով դաշտանը իբրև մի առօրեայ ե-
րեոյթ, որից չէ խուսափում ոչ մի աղջիկ, հասկացնե-
լով նախագնաց երեսոյթները, և համոզելով, որ իրան
իմաց տայ, երբ կը նկատի այդ նշանները:

Այս կերպով միայն մայրը կարող է գրաւել աղջը-
կայ հաւատարմութիւնը, որը նրա ամբողջ բարոյական
կրթութեան հիմքը պէտք է դառնայ:

Ամենից առաջ դաշտանի մօտենալու ու բացուելու
ժամանակ հանգստութիւն է պահանջւում: Աղջիկը պէտք
է թողնի իր ծանր աշխատանքները, ոչ կալսել, ոչ ծանր
քան վերցնել, ոչ խմոր հունցել, ոչ ծծում հարել, ոչ
կուժ գնել ուսին և այլն: Քաղաքացուհին աւելի ևս
զգոյշ պէտք է լինի: Պէտք է հասկանալ, որ այդ մի-
ջոցին ամեն տեսակ ճիգ վնասակար է: Շատ կանայք
ու նրբակազմ՝ աղջիկներ ուղղակի անընդունակ են դառ-
նում նոյն իսկ թեթև ֆիզիկական աշխատանքի, այս-
պիսիները, ի հարկէ, պէտք է պառկած մնան մի կամ
երկու օր: Կանգնած գիրը նոյնպէս վնասակար է, ո-
րովհետեւ արիւնը աւելի է հաւաքւում ներքին մասե-
րում և դրանից առաջանում է աւելի առատ արիւնհո-
սութիւն ու ցաւեր:

Բանուոր դասակարգի աղջիկը ցաւակցաբար յա-
ճախ անկարող է լինում հանգիստ մնալու, չարաչար
աշխատանքը հալածում է նրան նոյն իսկ դաշտանային
օրերը, բայց ազատ չէ նոյնպէս և քաղաքացի ունեւոր
տան օրիորդը, միայն այսաեղ բալերն, երեկոյիմներն
ու խնձորքներն են իրանց անքուն գիշերներով, դաշ-
նամուր ու ուսումն իրանց նստակեաց ժամերով, որ ան-
կարելի են դարձնում առողջապահական պատուերների
գործադրումն:

Ով կարող է, պէտք է զգուշանայ շատ ման դա-

լուց, սանդուխներ բարձրանալուց, նոյնպէս այն ամեն բանից, ինչ կարող է ցնցումներ առաջացնել (օր. սայշով, կառուզ, նոյն իսկ երկաթուզով ճանապարհ գնալը): Կար անող աղջիկը չը պէտք է ոտով պտըտի կարի մերենան.ամեն տեսակ մարմարազութիւն պէտք է դադարեցուի մի քանի օրով, ինչպէս և ոտքեր բարձրանալը, պարը:

Եթէ բանուոր ազքատը իր տնտեսական գիրքի շնորհով սահմանած է դաշտանի: միջոցին ևս բանել, հարուստ ընտանիքի օրինորդը կարող պէտք է լինի առև սուայ մէջ մի քանի օր «Հանգստանալ» հասարակական կեանքից: Թող մայրերը, որոնք անշուշտ տուժել են օրիորդ ժամանակ վարած անզգով կեանքից, յետ պահեն իրանց աղջիկներին անսանձ զուարծասիրութեան փորձանքներից:

Իսկ փորձանքները անթիւ են:

Սեղմած իրանը, որը արդելում է, ինչպէս տեսանը, արեան կանոնաւոր շրջանառութիւնը կոնքի մէջ, սրտի արագ բաբախումն պարի ազդեցութեան ներքոյ, օդի ապականութիւնը, որը ծանրանում է աղջկայ կրծքին, որովհետեւ այդպիսի օդի մէջ արիւնը անկարող է լինում մաքրուել, աւելացրէք սրանց սեռային զգացմունքների որոշ շափով գարթնելը շնորհիւ տղամարդու հետ հպուելուն, երեակայութեան վառումն, յետոյ մըրսելու վտանգը պարից, պաղ օշարակներից ու պաղպաղակից, որոնք պէտք է հովացնեն յուզմունքից տաքացած ու բրտնած մարմինը, մանաւանդ գեղիօլուէ ունեցողներինը, երբ մերկացրած ուսերն ամեն բռպէ սառում ու ջերմանում են,—այս բոլորն ի նկատի ունեցէք և դուք կը հասկանաք, թէ որ աստիճան այսպիսի կենցազը կորսարեր կարող է լինել աղջկայ համար դաշտանային կամ նախադաշտանային շրջանում:

Հոգեկան դրութիւնը նոյնպէս պէտք է ուշադրութեան առնուի, քանի որ աղջկայ ամբողջ ներվային սիստեմը որոշ գրգռման մէջ է: Այս պատճառով պէտք

է աղաս պահել աղջկան վատ նորութիւններից, վախից, վշտից, հոգաերից և առհասարակ ամեն տեսակ հոգեկան յոյզերից: Աղջիկը ինքը պէտք է խուսափի այն ամեն բանից, ինչ որ կարող է վրդովել նրա խաղաղ հոգեկան տրամադրութիւնը, օրինակ. յուզիչ բոմանների ընթերցումից, թատրոն յաճախելուց և այլն:

Ի՞նչ գեր է խաղում մրսելը:

Մրսելը կարող է մեծ վտանգներ հասցնել դաշտանաւոր աղջկան ամսականի ժամանակ, քանի որ մըրսելիս դրսի (մաշկի) արիւնը լցւում է ներսի գործարանները:

Նախընթաց գիխում յիշառակած լողացումներն ու ջրով շփումները պէտք է թողնել: Աղջիկը դաշտանը վերջացնելուց յետոյ միայն պէտք է մաքրող վաննա ընդունի:

Հետեւոքար դաշտանի միջոցին աղջիկը պէտք է գործ ածի մեր յիշած վարտիկը և փակ իւպկան:

Ծի սխալ ու վտանգաւոր համոզնունք է բուն գրել ժողովրդի մէջ, թէ աղջիկը չը պէտք է փոխի սպիտակեղէնը, քանի գեռ արիւնը չի կանգնել:

Ընդհակառակը, դաշտանաւոր աղջիկը կամ կինը պէտք է անպատճառ ամեն օր (նոյն խսկ օրը մի երկու անգամ) գաղջ ջրով, կամ քօրակաթթւուտի 20/0 լուծուածքով լուանան արտաքին սեռական մասերը: Ծարբութիւնից միայն օգուտ կարող է առաջ գալ և երբէք վնաս:

Դաշտանաւոր աղջիկն ու կինը իրանց սպիտակեղէնները արեան ապականութիւնից պաշտպանները համար, գործ են ածում առանձին ձեւի կապեր:

Կապերի ձեւերը շատ տարբեր են լինում, նրանց նպատակն է ծծել-իրանց մէջ պահել հոսող արիւնը: Այդ նպատակով նրա մէջ գրւում է բամբակ, ապունդ և այլն:

Այդ լաւ է, բայց ցաւակցաբար այդ բարձիկը չեն

փոխում դաշտանահոսման ամբողջ ընթացքում։ Այս նոյն պէս մի մեծ սխալ է, որովհետև բարձիկի մէջ ներս ծծուած արիւնը մնալով փտռում է ու գարշելի հօտ արձակում։ Բարձիկը պիտի ամեն օր փոխել։ Քաղաքներում վաճառւում են պատրաստի կապեր, բայց ամեն աղջիկ կարող է ինքը պատրաստել աւելի էժան կերպով։

Քանի որ դաշտանի միջոցին աղջկայ մարտութեան զործարանները խանգարուում են, պէտք է դգոյշ լինել ուտելու մէջ։ Երբէք չը պէտք է չափազանց ծանրաբեռնել ստամոքսը, այլ պիտի քիչ քիչ ուտել և միայն դիւրամարս կերակուրներ։ Թթու, իւզալի և շատ բաղցր ուտելեղէններից պէտք է ժուժկալ պահի իրան—դաշտան ունեցողի։ Հացեղէնը (հաց, բրինձ և այլն) պէտք է քիչ ուտել, լաւ է գործ ածել կանաչեղէն։ Սուրճ, մուգ թէյ չը պիտի խմել, թոյլ է տրւում բաց թէյ, ջրով կարմիր գինի, քիչ գարեջուր, լիմոնադ և այլն։ Թեթեւ փորլուծութիւնը կամ կապութիւնը առանձին նշանակութիւն չունեն, իսկ եթէ աւելի լուրջ խանգարումն կայ, պէտք է բժշկի դիմել։

Ահա այն զգուշութիւնները, որ պէտք է նկատի ունենալ կանոնաւոր դաշտանի միջոցին։

Ցաւակցաբար աղջկայ լուսինը յաճախ անկանոնութիւններ ունի, —սրանց մասին պէտք է մի բանի խօսք տսել։

Դաշտանի անկանոնութիւնները երեք տեսակ կարող են լինել.

1. Նա ժամանակից առաջ կամ ուշ է յայտնւում։

2. Արիւնհոսութիւնը չափազանց սակաւ կամ յորդ է լինում։

և 3. Այդ միջոցին կողմնակի անախորժ երեւոյթներ են տեղի ունենում։

1. Դաշտանաւորման սկզբներում յաճախ պատահում է, որ ինչպէս ասել ենք, ամսականի բացուելը

ամիս մօտենում է, կամ հեռանում օրինակ, փոխանակ 28 օրը, երեւում է 26 օրը, նոյն իսկ 25—24—22 օրը մի անգամ, կամ լնդհակառակը 30—40 օրը:

Այս անկանոնութիւնը սակայն մի քիչ յետոյ ուղղվում է և դաշտանը այտնի յաջորդականութիւն է ստանում: այնպէս որ նոր դաշտանաւորուած աղջկը շատ չը պիտի վրդովուի դրանից, թէեւ այնուամենայնիւ պիտի յայտնի մօրը, որը որոշ խորհուրդներ կը տայ նրան:

Բայց եթէ այդ անախորժ երեւոյթը կրկնուում է մի քանի ամիս շարունակ, պիտի բժշկի դիմել: Մի միջոց միայն թոյլ է տրւում աղջկան գործածել դաշտանի ուշանալու դէմ: այդ տեղի տաք վաննան է, որի մէջ կարելի է մանանելի խառնել, որպէս զի արիւնը քաշուի ներքեւի մասերը և այդպիսով գուցէ արիւնհութիւն բացուի:

2. Արիւնհոսութիւնը երբեմն կամ շատ սակաւ է լինում ու տեւում է մէկ օր, կամ առատ սկսւում է ու յանկարծ դադարում, կամ թէ չէ առատ է լինում ու տեւում 5—6 և աւելի օր:

Այս երեւոյթներից առեն մէկը իր որոշ պատճառներ ունի, որոնց մասին անկարող ենք երկար խօսել այստեղ: Կասենք միայն, որ ծանր դէպքերում պիտի անպատճառ բժշկի դիմել, որովհետեւ նա միայն կարող է հասկանալ երեւոյթի պատճառը ու դարման տաներ:

Ընդհանուր առողջական դրութիւնը (արնատութիւն, ջերմային հիւանդութիւններ, սրտի ախտ, թոքախտ և այլն), այս ձեւի անկանոնութիւնների գլխաւոր պատճառներն են: Սակայն կարող են տեղի ունենալ նաև տեղային պատճառներ: Օրինակ, կարող է պատահել, որ դաշտանի օրերը աղջկը ամսականի սաստիկ ցաւեր և բոլոր երեւոյթներն ունի, և սպասում է ամեն ըսպէ արեան երեւալու, բայց արիւն չը կայ: Այդ դէպքե-

բում երբեմն զննումը ցոյց է տալիս, որ արեան ճանապարհը փակուած է ու սա հաւաքուած է մնում՝ զաւակատան մէջ։ Մի աննշան ապերացիա է հարկաւոր, և աղջիկը փրկուած է։

Մեր մէջ այդ գէպը բում բժշկին դիմելը ամօթ է համարում և աղջիկները երբեմն կեանքով տուժում են այդ անտեղի ամօթխածութեան համար։ Զարմանալու բան է, որ մի պղուկի կամ գլխացաւի համար հարկ հն համարում բժշկի գոները քարշ գալ, իսկ դաշտանի կենսական պրոցեսի խանգարումները, որոնք ահագին ազդեցութիւն ունեն ապագայ կնոջ կեանքի վրայ, անուշագիր են թողնուում։

3. Դաշտանին ուղեկցող ամենատանջալից երևոյթը ցանի է։

Դաշտանային ցաւերը առաջ են գալիս այն հանգամանքից, որ զաւակատան անցը նեղ է լինում և արխնը հուաքուած է մնում՝ զաւակատան մէջ։ Ցաւերը երեւում են կամ մի քանի օր ամսականից առաջ, իամ մի քանի ժամ, և ընդհանրապէս դադարում են, երբ բացւում է արխնը։ Բայց կան գէպը եր, որ ցաւերը տեսում են մինչեւ արխնհոսութեան վերջանալը։

Թեթեւ ցաւերը համարեա առօրեայ երեւոյթ են դաշտանաւորման սկզբներում, մի քանի ամսից յետոյ նրանք համարեա թէ բոլորովին դադարում են ու ամսականը առանց ցաւերի է լինում։ Առկայն սակաւաթիւ չեն և սաստիկ ցաւալից դաշտանները։ Ցաւերը կարող են այնքան սաստիկ լինել, որ խեղճ աղջիկը ճիշեր է արձակում, թաւալ է տալիս անկողնու մէջ և առհասարակ սաստիկ անհանգստութեան նշաններ է ցոյց տալիս։ Այս ցաւերը սահմանափակուած չեն մնում կոնքի մէջ, այլ տարածւում են մէջը, կոնակը, աճուկները, աղդրերը, նոյնիսկ ծոծրակը, թեւերը, ամբողջ գլուխը, —մի խօսքով ամբողջ մարմնի մէջ։

Աղջիկները սարսափով են սպասում դաշտանին

ու մի տեսակ յուսահատ դրութեան մէջ են գտնւում։
ի՞նչ անելը

Մեր ամենից գլխաւոր խորհուրդն այն կը լինի,
որ ծնողները չը հաւատան զանազան պառաւների ու
տատմայրերի վասակար և յաճախ նոյն իսկ մահացնող
առաջարկութիւններին։

Իժշկին գիմեցէք։ Իսկ բժշկի բացակայութեան մի-
ջոցին գործ գրեք հետևեալ անվաս միջոցները.

Հանդարտ պառկեցրէք աղջկան անկողնի մէջ, թե-
թեւ լուծողական տուէք (լուծողական ձէթ) կամ յօգնա-
շինեցէք, և տուէք բրտնեցնող տաք խմիչքներ, օր. մօ-
րու (մալիհա-ի) թէյ, փորի վրայ տաքացրած շորեր գը-
րէք, կամ տաքացնող փաթեթ շինէք կամ թեթեւ կեր-
պով մերսէք փորը (եթէ այդ դուր է գալիս հիւանդին)։
Կարելի է փորձել նոյնպէս և տաքացրած աղ ուրներ,
խոտեր, պարկի մէջ լցրած թեփ, աղ և այլն։

Մենք երկար կանգ առանք դաշտանի, իբրև հա-
սունութեան առաջին և գլխաւոր (թէւ ոչ միակ) երե-
ւոյթների վրայ, որը այնքան մեծ ազդեցութիւն ունի
օրիորդի ֆիզիկական ու հոգեկան կազմի վրայ։

Մենք աշխատեցինք ակներև դարձնել այն գիտ-
նական իրողութիւնը, Փակտը, որ ամսականի բացուելը
պատանուհու կեանքի ամենախոշոր երևոյթներից մէկն
է և հետեաբար նա ծնողներից առանձին ուշ ու հոգս է
պահանջում։

Դաշտանային շրջանում առաջացած վեսաները, կա-
նանց հիւանդութիւնների հիմնական սկզբնապատճառ-
ներն են, ասում են բժիշկները։ Քանի քանի կանաքը
փրկուած կը լինէին անվերջ ու յաճախ անբուժելի տան-
ջանքներից, եթէ մեղանչած չը լինէին դաշտանի առող-
ջապահութեան դէմ!

Իր տան մէջ հայ աղքատ կինը անխոնջ բանուոր,
անլեզու գրաստ է։ Նա չունի գագար դաշտանային

շրջանի մէջ ևս, և «օֆ» ու «ախ» անելով, շարժում է ցաւոտ սրունկները, կռացնում է իր կոտրատուող մէջքը, ուր յետ չը մնայ գործից»:

Մինչև այսօր դեռ չի մտել այս խաւար մթնոլորդի մէջ գաշտանաւոր աղջկան ու կնոջ խնայելու գիտակցութիւնը: Գիւղացի տղամարդը, իրան ինքնակալ տէր համարելով ընտանիքի մէջ, չը գիտէ կարեկցել տան կնոջ գիւղիկական ցաւերին, ինչպէս և հոգեկան վշտերին: Իր տգիտութեան մէջ, նա ընդունակ չէ հասկանալու, որ կինը մի մեծ, դժուարին, երբեմն էլ կորցւաքեր (իր համար, ի հարկէ) դեւ ունի կատարելուառողջ սերունդ արտադրելու, որի համար պիտի անպայման կերպով առողջ պահպանուեն նրա սեռական գործարանները:

Այսպէս է գիւղական ազգաբնակութեան մէջ:

Քաղաքներում նոյնն է, եթէ ոչ աւելի վատ:

Եւ, յիրաւի, այստեղ կինը սկսել է ինքնուրոյն աշխատանք որոնել, սկսել է ձգտել տղամարդու հետ մեծ աշխատանքի ասպարէզում:

Կնոջ աշխատանքը այժմ արդէն բաւականին բազմատեսակ է. աղախնու ու կար անողի պարապմունքից սկսած մինչև վարժուհու ու գաստիարակչուհու գործը:

Առհասարակ աշխատանքները կարելի է երկու կարգի բաժանել. — այնպիսիներ, որոնք կաշկանդում են մարդուս ազատութիւնը ամբողջ օրը կամ օրուայ մի մասը, և նրանք, որոնց կատարելը կամ չը կատարելը մարդու իր սեփական կամքից է կախուած: Այս վերջնները կոչւում են ազատ պրօֆեսիաներ:

Տիրալի ու աննախանձելի է առաջին կարգի աշխատանք յանձն առնող աղջիկների գրութիւնը:

Սրանք են. աղախինները, արհեստանոցներում (տարագի) աշխատողները, խանութներում ծառայողները, լուացարարները, հացթուխները, յետոյ գայեակները, գաստիարակչուհիները, վարժուհիները և ուրիշները:

Ամբողջ օրերով, երբեմն և գիշերուայ մի մասը,

օրուայ բոլոր եղանակներին, վարձուած աղջիկը պիտի ֆիզիկական աշխատանքի մէջ լինի, կամ ժամերով կանգնած ու շարժողութեան մէջ, կամ նստած, իրանը կորացրած, փորն ու կուրծքը սեղմած հաւաքելով՝ սպառելու համար իր ոյժերը, միշտ երկիւղի ու սպառնալիքի տակ, որ գործը, նրան մի կտոր հաց տուող գործը, չը գնայ նրա ձեռից եւ արիւնհոսութեան մէջ ևս նա ոչինչով չի փոխում իր կենցաղը, և ի հարկէ տուժում է իր ամերողջ կեանքում։ Դրանք են, որ յետոյ, երբ ցաւը կը յաղթի, բժշկի շէմքերը մաշողները, դրանք են վազաժամ թառամողները ու ծերացողները... Վարձ տուողը գործ է պահանջում, ինչ փոյթ նրան, թէ այդ գործ կատարողը երկաթէ մեքենայ չէ, այլ մի կին, որը իր ամսականի միջոցին անընդունակ է դառնում ֆիզիկական ծանր աշխատանք կատարելու։

Աշխատանքի մի ազբիւր գտնելը այնչափ է գժուարացել, որ մի օրեւէ գործ գտած աղջիկը, պարապմունքը չը կորցնելու համար, չի գաղարում գործելուց նոյն իսկ գաշտանի օրերը։ Աշխատանք տուողը ինքը պիտի այնքան մարդասիրութիւն ու գութ ունենայ սրտում, որ այդ օրերին թեթևացնի աղջկայ աշխատանքը, հանգիստ տայ նրան։ Մինչև այն ցանկալի ժամանակի համեմ, երբ օրէնսդրութիւնը ստիպողական կը գարձնի կնոջ գագարը ամսականի օրերում, ունեոր հասարակութիւնը ինքնաբերաբեր պիտի անի այդ։ Թող փարթամ անբան տիկնայք, դիտելով իրանց գունատուած, ու յոգնած ու ցաւից պոօչները կծող աղախնի դէմքը յիշեն, որ սա էլ իրանց նման մի կին է։

Վ. ԱՐԾՐՈՒՆԻ

ՀԱՅ-ՎՐԱՅԱԿԱՆ ՅԱՐԱՔԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ *

(սր. Կալամիի յօդուածները «ՑՅ. Պաւրց.»-ի թերթում)

Որտեղ չը կայ հաւասարութիւն, այնտեղ չի կարող լինել
և միութիւնն Հայը ամենափելօք և ամենալաւն է համարում իր
ազգը և ներելի է գտնում, եթէ նա հպատակեցնի ուրիշներին
և հայացնի։ Վրացիներս էլ ունենք այդպիսի ցանկութիւն,
բայց թաղած սրտի խորքում. և եթէ ի նկատի չենք առնի
վրաց լեզուն, որը գործում է հին պատմութեան թողած իներ-
դիալով, ինքն ըստ ինքեան, չենք դիպչի այլ ազգութիւններին։
մենք այնքան խրանած ենք և վախիեցած, որ այդքան համար-
ձակութիւն չենք կարող ցոյց տալ։ Հայերը փոխադարձաբար
շատ համարձակ են (չափուց դուրս համարձակ, որպէս զի ուրիշ
անուն չը տանք) և անչափ տարուած են մնծ Արմենիայի ի-
դէալով **): Ով շատ է մտածում իր մասին, նա պակաս չափով
է յարգում ուրիշներին։ Այն ովուեմիկայի ժամանակ, որ ուսէին
հայ լրացիները ազգութեան մասին. «Մշակը գրում էր՝ «Ի՞նչ
պակասութիւններ էլ ունենան վրացիք, մեզ—հայերիս հետ հա-
մեմատած, այսուամենայնիւ, էլի մի բանում վրացիք համե-
մատաբար բարձր են կանգնած մեզանից։ Ուզիկ է, վրացիք
հայերի չափ հարուստ պատմական անցեալ չունեն, մեր հին
գրականութեան նման հարուստ գրականութիւն չունեն, մեր
նոր լեզուի նման ընդունող, յառաջազիմող, ժամանակակից,
լեզու չունեն, չունեն ազգային անկախ եկեղեցից, բայց միւս
կողմից ազգային քնքնաճանաչութիւնը նրանց մէջ աւելի է
զարգացած... նրանք պահպանել են մայրենի լեզու, նրանք ոչ

*) Ցես. „Մաւրճ“ № 11.

**) Այստեղ գուցէ և այլ տեղ մենք չափից դուրս ենք մեղադրում
հայերին. առ կարող է պատահել, քանի որ օգուում ենք միմիայն վրա-
ցական աղբիւներից։

միայն իրար մէջ միշտ խօսում են վրացերէն, այլ և նրանց մէջ ապրող հայերին էլ բարոյապէս ստիպեցին վրացերէն լեզուով խօսելը («Դրօէքա» 80 թ. № 217):

Այս զեռ ոչինչ, եթէ պակասում է մէկը, գոնէ ունենք միւսը: 1877 թուին ոռու-թուրքական պատերազմի ժամանակ «Քց. ԵԵԾ.»-ում տպուեց Վենիելովի մի նամակը, որի մէջ հեղինակը խորհուրդ է տալիս Ռուսաստանին, թէ լաւ կը լինէր եթէ Ռուսաստանին Կարսի շրջանի փոխարէն՝ միացնուէր Բաթումի շրջանը, քանի որ վերջինում ապրում են վրացիք, իսկ առաջնում հայերը, որոնք համակրելի ժողովուրդ չեն: Կովկասում հրէաների գեր են խաղում և նրանց ուժեղանալը վեասաբեր կը լինի: Սրան «Թիֆլիսուի վեստնիկը պատասխանեց, որ աւելի լաւ կը լինի միայնել հայերին: «Հայ ժողովուրդը աշխատասէր է, ծանր խելքի տէր, Կովկասի այլ ժողովուրդների մէջ նաէ հնուց մշակ և արհեստաւոր: Ռուսիայի հետ միանալուց յետոյ հայ ժողովուրդը երբէք չի նեղացրել կառավարութան, ոչ իր քաղաքական անհաւատարմութեամբ, ոչ իր բարեկեցութեան մասին հոգացողութեամբ և ոչ խնդիրներով, որ միլիոններ նուիրուի գանձարանից»:

Ս. Մեսիխն բերում է այս խօսքերը և ասում է. «Միայն մտքով կոյըը չի ըմբռնի, որ յարգելի «Թիֆլիսի լրաբերը» այս խօսքերը չպրտել է վրաց հասցէին...»

Ընդհանրապէս այս վերջին ժամանակներս մեր գլուսաւորուած «հայերը մի տարօրինակ սովորութեան և ռսխտեմի գիւմեցին իրանց ժողովուրդը բարձրացնելու նպատակով: Այս սիստեմը կայանում է նրանում, որ ամենն ինչ, ինչ որ վրացական է, նուաստացնեն: Այս միջոցով, նրանք մտածում են բարձրացնել իրանց ժողովուրդը, իրանց ցանկութիւնների իրազործումը» (Դր. 1877 թ. № 107), բայց ճշմարիտ է նկատում հեղինակը, որ «ուրիշների նուաստացումը, ոչ ոքիս չի բարձրացնի»:

Այս կողմից ամենից հետաքրիր է Փրանսիական լրագիր «Թան»ի աշխատակից Կուտուլի պատմութիւնը: Այս գէսպին Ս. Մեսիխն նուիրում է մի ընդարձակ յօդուած («Դրօէքա» 1877 թ. № 96), որի հետ էլ աւելի մանրամաս կը ծանօթացնենք ընթերցողներին:

Սրանից երկու շարաթ առաջ Թիֆլիսումն էր զտնւում «Թան»ի աշխատակից Կուտուլի պատմութիւնը, որի հետ էին լինում միշտ մի քանի հայ երիտասարդներ, թրե են տալիս նրան այս ու այն կողմ, գիւղերում և այլ տեղեր հիւրասիրում, ամենքն էլ զարմացած էին մնացել թէ՝ ինչու են նեղութեան ու ծախսի մէջ

ընկնում այս երիտասարդները. «Ոչ ոք չէր կարողանում հասկանալ, քանի որ մեր թիֆլիսեցի հայերի կողմից (թէկուզ նրանք երիտասարդ և լուսաւորուած լինէին), ոչ ոք չէր տեսել անհաշիւ վարժունք ու ծախս և ոչ էլ պլատօնական բարեկամութիւն և սէրժ. Հիմա պարզուեց որ՝ «Կուտուլի գլխով նրա համար էին պատոյա գալիս, որ ինչ ուղենային և ինչպէս ուղենային, այսպէս խօսէին նրա հետ և նա էլ նրանց աշքով նայէր ամեն ինչիւ և ամենըին»:

Հեղինակը մէջ է բերում կտորներ կուտուլի թղթակցութիւններից, կովկասի մէջ, ասում է նա, այսօր 700 հազար վրացի և 600 հազար հայ կայ, բայց հայերը դարու վերջում աւելի շատ կը լինեն, քանի որ նրանք զարմանալի կերպով են բազմանում. միևնոյն ժամանակ հայերը պահպանում են իրանց ազգային առանձնայատկութիւնները և իրացնում են երոպական կուլտուրա, այն ինչ վրացիք մնում են արևելեան (ասիական) ժողովուրդ. հայերը մեծ մտաւոր ազգեցութիւն ունեն կովկասեան մրւս ազգերի վրայ. Հայ առածը ասում է, վրացիք աչքում ունեն խելք, խոկ հայերը ուղեղում կովկասեան ազգերի մէջ հայերը ամենքից կենդանի են: Հայերից մէկը ասել է կուտուլին, հայ լրագրի մէջ յաճախ կը կարդաք թէ՝ այս ինչ հայը հարիւր կամ երկու հարիւր հազար նուիրեց ուսումնարաններին. հայերը ունեն բազմաթիւ գեներալներ: Յետոյ կուտուլին տարել են հայ Շիլդա զիւզը, այստեղայի մի քանի կանալք զիւր չեն եկել կուտուլին, բայց հայերը ասել են՝ որ նրանք վրացունիք են. հայերը ասել են կուտուլին նաև որ կովկասի ապազան ուուսին և հային է պատկանում... Մենք հայերս ասում ենք, «Ուստեղ հայ, այստեղ կաց» և սրան աւելացնում. «Ո՞վ պիտի աշխատի, ես ու զու, ով ունի ուտելու իրաւունքը, ես և զու»: «Ինչ լաւ խօսքեր են, ասում է Ս. Մեսիխ, բայց դժբախտութիւնը այն է, որ հայերը ուրիշ բոլոր ժողովուրդներից պակաս իրաւունք ունեն, որ այսպիսի բարեկիրթ և սօցիալական միագունք խօսքեր ասեն... իզո՞ւր հայ չեն ուտեցըն կուտուլին հայերը: Մենք իրաւունք ունեինք, երբ այս նկատողութեան սկզբում ասացինք՝ որ՝ «հայերի անհաշիւ փաղաքանքին և ծախքին սովոր չենք»:

Փրանսիական լրագրի աշխատակից պ. կուտուլի պատմութիւնը ևս ասաւել բարեկացրեց վրացիներին: Հաւատացած ենք, որ մի քանի հայի վարժունքն կուտուլի վերաբերմամբ միշտ նախատառած կը լինի հասկացող հայերի կողմից: Ռերիշների: առանց պատճառի անպատռումն և նուաստանումն և միևնոյն ժամանակ սեփական անձի փառաբանումը՝ թէ մենք

շատ ենք, իսկ վրացիները քիչ մենք հայերէն ենք խօսում, իսկ վրացիները կամ հայերէն և կամ ոռւսերէն, մենք գեղեղիկ ենք, վրացիները՝ տպեղ, մենք ընդունակ ենք, իսկ վրացիները բոլորովին անընդունակ են, առօք բոլորը այնպիսի խօսքեր են և վարժունքներ, որոնք վայել են երեխային և մինույն ժամանակ ծիծաղելի են և չենք կարծում, որ իրանք հայերը նկատելիս չեն այդ վարժունքի անպետքութիւնը, անօգուտ և անարդար լինելը:

Բայց եթէ մի կողմը կարող է անցնել ճշմարտութեան սահմանից և գիտչել ուրիշի անձնաւորութեան, միւս կողմի համար էլ հնարաւոր է զերծ չը մնալ նոյնանման սխալներից: Խրաւունքներ, մերժուած մասնաւոր փոխադարձ յարաբերութիւնների մէջ, այսօր մերժուած ազգերի կեանքի մէջ: Եթէ մի քանի հայի համար իբր թէ ձեռնաու է վրացիների անունը կոտրել, կան այսպիսի վրացիներ էլ, որոնց դիւր է գալիս հայերին հայոյել և նախատել, մենք ուրախանում ենք, եթէ մէկը անպատւում է հային, կարծեմ ոչինչ չենք լսի և չենք կարգայ այնպիսի հեապքքութեամբ, ինչպէս հայերի վախկոտութիւնը, խորտմանկութիւնը և անամթութիւնը, կարծում ենք թէ ճշմարտութիւնը միայն հայերին պախարակելու մէջն է: Բարկացած «Դրոէբա» ն (1877 թ. № 110) նորից վերադառնում է կուտուլի պատմութեան «Հայերի մասին, բայց ոչ կուտուլի լեզուով վերագրով ֆելիքտօնի մէջ:

«Եերջերս հայերի և հայոց հարցի մասին խօսելը «մօգա» դարձաւ թիվիխում», զրում է յօդուածի հեղինակը... «ամենքն էլ հայերի և հայոց շարժման մասին են խօսում, բայց եթէ ուշի ուշով հարցնելու լինիք թէ՝ ինչի մէջ է կայանում այդ անհանգստութիւնը, դրա պատասխանը չէք ստանայ ոչ հայերից և ոչ ուրիշից»: Մրտնից յետոյ հեղինակը պատմում է միիրժ, վեգումա լրադրի մէջ լոյս տեսած մի յօդուածի բովսնդակութիւնը, որտեղ պախարակուած են հայերը, ըստ այդ յօդուածի հայերը անտանելի ժողովուրդ են, քանատիկոս և առանձնացած, նրանց վերածնութիւնը անհնարի է, չունեն ապագայ, հայերի ոչ գրողներն են լւա և ոչ էլ պատմութեան մէջ ունեն մի բան:

Դժուար չէ հասկանալ պ. X-ի ֆելիքտօնը—«Ծաղրեցիք, ուրախացաք, բայց ներողութիւն, վստը ոչ թէ մենք ենք եղած, այլ տպեղ և կորած ազգը դուք ինքներդ էք եղել»:

Մենք հասկանում ենք, «Դրոէբայցի հոգերանութիւնը. երբ մէկը անպատւում է քեզ, դու էլ փոխադարձաբար սկսում ես հայհոյել «թէպէտ նոյն իսկ կարող ես համոզուած լինիլ, որ հայհոյանքներով և այն էլ անարդար և անհիմն, ոչ կարող է մի

բան շինուել և ոչ էլ փչանարձ։ Հասկանում ենք այսպիսի հոգեթանութիւն, բայց միևնույն ժամանակ չենք կարող պ. Տ. ի պատասխանատու յօդուածին չը տալ նրա ճշմարիտ անունը. — նա էլ նոյնպէս երեխայական վարժունք է նման այն հայերի վարժունքի, որոնք վրացիներին պախարակելով կամենում են իրանց աւերակ քաղաքների շինելը և գուցէ և Հայաստանի վերականգնումը։

«Դրոէբայցի 1880 թուականի № 172-ում արտատպած է հայոց լրագիր «Մեղուարից մի լուր Աճարայից, զրած այն մասին, որ այստեղ ապրում են մահմեգականացած վրացիք, սոքա առաջ վրացի են եղած, բայց յետոյ կորցրել են հաւատ և թուրքացիել են. «կեղուն էլի վրացերէն է և խօսում են այդ լիզուով՝ բայց վրացիներին ինչ, սրանք վրացիներին շատ են ատում, ատում են իրենց ցաւ։ «Դրոէբան» չի հաւատում հայ թղթակցի խօսքերին և առում է՝ «վերոիշեալ թղթակցութեան զրելու ոճից երեսում է՝ որ նա հայի ձեռքով է զրուած»։

Բայց եթէ երեսում է որ «Մեղուարի թղթակցութիւնը հայի ձեռքովն է զրած «Դրոէբա»-ի նկատողութիւն էլ պարզ է՝ որ անպայման վրացու զրչին է պատկանում։

Հայոց «Մշակուը յաճախ զրել է անկեղծ և արդարացի յօդուածներ հայ-վրացական յարաբերութիւնների մասին, բայց նոյն «Մշակուը երբեմն իրան թոյլ է տուել տարօրինակ մաքեր, ինչպէս վերն էլ տեսան ընթերցողները, երբ Թիֆլիսում հիմնում էր վրաց ազնուականների բանկը, «Մշակուը տպեց նաև մակարակ բանկի»։

«Դրոէբա»ն առաջնորդող յօդուածում (Ը) «ինչու է կոկսու մ Մշակը վերնագրով» պատասխանեց այդ յօդուածին։ Հայոց «Մշակ» լրագրում մի անգլուխ և իզուր ծամուծուած յօդուած կարգացի Թիֆլիսի աղնուականների բանկի մասին, զրում է հեղինակը, կարգացի և ինձ ու ինձ հարց տուի թէ ինչու է զրել սրա զրողը այս յօդուածը և կամ յարգելի խմբագրութիւնը ինչ նպատակով է տապել այն եթէ ես յարգելիս չը լինէի «Մշակ»ի խմբագրութիւնը, շատ բան կը մտածէի», բայց քանի որ զիտեմ՝ որ «Մշակ»ի խմբագրութիւնը արժանի է յարգանքի, այս պատճառով իմ մուածմունքների հոսանքի ուղղութիւնը փոխսեցի, հեռու քչելով ինձանից սև մտքեր»։ Սյասիսի ծաղրական ոճով է զրուած ամբողջ յօդուածը։ Հեղինակը մեղադրում է հայոց լրագրին, որ նա ստեր է զրում, իբր թէ ապագայ բանկը միայն ազնուականների պարտքը կը տայ և բանկը կունենայ պաշտօնական գնահատողներ։ «Մշակ»ը կրկնում է՝ մեր իշխան աղնուականները իրանց անհաշիւ տնտեսութեամբ, իրանց շուայլու-

թեամբ մինչև այնտեղ հասցրին, որ ինչ ունէին բոլորը զրաւ գրեցին, հիմա նրանց դրութիւնը վերին աստիճանի ցաւալի է: Գուցէ և ուղիղ լինի այս բոլորը, բայց յարգելի «Մշակ» քո մէջ չենք նկատում այդպիսի մի գաւակցութիւն: Դու այնպէս ես խօսում, կարծես ուրախանալիս լինեա...» («Դր.» 1874 թ. 13 սեպտ.):

Նոյն տեսակ ծաղրական նամակ ենք կարդում «Դրօէբայ» ի 1877 թուականի № 44 (գրել է մի իմէրէթցի՞ Ա-սի) ռմշակի խմբագիր Արծրունին և զել է Քութայիսում, չի հաւանալ Քութայիսի ձանապարհը, Քութայիսի կեղոստութիւնը և ասում է. «Են տեղ, որտեղ ապրում են իմերեթցիք և հրէաներ, ինչ կարող ենք սպասել կեղտոտութիւնից աւել»: «Ես խօսքերը» չարունակում է պ. Ա. և մենք անպատճախան չենք թողնի, եթէ համոզուած չը լինենք նրա անկեղծութեան մէջ եւ նրա այս անկեղծութիւնը հաստատուամ է նրանով որ իր ազգի վերաբերմամբ էլ անկեղծօրէն խոստովանում է. «Ես ամաչում եմ իմ հայութիւնից... չեմ սիրում հայութիւն... այսպէս է գանգատուամ պ. Խմբագիրը և մեզ էլ նրա բարեկամեցողներին ոչինչ չի միտուած այլ եւս ասելու, ըստ հասաւնդ սովորութեան: «Մշակին» և նրա խմբագրին վայ, վայ, վայ, վույ, վույ, վույ... հօ—հոհա:

Այս փոքրիկ փաստերը նորից էլ մի անգամ գնդեսիկ կերպով բնորոշում են հայ—վրացիական այսօրուայ յարաբերութիւնները: Ամօթ է այսպիսի թերահաւատութիւն և թշնամական զգացմունքներ տածել դէպի իրար: Միթէ հային պիտի ուրախացնէ վրաց իշխանի կամ ազնուականի աղքատանալը, կամ վրացի մահմետականների այլասնոռումը: Կամ միթէ վրացիք այսպէս պիտի ծաղրեն հայութիւնը և զուրկ պիտի լինեն ամեն տեսակ յարգանքից դէպի նրանց:

Եթէ մեր անհամաձայնութիւնը ունի իր հիմքը, այս բանը երբէք չը պիտի մոռացնի մեզ, թէ ինչ կայ այդ ամհամաձայնութիւնից այն կողմը և երբէք չը պիտի մեռցնի մեր մէջ յարգանք դէպի միմեանց աղքայնական անձնաւորութիւնները: Ոչ «Մշակ», և ոչ հայութիւնը ընդհանրապէս չեն զնալ ընդգէմ վրացինների: Եթէ երբեմն հայ լրագիրը թոյլ է տուել իրան ասելու մի բան հակառակ մեր շահերի, եթէ մի քանի հայ ցանկացել են վրացիններին ուռտել, այդ գեռ եւս չի արտայացտում ոչ «Մշակի» ուղղութիւնը առհասարակ և ոչ ամբողջ հայութեան ձգտումները: Հայ ազգի գոյութիւնը չի նշանակում վրաց ազգի անհնացաւմն: Այս բանը հասկանում են վրացինները և միթէ հայերի մէջ չը կան այնպիսի հասկացող ինտելիգենտ-

ներ, որոնք կարող լինեն հասկանալ նոյն բանը... Ո՞վ է այն վրացին՝ որ չ'ընդդիմանայ այն հային, որը պատրաստուել է արտաքսելու վրացիներին թիվլիսի ինքնավարութիւնից և շնչ պախարակի այն հայի վարժունքը, որ մի տեղ եկեղեցու պատի վրայից կը ջնջէ վրացերէն արձանագրութիւնը և վերան հայերէն կը զրէ «բարձրաշնելու» համար Մեծ Արմենիան։ Բայց միթէ ակտուղից այն է գուրս զալիս, որ մերժենք միմնանց արժանաւորութիւնները և ցանկանալիս ու ուրախանալիս իննենք միմնանց կորստի համար և կամ ծաղրենք իրար...»

Հայրենասիրութիւնը լաւ բան է, բայց ով որ չափից գուրս կը սրէ հայրենասիրական նետը, ինքն էլ նետահար կը լինի, լինի նա հայ, լինի նա վրայի միեւնոյն է, մէկ է պատմութեառ համար։

Եթէ մեր գրականութեան մէջ յաճախ է պատահում, որ անպատուել և ծաղրի է ևնթարկուել հայութիւնը, միւս կողմից կը հսնդիպէք և այն, որ իսկական արմենօֆոքները անգամ, որոնք տեղի և անտեղի յաճախ մեղադրել են հայերին,—երբեմն յարգանքով են յիշում նոյն հայերին և մատնացոյց են անում նրանց թասնկագին առաւելութիւնները ու արժանաւորութիւնները։ Հազիւ կը պատահի որեւ և վրացի գրող ցոյց տայ մեր պակասութիւններն այնպէս, որ իսկոյն մատնացոյց չանէ հայերին ասելով. առա նրանք գուրկ են այդ պակասութիւնից։ Մենք տգէտ ենք, տսում են նրանք, զուրկ ենք միութիւնից, իսկ հայերը չափից գուրս սօլիդար ազգ են։ Մենք անտարբեր ենք դէպի հասարակական ինտերնեները, այն ինչ հայերը շատ են սիրում հասարակական գործը։

Նոյն-իսկ «Իվերեա»-ի մէջ, որ այսօր չափից գուրս բարկուցած է հայերի վրայ և կարծում է որ մեր բոլոր գմբախտութիւնները հայերից են առաջանում, նոյն այդ «Իվերիա»ի մէջ կը կարդաք հետիւեալ խօսքերը. «Հայերից խելք սովորենք»։ Այսօր գժուարութեամբ կը հանդիպէք այնպիսի վրացու, որ ինչքան էլ պախարակելու լինի հային, վերջը գարձեալ չաւելացնի. «Բայց և այնպէս խելացի ժողովուրդ են»։

Ի՞նչով պիտի բացարենք այսպիսի հակասութիւն վրայի գրողների գատողութիւնների մէջ դէպի հայերը, Որ մի կողմից հայերը բոլորովին անպէտք ազգ են, այն ինչ միւս կողմից հաւանելի այնպիսի մի ազգ, որոնց պիտի նմանուենք վրացիք։ Մեր կարծիքով, սրա գլխաւոր պատճառն այն է, որ առաջին տևակի նամակները գրուած են էֆֆեկտի աղջեցութեան տակ, անպատռած ազգութեան ինքնասիրութեան ժամանակ։ Երբ վրացի գրողը դէմ առ դէմ տեսնում է, թէ ինչպէս հայը

ոտնատակ է անում վրացու շահերը, նրա սրտի մէջ զարթնում է զարհուրելի ատելութիւն գէպի հայր և այդ ժամանակ նա ուրանում է; հայր մէջ ամեն տեսակ արժանաւորութիւն Այս կուրութեան ժամանակ նա մոռանում է իր նախկին փորձառութիւնը, մոռանում է այն, ինչ բանի մէջ, որ համոզուած է խոր կերպով, այն է որ իր հարեւան ազգը ծաղրուելու արժանի չէ և իր մէջ ունի շատ այնպիսի յատկութիւններ, որոնք կարող են պատի բերել ամեն մի ազգի:

Մենք կողմնակից չենք հայերին իդէալացնելուն՝ ինքը հայ գրողն էլ լաւ է բնորոշել իր պակասութիւնները, բայց չը պիտի խլենք ազգից նրա լիտերատոր սեփականութիւնները, կրաց գրականութեան մէջ սկզբից նկատուում է յարգանք գէպի հայր, յաճախ այդ յարգանքը չի նկատուում բոլորովին: Ուրիշ ուղղութիւններով, ուրիշ մտքերով և գատողութիւններով ծածկուած, և պահուած էր լինում ինչ որ հեռաւոր խորութեան մէջ, բայց նա մինւնոյն ժամանակ երբեք չէր մնանում և միշտ կրում էր իր մէջ երբեմն գիտակցաբար, իսկ երբեմն անզիտակցաբար հայ վրացական միութեան գաղափարը, այդ գաղափարը, այդ գաղափարի զարգացունն և այսօր նա պատրաստում է այդ միութեան մարմնացունն, քանի որ միտյն փոխազարձ յարգանքն է զոյութիւն տալիս միութեանը:

«Դրօէբա»-ն այնպիսի լրագիր էր, որ չի ենթարկւում ոչ մի կանխարկալ կարծիքի և ուղղակի նայում էր ճշմարտութեան, ինչպէս որ պիտի լինէր նա: «Դրօէբա»-ն մատնացոյց արաւ վրաց-հայկական և ընդհանրապէս կովկասեան ազգութիւնների միութեան անհրաժեշտութեան վրայ, միշտ աչքի առաջ ունէր այդ միութիւնը, բայց սրա հետ միասին չէր փակում աշ-քերը այսօրուայ մեր անհամեաճայնութեան և մրցման դիմաց: Բարկացած հայերի անմիտ և անարդար վարմունքներից, նա բերում էր ինչ որ մարդկանց կարծիքներ թէ՝ հայերը առանց բնաւորութեան և ընկած ժողովուրդնեն, որը չի ունեցել ոչ անցնալ և չի էլ ունենայ տպագայ: Բայց այսպիսի յօդուածները սակաւ են «Դրօէբա»-ի մէջ: Նա աւելի յաճախ յարգանքով էր յիշում հայերին և միշտ դարձնում էր վրաց հասարակութեան ուշադրութիւնը հայերի արժանաւորութիւնների և յառաջադիմութեան վրայ: «Դրօէբա»-ի 1869 թ. № 49-ում առաջնորդող յօ-դուածի մէջ կարդում ենք՝ ճնախ ազգի մի մասը—աւելի ունեւոր—զնում է առաջ, ինչպէս լուսաւորութեան մէջ, այնպէս և կեանքում: Յեաց այս լուսաւորուած մասը ունեցել է ազգեցութիւն ուրիշների վրայ իր վարմունքներով և խօսքերով:

այդպիսով ամբողջ ազգը շարժուել է առաջ. պատմական այս օրէնքը չ'արդարացաւ մեր վերաբերմամբ, ազգը և նրա յառաջադիմութիւնը հիմքիուայ մեր լուսաւորուած հասարակութեան ուշագրութիւնը չի գրաւում: Բոլորովին այլ է հայերի մէջ. լուսաւորուած և ունեւոր հայերը բաց են անում իրանց ծախսով ժողովրդական ուսումնարամներ, արհևստագիտական դպրոցներ և մեծացնում են համալսարանների^ամէջ երիտասարդ մարդկանց թիւը և այդպիսով պատրաստում են հասարակութեան ապագայ պիտանի անդամներ:

1873 թուի № 39 առաջնորդողում Ն. Սկանել (Նիկոլաձէ) բերում է տեղեկութիւններ հայոց ուսումնարամների մասին և ասում է. «Ընթերցողը չը պիտի մոռանայ, որ բոլոր այս ուսումնարանները հիմնել են հայերը իրանց սեփական ջանքով ու աշխատանքով ասանց ուրիշի օգնութեան այն նպատակով, որ պապական լեզուն չը մոռանան, չը կորցնեն իրանց ազդութիւնը և գեղեցկացնեն... Այնպէս միք մոռանայ. որ հայ երիտասարդութիւնը մեծ սրտացաւութեամբ է զբաղվում ուսումնարանական գործով... Այս բարի զործի մէջ համարեա բոլոր հայերը համաձայն և միացած են... Այս մէկ հարցում նրանք միշտ համաձայն և միասիրտ եղբայրակիցներ են իրար, այն է—«մեր ուսումնարանները պիտի տարածենք, մեր լեզուն պիտի պահպանենք»:

Պ. Ակալիի¹ որ չատ անգամ դառն խօսքեր է գրել հայոց մասին, հետեւալ կերպով է համեմատում միմիանց հետ հայերին և վրացիներին. «Եթէ վրացի չը լինէի, մեծապէս սիրող և յարգող պիտի լինէի Վրաստանի հային. Վրաստանից գուրս այսօր էլ հաւանում եմ նրանց, քանի որ չեմ կարող չը գնահատել նրանց արժանաւորութիւնները. նրանք հասկանում են. թէ ինչ բան է հայրենասիրութիւնները և չեն մսունում իրանց ազգութիւնը. Հազիւ կը պատահէք այնպիսի հայի, որ սառնասիրտ լինէր և կարողութեան չափ օգուտ չը տար իր հասարակական դործին²). ... Կրկնում եմ, հայ որ լինէի, կ'աշխատէի և կը հիանայի, որ ամեն մի հայ տեսնէի հարստացած և բարձրացած, քանի որ կը գիտենայի, որ նա իր մեծութեամբ և հարստութեամբ օգտակար կը լինի հասարակական դործին: Բայց քանի որ վրացի եմ, այնքան էլ գուր չի զալի վրացու բախտաւորութիւնը. Գիտեմ, որ չէն հարստացած վրացին ոչ թէ որևէ օգուտ կը տայ հայրե-

¹⁾ Այն ինչ մենք վրացիներս ոչինչ չենք շնում և մոռանում ենք մեր լեզուն, գանգատում էք Ակալին:

նիքին, այլ մինչև անդամ կը վես է նրան. («Եր» 1880
№ 29):

Ինչպէս ասացինք վերեւ, յարգանքի հողի վրայ կը բռւանի համերաշխութիւն և միութիւն Որտեղ կայ փոխադարձ յարգանք, այնտեղ անպատճառ կը ծնուի միութեան ցանկութիւնը: Բաւական չէ միայն, որ մարդիկ ապրեն մինոյն պայմանների մէջ, ոչ ոք չի միանայ նրա հետ, ում չի յարգում...

Կար ժամանակ, երբ հայր համարեա չէր զանազանում իրան վրայուց Եղկուան էլ մեննոյն վրացի թագաւորի հպատակներն էին, երկուան էլ վրացերեն էին խօսում, ապրում էին միասին, ունէին մինոյն շահերը: Գիւղի մէջ հայը վրայու նման հողի մշակն էր, և թէպէտ քաղաքների մէջ գլխաւորապէս հայը արհեստաւոր էր և վաճառական, բայց քանի որ գոյութիւն ունէին ֆէտալական կարգեր, և ընտանեկան անտեսութիւնն էր զարգացած, քաղաքի վաճառականները և արհեստաւորները չունէին այնպիսի մի գեր կեանքի մէջ, որ իրանց հայութեամբ որևէ է նկատելի ազդեցութիւն ունենային: Սրա հետ ի նկատի է առնուելու և այն, որ մինչև Ռուսիայի հետ միանալը, երբ Վրաստանի մէջ կար վրաց կառազարութիւնը և շուրջը գոյութիւն ունէր միայն վրացի շրջանը, հայերը ոչ միայն ստիպմամբ, այլ ինքնըստինքան ընդունում էին ամեն բան, ինչ վրացական էր, միանում էին վրացիների հետ (երեկոն գուցէ և հաշուալ անելիս լինէին այդ բանը). Նրանք եթէ նոյն իսկ ցոնկանային էլ, չէին կարող ընդդիմանալ վրացականին եւ վրացիութեան, չունէին գրա համար ոյժ, ձևաբին չը կար այն էլեմենտը, որով դիմաց դրէին վրաց ազգեցութեան:

Վրաստանի՝ Ռուսաստանի հետ միանալը բոլորովին փոխից մեր կեանքը և ուրիշ հիմքեր գրաւ հայ-վրացական փոխադարձ յարաբերութիւնների տակ, վերջ գրուեց վրաց կառազարութեան և հիմնուեց ռուսաց, վերջ գրուեց առանձնացած, մի շրջանի և զառաւ երկու ռուսաց—և վրաց եթէ առաջ հայը ենթարկուած էր մի շրջանի, հիմա մի շրջանը համեմատեց միւսի հետ, մէկի ինչութիւնը միւսի ինչութեան հետ և առաջ բերաւ նաև իր սեփական ինչութիւնը: Կայ վրացի, կայ ռուս, կայ նաև հայը: Նոր ժամանակին հետեւց դասակարգերի և կոչման դասաւորութիւնը.—մեռաւ ֆէշչալականութիւն, վերջ գրուեց սահմանափակ կեանքին, (և ընտանեկան անտեսութեան համարապարար), սրա փոխարէն առաջ եկաւ. կապիտալիստական արդիւնաբերութիւն, աշխատանքը բաժանուեց, գիւղ և քաղաքը հեռացան իրարից արդիւնաբերութեամբ, առաջ եկան

վաճառական և արհեստաւոր, որոնք հրամայող դառան այսօրուայ կեանքում Քանի որ էն գլխից էլ վաճառական արհեստաւորներ Թիֆլիսի նահանգում գլխաւորապէս հայերն էին, հիմա էլ կապիտալիստական արդիւնաբերութիւնը զարգաւ աւ նրանց ձեռքում և քանի որ վաճառական արհեստաւորը տէր է, հայ—վաճառական արհեստաւորի տէր դառնալը մեզանում տուեց առանձնակի ուղղութիւն մեր կեանքին Սրա հետ միասին առաջ էր գնում Վրաստանի ընդհանուր լուսաւորութիւնը. Մենք մօտեցանք Եւրոպային, բայցուեցան մեզանում ուսումնարանները, տարածուեց ուսումը ժողովրդի մէջ, հեշտացան հազորդակցութեան ճանապարհները, բացուեցան բազմաթիւ ասպարէզներ՝ մարդու գործունէութեան համար Կովկասի այլ և այլ էլքմեննեները զարկուեցան իրար, այս բոլորին հետեւց ազգայնական ինքնանանանչութիւնը, ազգայնական ես-ի զարգացումը Կովկասի մէջ:

Անա սրանք են երեք զիմաւոր մօմենտներ, մեր կարծիքով, հայ—վրացական հարցում՝ տասնեւիններորդ դարում:

Հայ—վրացական միութիւնը գոյութիւն ունէր հին Վրաստանում, բայց այդ միութիւնը միակողմանի էր՝ այնտեղ չը կար միութիւն երկու հաւասար կողմի, այլ միայն կային վրացիք և հայ—վրացիք, կար մի վրացիութիւն: Այսօր այդ միութիւնը խախտուած է: Եթէ առաջ գոյութիւն ունէին հայեր, իրեւոտար անդամներ Վրաստանի, կամ Գիանջայի խանութեան, կամ ուրիշների՝ հպատակեցրուած էին նրանց ազգեցութեան *) այսօր հայերը բոլորովին համահաւասար են ուրիշ տոհմերի անդամների հետ, և եթէ առաջ գոյութիւն ունէր առանձնացած Վրաստանը, Փեանջան, Բագու, —այսօր առաջին տեղը բռնեց ընդհանուրի համար Կովկասը, և, եթէ գոյութիւն ունէր անուն վրացի, ծնուեց նոր անուն՝ Կովկասեցի: Առաջուայ միութիւնը խախտուեց և շարունակում է խախտուել: Առանձնացան վրացիք և հայեր, բայց զա չի նշանակում, որ այդ առանձնութիւնը կը շարունակուի և ասպարայում: Հայ—վրացական միութեան հողը ոչ երեկ և այսօր է կազմուել, այլ պատրաստուել է դարերի ընթացքում: Բայց այդ միութիւնը ոչ թէ պիտի, լինի (և

*) Աղիղ է, այսօր էլ մեծ է վրաց շրջանի ազդեցութիւնը հայերի վրայ, բայց հետզհետէ զարգանում է հայերի անփական շրջանը, որ ալ ո՞ր գլխաւորապէս կազմում են հայ գրողներ, Կովկասի ազգութիւնները անպատճառ կունենան միմեանց վրայ ազդեցութիւն, բայց այս փոխադարձ ազդեցութիւնը պիտի լինի բոլորովին ազատ, մէկը պիտի ընդունէ միւսի բնաւորութիւնը, սովորութիւնները, կուլտուրան իր լիակատար կամքով:

չի էլ լինի) առաջուայ միութիւն—վրացիութիւն, այլ միութիւն համահաւասար իրաւունքների տէր վրացիների և հայերի *):

Ի հարկէ վրացիների համար (ինչպէս նաև հայերի և ուրիշների համար էլ) այսօր զլիաւոր նպաստակը կայանում է նրանում, որ ներսից ամրանա՛ք, զարգանանք, ինքնաճանաշութեան հասցնենք ժողովրդին, բարելաւենք նրա տնտեսական գրութիւնը, մեր ներսինը-ոյժ է և զլիաւոր ոյժ...»

Դառնանք մեր «Դրօէրա»-ին: Ուղիղ է, երբեմն «Դրօէրան» պաշտպանում էր ինն միութիւնը, բայց ընդհանրապէս նո կողմակից էր նոր, համահաւասար իրաւունքներով միութեան: Մենք արդէն զիտենք, որ Թիֆլիսի ընարութիւնների ժամանակ «Դրօէրան» միութեան խորհուրդ էր տալիս հայ վրացիներին, միացած ոյժերով, զորում էր նա, հոգանք ընդհանուր զործը: «Դրօէրա»-ի և «Մշակ»-ի խմբագրութիւնների շուրջը գոյութիւն ունէր երիտասարդ հայ և վրացի նեղ շրջան, որ յաճախ զործում էր միասին, վրաց-հայկական միութիւնն էր փայփայում և այդ միութեան գործին էր ծառայում: Նրանք միայն լրազըրների մէջ չէին գրում միութեան մասին, այլ և ունէին ընդհանուր շրջան, գործնական գործունէութեան համար:

1869 թ. 49 Ն.-ի առաջնորդովի հեղինակը յայտնելով այն լուրը, թէ հայերը ունիական թատրոն են կամննում շինել թիֆլիսում՝ ասում է: «Եթէ այս լուրը ուղիղ է, վրաց առաջաւոր հասարակութեան միջոց է տրում երեւցնելու իր հոգացողութիւնը հասարակական գործի համար: Մենք լսեցինք, որ այդ գործի գլուխ անշնողները մեծ հաճութեամբ կը միանան վրացիների հետ նոր թատրոնը կազմակերպելու համար և համաձայն են ընդհանուր թատրոն շինելու, եթէ վրացիք իրանց կողմից կընդունեն սկզբից որեւ է մատնակցութիւն այս զործում և նիւթապէս կ'օգնեն: Ուրեմն մեր հասարակութիւնիցն է կախուած հիմա երեւցնելու իր գլուխը և աջակցնելու սկզբից թատրոնի հիմնարկութեան... Ընդհանուր թատրոնը ի միջի այլոց և նրա համար է ցանկալի, որ նա կը մօտեցնէ մեզ (վրացիներին և հայերին) միմեանցու: Հայերը ցանկանում են ոչ միայն ընդհանուր թատրոն կառուցանել, այլ և հայ զերասանների միջոցով անգամ մտածում էին վրաց ներկայացումներ տալ: 1874 թ. Մանթաշեւ և ընկ. մտադրուեց կառուցանելու հայ թատրոնը և վարձել-հայ զերասաններին. Եթացի հայ զերասաններից—զործում է «Դրօէրան»—ցանկանում է նաեւ գտնել

*) Ցնորիս-Պուրցելի № 1916.

երկու-երեք վրացի գերասան, որպէս զի աշակէն մեր լեզու իմացող գերասաններին և այդպիսով միջոց տան ներկայացնելու նաև վրացերէն պիէսներ»:—«Կարծում ենք այստեղ աւելորդ պիտի լինի յայտնելու մեր համակրութիւնը», այսպէս է վերջացնում լրագիրը:

1873 թ. Նոյեմբերին ոմն Ռուկօ, որը իրան կոչում էր նաև Société generaleի ներկայացուցիչ, մտադիր էր Թիֆլիսի խնդնավորութիւնից գագի և ջրանցքի շնորհու գործը վերցնել: Նիկալաձէ կասկած տարաւ այդ «ընկերութեան» և Ռուկօի վերաբերմամբ ու «Դրօէբա»-ի անունով նախ Պարիզում, իսկ յետոյ Լօնդոնում հարցրաւ, թէ արգեօք այնտեղ գոյութիւն ունի այդպիսի մի «ընկերութիւն» թէ ոչ: Երկու քաղաքից էլ պատասխան ստացաւ, որ այդպիսի մի ընկերութիւն գոյութիւն չունի այն տեղերը: Այս ստացուած տեղեկութիւնները, իբրեւ յաւելուած, բաժանուեցան «Դրօէբա»-ի և «Մակա-ի բաժանուրդ» ներին: Ընդհանրապէս, թէպէտ Դումայի մէջ հայերի մեծամասնութիւնը դէմ էր վրացիներին, բայց կային մի քանի հայեր, որոնք միասին էին գործում «Դրօէբա»-ի խմբագրութեան անդամների հետ:

Պիտի յիշենք և այնպիսի մանր փաստեր, որոնք թէպէտ և մանր են, բայց լաւ են որոշում «Դրօէբա»-ի ուղղութիւնը հայ-վրացական հարցի մէջ: այս մանր փաստերը սրբնք են: «Դրօէ-բա»-ի մէջ յաճախ պատահում է հայ լրագիրներից և յատկապէս «Մշակ»-ից արտասալած լուրեր, տեղեկութիւններ հայ գրականութեան, թատրոնի և կեանքի վերաբերեալ:

1876 թ. լրացաւ «Դրօէբա»-ի գոյութեան տասնամեակը: այս դէպքի առթիւ ճաշ արուեց, որին մասնակեցին, ի միջի այլոց հայերը—Գր. Արծրունի, Ար. Ցովհաննիսիան, Գաբր. Սունդուկեանի և գերասան Զմշկեան: Ճաշի ժամանակ պ. Ա. Ցովհաննիսիան ասաց. «... Ոյժը միութեան մէջ... Մենք՝ ներկայացուցիչներ վրացի և հայ ժողովրդի, հաւաքուել ենք այսօր այստեղ, տօնելու վրաց լրագրի տասնամեակը: Պարոններ, սմենքդ համաձայն կը լինիք ինձ հետ, որ այդ մեր միութեան մէջն է ոյժ: Ուզիզ է, առայժմ փոքր, բայց այնպիսի, որ ապագայում կարող է մեծանալ...»

Հայերը լաւ էին տեսնում, որ թէպէտ «Դրօէբան» երբեմն նրեմն հայերի հակառակն էր զրում, բայց այդ բանը չէր ուղղուած ամրող հայութեան դէմ, և Ս. Մեսիի և նրա օրգանը անկեղծ և խոր ցանկացողներ էին վրաց-հայկական եղբայրութեան: Այս երևոյթի վրայ ուշագրութիւն դարձրեց նաև պ. Զմշկեան և ասաց. «Ես ցանկանում եմ չնորհակալութիւն յայտ-

նել «Դրօէբա»ին այն համակրութեան համար, որ նա ցոյց էր տալիս, երբ խօսքը լինում էր հայ-վրացական թատրոնի մասին: («Դր.» 1876 թ. № 24):

Այս դրսի փաստերը աւելի պարզ ցոյց են տալիս, թէ որքան ուղիղ է «Դրօէբա»-ի արտասանած խօսքերը, թէ ինչ ճանապարհի վրայ էր հանգնած այս լրագիրը հայ-վրացական փոխադարձ յարաբերութիւնների մէջ: Վերե, երբ բերում էինք այս լրագրի կարծիքները այլ և այլ երեսյթի մասին, ամեն տեղ երեսում էր, որ «Դրօէբան» ծարաւում էր միութեան և եթէ պահարակում էր հայերի մի քանի վարմունքները, պահարակում էր որպէս վրաց ազգի անարդար նեղողների վարմունքները: «Դրօէբան» մէջ զրուած են յօդուածներ, ուղղակի այս երեսյթի միութեան մասին: 1875 թ. ինչպէս այդ արդէն յիշած ունէինք, «Դրօէբան» տղեց բարեկացած մի նամակի, քաղաքային վարչութեան և մի ռուբլիանոց հարկի (նալոզ) աճուրդ վերցնողների դէմ, ինչից և նեղացան հայերը: Այս մասին Ս. Մեսիխին գրում է. («Դր.» № 130.)... Մենք ոչ մի ժողովրդի թշնամի չենք և, ևս առաւել հայոց, քանի որ լաւ հասկանում ենք, որ ժողովուրդը բոլորովմին անմեղ է այն յաճախ օրինակելի գործերում, որմնց հեղինակներ են նրանց ներկայացուցիչներից մի քանիսը: Լաւ զիտենք, որ մեր Կովկասի մէջ ամենեին վրայ ել ընդհանուր ուրախութեան կամ տիրսւրեան բախսի և ծանրացած: հասկանում ենք, որ մենք, միասին ապրողներս, պիտի քաշենք միհնոյն լուծը, բայց մենք թշնամի ենք... բոլորին, ով նեղացնում է ժողովրդին, ով նուաստացնում է մարդուս մարդկային արժանաւորութիւնները: Մենք կարծում էինք և կարծում էլ ենք, որ այս բոլորի մէջ հայ լրագիրները և բոլոր իսկական հայերը կը համակրեն մեզ, որ նրանք էլ ատում են այն, ինչ ատում ենք մենք և սիրում են, ում սիրում ենք մենք: Ուրեմն էլ ինչու են բանակուր մղում մեզ հետ հայ լրագիրները, ինչու նեղացան մեղանից հայերը:

Ուղիղ է, «Դրօէբան» միայն չը բարձրադրեց իր ձայնը ընդդէմ հայ վանառականի, որը նեղում էր վրաց ժողովրդին, նա ընդդէմ էր և այն հայերին, որոնք արտաքսեցին վրացի ձայնաւորներին թիֆլիսի գումայից, պահարակում ու կուռում էր և նրանց դէմ, որոնք կամենում էին վրացիներին նուաստացնելով: Արմենիայի անունը մնձացնել, բայց միթէ իր ազգային ինքնուրոյնութեան պաշտպանելը հակառակ էր միութեան, և առաջաւոր հայեր, և հայ լրագիրներ չը պիտի աշակցեն վրացիներին, երբ սրանք պաշտպանում են իրանց արդար իրաւ-

ւունքը հայ բարբարոսներից: Միթէ մենք հայերի կողմը չը պիտի բռնենք, երբ նրանց անարդար կերպով վասարանում են մի քանի վրացիք: Սա ոչ թէ դէմ է միուրեան, այլ ընդհակառակը, այս բանն է ուղղակի պահանջում խոկական միուրիւնը և սօլիդարական կապը:

Այս միուրիւնն մասին կարական կերպով զրում էր Գ. Արծրունին 1879 թ. („Դրա“ № 13—16). „Այսօր Կովկասի այս կողմը բռնած ունին երեք բնիկ լուսաւորութեան հետեւող ժողովուրդ—Վրացի կովկասեան առնմը, հայ և թաթար առնմեր: Այս երեք առնմը այսօր Անդրկովկասի բնիկ բնակիչներ են, փոխադարձ օգնութեամբ կը տենանան, միմեանց թշնամութեամբ ել կը կործանուեն...»

„Մեր Վրաստանի ժողովրդին և նրա առաջաւոր մարդկանց գրօշակի վրայ այսօր պիտի զրուած լինի հետեւեալը. Փոխադարձ աջակցութիւն, փոխադարձ յարգանք, երեք ազգութեան համար էլ միատեղ հոգացողութիւն, եղբայրական կապ և միացած ոյժով և ներքին վատութեան ուղղելը^{*)} որ այսպէս արգելը է լինում մեր բարեկեցութեան ճանապարհի առաջարկութեացնեանը...»

Սրանով կը վերջադնենք մեր նկատողութիւնները՝ Դրէսրայի^ա վերաբերմամբ: „Դրէսրան“ անանում էր հայ-վրացական այսօրուայ անհամաձայնութիւնը, բայց տեսնում էր նաև աւելի խոր արմատացած միուրիւնը, որը հետզհետէ մեծանալով, նկատելի տեղ կը բռնի մեր կեանքում:

Մեզանում մի քանիսները ասում են, թէ հայերը անկեղծ կողմնակիցներ չեն մրութեան: Սա կարող էր լինել, եթէ հայերը չափից գուրս կարծ խելքի տէր և կամ առանց բնաւորութեան մի ազդ լինէին: Մենք չենք ենթադրում ոչ մէկը և ոչ միւսը և խոր կերպով հաւատում ենք ասաջաւոր հայերի մնկնդութեան հայ-վրացական միութեան զործում^{**)}: Հաւատում ենք «Մշակի» հետեւեալ անկեղծ խօսքերին. (տպուեց Կաւեկաղի 1882 թ. № 165.): հայ լրադիրը նկատում է, որ վրայ զրականութեան մէջ չը կայ կրիտիկական ուղղութիւնը. վրացիք չափից գուրս տարուած են իրանց անցեալով և հերօսական գործերով. հարկաւոր է—ասում է Կա—ուշադրութիւն գարձնել ժամանակակից հարցերի վրայ, այ, օրինակի համար,

^{*)} Եւ արտաքին վարչութեանն էլ, կ'աւելացնենք մենք:

Ծան. Կալ.

^{**)} Ինչ անենք, որ երբեմն տարօրինակ մտքեր և պրիտէնզիաներ են ծնուռ թէ մեր և թէ նրանց գլխներում:

Ծան. Կալ.

վրացիների մէջ փոքր չափով է տարածուած ուսումը, լուսաւորութիւնը... և Կարող է ինք հաւատայնել բոլորին, ասում է լրագիրը, որ այս խօսքերը ասել տուաւ անկեղծ և սրտակից քարեկամութեան ցանկութիւնը դէպի վրացիները... Մի անգամ մէնք պահանջում էինք, որ հայ ժողովրդական դպրոցներում սովորեցնէին վրաց լեզուն (որտեղ վրացիք և հայերը ապրում էին միասին), և թուրքերէն. (որտեղ հայեր և թուրքեր ապրում են խաւն), որպէս զի մնաք սովորէինք միասին, քանի որ մեր հարեւանները չունեին սեփական ուսումնարաններ։ Վրացիք և թուրքեր, զուցէ և մի ժամանակ ըմբռնեն, թէ հրշան անկեղծ էր մեր կարծիքը, իսկ հայերը—թէ որքան հարկաւոր էր մեր առաջարկութիւնը»...

Մենք հաւատում ենք այդ անկեղծութեան. որքան աւելի յաձախ կը խօսենք այսպիսի լեզուով, նոյնքան աւելի կը մտենանք իրար և երկու կողմն էլ շահած կը լինենք։

Այստեղ չենք կարող անցողաբար չը նկատել մի քանի պարունների վարմունքը, որոնք տարածում են լուրեր՝ մեր նամակների վերաբերմամբ, իբր թէ մենք քարոզելիս լինենք միութիւնը հայերի հետ, թէլուզ այդ միութիւնը մեզ համար տնտեսապէս վնասակար և համահաւասար լինի մեր տերրիտորիայից հնոացուելուն։

Ընդհակառակ, մնաք միշտ, երբ խօսում ենք միութեան մասին, ի նկատի ունենք համահաւասար իրաւունքներով միութիւն, ընդգծելով միշտ համահաւասարութիւն խօսքը։ Բազմիցս ասել ենք, որ եթէ երկու աղջի իրական շահերը պահանջում են միութիւն, այդ միութիւնը իրավործելի է այնքան, որքան պահանջած կը լինեն փոխադարձ իրաւունքները և արժանաւորութիւնները։

Մեզանում կան այն տեսակ մարդիկ, որոնք չեն հաւատում մեր ազգերի միութեանը, ինչպէս և լինի գա և աշխատում են ամեն կերպ աղաւաղել մեր մտքերը և այգավիսով ոչնչացնել դէպի նրանց ունեցած հաւատք։ Յետոյ ինչ են ուզում իրանք։ Նրանց՝ այդ փառաւոր անցեալ և լուսաւոր ապագայ ունեցող վրացիններին (բայց նցանցից ուրիշները հօվրացիններ չեն) և զլուխ յետ դրած պատրիօտներին, պատրիօտներին որ excelence, ինչ լայնդ է մի ինչ որ հայերի և թուրքերի հետ միութիւն ունենալ։ Նրանց վայել է միմիայն ազայութիւն և եթէ ուզում են միութիւն, այն էլ ուզում են այնպիսի մի միութիւն, որտեղ որ առաջնութիւնը նրանց լինի տուած։ Նրանք «նացիօնալիսամներ են» և այնպիսի «նացիօնա-

լիստներ», ինչպիսին են ֆրանսիացի անտևոմիտները և Ռուսիայի Սուվորինը, Կամարօվը, Գրինգմուտ, Պալմա և ուրիշ շատերը։ Այսօր, եթէ այս մեր «նացիօնալիստները» մեղադրում են Սուվորինին և ընկ. «ազգակերութեան մէջ, մենք հաւատացած ենք, որ եթէ էգուց հանգամանքները միջոց տան նրանց նացիօնալիստներին», նրանք եթէ զերազանցելու էլ չը լինեն Սուվորինին, — նրանցից էլ յետ չեն մնայ, ուրիշ ազգութիւնների վերաբերմամբ «հարկաւոր» միջոցներ ձեռք առնելու մէջ և եթէ այսօր անվտանգարար են պահանջում «էկոնօմիական» իրադադրուկոդ հայերի դէմ, այն ժամանակ կը դիմէին աւելի սաստիկ միջոցների և հալածանք ու կոտորած կը սկսէին կովկասի բոլոր ազգութիւնների հետ։

Մենք ոչ մի ընդհանուր բան չունենք այդ տեսակ «նացիօնալիզմի» հետ, այլ միշտ պախարակում և կուռմ ենք նրա հետ...

Բայց ոչ մի ժամանակ ազգայնութեան գոյութիւնը չենք դարձրել կուռք մեղ համար։ Մենք առաջնութիւնը տալիս ենք մարդկայնութեան և ոչ վրացիութեան։ Ազգութիւնը մեղ համար չէ նպատակ՝ Նա միայն սանդուխտի մի աստիճան է դէպի բարձրագոյն միութիւնը, այն է՝ հասարակութիւնը։ Եթէ պաշտպանում ենք ազգայնութիւնը... անում ենք նրա համար, որպէս զի զրանով նպաստենք և աջակցենք ազգերի համերաշխութեան, մօտեցնենք մի ազգութիւնը—միւսին։ Մենք չենք ասում, թէ որ մենք—վրացիներս չը լինենք, ամեն ինչ թող կը բակի կերակուր դառնայ, թող լինի վրացիութիւն, թող նա արթաբար պաշապանէ իր իրաւունքները, թող նա զարգանայ, բայց նա պէտք է յիշի, որ նրանց գէն դոյսութիւն ունի աւելի բարձր հասարակութիւն—Կովկաս և ամենամեծ հասարակութիւն—մարդկութիւն։ Այդ մարդկութիւնն է մեր Աստուածը, որի փառաբանութեան առաջ պիտի խոնարհի իր զլուխը վրացիութեան փառաբանութիւնը...

Մենք ներկայ էինք մի հայ ուսանողի թաղման, քահանան հայերէն էր պատարագ մատուցանում, այն ինչ մայրը վրացերէն էր ողբում իր որդուն։ Միթէ կարող էր պատահել մի այնպիսի վրացի, որի չօվինիստական սիրութ լցնէր ուրախութեամբ նրա համար, որ հայր վրացերէն էր ողբում և կամ այնպիսի հայր, որ պախարակէր մօրը դրա համար, որ նա հայ է, բայց ոչ հայերէն էր ողբում իր սիրած որդու դիակի վրայ։ Եթէ գտնուէին այդպիսի անբարոյական ընկած վրացի կամ հայ, զըրանք վնասից աւելի ոչինչ չեն կարող բնիրել իրանց ազգու-

թեան, և ամեն մի աղջութիւն պիտի պախարակէ և հալածէ իր շրջանից այդպիսի անձնաւորութիւններին:

Ի՞նչ տեղ պիտի ունենան այդպիսի արցունքների առաջ աղջութիւնը:

Կայ ընդհանուր մարդկային ողբ, որը պիտի միացնի մարդկանց:

... Մենք խոր համոզուած ենք, որ միութիւնը վաղ թէ ուշ կը հպատակեցնէ իրան ինչպէս հայ, նոյնպէս և վրացի շօվնիստներին:

Ահա մեր հաւատը և հայեացքը: Բարկութեան բոպէներին գուցէ երբեմն անարդար վարուենք կամ հայի և կամ վրացու հետ, կարող է պատահել, որ սխալուենք, բայց մեր կեանքի մէջ միշտ կը տիրապետենք այդ միութեան իդէալը:

Մենք չենք փախչում ոչ ոքի կրիտիկայից: Թող ուղիղ ըմբռնեն մեր միտքը և այնուհիտև ինչ որ ուզում են թող գըրմին...

Վրաց. թարգմ. Դ. ԳԱԼՈՑԵԱՆ

ՎԱՀԱՆ ՆԱԼԲԱՆԴԵԱՆ

Դա մի անսպասելի, շմեցնող հեռագիր էր, որ մեզ հասաւ էջմիածնից: Դեկտեմբերի 16-ին այնաեղ, կարձատե՛ հիւանդութիւնից յետոյ՝ վախճանուելու մեր թերթի տաղանդաւոր աշխատակից՝ երիտասարդ Վահան Նալբանդեան:

Մարդկային ճակատագրի այս արտասուելի անհաստատութիւնը և նրա այս անողոք քմահամ խաղը անդամ յոյսերով, յոյզերով զեղուն կեանքերի հետ մեզ ըմբռատացնում է և կատարուած ողբալի իրողութեան հետ հաջառուել չենք կարողանում: Ո՞վ կարող էր սպասել, թէ այդ զեղոցիկ և լաւ սկսուած կեանքը այդ աստիճան կարճատեւ, այդպէս վաղանցուկ է:

Վահան Նալբանդեանի ցաւալի մահով հայ հասարակութիւնը կորցնում է իր մի լաւագոյն անդամին. հայ զրական, անդաստանը, որ հմուտ ձեռքերի այնպէս կարօւ է, զրկուում է մի լաւ մշակից, և մեր թերթը մասնաւորագէս իր աշխատակիցների շարքի մէջ տեսնում է մի զգալի պարապ:

Եւ որպիսի դժուարութիւններով ու զահարերութիւններով պատրաստուած մի կեանք էր այն, որ սկսել էր տալ իր փայլուն պատուզները: Վահան Նալբանդեանը ծնուել է Վանում 1876 թուին, նոյեմբերի 10-ին, սկզբնական կրթութիւնը ստացել է հայրենի քաղաքում, ապա, երբ ծնողները զաղթել են Ռուսաստան, նա 1888-ին մտել է Ներս. զպրանոց 12 տար. հասակում: Իբրև ամենաառաջադէմ աշակերտներից մինը, աւարտելով յիշեալ զպրանոցը, Նալբանդեան 1894 թուին Քամոյենց եկեղեցու նպաստով անցաւ Գերմանիա՝ բարձրագոյն կրթութիւն ստանալու համար: Նա ուսանում էր գլխաւորագէս Լայպցիգում, ուր և լսում էր գրական-պատմական և փիլիսոփայական առարկաները: Ուսանողական տարինները այդ բարեիրիզն և շիտակ երիտասարդի համար անողու, աշխատանքի և աքնու-

թեան տարիներ եղան ի մեծ հիադումն իր ընկերների և ուսուցիչների Աւարտելով իր ուսումը որպէս փիլիսոփայութեան դոկտօր, երիտասարդ Նալբանդեան 1901 թուին վերադարձաւ Թիֆլիս, ուր աշխատակցում էր «Մշակին» և «Մուրճին»։ Նրա մի ուսումնասիրութիւնը՝ իրսէնի մասին, որ տպագրուեց մեր թիբթում և որի վերջին մասը տալիս ենք ներկայ համարում՝ մի ուշադրաւ գրական-քննադատական աշխատանք է և վկայում է հեղինակի լուրջ մոռաւոր պատրաստութիւնը, կիրթ ճաշակը և աղնիւ, մարդասէր տննդեմցիաները։

Սնցեալ տարի «Մշակում» նրա գրած թատրոնական և ժողովնագրական տևոսութիւնները միանդամից նրա վրայ դարձրին հասարակութեան լրջմիտ մասի խորին ուշադրութիւնը և Նրա անուսնը կապեցին շատ քաղցր յայսեր Այս հայերէն աշխատութիւններից դուրս նա զրել է նաև գերմաններէն իր դիսերտացիան պատմաբան Բանկէի մասին „Leopold von Ranks Bildungsjahre und Geschichtseuffassung“ վերնագրի տակ։ Այս տարի սեպտեմբերին նա սիրով ընդունեց էջմիածնի ճնմարանի վարչութեան հրաւէրը, իրեւ ուսուցիչ, որովհետեւ նա նպատակ ունէր, օգտուելով այնտեղի հարուստ գրադարանից, հայոց պատմութեան մի լուրջ ուսումնասիրութիւն կատարել։

Եւ այդ բոլոր զեղեցիկ յոյսերը այսօր անողոք մահուան մի հարուածով մնացին անկատար։ Այս անակնկալ և արտասուալից մահը, խորին վիշտ պիտի պատճառի ոչ միայն նրա մերձաւորներին, այլ և իր բոլոր ծանօթներին և մանաւանդ նրա մօտիկ ընկերներին։ Ամեն աեղ նա ընդհանուրի սիրելին էր, իր քաղցր բնաւ որութեամբ, իր լրջութեամբ, իր ընկերսիրութեամբ և իր անպայման շիտակութեամբ։

Որպիսի տիսուր զուգադիպութիւն! գեռ անցեալ տարի այս օրերում, երբ նա «Մշակում» հրատարակեց իր մի ուսումնասիրութիւնը Դուրեւանի մասին, ովք կարող էր կարծել, թէ նա էլ մի Դուրեւան է, մի բուրալից, բայց վաղանցուկ ծաղիկ, որի վրայ չուտով փչկլու է մահաշոնչ քամին։

Անկարելիի և անգառնալիի առաջ խոնարհեցնում ենք մեր զլուխը և նրա ծնողներին ու մերձաւորներին խնդրում ենք ընկունել և մեր վշտակցութիւնը նրանց մնծ կորսափ առթիւ, մի կորուստ, որ մերն էլ է, ինչպէս և ամբողջ հայ հասարակութեան։

ՎԱՀԱՆ ՆԱԼԻԱՆԴԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Մեր մոլորակի վրայ մենք բոլորս ժամանակաւոր հիւրեք
ենք. ճակատագիրը իւրաքանչիւրիս համար պատրաստել է վախ-
ճան, միայն չը գիտենք, որքան մօտ է մեզ այդ օրհասական
սահմանը...

Վահան Նալբանդեան մեռուաւ, ով կը սովասէր, որ այդ
ճորհալի երիտասարդ ինտելիգէնտը տակաւին իր կեանքի
26-րդ գարունը չը տեսած՝ կը կնքէ իր մահկանացուն. միթէ
ամենքս համոզուած չէինք, որ նրա տուաջ գետ երկար ճանա-
պարհ կայ անցնելու. բայց ճակատագիրը այլ կերպ էր վճռել...

Բնութիւնից օժտուած ընտիր բարեմասնութիւներով՝ ուշ-
ուումնատենչ, համեստ, բարեբարոյ, նա կարեւոր ինտելիգէնտ
ոյժ էր, որ նոր էր հանդէս եկել հայ զրական և մանկավար-
ժական ասպարիզի վրայ, այն գիտական պաշարը, որ նա ձեռք
էր բերել Գերմանիայում իր 6-ամեայ ուսանողութեան ժամա-
նակ, նրան միջոց տուեց աշխատակցել մամուլին, իբրեւ պատ-
րաստ զրական ոյժ։ Ամին բան, ինչ որ զուրս էր զալիս նրա
զրչի տակից, զարմանալի բարեխղճութեան և ուսումնասիրու-
թեան կնիք էր կրում. խոստովանում ենք անկեզծ, մենք շատ
քիչ ենք պատահել մեր կեանքում նրա պէս ազնիւ մտածող,
դատող և զրող ինտելիգէնտ. իր զրուածքներում նա զիտէր
առաջնորդուել միայն օբյեկտիվ սկզբունքներով, լինէր իր զրածը
զուտ գրական աշխատանք, պատմական էտիւդ կամ թատրո-
նական բէցէնվիա; Նալբանդեանին մի անդամ տեսնողը այլ եւս
չէր կարող մոռանալ, այնչափ զրաւիչ էր նրա հոգեկան պատ-
կերը։

Նա աշակերտական նստարանի վրայ էր, երբ ես առաջին
անգամ նրան հանդիպեցայ և սիրեցի հոգւոյս ամբողջ ոյժով.
դա 1889 թուին էր, նա այն ժամանակ Ներսիսեան գպրոցի Յ
դաստրանի աշակերտ էր. համեստ, խոհուն, աշխատասէր, բա-
րեբարոյ, նա հաւասարապէս ամենից սիրուած էր, թէ իր ըն-
կերներից և թէ ուսուցիչներից. այսօրուայ պէս ես յիշում եմ

նրա աշակերտական պատկերը, որի վրայ երբեմն թեթեւ թախիծ և մտահոգութիւն էի կարդում. ով զիտէ, թերեւս այն ժամանակից նրա մէջ ձեւակերպում էին որոշ ձգտումներ և իդէալներ... Սլացան տարիները և մի օր Նալբանդեան՝ արդէն Ներսիսեան դպրոցի առաջին շրջանաւարտը՝ աւարտուան վկայականը ձեռին, միջոց էր որոնում բարձրագոյն ուսում ստանալու և այդ միջոցը առւեց նրան մեր Քամոյեանց եկեղեցին բարեհաճութեամբ վեհափառ Հայրապետութիւն։ Մեծ էր այդ ժամանակ նրա սրտի յոյզը—չէ որ նա արդէն իր փայփայած իդէալին մօտ էր—գնալ Գերմանիա ուսումը շարունակելու. այդ էր նրա յստակ ուգու իդձը, որ յետոյ իրականութիւն ստացաւ։ Վեց բովանդակ տարի նա մնաց այնտեղ, խորասուզուած իր պարապմունքների մէջ, նուիրուած ուսման մինչեւ ինքնամոռացութիւն։ Մերթ ընդ մերթ ծխական համայնքի տկանջին հաճնում էին լուրեր իր սիրած որդեգրի յառաջադիմութեան մասին. Գերմանիայից վերադարձող ուսանողները խօսք չէին գտնում արտայայտելու իրանց հիացմունքը անզուգական ընկերոջ մասին—նա այնտեղի ուսանողական շրջանի ամենասիրուած, յարգուած Էանդամն էր։ 1900 թուի վերջն էր, երբ նա վերադարձած Գերմանիայից, աւարտման դիվլումը ծոցը, նոյն խոհեմ, համաստ, բայց լուրջ զիտութեան պաշարով ծանրաբեռնուած Վահանը, լի անընկծելի տեխնով մեր մտաւոր անդաստանի բեղմնաւոր մշակը լինելու. բայց ինչ դառն հեգնութիւն, գեռ նոր էր ոտք զրել այդ մշակը իր ընտրած ասպարիզի վրայ, յանկարծ յաւիտեան չքացաւ նրանից, մնաց միայն մի թարմ հողաբլուր, որ այսօր ողողում է ծանօթների և բարեկամների աղի արցունքներով։ Մարդկային լեզուն լուռմ է ճակատազրի՞անողք դատավճռի առաջ. բնութեան գաղտնիքը անքննելի է։ Թող, ուրեմն, որդեկորոյս ծնողների անհուն վիշտը գտնի հոգեկան սիովանք այն ընդհանուր և անկեղծ ցաւակցութեան մէջ, որ բուսն կերպով արտայայտեց հայ հասարակութիւնը այդ չնորհալի երիտասարդի ողբերգական մահուան առիթով. թող Վահան Նալբանդեանի կարծ, բայց խորհրդագաւոր կեանքը լինի կենդանի ուղեցոյց հայ նորաբողբոջ սերնդի համար. այդ կը լինի ամենանուիրական անթառամ պսակը նրա վաղաժամ գերեզմանի վրայ։

«ՄՈՒՐՃ»Ի ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ

վերջին երեք տարիների ընթացքում *)

Հիմ տրքակ
1900 թ. Կոր օրգան
1901 թ. 1902 թ.

Անդրկովկաս

	3 բաժանորդ	10 բաժան.	10 բաժ.
Ալեքսանդրօպոլ	.		
Աշտարակ գ.	1	»	2 »
Արասթուման	—	»	2 »
Ազգամ	1	»	— »
Ազգաշ	—	»	— »
Արգուին	—	»	1 »
Ախալքալաք	6	»	10 »
Ախալցիսա	3	»	3 »
Արդահան	—	»	1 »
Ագուլիս Վերին	2	»	5 »
» Ներքին	—	»	1 »
Բագու	76	»	121 »
Բալախանի	30	»	50 »
Բաթում	2	»	9 »
Բօժիյ-Պրօմըսլ	—	»	1 »
Բաշնորաշէն	—	»	— »
Գօրի	1	»	1 »
Գանձակ	1	»	13 »
Գիրք գ.	—	»	— »
Գօգչայ	1	»	2 »
Դաւալու գ.	—	»	2 »
Դըղ գիւղ	—	»	1 »

*) Տարեկան և կիսամեռյ բաժանորդները միասին են հաշուածո չին շրջանի թուերը կազմուած են պ. Ա. Արասխանեանցի ձեռադիր ցուցակից:

Ելենօվկա	.	.	—	»	—	»	1	»
Երնան	.	.	1	»	17	»	8	»
Զաքաթալա	.	.	1	»	4	»	1	»
Զարրադ	.	.	1	»	1	»	—	»
Էջմիածին-Վաղարշապատ	2		»	9	»	9	»	
Թիֆլս	.	—	24	»	97	»	80	»
Թարթար	.	.	—	»	—	»	3	»
Թելաւ	.	.	—	»	2	»	2	»
Թամամիլու զիւղ	.		—	»	—	»	1	»
Իզդիր	.	.	—	»	6	»	11	»
Խալիլու գ.	.	.	—	»	1	»	—	»
Խանուխլար գ.	.	.	—	»	—	»	1	»
Խանքենդի գ.	.	.	—	»	2	»	1	»
Խինզիրակ գ.	.	.	—	»	1	»	—	»
Խուգադ գ.	.	.	—	«	1	»	—	»
Կախ	.	.	—	»	1	»	—	»
Կարս	.	.	2	»	10	»	24	»
Կաղզուան	.	.	1	»	4	»	4	»
Լորիս	.	.	1	»	1	»	1	»
Լողակ	.	.	1	»	1	»	1	»
Կուլիբէգղիղա գ.	.		—	»	1	»	1	»
Կարճելան գ.	.		1	»	—	»	1	»
Համամիլու գ.	.		—	»	1	»	2	»
Համզաչիման գ.	.		—	»	1	»	—	»
Հաղախ	.	.	1	»	1	»	1	»
Հարայեազ	.	.	—	»	1	»	—	»
Համարլու գ.	.		—	»	—	»	2	»
Հարաքիլիսա-Մեծ գ.	.		—	»	1	»	3	»
Մեղրի գ.	.		—	»	1	»	2	»
Միհայլօվօ	.		—	»	1	»	—	»
Նոր-Բայազէթ	.		—	»	1	»	3	»
Նախիջեւան-Հին	.		1	»	2	»	4	»
Նուխի	.	.	5	»	6	»	6	»
Շուլաւէր գ.	.		—	»	1	»	—	»
Շահրիար գ.	.		—	»	—	»	1	»
Շուշի	.	.	9	»	17	»	14	»
Զաքենդ	.	.	—	»	—	»	1	»
Զահրին	գ.	.	—	»	—	»	1	»
Սօչի	.	.	—	»	3	»	3	»
Զալալ-Օղլի գ.	.		—	»	—	»	1	»
Սեմենօվկա գ.	.		—	»	1	»	—	

Սանահին գ.	.	—	»	—	»	1	»
Սարիղամիշ	.	—	»	2	»	1	»
Սարդարաբադ	.	—	»	—	»	1	»
Սուխում	.	2	»	3	»	6	»
Սալիան	.	—	»	—	»	1	»
Վանք	.	—	»	1	»	1	»
Տաթև	.	—	»	1	»	1	»
Տանակերտ գ.	.	—	»	—	»	1	»
Ցղնա գիւղ	.	—	»	1	»	1	»
Փոթի	.	—	»	2	»	—	»
Քութայիս	.	—	»	1	»	1	»
Քեշիչքենդ գ.	.	—	»	1	»	1	»
		180	»	472	»	445	»

Հ ի ւ ս. Կ ո վ կ ա ս

Արմաւիր	.	•	4	4	2
Անապա	.	•	—	—	1
Ալեքսանդ. Փօրտ	.	—	—	1	—
Արինսկայա	.	•	—	1	1
Բէլօրէչինսկայա	.	—	—	—	1
Դիօրդիեվսկ	.	•	—	1	—
Գրօղնի	.	•	—	—	1
Դերբենտ	.	•	1	1	3
Գեաղինսկայա	.	—	—	—	1
Եկատերինօդար	.	—	1	3	7
Թէմիր-Խան-Շուրա	.	—	—	—	1
Լադօժսկայա	.	—	—	2	—
Կուսարչայ	.	•	—	—	1
Կիւլօվօդսկ	.	•	—	1	1
Ղզլար	.	•	1	1	5
Մօղեոկ	.	•	—	1	2
Մայկոպ	.	•	—	1	—
Նալչիկ	.	•	—	—	1
Վլադիկավկազ	.	—	—	—	1
Պետրօվսկ	.	•	—	4	—
Պետրիգորսկ.	.	—	—	6	3
Պրօխլադնայա	.	—	—	1	1
Հասենտուկի.	.	—	—	1	—
Ֆօնտանովսկի	.	—	—	—	1

7 29 34

Ա ն դ ր կ ա ս ա լ ե ա ն ե ր կ ի ր

Աստարա	.	.	1	1	1
Ասիստագ	.	.	—	11	7
Ալսթալա	.	.	—	—	1
Կուշկա	.	.	—	2	—
Կրասնօվօդուկ	.	.	—	2	2
Կամալիա	.	.	—	—	1
Կօկանդ	.	.	—	1	1
Մերզ	.	.	—	3	2
Նոր-Բուխարա	.	.	—	1	1
Նոր-Մազելան	.	.	—	1	—
Զարչույ	.	.	—	2	1
Սամարզանդ	.	.	—	3	3
Տախտաբազար	.	.	—	1	—
Տաշկէնդ	.	.	—	—	1
			1	28	21

Ո ռ ւ ս ա ս ա ն

Աստրախան	.	.	2	9	15
Արմենանսկ	.	.	1	4	2
Աքսայ	.	.	—	—	1
Ալկերման	.	.	—	—	1
Դօրօգօբուժ	.	.	—	1	1
Եկատերինօսլաւ	.	.	—	2	1
Ենակինվո	.	.	—	—	1
Իւզովկա	.	.	—	2	—
Իւրիեվ (Դորբատ)	.	.	—	—	1
Իւրիեվսկիբյ-Զաւօդ	.	.	—	2	1
Խարկօվ	.	.	1	1	2
Կիսելեվո	.	.	—	1	—
Կիեվ	.	.	2	1	—
Կազան	.	.	1	1	1
Կանավինօ	.	.	—	—	1
Կարասուբազար	.	.	—	1	1
Կրասնը-Եար	.	.	—	1	1
Կերչ	.	.	—	—	2
Մարիուպոլ	.	.	—	1	—
Մելիտոպոլ	.	.	—	1	—
Մոսկուա	.	.	6	26	16

Նիկոլային	.	.	—	—	1
Եղբա՛ն, ախիջեւան	.	4	5	10	
Նողայսկ	.	1	—	—	
Պետերբուրգ	.	3	4	8	
Հանկօյ	.	1	2	1	
Սամարա	.	—	2	—	
Սիմֆեռոպոլ	.	1	3	2	
Սեւաստոպոլ	.	—	1	—	
Վոլոնէժ	.	—	1	—	
Վարչական	.	1	—	2	
Բուազ	.	1	—	2	
Բիդա	.	1	2	2	
Օրեոլ	.	—	—	1	
Օդեսա	.	1	1	3	
Քիշինև	.	—	—	1	
		27	76	81	

Ա ի ք ի ր

Ամիսալին	.	.	1	1	—
Վաղիվոստոկ	.	—	—	1	1
Օմակ	.	.	—	—	1
			1	1	2

Հնդհանուր գումարը
ամբողջ Խուսաստանում 216 60.7 583

Ա ր ս ա ս ա ն մ ա ն

(ԶԼ հաշուած թերթերի հետ փոխադրութիւնը)

Ամերիկա	.	.	2	5	8
Անգլիա	.	.	—	1	—
Աւստրիա	.	.	—	1	1
Բուլղարիա	.	.	2	2	2
Բելգիա	.	.	—	1	1
Եգիպտոս	.	.	—	1	—
Գերմանիա	.	.	6	9	7
Ինդիա	.	.	2	4	4
Շվեյցարիա	.	.	—	4	3
Ռումանիա	.	.	—	2	2

Պարսկաստան	.	17	20	41
Ֆրանսիա	.	—	—	1
<hr/>				
Բնդհանուր գումարը				
արտասահմանում	29	50	70	
Բաժանորդների				
ընդհանուր թիւը	245	657	653	

Այս վիճակաղբութիւնից պարզ երեւում է որ, եթէ հետեւել կենտրօններում՝ Բագու, Թիֆլիս, Երևան, Գանձակ, Շուշի և Սոսկուա, բաժանորդների թիւը մի քիչ չը պակասէր 1902 թուականին՝ վճարող բաժանորդների թիւը պէտք է 700-ից անցնէր։ Հետաքրքրական է որ 1900 թուականին „Մուրճ“, չը հաշուած արտասահման, ստացւում էր 48 տեղերում, 1901 թուին՝ 112 և 1902 թուին 118 տեղերում։

S.

Р. МУТЕРЪ
ИСТОРИЯ ЖИВОПИСИ ВЪ XIX ВѢКѢ.
 4 тома. Болѣе 1000 иллюстрацій.

Цѣна за 4 тома 17 руолей.

Роскошные переплеты каждого тома по 1 р., крышки—75 коп.

НОВОЕ СОЧИНЕНИЕ МУТЕРА
ИСТОРИЯ ЖИВОПИСИ

(отъ среднихъ вѣковъ до новѣйшихъ временъ).

Переводъ подъ редакціей К. Балымонта.

Вышли: т. I—280 стр. 8⁰, съ 52 рисунками на отдѣльныхъ табличахъ.

Цѣна 2 р. 50 к., Т. II—242 стр. 8⁰, съ 40 рисунками на отдѣльныхъ табличахъ. Цѣна 2 р. 50 к.

— Просимъ обращаться исключительно по адресу:
 Контора товарищества „ЗНАНИЕ“, Спб., Невскій. 92.

5—1

Տօներին երեխաներին ընծայելու համար լոյս տեսաւ
 ԷՄԱՆՈՒԵԼ քահանայի

«Պ Տ Ա Ն Ա Խ Ո Ր Ե Բ Ը»

(15 պատկերով, 72 երես).

Առանց կազմի—50 կոպ., գումարով՝ 40 կոպ.

Կազմով—75 ” ” ” 60 ”

Москва, Свяш. Э. Назарянцъ.

Тифлисъ, Центральный книжный магазинъ.

Հեղինակին դիմոզները ճանապարհածախս չեն վճարում:

3—1

ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆ

Հ Ի Ւ 8 Ա Ի

(Հրապարակախխօսական խոհեր)

Գիւն է ՅՕ ԿՈՊԵԿ

Ծախւում է Թիֆլիսում, «Գուտտենբերգ» գրավա-
 ճառանոցում:

19. ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻ ԱՇԽԱՐՀԻՑ. — „Անսանձի սանձահարումը“	
Ելքապիրի. — „Կախարդական աշխարհ Պատագենկի. —	
„Մօննա-Վաննա“ Մէտէպինկի. — Հասարակական, ամ-	
րոխալին և անհատական էզօփզ. — Իդիգենիս և Մօննա-	
Վաննա. — Մարդկալին բնութեանը համապատասխան և	
իդէալական ճշմարտութիւն. — Կեղծիքը կեանքի մէջ. —	
Մէծ և փոքր անարդարութիւններ. — Անհատական մանր	
էզօփզմը որպէս հիմունք մեծ չարիքի, Ա.	187
20. Ա. Լ. Զիկ, Բժկ. Վ. Արծրունու	202
21. ՀԱՅ-ՎՐԱՅԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ,	
յօդ. Կալամիի, Թարգմ. Դ. Գալսեանի	232
22. † Վ. ՆԱԼԻԱՆԴԵԱՆ	250
23. » » » Յ. Սպենդիարեանի	252
24. «ՄՈՒՐՃԻ» ԵՐԵՔ ՏԱՐՈՒԱԾ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՎԻՃԱ-	
ԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ, Տ.	254
25. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ	260
26. 2-րդ ՅԱԼԵԼՈՒԱԾ «ՄՈՒՐՃԻ», Բրես Հարս. Իննըսուն եւ	
ուր Տարի առաջ, Թարգմ. Ստ. Լիսիցեանի 33—56	

ԽՄԲԱԳԻՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Խմբագրութիւնը յատուկ խնդրում է յօդուածագիրներից՝ զրել պարզ, մանաւանդ թուերը, յատուկ անուններն ու օտար բառերը, և թերթի միայն մի երկար վրայ:

2. Զընդունուած մեծ յօդուածները պահում են խմբագրատանը 6 ամիս, իսկ վորքը յօդուածներն ու բանաստեղծութիւնները չեն վերադարձնում: Ենապիդր յետ ստանալու համար պէտք է ուղարկել ճանապարհածախը:

3. Գրուածքների վարձատրութեան չափը որոշում է Խմբագրութիւնը:

4. Խմբագրութիւնը իրան է վերապահում ուղարկուած յօդուածները փոփոխելու կամ կրճատելու իրաւունքը:

5. „ՄՈՒՐՃԻ“ համարը չ'ստացուելու դէպքում պէտք է Խմբագրութեան տեղեկութիւն տալ մինչև յաջորդ համարի լոյս տեսնելը: Այդ տեղեկութեան անհրաժեշտ է կցել տեղական պօստալին գրասենեալի՝ հաւատագրիր (յաջորդական), որ ամսագրի համարը չլի յանձնուած զանգստաւորին:

ԲԱՑՈՒԱԾ Ե 1903

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՅՈՒԽԻՒՆ

ՄՈՒՇ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՏԱԿՎԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա.Մ.Ս.Ա.Գ.Ր.Ի.

(Նոր շրջան, Արևելյան մարզ)

Խմբագրութեան անդամների եւ աւաստակիցների նոյն կազմով:

1903 թուականին «Մուրճում» տպաւելու է, ի միջի այլոց,
Ա. Ահարոնեանի մի նոր մեծ վեպ՝ «ՄԲԲԿԻ ՍՈՒԻՐԲՅԱ», շարունա-
կուելու է Լեօփ «ՀԱՅՈՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ», թարգմանուելու հն
Ա. Աւոլլեսի «ՀՐԱՃԱԼԻ ԴԱՐԸ» և Զօլայի վերջին՝ «ՃՇՄԱՐՏՈՒ-
ԹԻՒՆ» վեպը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՒՆԸ

Թուաստանում տարեկան 10 ռուբ. Արտասահմանում՝ 12 ռուբ.

կես տարիին	6	”	7	”
”	1 ամսուան	1	”	1 ” 20 կ.

«Մուրճ» ամսագրին կարելի է գրուել.

Թիմբլիսում—Խմբագրատանը (ձավճավածհան վողոց, տ. № 16),
Կայսրութեան այլ և ուղիւրից պետք է դիմել՝ Տիֆլիս, վեր հայուածուածական ժուռալա „Մորչ“.

Արտասահմանից՝ Tiflis, Rédition de la revue „Mourtch“.

Բայց այդ, «Մուրճին» կարելի է գրուել նաև՝

Թիմբլիսում—Գրուտանը բուշականուցում,

Ռալախանի—պ. Մ. Տէրմանիէլեանի մօտ, «Անդրանիկ» ընկ. գործա-
րանում,

Բագու, պ. Յ. Մումինեանի մօտ, Կրամնօփօզակայս և Մալականսկայա
վողոցների անկիւն, տ. Մուսա Նալիկեվիչ
պ. Յ. Դաւթեանի մօտ, Շահդիդանօվի պասսաժ, „Վաստակ“
ընկերութեան գրասեն:

Ծանօթութիւն. Թուաստանի բաժանորդներից նրանք, որոնք
գժուարանում են տարեկան բաժանորդագինը (10 ռ.) վճարել միանուագ
կարող են տալ մաս-մաս. սկզբում 5 ռ., մայիսի 1-ին՝ 3 ռ. և յուլիսի
1-ին՝ 2 ռ.:

Ոչ-թիֆլիսի բաժանորդները հասցեն փոխելու համար պէտք է ու-
ղարկեն 40 կոպ.:

THE HISTORY OF
THE CHURCH OF
ENGLAND

THE HISTORY OF THE
CIVILIZATION OF THE
AMERICAN INDIANS

BY
GEORGE PARKER
BROWN

1859



